Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material


LXS
471

25.
№ 1157.
ш 5.
п 4
№ 899.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԵԱՑ

ՊՂԱՏՈՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ

Platon Euthyphron ou du Saint,
l'Apologie de Socrate, Timée ou de la
Nature, traduction classique, édition
correcte, collationnée avec le texte
et précédée d'une introduction sur
la vie et sur les ouvrages de Platon
par le P. Étienne Lucian 1 vol.
venice 1877 in 8°

ՊՂԱՏՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

ԵՒԹԻՓՌՈՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈԿՐԱՏԱՅ ԵՒ ՏԻՄԷՈՍ

№ 1157-х
899
1010
41155
БИБЛІОТЕКА
СПЕЦІАЛЬНЫХЪ КЛАССОВЪ
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1877

ՑԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱՔԵԱՆ ՏՈՀՄԻՆ

Ա 471.



471–2009

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իբրև այն ինչ դեռ ալերձախօսականն դար ծաղկէր յԱթէնս, և Պերիկլէս այր հզօր բանիւք և ճոռոմութեամբ, վարակեալ ի մեծ սրածութենէն՝ որ ճարակէր յայնժամ ի քաղաքին՝ նովին ախտիւք մեռանէր, ի նմին ամ նորանչան այլ ծնունդ աւետեր աթենացւոց քաղաքին. որ իւրով մեծաձայնհուրդ և խորհրդաստ գիտութեամբն գրաւել ունէր զրովանդակ աշխարհս՝ զնորս հնոյն հանդերձ միանգամայն։ Զպղատոն ասեմ, որ՝ որպէս աւանդութիւնն գրուցէ՝ անդրս տին ի Սողոնէ և ի Կոդրոսէ՝ յաթենացւոց արքայէ՝ զազգ իւր սերեր. այլ ոչ ինքն և ոչ ոք ի հնոց փոյթ ի մտի եդ զվարս նորա աւանդել մեզ յետնոցս կատարեալ ոճով, որ վասն և չստ իցեն սակաւ բանքն զոր զնմանէ գրեալ են Ոլոմպիոդորոս իմաստուն այր և լայերտացին Դիոգինէս, և այն առաւել առաջապէլական և ստայօդ կեղծեօք պաճուճեալ. որպիսի իմն՝ մեղրուց ի բերանի նորա մեղր գործել, և վասն լայնութեան ուսոցն և լանջաց կամ ճակատուն՝ յորջորջեալ Պղատոն, և այլ սոցին սակի բանս՝ զորոց և յերկարելն իսկ ոչ ինչ տեղւոյս և բանիս պատշաճաւոր։ Անդստին յառաջին տիոցն՝ ըստ սովորութեան ժամանակին՝ ուսաւ առ ոսս մեծամեծ գիտնականացն՝ զբերականութիւն, զերաժշտականութիւն, զբներթողութիւն և զերկդռնենին Դիոնիսեայ նուագան, զմղբերգութիւն, զբնական գիտութիւնս, այլ ապա հուսկ վերջին իբրև ի սիրելի իւր ուսումն՝ յարեցաւ յիմաստասիրութիւն, և լսեր զՍոկրատ՝ զմեծն զայն աթենացին, որ արդարև հայրն համարեալ է ողջախորհուրդ և ճշմարիտ իմաստասիրութեան. ուսաւ առ

ոտս նորա և Պղատոն, և իւրով նրբամիտ խորհրդականութեամբն անցոյց զանցոյց իսկ զվարդապետաւն և զամենայն երևելի իմաստնովք՝ զորս ցայնվայր ընձիւղեալ էր Աթենայ։ Այլ 'ի մեռանել Սոկրատայ ոչ ևս յամեաց Պղատոն յԱթէնս, և անց գնաց 'ի Մեգարա, և ապա ճանապարհորդեաց յԵգիպտոս, ուր ուսաւ և զեգիպտական գիտութիւնս, և եթէ հաճոյ ումեք թուեսցի՝ և զսրբագրոշմ մեհենական նոցին հանճար։ Զսոցայն իմաստութիւն բազում ուրեք 'ի Տրամախօսութիւնսն իւր գովէ Պղատոն, որպէս յայտնի իսկ է բանն այն զոր բերէ 'ի մէջ, իբրև զի Սողոնի երբեմն ուղևորեալ 'ի կողմանս յայնոսիկ՝ 'ի գաւառն Սայիսական, և հարցեալ բազում ինչ զհին պատմութենէ ցքուրմն տեղւոյն, և նորա պատասխանեալ ասէ. «Ո՛վ Սողոն, Սողոն. դուք հելլէնք միշտ մանկտի էք, և ծեր յոյն այր ոչ գտանի[1]»։ Առեալ նորա միանգամ զճաշակ իմաստիցն ազգացն երիցագունից քան զԱթենացիս, ցանկայր և զպարսկական կամ զմոգականն ուսանել իմաստութիւն. այլ քանզի անմարթ էր նմա գնալ յայնժամ 'ի Պարսկաստան վասն առաջիկայ պատերազմաց և ամբոխից՝ հանդիպեալ 'ի Փիւնիկէ արանց ոմանց մոգուց՝ ուսաւ 'ի նոցանէ և զնոցայն արուեստ։ Ճանապարհորդեաց նա և 'ի մեծն Յունաստան. լուեալ և զհրատոչոր զմեծ խառնարանէն Ետնայ՝ չոգաւ 'ի Սիկիլիա տեսանել զայն. և որ յայնժամ բռնակալէրն անդ՝ Դիոնիսիոս, կարծեցեալ հաճոյականս ինչ լսել 'ի նմանէ վասն իւր՝ կոչեաց առ ինքն և մեծապէս պատուեաց զնա. այլ տեսեալ զի ոչ ըստ քմաց նորա առնէ նմա մեծարանս՝ վանեաց յիւրմէ 'ի բաց։ Ապա միւսանգամ անդրէն առ որդւով նորա դարձ արարեալ 'ի Սիկիլիա և դարձեալ անշուք մերժեալ առ 'ի նմանէ, անդրէն 'ի հայրենիս իւր դառնայր ամաց քառասնից. և անդ զԱկադիմիայն ծաղկեցուցանէր, և զիւրն պարտէզ՝ որ 'ի Կոլոնէ, յորս մեծաւ փութով ուսուցանէր զբարձրագոյն իմաստս իւր. և յունկնդիրս իւր հոյակապս յիշին Գաբրիաս, Իփիկրատէս, Տիմոթէոս, հռչակաւորն Փոկիոն, և յոմանց կարծի՝ եթէ և Դեմոսթենէս ինքնին եղեալ իցէ նմա աշակերտ։ Թէպէտ ոչ այնչափ յոգնաթիւ ասին լինել աշակերտք նորա և ունկնդիրք, այլ բազում էր համբաւ նորա ընդ աշխարհ, և միշտ ուսաւ և ուսոյց յամենայն ընթացս կե-

1 Տիմէոս։

նացն՝ մինչև ցմահ իւր, որ եղև ամաց ութսուն և միոյ կամ երկուց, յամի 347, և էր ծնեալ այրն անմահանուն յամի 429 նախ քան զթուական Տնօրէնութեան Փրկչին մերոյ։

Ոչ իբրև զայլս յիմաստասիրացն Հելլենացւոց էր նորա առանձին դպրոց, այլ միայն Ակադիմիայն՝ զոր յետ մահուան նորա այլք ժառանգեցին. բայց վարդապետութիւնք նորա և կարծիք, կամ թէ հաճոյ թուեսցի ումեք աղանդ կոչել զայն, այնչափ արմատացան և հաստատեցան և եղեն 'ի կրօնս, մինչև ապա և նոցին իսկ սրբոց Հարց Եկեղեցւոյ բազում ինչ շահել 'ի նորա վարդապետութեանցն, զոր օրինակ զսակաւս 'ի բազմաց յիշատակեալ, Որոգինէս, Կղեմէս Աղեքսանդրացի, Եւսեբիոս, Ս. Բարսեղ կեսարացի և Աստուածաբանն Գրիգոր, որք 'ի մերժելն ինչ ինչ 'ի կարծեաց իմաստասիրիս՝ զբազում ինչ ընդունէին յօժարութեամբ։ Իմաստասիրութիւն նորա արդարև բարձրաթռիչ իսկ է քան զամենեցուն՝ որ յառաջ քան զնա և որ յետ նորա, մինչև՝ ցարդ ևս անիմանալի և անթարգմանելի մնալ գիտնոց շատ ինչ 'ի նորա վարդապետութեանցն. հռչակաւոր է Պարմենիդէս՝ մի 'ի Տրամախօսութեանց նորա, յորում է ընթեռնուլ ևեթ, այլ ոչ նոյնպէս և հասկանալ, զԳաղափարսն զայնոսիկ նախատիպս՝ զոր դնէ յաստուած ըստ անսահման յաւիտենականութեանն, և ըստ այսմ՝ Պղատոն համարի եթէ և վերացեալ բառքդ իսկ մարդկութիւն, անձնաւորութիւն, իցեն արդարև էացեալք յաստուածական գաղափարին և 'ի միտս՝ անդստին 'ի յաւիտենից։ — Այլ ոչ ամենայն ուրեք զնոյն ծանրութիւն իմաստից բերէ 'ի գիրս իւր, այլ բազում ուրեք և քերդողական խանդիւք և ախորժակօք պճնէ քաջ զիւր աստուածայնագոյն տեսութիւնս, և արկանէ զնոքօք՝ իբրև քօղ պաճուճազարդ՝ զհոմերական ոճս և զքաջոլոր խօսս դիւցականս, 'ի վեր քան զամենայն քերթողսն իսկ ճարտարագոյն։ Ծանօթ է նաև արեւելեան առասպելաց՝ զոր գեղեցկանկար արուեստիւք ընծայեցուցանէ 'ի գիրս, որպէս զառասպելն Գիւգեայ և զմատանւոյն շրջշրջել՝ զլիւդացւոյ հովուին տեսիլ, և զԱրայի գեղեցկին, զոր կոչէ ինքն՝ Էր հայկազն Պափլագոնացի, որովք կամի զբարձրագոյն զանմահութեան հոգւոյ ճառս 'ի մէջ բերել։

Ոչ նոյնպէս անիմանալիք և մթինք իցեն թերևս և բարոյական և քաղաքական տեսութիւնքն, զոր ցիր աստ անդ սփռեալ է յամենայն Տրամախօսութիւնս իւր, մանաւանդ

յՕրէնս և 'ի Քաղաքավարութեան գիրս։ Ըստ քաղաքական տեսութեան քան զչափն իսկ ելեալ թուի մեծի իմաստասիրիս, որ զամենայն ինչ խառն 'ի խուռն հասարակաց համարի՝ զկանայս և զմանկունս, և ստեղծանէ 'ի մտաց իշխանութիւն իմն չնաշխարհիկ, իմաստասիրական, և համայն ասել՝ ցնորական, որոյ և ոչ ուրեք յարդիւնս գալ հնար է։ Զնոյն իսկ թերևս խորհուրդս թելադրէր յուզևորութեան իւրում և բռնաւորին Սիկիլիացւոց՝ Դիոնեսեայ և որդւոյ նորա, ոյր վասն և մերժեցաւ իսպառ յերեսաց նոցա։

Առաւել գեղեցիկք և ողջամիտ են բանքն՝ զոր ասէ զբարոյական կենաց, եթէ զիարդ պարտ է կեալ և կենցաբավարել առաքինութեամբ. դժուարին յոյժ նկարագրէ զելս յառաքինութիւն և մացառօք ամրացեալս, և զի ինքն Արամազդ կամ Զևս բաշխեալ իցէ իւրաքանչիւր՝ գործել և ընտրել զչար 'ի բարւոյ. զսրբութիւն իբրև կին մի չքնաղ՝ շուրջանակի հրապուրանօք թակարդեալ, և զարդարութիւն ոչ այլ ինչ՝ բայց կռփահարութիւնք. իսկ արդարն որպիսի՛ ոք իցէ, ահա 'ի սակաւուն նկարագիր նորա. « Դիցուք արդարև զարդարն՝ այր յստակ և առաքինի, ըստ Էսքիլեայ, ոչ այն որ կամիցի այնպիսի ոք երևել, այլ որ կամիցի լինել այնպիսի արդեամբք։ Զի որ այսպիսի արդարն իցէ, հարուածեսցի գելարանօք, տանջեսցի, աչքն խարեսցին. և զայս ամենայն կրեալ՝ մեռանիցի 'ի խաչի »։ Արդարև կարծիցին այս ոմանց Եսայեայ մարգարէութեանն բանք՝ որ զՔրիստոսէ Յիսուսէ մերմէ մարգարէանայն։ Ըստ այսոցիկ և այլոց նմանագոյն ճարտարախօս և ճշմարտապատում բանից նորա՝ կարծեցին ոմանք եթէ ընթերցեալ իցէ Պղատոնի և զգիրս Հնոյ կտակին Եբրայեցւոց, և այլք ճգնեցան իսկ ցուցանել 'ի գիրս նորա զքրիստոնէութիւն վարդապետեալ որպէս օրինակ իմն 'ի Մարգարէս. այլ մեր հեռացեալ 'ի ծայրագունիցս՝ զարմանամք ապաքէն ընդ գեղեցիկ ասացածս նորա, այլ գիտեմք ևս՝ զի և բազում ինչ հակառակ մտաց և բարուց բնութեան խօսեցաւ և գրեաց, և 'ի սա ճշգրիտ զբան Առաքելոյն հայեցուցանեմք եթէ « ծանեան զԱստուած և ոչ իբրև զաստուած փառաւորեցին »։

Ոչ ինչ հեռի 'ի հրաշակերտ բանիցն համարեսցուք և զոր խօսի զԱնմահութենէ հոգւոյ և զհանդերձելոյ վիճակէ սորա, որպէս 'ի Փեդրոսն և 'ի Պատասխանին Սոկրատայ և առաւել 'ի Փեդոնին, զոր և մակագրէ « Յաղագս Անմահութեան հոգւոյ »։ Այլ հրաշալիս իմն վարդապետէ առաւել քան այլուր՝ 'ի Պատասխանատութեան Սոկրատայ իւրումն վարդապետին, զոր եդից աստանօր մտադիւր. « Յերկուց աստի ո՞ր իցէ մահն, որպէս ոչի՞նչ լինել և ոչ զգայութի՞ւն ինչ ունել մեռելոյն զիրաց ինչ, եթէ՝ որպէս ասեն՝ փոփոխումն ինչ իցէ և պանդխտութիւն 'ի տեղւոջէ աստի յայլ տեղի։ Եւ եթէ և ոչ մի զգայութիւն իցէ, այլ որպէս քուն, յորժամ ոք ննջիցէ և ոչ երազ ինչ տեսանիցէ, սքանչելի օգուտ իմն իցէ մահն այն...։ Իսկ եթէ իցէ մահն՝ չու իմն աստի այլուր. և ճշմարիտ իցեն ասացեալքն՝ եթէ անդ իցեն ամենեքեան որ մեռանն, զի՞նչ մեծ բարի քան զայս մարթի թէ իցէ, ո՛վ արք դատաւորք։ Զի թէ ոք հասեալ 'ի դժոխս, զերծեալ 'ի կարծեցեալ դատաւորացս, գտանիցէ անդանօր զարդարև դատաւորսն, զորոց և ասի՝ անդէն դատաստան առնել, Մինովս և Հռադամանթիս և Էակոս և Տրիպտոլեմոս, և այլք, որք միանգամ 'ի կիսաստուածոցն արդարք եղեն 'ի կեանս իւրեանց, արդեօք չիցէ՞ գեղեցիկ այս չու տարաշխարհիկ։ Կամ ընդ Որփեւսի լինել և Մուսէոսի և Եսիոդեայ և Հոմերոսի, ո՞րչափ ինչ չիցէ մեծ։ Եւ ես բազում անգամ կամէի մեռանել, եթէ ճշմարիտ իցեն այսոքիկ...։ Այլ և դուք, ո՛վ դատաւորք, պարտ է զի իցէք քաջայոյսք առ մահն. և զմի զայս ածել զմտաւ ճշմարիտ, եթէ չիք առն բարւոյ չար ինչ՝ ոչ 'ի կեանս և ոչ 'ի մահու, և ոչ վարք նորա անտեսք իցեն առ յաստուածոց »։ Ահա յայտնագոյն վարդապետութիւն նորա զԱնմահութենէ հոգւոյ, որոց և Տակիտոս հռոմայեցի նմանագոյնս ուրեք բարբառի 'ի վարս Ագրիկոլայ։ Այլ և զկարծիս աստուածութեան, որ ապախտ յոյժ և նուաստացեալ էր առ հին Յոյնսն, ջանայ իմն նորոգել 'ի միտս ռամկին՝ մեղմով և զգաստութեամբ, այլ բազում ուրեք և երկբայելով իմն. խոտէ անարգէ զհոմերական խառնակութիւնս դից, զմարտս և զկագ և զկռիւ աստուածոց՝ որ զՈլիմպոս դղրդեալ սասանեցուցանէին. թուի և ծաղր առնել զծննդաբանութեամբ աստուածոց և զորդւոց սերնդոց և զդստերաց և զայլ բիւր առասպելաց։

Զայն ամենայն կարծիս և տեսութիւնս քերթողաբան ճոխութեամբ կարգեալ 'ի ձև Տրամախօսութեան՝ բազում այն է զի յերկբայս մնայ իւրն սեպհական վարդապետութիւն, և միշտ բարբառի ինքն յայլոյ դէմս, մերթ 'ի Սոկրատայ և մերթ յայլոյ. ուստի և շփոթ մեծ անկանի յիւ-

բաքանչիւր կողմն խօսելեացն՝ եթէ ո՛ր իցէ կողմն Պղատոնին։ Եւ քանզի անհնար է դարմանս մատուցանել այսմ դըժուարակնճիռն իրացս, հարկ համարին չատք՝ զհզօրագոյն կողմն տալ Պղատոնի, կամ զՍոկրատայն բանս համարել ընիկ իւրում աշակերտին բանս։ Ի բազում Տրամախօսութեանցն՝ զոր գրեաց, են գլխաւորքն Փեդրոս, Փեդոն և Քաղաքավարութիւնն (կամ Հասարակապետութիւնն), Օրէնք, և Տիմէոս և Պարմենիդէս. յորոց զՏիմէոսն, և յայլոցն՝ զԵւթիփռոն և զՊատասխանին (կամ զՋատագովութիւն) Սոկրատայ ընծայեմք ազգիս յընթերցումն առ այժմ, մինչև ապա և զՕրէնսն՝ եթէ հաճոյ թուեսցի 'ի ճաշակս ընթերցողացն՝ տայցեմք 'ի լոյս։

Ի նախնեաց անտի մերոց ոչ բազումս ճանաչեմք ցանկացօղս իմաստասիրութեան. և յետ հռչակելոյն Դաւթի Անյաղթի և Եղնկայ իմաստասիրացն՝ հարկաւորիմք իջանել ցԳրիգոր Մագիստրոս։ Այլ և 'ի սոսա 'ի զուր իցէ թերևս սեպհական ինչ կարծիս նշմարել իմաստասիրութեան, զի որպէս Անյաղթն, սոյնպէս և Մագիստրոս առաւելագոյն զյունականսն ուսանել դեգերին. յորոց և յետինս այս, Մագիստրոս ասեմ, ձեռն արկ թարգմանել զՊղատոնի գործս՝ իւրով ընդել մառախլապատ և հելլենաբան խրթնութեամբն։ Վասն որոյ և մեք զամենայն ջան եդաք՝ բաղդատեալ ընդ յոյն բնագրի՝ անխիղճ ուղղագրել զվրիպակս գրչին, և ըզթարգմանչին՝ եթէ գոյր ուրեք. որպէս զի մի՛ և վրիպակք իմաստից և սխալ գրութիւնք յաւելցեն 'ի մթութիւն հելլենաբանութեանն, որով՝ որ ընթեռնուն ոչ հասկացեալ ինչ, անօգուտ համարիցի զվաստակ թարգմանչին և զմերս։ Այլ և 'ի ձև տրամախօսութեան տամք 'ի լոյս, զի գիւրագոյն թերևս լիցի յընթերցումն բանասիրացս, որոց աղաչեմք՝ զի յընթեռնուլն ուշ ունել պարտին միշտ, զի հելլէն ձևք և ոճք են ամենայն ուրեք, և հայեցի ականջաց ծռնրալուրք, բայց ոչ ամենևին անիմանալիք։

Հ. Արս. Սոխքրեան։

ՊՂԱՏՈՆԻ ՅԵԻԹԻՓՌՈՆ

ԿԱՄ

ՅԱՂԱԳՍ ՍՐԲՈՅ

Ա. Զի՞նչ նորագոյն, ո՛վ Սոկրատէս, եղև, զի դու Թողեալ զշրջելն 'ի Լիւկիա՝ աստանօր այժմիկ դեգերիս առ սրահս Թագաւորին. քանզի ոչ երբէք և քեզ հանդէս [1] իսկ գոլով հանդիպի առ Թագաւորին՝ որպէս և ինձ։

Սոկրատ. Ոչ արդ Աթենացիք իսկ, ո՛վ Եւթիփռոն, հանդէս զսա կոչեն՝ այլ գիրք [2]։

Եւթ. Զի՞նչ ասես. գի՞ր ոք զքէն, որպէս Թուի, գրեալ է. զի ոչ զայն իսկ իմացայց, որպէս դո՞ւ զայլմէ ուրուք։

Սոկրատ. Ոչ իսկ։

Եւթ. Այլ ա՞յլ ոք զքէն է գրեալ։

Սոկրատ. Ամենևին իսկ։

Եւթ. Ո՞ ոք է սա։

Սոկր. Եւ ոչ ես բարեւք ճանաչեմ զայրն, ո՛վ Եւթիփռոն. քանզի համբակ ոմն երևէր ինձ և [3] անգէտ, և անուանէին [4] զնա, որպէս ես կարծեմ, Մելիտոն. և է իսկ ատենիցն Պիտտեւս [5]. եթէ առ միտս ունիս զոք Պիտտեայ Մելիտոն, իբրու ձաղկամազ և ոչ ամենևին գեղեցկամօրու և արծռունկն։

1 Հանդէս. դատ, փուրսիշ։
2 Գիր ասի 'ի յոյն լեզու ամբաստանութիւն զումեքէ առաջի ատենի գրով։
3 Յօր. էր և ինչ անգէտ։ 4 Յօր. անուանէի։
5 Պիտթիս էր ատեան կամ ժողովուրդ 'ի տասանց ցեղիցն Աթենացւոց։

Եւթ. Ոչ զմտաւ ածեմ, ո՛վ Սոկրատէս. այլ արդ՝ զի՞նչ գիր զքէն գրեալ է։

Սոկր. Ոչինչ առանց ազնուութեան, որպէս ինձ իսկ թուի. քանզի համբակ ելով այսչափ իրողութիւն իմանալ՝ յոռին ոչ է, քանզի նա՝ որպէս ասէ՝ գիտէ թէ զի՞նչ յեղանակաւ համբակքն ապականին, և ո՛յք ոմանք են ապականիչքն սոցա. և տագնապի [1] իմաստուն գոլ, և զիմ անուսումնութիւնս տեսանելով՝ իբրու ապականողի զհասակակիցս [2] սորա հասանի ջատագով ինձ լինել [3] առ քաղաքին՝ իբրու առ մօր։ Եւ երևի ինձ 'ի քաղաքականացս միայն իշխել ուղղապէս. քանզի ուղղապէս է՝ զհամբակսն յառաջագոյն դարմանել իբրու զի իցեն արիագոյնք, որպէս և բարեւք մշակի նորագոյն տնկոցն վայել է յառաջագոյն փոյթ առնել, և ապա յետ այսոցիկ՝ այլոցն։ Եւ արդ Մելիտոս նախ զմեզ 'ի բաց խլէ՝ զհամբակացն շառաւեղիցն ապականիչքս, որպէս ասէ, և ապա յետ այսորիկ երիցագունիցն փոյթ արարեալ՝ յոլովագունից և մեծագոյն բարութեանց պատճառ քաղաքիս լինիցի. իբրև զի որ ինչ վայելչագոյն է պատահի՝ զայսպիսի սկիզբն սորա սկսանելով։

Բ. Եւթ. Ախորժեմ թերևս, ո՛վ Սոկրատէս, այլ խորշիմ գուցէ ներհակն հանդիպիցի. քանզի անարհեստաբար [4] ինձ թուի 'ի տանէ սկսանիլ չար գործել քաղաքին, ձեռս արկեալ անիրաւել զքեզ. և ինձ ասա՝ զի՞նչ առնելով քո ասէ ապականել զմանկունսն։

Սոկր. Անտեղի, ո՛վ սքանչելի, իբրու այսպէս իսկ լսել. քանզի ասէ զինէն քերթող [5] գոլ աստուածոցն. և իբրև նորագոյնս աստուածս առնելով՝ զնախնիսն ոչ կարծելով, գրեաց 'ի սակս սոցունց այսոցիկ՝ իբրու ասէ։

Եւթ. Իմանամ, ո՛վ Սոկրատէս, զի դու արդ զդիս յանձին քում ասես իւրաքանչիւրում ժամու լինել. արդ՝ իբրու նորաձեւելով քո առ աստուածայինն՝

1 Մարթի իմաստուն ոք լինել։ 2 Յօր. զհասակակից։
3 Ամբաստան լինել զինէն։
4 Աստանօր որպէս և այլուր միշտ բառն անարհեստաբար ըստ յունին նշանակէ յիրաւի, արդարև։ 5 Արարօղ, ստեղծիչ, մուծիչ։

գրեաց զայնպիսի գիրն. և իբրու դաւաճանելով իսկ հասանէ 'ի հանդիսարանն [1] գիտելով ո՛րպէս դիւրին են առ դաւաճանութիւնս այսպիսիքս ըստ բազմաց։ Քանզի և զինև [2], յորժամ ասեմ ինչ յեկեղեցւոջն յաղագս աստուածայնոցն՝ նախասելով սոցա զհանդերձեալսն [3], ծիծաղին իբրու զմոլորելով, և մանաւանդ ոչ ինչ զոր ինչ ոչ ճշմարիտ է՝ ասացի [4] յայնցանէ՝ որ նախ ասացի, այլ սակայն մախանք հասուցանեն մեզ ամենեցուն այսպիսեացս. այլ ոչ ինչ պարտ է սոցունց փոյթ առնել, այլ երդնուլ յառաջագոյն հասանել։

Գ. Սոկր. Ո՛վ սիրելի Եւթիփռոն, այլ ծիծաղելի լինելն իսկ՝ ոչ ինչ էր ուղղութիւն թերևս [5]. քանզի Աթենացւոցն, իբրու ինձ թուի, ոչ յոյժ փոյթ է, եթէ չար ուրեմն կարծիցեն գոլ ոչ իսկ վարդապետական նորին իմաստութեան. բայց որոյ զայլս կարծիցեն [6] առնել այսպիսիս՝ սրտմտին, թէ մախանօք՝ իբրու դու ասես, և եթէ այլով իւիք։

Եւթ. Արդ յաղագս այսորիկ՝ թէ ո՛րպէս երբէք առ իս տրամակայեալ են, ոչ յոյժ ցանկամ փորձ առնուլ։

Սոկր. Քանզի դու թուիս սուղ ինձ զանձն քո առտուել և ուսուցանել ոչ կամել զիմաստութիւնդ քո. այլ ես երկնչիմ, որ 'ի ձեռն մարդասիրութեան, թուի ինձ, զոր ինչ ունիմ հեղլով սոցունց, և ամենայն առն ասել ոչ միայն առանց վարձու, այլ և յաւելեալ հեշտաբար՝ եթէ ոք կամեսցի ինձ լսել [7]։ Արդ եթէ որպէս այժմիկ ասէի՝ հանդերձեալ են լինել ծիծաղիլ զինև, որպէս դու զքև ասես, ոչ իցէ ինչ թախանձութիւն՝ խաղալով և ծիծաղելով շրջել 'ի հանդիսարանի. ապ՛եթէ փութասցին, այս ինչ ար-

1 Յատեանն։ 2 Յօր. զիւրև։
3 Յօր. զհանդէսսն։ 4 Յօր. ասասցի։
5 Յօր. եթէ երևս. ըստ յունին՝ այլ ծիծաղելի լինելն իսկ՝ ոչ մեծ ինչ էր թերևս։
6 Յօր. բայց որով զայս կարծեցան։
7 Յն. Քանզի դու թուիցիս թերևս եթէ ոչ կամիս ուսուցանել զիմաստութիւն քո, և սակաւ ուրեք յայտնես զանձն քո. այլ ես երկնչիմ, զի մարդասիրութեամբս իմով կարծիմ զեղուլ ամենեցուն զոր ինչ ունիմն, ոչ միայն առանց վարձու...։

դևք թէ ուրպէս պատահեսցի՝ անյայտ է ամենայնի, բաց ի դիւթիդ ի ձէնջ։

Եւթ. Ա՛յլ ոչ ինչ իրք [1], այլ դու առ իսկ միտս [2] զանգիտես ի հանդիսէն, քայց կարծեմ որպէս և ես յիմնոյն։

Դ. Սոկր. Եւ զինչ է քոյդ, այլ Եւթիփռոն, հանդէս. փախչիս ի սմանէ՝ եթէ չալածես [3]։

Եւթ. Չալածեմ։

Սոկր. Ձո՞ ոք։

Եւթ. Ձոր հալածելով իսկ թուիմ մոլեալ։

Սոկր. Եւ զինչ, թուացեա՞լ [4] ինչ հալածես։

Եւթ. Բազում կարօտանայ թուչել յինէն այն իսկ՝ որ հանդիպի գոլով մանաւանդ ծեր [5]։

Սոկր. Սա ո՞ ոք։

Եւթ. Իմ հայրն։

Սոկր. Քո՞յն, այլ վեհագոյն։

Եւթ. Ամենևին արդ։

Սոկր. Եւ զինչ է ամբաստանուիս, կամ ո՞ւմ է հանդէս։

Եւթ. Սպանման, այլ Սոկրատէս։

Սոկր. Եռակլէս. ձշմարտապէս ուրուք, այլ Եւթիփռոն, անգէտ է առ ի բազմաց՝ թէ ուրպէս երբեք ուղղապէս ունի. քանզի ոչ կարծեմ իսկ զոր և հանդիպեսցի ուղղապէս զսա գործեսցէ [6], այլ հեռի իցէ արդեւք յիմաստութենէ վարօղն սորա։

Եւթ. Հեռի իսկ, երդնուլով ի Զևս [7], այլ Սոկրատէս։

Սոկր. Եւ է արդ՝ յընտանեաց ոք մեռեալն ի ձեռն հօր քո, եթէ յայտ է. զի ոչ երբեք վասն օտարի իսկ հանդիսէիր ընդ սմա [8] յաղագս սպանմանն։

Եւթ. Ծիծաղելի է, այլ Սոկրատէս, զի թուի քեզ

1 Յօր. էրէ։ 2 Ա՛յս ինքն. առ միտս քո։

3 Ըստ առեղնական ոճոյ հելլենաց ֆախլէ ասի ամբաստանիլ, և հալածէ՝ ի դատ ձգել զոք, ամբաստանել. այսպէս միշտ Թալզմանի և աստ։ 4 Յօր. Թռուեցեալ։

5 Յն. Բազում ինչ պէտք են Թռչելոյ այնմ՝ որ մանաւանդ ծեր իսկ իցէ։

6 Ա՛յս է. Քանզի ոչ կարծեմ եթէ և գոյզն ոք ուղղապէս...

7 Յօր. Երդնուլով ի Զևս։

8 Յօր։ հանդիսի էէր. — այս է՝ Ո՛չ երբեք վասն օտարի գատաստան առնէիր ընդ սմա վասն սպանման։

զանազանել ինչ՝ եթէ օտար էր և եթէ ընտանի մեռեալն. այլ ոչ զայս միայն պարտ գոլ պահել [1], եթէ իրաւամբք [2] եսպան սպանօղն, և եթէ ոչ. և եթէ իրաւամբք իսկ՝ Թոյլ տալ, և եթէ ոչ՝ հալածել. եթէ սպանողն իսկ տան և սեղանոյ հաղորդ է քո։ Հաւասար լինի պղծութիւնն եթէ պատահիս գիտելով զայսպիսի ինչ և ոչ արդարացուցանես զանձն քո և զայնմիկ՝ որ գործէ հանդիսով ի վերայ սորա հասանելով [3]։ Քանզի որ մեռաւն իսկ՝ մերձաւոր իմ էր, և իբրու մշակեաք ի կղզոջն՝ [4] հուպ մեր և սա անդանօր վաստակէր. մոլեգնեալ արդ բարկութեամբ ի վերայ ումեքիւ մերոց ծառայիցն՝ սպանանէ զնա. արդ հայրն կապեալ զտս նորա և զձեռս՝ արկանէ ներքոյ գբի ուրուք, և առաքէ աստանօր այր՝ հարցանելով զպատմողն [5] Թէ զինչ պարտ է առնել, և առ այսմիկ ժամանակիս՝ կապելոյն փոյթ ոչ արարեալ, այլ ծուլացեալ [6] յաղագս սորա իբրու այրասպանի. և ոչ ինչ համարեալ իր գոլ եթէ մեռանիցի, որպէս և կրեաց արդ։ Քանզի ի ձեռն սովոյ և ցրտոյ և կապանացն մեռանի՝ նախ քան զհրեշտակին առ ի պատմողէն հասանել։ Արդ զայսոսիկ ահաճէ [7] հայրն իսկ և այլ ընտանիքն, զի ես վասն սպանման ամբաստանեմ [8] զՀօրէն. ոչ սպանանելով, իբրու ասեն նոքա, և ոչ Թէ և սպան իսկ՝ պարտապան է այրասպան գոլով մեռելոյն, և ոչ պարտ գոլ փոյթ առնել վասն այսպիսւոյն. զի անսուրբ գոյ որդոյն՝ սպանմամբ զՀօրէն ամբաստանել. չարաչար գիտելով [9] զի Սոկրատես, զաստուածայինն իրս՝ որպէս ունի իսկ յաղագս սրբոյն և անսրբոյն։

Սոկր. Արդ, ըստ Աբրամզդայ, այլ Եւթիփռոն, այսպէս ստուգաբար կարծես գիտել յաղագս աստուածայնոյն, որպէս ունի, և սրբոյն իսկ և անսրբոյն.

1 Պննել, գիտել։ 2 Յօր. Եբևմամբ։

3 Յն. Իրաւամբք կամ գատաստանաւ գատելով զնա։

4 Յն. Մշակեաք ի Նաքսոս։

5 Պաթմոլ. ՚Ο. ἐξηγήτης. պատմիչ օրինացն և հրեշտակ։

6 Յօր. Ծըուեալ։

7 Ահաճել Թուի՝ երկիւղել, զգալով, զայրանալ։

8 Յօր. Ամպաստանիմ զՀօրէն։ 9 Յօր. Դիպելով։

իբրու զի սոցունց այսպէս գործելով, իբրու դուդ ասես, ոչ երկնչիս հանդիսանալով[1] ընդ հօրդ՝ որպէս զի ոչ իսկ դու անսուրբ իր հանդիպիցիս գործեալ։

Եւթ. Քանզի ինձ ոչ ինչ օգուտ իցէ, ո՛վ Սոկրատէս, և ոչ սմա՝ եթէ զանազանի Եւթիփռոն բազմաց 'ի մարդկանէ, եթէ ոչ զայսպիսիս ամենայն ստուգապէս գիտիցեմ։

Ե. Սոկր. Արդ՝ ինձ թերևս, ո՛վ սքանչելի Եւթիփռոն, ցանկալի է աշակերտ քո[2] լինել, և նախագոյն[3] որ առ Մելէտոն, զնոյնս զայսոսիկ ամբաստանել զսմանէ, ասելով՝ զի ես իսկ յառաջագոյն ժամանակաւն զաստուածայինսն գիտել յոյժ փոյթ առնէի, և այժմիկ՝ զի և նա ընքնագրով ասէ և նորաձևելով[4] յաղագս աստուածայնոցն մեղանչել՝ աշակերտ եղեայ քո։ Եւ ասացից եթէ, ո՛վ Մելիտէ, եթէ զԵւթիփռոն խոստովանիս իմաստուն գոլ առ այսպիսիսս և ուղղապէս կարծել, և զիս վարկցիս, և մի՛ հանդիսիր. ապ՛եթէ ոչ՝ նմա վարդապետի[5] հասո՛ հանդէս յառաջագոյն քան եթէ ինձ, իբրու ծերիցս ապականողի՝ իմ իսկ և հօրն իւրոյ. զայս իսկ ուսուցանելով, և զնա խրատելով իսկ և տանջելով[6]. և եթէ ոչ հաւանեսցի ինձ, և ոչ թոյլ տացէ ամբաստանելով կամ փոխան իմ գրեսցէ զքէն, զնոյնս զայսոսիկ ասել 'ի հանդիսարանին զոր ինչ յառաջագոյն ամբաստանէի զսմանէ։

Եւթ. Այո՛ երդնլով յԱրամազդ[7], ո՛վ Սոկրատէս, եթէ ձեռս տարածեսցէ արդեւք գրել զինէն, գտից արդեւք՝ որպէս թուի ինձ՝ զի սնոտի է. և յոյժ թերևս առ 'ի մէնջ յառաջագոյն յաղագս նորա բան լինիցի 'ի հանդիսարանին՝ քան եթէ նորա յաղագս իմ։

Սոկր. Եւ ես իսկ, ո՛վ ընկեր սիրելի, զայսոսիկ

1 Հանդիսանալ. դատել, դատ դնել։ 2 Յօր. Աշակերիւ։
3 Յն. Յառաջ քան զգիրն որ առ Մելիտոս՝ զսոյն զայս յորդորել զնա ասել, զի ես իսկ...
4 Յն. Զի նա զիս ինքնագիւտ լեալ և նորաձևեալ յաղագս աստուածայնոյն՝ մեղանչել ասէ, աշակերտ եղեայ քո։
5 Յօր. Վարդապետ. յն. նմա իբրև վարդապետի նախ արա փուրսիշ և ապա ինձ։
6 Յն. Զիս՝ իբրև ուսուցիչ, և զնա՝ խրատիչ և տանջիչ։
7 Յօր. Երդնուլով յԱրամազդ։

գիտելով՝ աշակերտ քո ցանկամ լինել. գիտելով զի և այլ ոք երբէք և սա Մելետոս՝ զքեզ իսկ ոչ տեսանել կարծէ. բայց զիս այսպէս երագ և դիւրաւ տեսաւ՝ իբրու ամբարշտութիւն զինէն գրեաց։

Զ. Արդ այժմիկ, ըստ Արամազդայ, ասա ինձ զոր ինչ այժմիկ իսկ հաւաստի գիտել ստիպէիր[1], թէ որպիսի՞ ասես գոլ զբարեպաշտն իսկ և զամբարիշտն[2], և յաղագս սպանման և յաղագս այլոցն. կամ եթէ ո՞չ նոյն է առ ամենայն գործոյ[3] սուրբն նոյն ընքեան. և անսուրբ իսկ՝ սրբոյն ամենայնի ներհակն, և նոյն՝ ընքեան իսկ նման, և ունելով մի ինչ տեսակ ըստ ոչ սրբութեանն՝ զամենայն զոր ինչ և հանդերձեալ են սուրբ գոլ[4]։

Եւթ. Ամենայն իրօք իրաւացի, Սոկրատէ։

Սոկր. Ասա արդ՝ զի՞նչ ասես գոլ զսուրբն և զի՞նչ զանսուրբն։

Եւթ. Ասեմ այժմիկ, զի սուրբն իսկ է, որպէս այժմիկ առնեմ անիրաւելոյն՝ կամ սպանմամբ կամ զտաճարս կողոպտելով կամ այլ ինչ յայսպիսեացս մեղանչելով՝ ամբաստանելով 'ի վերայ հասանել, եթէ հայր[5] գոլով հանդիպի, և եթէ մայր և եթէ այլ ոք ո՛ր և իցէ. և ոչ ամբաստանելն[6] անսուրբ։ Քանզի տես[7], ո՛վ Սոկրատէս, որպիսի՞ ասեմ մեծ նշան զօրինացն՝ զի այսպէս ունի, զոր և այլոց ասացի իսկ, զի այսոքիկ ուղղապէս թերևս իցէ այսպէս լինելով՝ ոչ յորդորելն զամբարիշտսն ոչ ո՛ր և իցէ հանդիպիցի գոլով. քանզի ինքեանք մարդիկ հանդիպին կարծելով զԶևս՝ աստուածոցն արիագոյն և արդարագոյն. և սա խոստովանին[8] զհայրն իւր կապել, զի զուստերսն կլանէր ոչ իրաւամբք. և զնա իսկ զհօրն իւր զերկաւորիսն[9] հա-

1 Յօր. ստիպէր. այս է. պնդէիր, յամառէիր.
2 Այս է. Զբարեպաշտութիւնն և զամբարշտութիւն. այսպէս բազում ուրեք իմանալի է զչէզոքս 'ի յոյն.
3 Յն. Կամ ո՞չ նոյն իցէ յամենայն գործս սուրբն՝ ինքն ինքեան։
4 Այս է. ամենայն՝ որ ինչ անսուրբն իցէ, ունի մի ինչ տեսակ զանսրբութեանն։ 5 Յօր. այր։
6 Յօր. ամբաստանելի։ 7 Յօր. քան ես։
8 Յն. զսմանէ խոստովանին՝ զհայրն իւր կապել։
9 Յօր. զերկնաւորիսն. զերկաւորիս հատանել. յոյնն ասէ լոկ՝ հատանել, սպանանել։

(41155) 471-2009

տուցանել վասն այլոց այսպիսեացս. բայց ինձ դժուարանան զի զհօրէ իմմէ ամբաստանեմ անիրաւելով[1]. և այսպէս սոքա ընքեանց զներհակն ասեն 'ի սակս աստուածոցն և 'ի սակս իմ:

Սոկր. Ապա ուրեմն, ո՛վ Եւթիփռոն, այս ինչ է յաղագս որոյ ես գրեալ հալածիմ. զի զայսպիսիսս յորժամ յաղագս աստուածոցն ասէաք՝ իբրու դժուարապէս ընդունիմ[2]. վասն որոյ, որպէս թուի, ասիցէ ոք զիս մեղուցեալ: Արդ այժմիկ եթէ և քեզ այսոքիկ հանդերձ իմով[3] թուի՝ բարեւք գիտողիդ յաղագս այսպիսեաց, հարկ է արդ, իբրու թուի, և մեզ ներել. քանզի և զի՞նչ ասասցուք, որք և մեք իսկ խոստովանիմք յաղագս այսոցիկ ոչ ինչ գիտել. այլ ասա ինձ, ըստ հիւրընկալ աստուածոյն[4], որպէս դու ճշմարտապէ՞ս վարկանիս զայսոքիկ այսպէս եղեալ:

Եւթ. Տակաւին սոցունց սքանչելի, ո՛վ Սոկրատէս, զորս բազումք ոչ գիտեն:

Սոկր. Եւ պատերա՞զմ արդեւք վարկանիս դու գոլ ճշմարտապէս աստուածոցն առ միմեանս, և թշնամութիւն իսկ և չարաչար մարտք և այլ այսպիսիս բազումն՝ որպէս ասի 'ի ձեռն քերթողացն և 'ի բարւոք գրողացն, և զայլսն՝ որովք տաճարքն[5] մեր պաճուճեալ են, և արդ ամենամեծ Աթենացւոց ծայրաքաղաքն լի է այսպիսի պաճուճմամբ[6]. զայսոսիկ ճշմարի՞տ ասասցուք գոլ, ո՛վ Եւթիփռոն:

Եւթ. Ոչ միայն զայս, ո՛վ Սոկրատէս, այլ որպէս այժմիկ ասացի, և այլ բազում քեզ՝ եթէ կամիցիս՝ յաղագս աստուածոցն ես պատմեցից, զորս դու լսելով՝ բարեւք գիտեմ զի սխրասցիս:

Է. Սոկր. Ոչ սքանչացայց, այլ ինձ զայսոքիկ՝ դարձեալ ըստ պարապութեան պատմիցես. բայց այժմիկ,

1 Յն. զանիրաւելոյն: 2 Յօր. ընդունի:
3 Այս է՝ եթէ և քեզ նոյնպէս թուի:
4 Յն. πρὸς Φιλίου. այս ինքն երդուեալ 'ի սիրելին, 'ի խաղաղարարն: 5 Յօր. զայլսն որօք պաճարսն.
6 Յն. և զի մանաւանդ հանդերձքն լի այսպիսի պաճուճմամբք որ բացեալ լինին 'ի մեծ Համաթենականն 'ի ծայրաքաղաքին: (Այս ակնարկէ 'ի սքանչելի շղաչատեռն Աթենասայ որ հրապարակեալ լինէր յԱթէնս 'ի տօնի Համաթենականացն):

որպէս արդ հարցանէի զքեզ, փութա ասել հաւաստի. քանզի ոչ զիս, ո՛վ ընկեր, յառաջագունիւն բաւականապէս ուսուցեր՝ հարցեալ եթէ սուրբ զի՞նչ իցէ. այլ ասացեր ինձ՝ զի զայս ինչ հանդիպի սուրբ գոլով՝ զոր դու այժմիկ առնես, զսպանմանէ ամբաստանելով զհօրէն:

Եւթ. Ճշմարտապէս իսկ ասէի, ո՛վ Սոկրատէս:

Սոկր. Թերևս. այլ, ո՛վ Եւթիփռոն, և այլ բազում ինչ ասիցես գոլ, քանզի և են սրբագոյնք. յիշես արդ՝[1] զի ոչ զայս ինչ քեզ հրամայէի, մի ինչ կամ երկու ուսուցանել 'ի բազմաց սրբոցն, այլ զնոյն իսկ զտեսակն, ըստ որում ամենայն սուրբքն՝ սուրբք են. քանզի գիտես ուրուք միով տեսակաւ զանսուրբն սուրբ[2] գոլով, և զսուրբն սուրբ, կամ ո՞չ յիշես:

Եւթ. Ես իսկ:

Սոկր. Զայս ինչ այժմիկ զնոյնս ուսո՛[3] ինձ տեսակ, թէ զի՞նչ երբէք է. զի առ նա 'ի բաց հայելով և վարելով սովաւ յարացուցիւ, զոր ինչ և այնպիսի իսկ՝ յորոց եթէ կամ դու կամ այլ ոք գործիցէ՝ ասացից սուրբ գոլ. և զոր ինչ ոչ այնպիսի՝[4] ոչ ասացից:

Եւթ. Եւ եթէ այդպէս կամիս, ո՛վ Սոկրատէս, և այդպէս քեզ ասացից:

Սոկր. Այլ կամիմ իսկ ամենևին:

Եւթ. Է արդ այն ինչ որ աստուածոցն սիրելի է՝ իցէ սուրբ, և ոչ սիրելին՝ անսուրբ:

Սոկր. Գեղեցկապէս, ո՛վ Եւթիփռոն, և որպէս խնդրէի տալ քեզ պատասխանի՝ այնպէս այժմիկ ասացեր: Սակայն եթէ ճշմարտապէս՝ ոչ ևս զայս ինչ գիտեմ, այլ դու յայտ է զի ուսուցանես իբրու ճշմարիտ է զոր ինչ ասեսդ:

Եւթ. Ամենևին արդար:

Սոկր. Բեր արդ խնդրեսցուք զոր ինչ ասեմք. իսկ աստուածասէր իրն և աստուածասէր մարդն՝ սուրբ, և աստուածատեաց իրն և աստուածատեաց մարդն՝ անսուրբ:

1 Յն. և այլ բազում ինչ ասիցե՞ս լինել սուրբք: Եւթիփ. Զի են իսկ: Սոկր. Յիշեա արդ զի ոչ....
2 Յն. զանսուրբն անսուրբ գոլով: 3 Յօր. ուսոյց:
4 Յօր. և զոր ինչ այնպիսի:

Եւթ. Արդ ոչ է նոյնպէս, և ներհակագոյն սուրբն անսրբոյն։

Սոկր. Այսպէս իսկ և բարեւք Թուի ասացեալդ։

Եւթ. Երևի ինձ, ով Սոկրատէս, քանզի ասացաւ։

Սոկր. Ո՞չ ապաքէն՝ զի հակառակին աստուածքն, ով Եւթիփռոն, և տարբերին ընդ միմեանս, և թշնամութիւն է սոցա [1] առ միմեանս. և այս ասացաւ։

Եւթ. Սոացաւ իսկ։

Սոկր. Բայց զթշնամութիւն և զբարկութիւն, ով արիագոյն, յաղագս ումանց [2] զանազանին՝ գործէ. այլ աստանօր դիտեսցուք. եթէ զանազանեաք ես իսկ և դու յաղագս Թուոյ՝ թէ ուր է յոլովագոյն, յաղագս սոցա զանազանին՝ թշնամիք թերևս զմեզ գործիցեն, և բարկանալ ապա միմեանց. բայց համարով՝ի խորհուրդս հասանելով յաղագս յայնպիսեացն իսկ՝ վաղվաղակի թերև՝ի բաց փոխիցին [3]։

Եւթ. Այմենևին իսկ արդարագոյն։

Սոկր. Ո՞չ ապաքէն և յաղագս մեծագունի և փոքու եթէ զանազանիցիմք, առ՝ի չափելն հասանելով՝ վաղվաղակի դադարեսցուք՝ի տարբերութենէն։

Եւթ. Է այս ինչ այսպէս։

Սոկր. Եւ՝ի կշռին [4] հասանելով, իբրու ինձ Թուի, յաղագս ծանրագունին և թեթևագունին՝ ընտրիցուք իսկ։

Եւթ. Եւ օրպէս ոչ։

Սոկր. Եւ յաղագս այսր ուրուք զանազանելով և առ ընտրութիւն ինչ ոչ կարելով հասանել՝ թշնամիք իսկ միմեանց իցեմք և բարկասցուք. Թերևս քեզ ոչ է առ ձեռն. այլ ինձ լուր ասելով և դիտեա թէ այս ինչ է զարդարն իսկ և զանիրաւն, և զբարին և զչարչեղին, և զաղնիւն և զջարն. այսոքիկ են արդեւք, յաղագս որոյ զանազանելով և ոչ կարելով՝ի բաւական ընտրութիւն սոցա հասանել՝ թշնամիք իսկ միմեանց լինիցիմք՝ յորժամ լինիցիմք, և ես և դու և այլք մարդիկ ամենայն։

1 Ցօր. սոսա։
2 Ցն. յաղագս որոց զանազանիլն գործէ։
3 Ցն. բայց՝ի բանս եկեալ ընդ միմեանս վասն այսպիսեացդ՝ կարիցեմք վաղվաղակի հաշտել։ 4 Ցօր. Ի կշռեն։

Եւթ. Այսպէս է զանազանութիւն, ով Սոկրատէս, և յաղագս այսոցիկ։

Սոկր. Եւ զի՞նչ, ով Եւթիփռոն՝ աստուածքն եթէ ոչ ինչ զանազանեալք [1] են, վասն այսոցիկ տարբերիցին արդեւք։

Եւթ. Բազում հարկ է։

Սոկր. Եւ յաստուածոցն արդեւք, ով արիագոյն Եւթիփռոն, այլք զայլ ինչ իրաւացի վարկանին՝ ըստ քոյոյ բանիդ, և գեղեցիկ և գարշելի և բարի և չար. քանզի ոչ երբեք հակառակէին ընդ միմեանս՝ եթէ ոչ յաղագս այնոցիկ զանազանին։

Եւթ. Ճշմարտապէս ասես։

Սոկր. Ապա ուրեմն զոր ինչ բարի վարկանին իրաքանչիւրք և աղնիւք և իրաւացիք, զայսոքիկ և սիրեն, և զներհակն սոցունց ատեն [2]։

Եւթ. Այմենևին իսկ։

Սոկր. Այսոքիկ [3] արդեւք, որպէս Թուի ինչ, ատեալ են առ՝ի յաստուածոցն և սիրեալ. և աստուածատեաց իսկ և աստուածասէր այսոքիկ նոյնս իցեն Թերևս։

Եւթ. Թուեցեալ իսկ է։

Սոկր. Եւ սուրբ արդեւք և անսուրբ այսոքիկ նոյնս իցեն Թերևս, ով Եւթիփռոն, յայսմիկ բանիս։

Եւթ. Տագնապալի իսկ [4]։

Թ. Սոկր. Ոչ արդեւք զոր ինչ հարցանէի՝ եաուր պատասխանի, ով աքանչելի. քանզի ոչ զայս ինչ հարցանէի՝ զոր ինչ հանդիպի նոյն ինչ գոլով, սուրբ ինչ և անսուրբ. և զոր ինչ աստուածասէր իցէ և աստուածատեաց, որպէս Թուեցեալ է։ Վասն որոյ, ով Եւթիփռոն, զոր ինչ դու այժմիկ առնես զՀայրն տանջելով՝ ոչ և մի ինչ է սքանչելի, Թէ զայս ինչ առնելով Սրամազդայ սիրելի ինչ գործես, և Կռոնոսի և Երկնի Թշնամի. և Հեփեստոսի իսկ սիրելի, և Հեռայ Թշնամի. և եթէ յայլ որ յաստուածոցն յայլմէ յումեքէ

1 Ցն. Աստուածքն՝ եթէ երկփեղկիցեն ինչ, ոչ վասն նոցին իրաց հերձնուացուն։
2 Ցօր. ասէն։ 3 Ցօր. այսոքիւ։
4 Տագնապի իսկ. Թուի, կարծի, երևի։

տարբերեալ է յաղագս նորին իրի և այնոցիկ [1] նոյնպէս։

Եւթ. Այլ կարծեմ, ո՛վ Սոկրատէս, յաղագս այսորիկ ոչ ոք յաստուածոցն այլ 'ի յայլմէ տարբերի, իբր ոչ է պարտ պատուհաս կրել այնմիկ՝ որ և անիրաւապէս զոմն սպանանիցէ։

Սոկր. Եւ զի՞նչ, ո՛վ Եւթիփռոն, 'ի մարդկանէ՞ արդեւք ումեմնէ լուար երկբայելով սորա՝ իբրու անիրաւապէս սպանողին կամ այլ ինչ զոր ինչ և իցէ անիրաւապէս գործողին ոչ է պարտ հատուցանել պատուհաս։

Եւթ. Ոչ՝ իսկ դադարին զայսոսիկ երկբայելով, և այլ ուրեք [2] և առ հանդիսարանս, զի ամենևին բազում ինչ անիրաւելով՝ զամենայն ինչ գործեն և ասեն փախչելով 'ի պատուհասէն։

Սոկր. Եւ ճշմարտապէս խոստովանի՞ն, Եւթիփռոն [3], անիրաւել. և խոստովանել ո՞չ պարտ գոլ ասեն հատուցանել նոցա զպատուհաս։ Զայս ինչ ոչ և միով իւիք [4]։ Ապա ոչ զամենայն իսկ առնեն [5] և ասեն. քանզի զայս ինչ ոչ համարձակին ասել, որպէս թուի ինձ, և ոչ երկբայելով, իբրու թէ անիրաւք իցեն ոչ է պարտ հատուցանել զպատուհաս, այլ կարծեմ՝ ասեն ոչ անիրաւել. ճշմարտապէս ասացաւ։

Եւթ. Ճշմարտապէս ասես։

Սոկր. Ապա ուրեմն ոչ առ այս ինչ երկբային՝ իբրու անիրաւին ոչ է պարտ հատուցանել զպատուհաս, այլ առ այն ինչ թերևս երկբայիցին՝ թէ ոք է անիրաւող և զի՞նչ գործելով և ե՛րբ։

Եւթ. Ճշմարտապէս ասես։

Սոկր. Ո՞չ ապաքէն զայսոսիկ զնոյնս և աստուածքն կրեսցեն, եթէ հակառակին յաղագս իրաւանցն և անիրաւութեանց՝ իբրու քոյդ է բան. և ոմանք ասեն զմիմեանց անիրաւել, և ոմանք ոչ ասեն. քանզի զայն իսկ ինչ, ո՛վ սքանչելի [6], ոչ և մի ոք՝ ոչ յաստուածոցն

1 Յօր. այնոսիկ։ 2 Յօր. այլ ուրուք։
3 Յօր. անիրաւելով Եւթիփռոն անիրաւել։
4 Յն. Եւթ. Զայս ինչ ոչ և միով իւիք։ Սոկր. Ապա ոչ...
5 Յօր. ոչ ամենեքեան իսկ առնեն և ասեն. եդաք ըստ յունին։
6 Յօր. ոչ սքանչելի։

և ոչ 'ի մարդկանէ համարձակի ասել, իբրու անիրաւողին իսկ ոչ է պարտ հատուցանել պատուհաս։

Եւթ. Այո՛ զգլուխս զայսմիկ, ո՛վ Սոկրատէս, ասես իսկ ճշմարտապէս. երկբայեն [1] այնոքիկ որք երկբայեալք իցեն և մարդիկ և աստուածք. եթէ երկբայեսցին իսկ աստուածքն 'ի սակս գործոց ինչ տարբերելով, ոմանք արդարապէս ասեն սմա գործել և միւսք անիրաւապէս։

Եւթ. Ամենևին իսկ։

Ժ. Սոկր. Ե՛կ այժմիկ, ո՛վ սիրելի Եւթիփռոն, ուսո և զիս, զի իմաստնագոյն լինիցիմ. զի՞նչ նշանակ է քեզ [2] իբրու ամենեքեան աստուածքն վարկանին սմա անիրաւապէս մեռանիլ, այսմիկ՝ որ այրասպան լինելով, և կապեալ 'ի ձեռն տեառն մեռանելոյն՝ հասանի վախճանել վասն կապանացն, նախ քան զկապողին առ 'ի պատմողացն յաղագս սորա իմանալ՝ թէ զի՞նչ պարտ է առնել. և վասն այսպիսի արդ ուղղապէս ունի՝ [3] ամբաստանելով 'ի վերայ հասանել և սպանման վկայութիւն առնուլ որդւոյն զհօրէ իւրմէ։ Ե՛կ, յաղագս այսոցիկ փութանալով, և ցոյց ինձ հաւաստի՝ իբրու ամենայնի մանաւանդ՝ ամենեքեան աստուածք վարկանին ուղղապէս ունել գործոյս այսմիկ։ Եւ եթէ բաւականապէս ինձ ցուցցես [4], առ իմաստութիւն աղէ ներբողելով զքեզ ոչ երբէք դադարեցից։

Եւթ. Այլ թերևս ոչ սուղ ինչ գործ է, ո՛վ Սոկրատէս. քանզի ամենևին իսկ հաւաստաբար ունիցիմ քեզ ցուցանել. իմանամ [5] զի թուիմ քեզ քան զդատաւորսն դժուարին գոլ առ ուսումն. քանզի նոցա իսկ ցուցանես՝ յայտ է՝ թէ իբրու անիրաւ իսկ է, և աստուածքն ամենեքեան ատեն զայսոսիկ։

Եւթ. Ամենևին հաւաստի, ո՛վ Սոկրատէս, եթէ լուիցեն ինձ ասելով։

ԺԱ. Սոկր. Այլ լուիցեն՝ եթէ բարւոք իսկ թուիցիս ասել. բայց զայս ինչ զմտաւ ածի համա-

1 Յն. ճշմարտապէս։ Սոկր. Այլ զիւրաքանչիւր իսկ գործոց երկբայեն որք երկբայինն, և մարդիկ և աստուածք։
2 Յօր. զի ինչ նշանակէ քեզ։
3 Այս է. վասն այսորիկ ուղիղ է կամ 'ի դէպ է։
4 Յօր. ցուցես։ 5 Յն. Սոկր. Իմանամ զի....

գամայն ասելով, և առանձին դիտեմ [1], զի մանաւանդ ուսուսցէ ինձ Եւթիփռոն, իբրու աստուածքն ամենեքեան զայսպիսի մահս վարկանին անիրաւ գոլ. զի՞նչ յաւէտ ես ուսայ առ 'ի յԵւթիփռոնոսէ, եթէ զի՞նչ երբէք է սուրբն իսկ և անսուրբն. քանզի աստուածատեաց իսկ՝ գործս այս [2], իբրու նմանեցաւ [3], Թուեսցի Թերևս. այլ ոչ այսպէս երևեցան սահմանեալք սուրբն իսկ և ոչն. քանզի այն իսկ որ աստուածատեացն է՝ և աստուածասէր երևեցաւ։ Բայց յայսմանէ Թողուցում զքեզ, ո՛վ Եւթիփռոն. եթէ ախորժես ամենեքեան զսա աստուածք՝ վարկցին անիրաւ, և ամենեքեան ատելով զսա։ Այլ ուրեմն զայս ինչ զոր այժմիկ բանիւս վերստին ուղղեմք. իբրու Թերևս զոր ինչ ամենեքեան աստուածքն ատիցեն՝ անսուրբ է, և զոր ինչ սիրեսցեն՝ սուրբ. և զոր ինչ ոմանք սիրեսցեն և ոմանք ատեսցեն՝ չէզոք, կամ զերկաքանչիւրսն. ուրեմն [4] ա՞յսպէս կամիս մեզ սահմանել այժմիկ յաղագս սրբոյն և անսրբոյն։

Եւթ. Եւ զի՞նչ արգելու, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Զիս ոչ ինչ [5], ո՛վ Եւթիփռոն. այլ դու զքոյդ դիտեա, եթէ զայս ինչ ենթադրելով՝ ուսուսցես ինձ զոր ինչ խոստացար։

Եւթ. Արդ ասացից Թերևս զայս ինչ գոլ սուրբ՝ զոր ամենեքեան աստուածքն սիրեն, և զներհակն՝ զոր ինչ ամենեքեան աստուածքն ատեն՝ անսուրբ։

Սոկր. Ո՞չ ապաքէն վերադիտեսցուք իսկ զայս ինչ, ո՛վ Եւթիփռոն, եթէ բարեւք ասացաւ՝ և կամ Թողուցո՞ւմք [6], և այսպէս զմեզ իսկ ինքեանս ընդունեսցուք և զայլս, [7] եթէ միայն ասիցէ ոք ունել ինչ այսպէս՝ ներելով ունել, և կամ խնդրե՞լ՝ Թէ զինչ ասէ որ ասէնն։

Եւթ. Խնդրել պարտ է, բայց կարծեմ իսկ ես զայս ինչ բարեւք ասիլ այժմիկ։

Սոկր. Թերևս, այր բարի, լաւագոյն գիտասցուք.

1 Յօր. գիտեմ։ 2 Յօր. յայսմիկ։
3 Իբրու նմանեցաւ. որպէս կարծի, որպէս 'ի դէպ է՝ նման է։
4 Յօր. ումեմն։ 5 Յօր. Զի ոչ ինչ։
6 Յօր. թողուցուք։
7 Յն. և այսպէս մեզ և այլոց հաւանեսցուք։

քանզի զմտաւ ած զայսպիսի ինչ. սուրբն արդեւք զի սո՞ւրբ է՝ սիրի յաստուածոցն, եթէ զի սիրի՝ սուրբ է։

Եւթ. Ոչ գիտեմ զի՞նչ ասեսդ, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Այլ ես ջանամ ասել քեզ հաւաստի. ասեմք, ինչ որ լինի՝ բերեալ, և զայլ ինչ բերէ. և ածեալ լինի, և զայլ ինչ ածէ, և տեսեալ՝ և զայլ ինչ տեսանէ. և զամենայն զայսպիսիս իմանաս՝ զի այլ ինչ են 'ի միմեանց. և ըստ որում այլքն։

Եւթ. Թուի ինձ՝ զի ուսանիմ։

Սոկր. Ո՞չ ապաքէն և սիրեալ՝ ինչ է. և այլ ինչ քան զայս՝ այն որ սիրէն։

Եւթ. Եւ ո՞րպէս ոչ։

Սոկր. Արդ ասա ինձ, ո՞րպէս, բերելին վասն զի բերի՝ բերելի՞ է, և եթէ վասն այլոյ իրիք [1]։

Եւթ. Ոչ, այլ վասն այսորիկ։

Սոկր. Եւ ածելին վասն զի ածի՞, և տեսանելին վասն զի տեսանի՞։

Եւթ. Ամենևին իսկ։

Սոկր. Ո՞չ ապաքէն վասն զի տեսանելի է՝ վասն այսորիկ տեսանի. այլ վասն զի տեսանի՝ վասն այսորիկ է տեսանելի. և ո՛չ վասն զի ածելի է՝ վասն այսորիկ ածի, վասն այսորիկ է ածելի [2]. և ոչ վասն զի բերելի է՝ բերի, այլ վասն զի բերի՝ բերելի է։ Ապա ուրեմն յայտ է, ո՛վ Եւթիփռոն, զոր ինչ կամիմ ասել. և կամիմ զայս ինչ, զոր ինչ լինի և կամ կրէ՝ ոչ վասն զի լինելի է՝ լինի, այլ վասն զի լինելի է՝ լինելին [3]. և ոչ վասն զի կրելի է՝ կրի, այլ վասն զի կրէ՝ կրելի է, ո՞չ ներես [4] այսպէս։

Եւթ. Ես իսկ։

Սոկր. Ո՞չ ապաքէն և սիրելին կամ եղեալ ինչ է և կամ կրեալ ինչ 'ի ձեռն ուրուք։

Եւթ. Ամենևին իսկ։

Սոկր. Ապա ուրեմն և այս այսպէս ունի որպէս և

1 Յօր. վասն որոյ լուարուք։։
2 Յօր. պակասէր. ո՛չ վասն զի ածելի է՝ վասն այսորիկ ածի, այլ զի ածի՝ վասն այսորիկ ածելի է։
3 Այս է. այլ վասն զի լինի՝ լինելի է։
4 Յօր. ոչ ներ այսպէս։

յառաջագոյնսն. ոչ վասն զի սիրելի է՝ սիրի 'ի ձեռն որոց սիրի, այլ վասն զի սիրի՝ սիրելի է։

Եւթ. Հարկաւ իսկ։

Սոկր. Զի՞նչ արդ ասեմք յաղագս սրբոյն, ո՛վ Եւթիփռոն, այլ որ ինչ սիրի 'ի ձեռն աստուածոցն ամենեցուն. իբրու քոյդ է բան։

Եւթ. Այո՛։

Սոկր. Արդ՝ վասն այսորի՞կ՝ վասն զի սուրբ է, եթէ վասն այլոյ ուրուք։

Եւթ. Ոչ. այլ վասն այսորիկ։

Սոկր. Վասն զի սուրբ է՝ ուրեմն սիրի, այլ ոչ վասն զի սիրի՝ վասն այսորիկ սուրբ է։

Եւթ. Այսպէս թուի։

Սոկր. Այլ սակայն վասն զի սիրի իսկ 'ի ձեռն աստուածոցն՝ սիրեալ իսկ է և աստուածասէր։

Եւթ. Եւ ո՞րպէս ոչ։

Սոկր. Ոչ արդեւք աստուածասէրն սուրբ է, ո՛վ Եւթիփռոն, և ոչ սուրբն աստուածասէր՝ իբրու դուդ ասես. այլ այս ինչ այլ է քան զայն։

Եւթ. Ո՞րպէս արդ, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Զի խոստովանիմք, սրբոյն իսկ վասն այսորիկ սիրիլ՝ զի սուրբ է, այլ ոչ վասն զի սիրի՝ սուրբ գոլ. Ճշմարի՞տ է բանս։

Եւթ. Այո։

Սոկր. Եւ զաստուածասէրն իսկ՝ վասն զի սիրի յաստուածոցն, նովիմբ այսուիկ սիրելովս՝ աստուածասէր գոլ, այլ ոչ՝ զի աստուածասէր՝ վասն այսորիկ սիրիլ։

Եւթ. Ճշմարտապէս։

Սոկր. Այլ եթէ նոյն և սուրբն իսկ էր, ո՛վ սիրելի Եւթիփռոն, աստուածասէրն, եթէ վասն սուրբ գոլոյն՝ սիրիլ սուրբն, և աստուածասէր գոլոյն՝ սիրիլ թերևս աստուածասէրն. և եթէ վասն սիրելոյն յաստուածոցն աստուածասէրն՝ աստուածասէր էր, և սուրբն թերևս վասն սիրելոյն՝ սուրբ էր. բայց այժմիկ տեսանես՝ զի ներհակապէս ունի, իբրու ամենևին այլք գոլով 'ի միմեանց. քանզի ոմն՝ զի սիրէ իբրու սիրեալ, և միւսն վասն զի իբրու սիրեալ է՝ վասն այսորիկ սիրի. և տագնապիս, ո՛վ Եւթիփռոն, հարցանելով զսուրբն՝

եթէ զի՞նչ երբէք է. զգոյացութիւնն իսկ սորա ոչ կամիլ յայտնել ինձ, այլ կիրս ինչ յաղագս սորա ասել զոր ինչ կրեալ է. այս ինչ սուրբն՝ սիրեցեալ յամենեցունց աստուածոցն. այլ եթէ գոյ՝ ոչ ևս ասացեր. արդ՝ եթէ քեզ սիրելի է՝ մի՛ յինէն 'ի բաց թաքուցաներ, այլ դարձեալ ասա 'ի սկզբանէ, թէ զի՞նչ երբէք գոլով սուրբն, կամ սիրի յաստուածոցն, և կամ այլ զոր և ինչ իցէ՝ կրէ, զի ոչ յաղագս այսորիկ զանազանեսցուք. այլ ասա յօժարապէս, թէ զի՞նչ է սուրբն և անսուրբն։

Եւթ. Այլ, ո՛վ Սոկրատէս, ես իսկ ոչ ունիմ թէ ո՛րպէս քեզ ասացից զոր ինչ իմանամս. քանզի իբրու շրջաբերի մեզ՝ զոր ինչ և յօժարիմք, և ոչ կամի կալ և մնալ՝ ուր և հաստատեմք զսա։

Սոկր. Մերոյն նախածնին [1], ո՛վ Եւթիփռոն, թուեցեալ է գոլ Թեդալոսի՝ 'ի ձեռն քո ասացեալքս [2]. և եթէ ես իսկ զայսոքիկ ասէի և կամ առնէի, բամբասէիր զիս թերևս, իբրու և յինէն արդեւք՝ ըստ նորին բաղազանութեան՝ որ ինչ առ բանիցս են գործք 'ի բաց փախչին. և ոչ կամին կալ և մնալ ուր և դիցէ ոք զսոքա։ Բայց այժմիկ, — քո են ենթադրութիւնքս —, և առ 'ի յայլմէ ուրուք կարօտանան բամբասանաց, քանզի ոչ կամին քեզ կալ և մնալ, իբրու և նորին քեզ իսկ թուի։

Եւթ. Ինձ գրեթէ թուի ինչ այդմիկ բամբասանացդ կարօտանալ ասացելոցս, քանզի այսոցիկ շրջաբերելոյ սոցա և ոչ մնալոյ նովիմբ՝ [3] ոչ ես եմ պատճառին եդող. այլ դու ինձ թուիս Թեդաղոսս, քանզի 'ի սակս իմ մնայր թերևս այսոքիկ այդպէս։

Սոկր. Տագնապիմ արդեւք [4], ո՛վ ընկեր սիրելի, քան [5] զայրն այն ճարտարագոյն գոլ արհեստի այսչափ, որչափ նա իսկ իւրոցն միայն գործէր զոչ կալն և

1 Յօր. նախանձնլիր։ 2 Յօր. ասացեալ քո։
3 Յօր. քանզի այսոցիկ շրջաբերելոյ սոցա, և ունմա լոյս նովիմբ։
4 Յն. Սոկր. կարծեմ արդարև, ո՛վ սիրելիդ, գոլ այնչափ հզօրագոյն քան զայրդ զայդ յարուեստս, որ զի նա զիւրսն և եթ առնէ չմնայունս, այլ ես, առ իմովքս և զայլսն։
5 Յօր. քանզի զայրն այն։

մնալն, բայց ես իսկ առ իմօքն, իբրու Թուի, և յօտարացն. և ինձ արդ այս ինչ է արհեստիս պաճուճեալ[1], զի ակամայ եմ իմաստուն. քանզի կամէի Թերևս՝ զի մնասցեն[2] ինձ բանքս, և անշարժաբար հաստատիցին մանաւանդ՝ քան եթէ առ Դէդաղոս իմաստութեանն և Տանտաղոսի իրողութեանցն կիրսն լինել. բայց սոցունց իսկ դժոխսն է[3]:

ԺԳ. Այլ քանզի դու Թուիս ինձ խրախանալ և ես հանդերձ քև[4] յօժարացայց ցուցանել, իբրու զի ուսուցանես զիս յաղագս սրբոյն, և ոչ յառաջագոյն այսորիկ 'ի բաց կացցես յաշխատանացս. զի տես եթէ ո՛չ քեզ հարկաւոր Թուեսցի արդար գոլ ամենայն սուրբն և կամ սուրբն ամենայն արդար, բայց արդարն՝ ոչ ամենայն սուրբ, այլ ոմն սորա՝ սուրբ. և միւսն՝ այլ ինչ:

Եւթ. Ո՛չ հետևիմ, ո՛վ Սոկրատէս, ասացելոցդ:

Սոկր. Սակայն և կրսերագոյն ես քան զիս, ոչ նուազ քան եթէ որչափ իմաստնագոյն. այլ զոր ինչ ասեմ՝ խրախանաս 'ի ձեռն փարթամութեան որ իմաստութեանն է. այլ, ո՛վ երանելի, 'ի միասին ձըգտեցո[5] զանձն քո. քանզի ոչ է դժուարին իմանալ զոր ինչ ասեմ. քանզի ասեմ իսկ զներհակն քան եթէ զոր ինչ քերթողն քերթեաց՝ ասացեալ[6]. զի երկիւղ իցէ անդանօր ուր և պատկառանս է. քանզի բազումք ինձ Թուին[7] և 'ի հիւանդութեանց և 'ի տնանկութեանց և յայլոց բազմաց յայսպիսեաց երկուցեալք. երկնչել իսկ, բայց պատկառել և ոչ ինչ յայնցանէ՝ յորոց երկնչինն. ո՞չ Թուի և քեզ:

Եւթ. Ամենևին իսկ:

1 Այս է. պանծագոյն մասն: 2 Յօր. զի մի ասիցեն ինչ բանքս:
3 Յն. բայց այսոքիկ այսչափ շատ են:
4 Յօր. հանդերձ քով: 5 Յօր իմաս ինչ գտեցոյ զանձն քո:
6 Յօր. պակասէ բան քերթողին զոր լրացուցանեմք 'ի յունէն.
Զարամազդ՝ որ ածն 'ի գոյ, և որ զբնաւ տընկեաց ըզբոյսս,
Ոչ են քեզ կամք նըւագել. Զի ուր երկիւղ, անդ պատկառանք:
Այլ ես հակառակիմ քերթողիս այսմիկ. ասացից քեզ՝ յո՛ ուրեք:
Եւթիփռոն. Ամենևին իսկ: Սոկր. Ոչ Թուի ինձ այդպէս գոլ,
Զի ուր երկիւղ՝ անդ և պատկառանք: Քանզի բազումք Թուին ինձ
և 'ի հիւանդութեանց.... 7 Յօր. Թուի:

Սոկր. Այլ զի պատկառանս անդանօր[1] և երկիւղ գոյ, քանզի է և պատկառելով ինչ յիրէ և ամաչելով՝ ոչ երկուցեալ իսկ է և զարհուրեալ 'ի չարութեան կարծեաց:

Եւթ. Սակայն երկուցեալ իսկ է:

Սոկր. Ոչ ունի ուղղապէս ասելն, զի երկիւղ իցէ անդանօր ուր և պատկառանս, այլ ուր պատկառանս անդանօր և երկիւղ[2]: Սակայն ոչ ուր երկիւղ՝ ամենայն ուրեք և պատկառանս[3]. քանզի յաճախագոյն Թուի ինձ երկիւղ պատկառանաց[4]. զի մասն է պատկառանս՝ երկիւղի, որպէս և Թուոյ՝ կոճատն. իբրու ոչ զի Թիւ իսկ է՝ անդանօր և կոճատն, այլ զի զի կոճատն անդանօր ուր և Թիւ[5]. հետևիս իսկ ինձ այժմիկ:

Եւթ. Ամենևին իսկ:

Սոկր. Զայսպիսի ինչ այժմիկ ասացեալ հարցանէի ուրեմն. զի[6] արդար իցէ՝ անդանօր և սուրբ, և կամ զի սուրբ իսկ՝ ուր և արդար, և զի արդարն՝ ոչ ամենայնի սուրբ, զի մասն է արդարոյն՝ սուրբն, այսպէս ասեմք, եթէ այլաբար քեզ Թուի:

Եւթ. Ո՛չ, այլ այդպէս: Քանզի երևի ինձ ուղղապէս ասացեալ:

Սոկր. Տես արդ զոր ինչ յետ այսորիկ. քանզի եթէ մասն է սուրբն արդարոյն, պարտ է մեզ՝ իբրու Թուի՝ գտանել թէ որպիսի՛ մասն իցէ Թերևս արդարոյն՝ սուրբն: Արդ՝ եթէ դու զիս հարցանէիր ինչ այժմիկ ասացելոցն, իբրու թէ՝ որպիսի՛ մասն է դարն՝ Թուոյ, և զի՞նչ գոլով հանդիպի յայսպիսի Թիւս, ասէի Թերևս Թէ որ ոչ սանդղատեսակ իցէ, այլ հաւասարասրուն[7]. և եթէ ո՞չ Թուի և քեզ այսպէս:

Եւթ. Ինձ իսկ:

Սոկր. Փութա արդ և դու զիս այսպէս ուսուցա-

1 Յօր. անդանուր:
2 Յօր. այլ 'ի պատկառանս իսկ անդանուր ուր երկիւղ:
3 Յօր. յամենայն 'ի պատկառանս: Զայլագիրսն նորոգ եդաք 'ի յունէն, քանզի յօրինակին պակասէր:
4 Այս է. մեծ համարիմ զերկիւղ քան զպատկառանս:
5 Յն. իբրու ոչ՝ ուր Թիւ է՝ անդանօր և կոճատ, այլ ուր կոճատ՝ անդանօր և Թիւ:
6 Այս է. ուր արդար իցէ, ըստ յն. ոճոյ:
7 Յօր. հաւասարայսրուն:

նել՝ Թէ որպիսի՛ մանն արդարոյն սուրբն է, զի և ցՄելխիսեդեկ ասացուք ոչ ևս անիրաւել զմեզ, և ոչ ամ բարշտութիւն զմեօք գրել. իբրու բաւականապէս արդ առ՝ի քէն ուսեալք՝ զոր ինչ բարեպաշտ են և սուրբ, և զոր ինչ ոչ։

Եւթ. Ա.յս ինձ այժմիկ ինձ իսկ Թուի, ա՛վ Սոկրատէս, մանն արդարոյն գոլ զոր ինչ բարեպաշտ է և սուրբ, որ առ աստուածոյն է հաճութիւն. և որ ինչ առ՝ի մարդկանէ՝ [1] զմիւսն գոլ մանն արդարոյն։

Սոկր. Եւ բարեւք իսկ ինձ Թուիս ասելով, Եւթիփռոն, այլ փոքումբ ումեմն ևս կարօտացեալ եմ, քանզի զհաճութիւն ոչ ևս խորհիմ Թէ զո՛ր անուանես. քանզի ոչ ուրուք ասես Թէ որպիսի՛ իսկ են, և առ այլն հաճութիւնք. և եթէ այսպիսի է, և այն՝ որ առ աստուածան է [2]. քանզի ասեմք երբէք, իբրու ասեմք, զձիս ոչ ամենայն ոք գիտէ [3] հաճեցուցանել բայց յայնմանէ՝ որ մակացողն է ձիոց. հմարիտ է։

Եւթ. Ա.մենևին իսկ։

Սոկր. Ա.պա ուրեմն մակացողութիւնն ձիոց՝ ձիոյն հաճութիւնն է [4]։

Եւթ. Ա.յո՛։

Սոկր. Եւ ոչ զշունս ոք գիտէ հաճեցուցանել, այլ ամենայն որսորդն։

Եւթ. Ա.յդպէս։

Սոկր. Ա.պա և որսորդութիւն՝ շանց հաճութիւն է։

Եւթ. Ա.յո՛։

Սոկր. Եւ մշակութիւնն՝ է եզանց։

Եւթ. Ա.մենևին իսկ։

Սոկր. Ա.րդ և զսրբութիւնն և զբարեպաշտութիւնն՝ աստուածոյն, Եւթիփռոն. այսպէս ասես։

Եւթ. Ես իսկ։

Սոկր. Ա.պա ուրեմն հաճութիւն իսկ ամենայն՝

1 Յօր. Ե՞ զ առ՞ ինչ մարդկանէ։

2 Ցն. այլ փոքու իւիք կարօտացեալ եմ, քանզի պաշտօն՝ ոչ գիտեմ զո՛ր ինչ կոչես. քանզի չասես իսկ եթէ արդեւք որ ինչ պաշտօն առ այլ իրս իցեն, նո՞ւիք և առ գիտն իցեն։

3 Յօր. զ՞ի՞ս ամենայն ո՞ գիտէ՞...

4 Չաճուրիան, իստորև հոմէերեալ. գնէ ասա միշտ իբրու պաշտօն, դարձման։

վնոյնն գործէ, իբրու այսպիսիս ինչ, առ բարութեան և օգտակարութեան հաճեցելոյն. որպէս տեսանես արդ, իբրու ձիքն՝ի ձեռն ձիաւորութեանն հաճեցեալք՝ վնհադոյնք լինիցին. այսպէս քեզ Թուի։

Եւթ. Ինձ իսկ։

Սոկր. Եւ շունքն իսկ երբէք՝ի ձեռն որսորդութեան, և եզինքն՝ի ձեռն մշակութեանն, և այլքն ամենայն այսպէս. եթէ առ ինձս ինչ կարծես [1] հաճեցելոյն գոլ զհաճութիւնն։

Եւթ. Երդնլով Ա.բրամազդ, ես ոչ իսկ։

Սոկր. Ա.յլ վասն օգտակարութեանն։

Եւթ. Եւ որպէս ոչ։

Սոկր. Ա.րդ ձեմարտապէս և սրբութիւն հաճութիւն [2] գոլով յաստուածոյն՝ օգուտք է իսկ աստուածոյն, և լաւագոյնք զաստուածան առնէ, և դու զայս ինչ ներիցես Թերևս. իբրու քանզի յորժամ սուրբ ինչ գործես՝ լաւագոյն զնն յաստուածոյն գործիցես։

Եւթ. Երդնլով՛ի Զևս, ես ոչ իսկ։

Սոկր. Զի և ոչ ես, ա՛վ Եւթիփռոն, կարծեմ զայս ինչ քեզ ասել. քանզի բազում ուրուք [3] կարօտանայ. այլ՝ի սակս այսորիկ վերստին հարցանիմ, Թէ զինչ երբէք ասես զաստուածոյն հաճութիւն՝ ոչ վարկանելով զքեզ այսպիսի ինչ ասել։

Եւթ. Եւ ուղղապէս իսկ, ա՛վ Սոկրատէս. քանզի ոչ այսպէս ասեմ։

Սոկր. Ւոյ. այլ զինչ արդ, աստուածոյն հաճոյութիւն իցի Թերևս սրբութիւն։

Եւթ. Ո՛վ Սոկրատէս, որպէս ծառայքն զտէրն հաճեցուցանեն։

Սոկր. Իմանամ, զի պաշտօն ինչ Թերևս, իբրու Թուի, իցի [4] աստուածոյն։

Եւթ. Ա.մենևին իսկ։

ԺԶ. Սոկր. Ունիցիս արդեւք ասել. բժշկայն պաշտօնն զինչ գործոյ գործակից հանդիպիցի գոլով պաշտօնական, ոչ կարծես զի յաւուղջութեան։

Եւթ. Ես իսկ։

1 Յօր. գործիս։ 2 Յօր. Ե սրբութիւն և հաճութիւն գոլով։
3 Ա.յս է. բազում իւիք կարօտանայ։ 4 Յօր. Ռուիցէ։

Սոկր. Եւ զի՞նչ. նաւակառուցացն պաշտօնն զի՞նչ գործոյ գործակից պաշտօնական իցէ։

Եւթ. Յայտ է, ո՛վ Սոկրատէս, թէ 'ի նաւու ոք։

Սոկր. Եւ շինողացն իսկ ո՞ւր յայտ է, 'ի տա՞ն։

Եւթ. Այո՛։

Սոկր. Ասա՛ արդ, ո՛վ արիագոյն. և աստուածոցն պաշտօնական զի՞նչ գործ 'ի բաց գործէ [1] պաշտօնական գոլով. զի յայտ է թէ դու գիտես. քանզի աստուածային իրս քան զմարդիկ գեղեցկագոյն գիտել ասես։

Եւթ. Եւ Ճշմարտապէս իսկ ասեմ, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Ասա արդ վասն Արամազդայ, թէ զի՞նչ է այն ամենագեղեցիկ գործն՝ զոր աստուածքն 'ի բաց գործեն, մեւք պաշտօնէիւք վարելով։

Եւթ. Զբազումս և զգեղեցիկս, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Այլ սակայն զգլուխն սոցունց թերևս ասասցես դիւրապէս. զի և զօրավարքն, ո՛վ սիրելի, զյաղթութիւնն 'ի պատերազմի 'ի բաց գործեն՝ եթէ ո՞չ։

Եւթ. Ո՞րպէս ոչ։

Սոկր. Եւ բազում իսկ թուի ինձ. զի բարիս և մշակք, այլ սակայն գլուխն սոցունց գործոյն, առ 'ի յերկրէ կերակուրն։

Եւթ. Ամենևին իսկ։

Սոկր. Եւ զի՞նչ արդ, 'ի բազմացն և գեղեցկագունիցն այնոցիկ, որ աստուածքն գործեն, զի՞նչ է գլուխն 'ի բաց գործելոյն։

Եւթ. Ես սակաւ ինչ յառաջագոյն ասացի քեզ, ո՛վ Սոկրատէս, եթէ գործ ինչ քեզ պարզաբար ասեմ. զի եթէ շնորհելով գիտասցէ ոք՝ յաստուածոցն ասել իսկ և գործել ըղձալով իսկ և զոհելով, այսոքիկ [2] են սուրբք և աստուածայինք, և կեցուցանեն այսպիսիքս [3] զառանձին տունսն և զհասարակացն. և ներհակն շնորհելոց՝ ամբարիշտք են, որ և դարձուցանէ զամենայն տունսն և կորուսանէ։

1 Ի բաց գործէ կամ բացագործէ է նիւթական թրգմ. յունին, որ է լոկ՝ գործել։ 2 Յօր. զայսոքիկ։
3 Յօր. զայսպիսիքս։

ԺԷ. Սոկր. Ճշմարտապէս յոյժ՝ ինձ 'ի ձեռն սղագունից, ո՛վ Եւթիփռոն, եթէ կամէիր՝ ասէիր թերևս զգլուխն վասն որոյ հարցանէի [1], այլ ո՛չ յօժարագոյն ես՝ իբրու յայտ է ինձ՝ ուսուցանել զիս. և զի այժմիկ քանզի առ այս ինչ հասար՝ 'ի բաց դարձար, զոր եթէ տուեալ էիր ինձ պատասխանի՝ բաւականապէս թերևս առ 'ի քէն զսրբութիւնն ուսեալ էի. բայց այժմիկ, – հարկ է հարցողին հետևիլ հարցելոյն՝ ուր և նա գնասցէ, – զի՞նչ արդ իսկ ասես գոլ զսուրբն և զսրբութիւնն, ո՞չ մակացութիւն ինչ զոհելոյն իսկ և ըղձալոյն։

Եւթ. Ես իսկ։

Սոկր. Ապա ուրեմն զոհելն՝ պարգևս է աստուածոցն, և ըղձալն՝ հայցելն է առ 'ի յաստուածոցն։

Եւթ. Եւ մանաւանդ, ո՛վ Սոկրատէս, արդարագոյն։

Սոկր. Մակացութիւն արդեւք հայցուածոյ և տրոց աստուածոցն սրբութիւնն թերևս իցէ յայսմիկ բանէս։

Եւթ. Ամենևին բարեւք խորհեցար առ որ ինչ ասացի։

Սոկր. Զի ցանկացօղ եմ, ո՛վ սիրելի, իմաստութեանդ, և մտօքս նայիմ առ սա. իբրու ոչ 'ի ստորին գլորեսցի՝ զոր ինչ և ասիցես. այլ ասա ինձ, զի՞նչ է այդ իսկ պաշտօնդ աստուածոցն, զհայցե՞լն [2] ասես 'ի սոցանէ և զտալն սոցունց։

Եւթ. Ես իսկ։

ԺԸ. Սոկր. Ո՛չ արդեւք ուղղապէս հայցելն թերևս իցէ՝ որոց կարօտանամք առ 'ի սոցունց, զայսոքիկ 'ի սոցանէ հայցել։

Եւթ. Եւ զի՞նչ։

Սոկր. Եւ տալն իսկ ուղղապէս՝ որոց նոքա հանդիպին աղաչեցեալք առ 'ի մէնջ, զայդոքիկ նոցունց իսկ տալ փոխարէն. քանզի ոչ երբէք արհեստական իցէ ընծայելն՝ տալով ուրուք զայնոքիկ որոց ոչ կարօտանայ։

Եւթ. Ճշմարտապէս ասես, ո՛վ Սոկրատէս։

Սոկր. Վաճառական արհեստ ինչ իցէ, ո՛վ Եւթի-

1 Յօր. հարցանէ։ 2 Յօր. զհայցեալն։

փռոն, սրբոշթիշն աստուածոց և մարդկան առ մի-
մեանց։

Եշթ. Վաձառական արհեստ՝ եթէ այդպէս հեշտ է
քեզ անուանել։

Սոկր. Այլ ոչ ինչ ինձ հեշտ է. իսկ եթէ ոչ հան-
դիպի ճշմարիտ գոլ, ասա ինձ ո՛ր օգուտ աստուածոցն
հանդիպի գոլ 'ի պարգևացն յայնցանէ՝ զորս առ 'ի
մէնջ առնուն. զի զոր տանն ամենեցուն յայտ է, զի
ոչ ինչ է բարի զոր ոչ նոքա տան մեզ, և զոր ինչ 'ի
մէնջ առնուն զի՞նչ օգուտ իցէ. թէ այսչափ զսոքօք [1]
յաղթահարեմք զվաճառականութեանն. իբրու և զա-
մենայն բարութիւն առ 'ի սոցունց առնումք, և նոքա
առ 'ի մէնջ ոչինչ։

Եշթ. Այլ կարծես, ո՛վ Սոկրատէս, զաստուածսն
շահե՞լ առ 'ի մէնջ այնոքիւք [2] որ 'ի մէնջ ընդունին։

Սոկր. Եւ զի՞նչ երբէք իցէ այսոքիկ, ո՛վ Եւթի-
փռոն, առ 'ի մէնջ պարգևս աստուածոց։

Եշթ. Եւ զի՞նչ կարծես, այլ քան եթէ՝ զպատիւ և
զշնորհս, որպէս այժմիկ ասէի։

Սոկր. Ապա ուրեմն շնորհիչք [3] է աստուածոցն
սուրբն, ո՛վ Եւթիփռոն, և ոչ օգտակար և ոչ սիրելի
աստուածոցն։

Եշթ. Եւ յաւէտ իսկ։

ԺԹ. Սոկր. Աքանչելի արդ թուիս զայսոքիկ ա-
սելով, եթէ բանքս քեզ երևեսցին ոչ մնացեալք՝ այլ
գնացեալք, և պատճառիցես զիս զԴեդաղ՛իս առնել
զսոսա [4] գնացողս, դու գոլով յոյժ իսկ արհեստակա-
նագոյն քան զԴեդաղոս, շրջանակի պարագայութիւն
տալով սոցա։ Եթէ ո՞չ զգաս, զի բանս մեզ պարագա-
յելով՝ դարձեալ 'ի նոյնս հասանի. քանզի յիշեմ ու-
րուք [5] զի յառաջագոյնսն՝ սուրբն իսկ և աստուածասէրն
ոչ նոյն մեզ երևեցաւ, այլ այլք 'ի միմեանց, եթէ ո՞չ
յիշես։

Եշթ. Ես իսկ։

Սոկր. Այժմիկ արդ ո՞չ իմանաս զի զաստուածոցն

4 Յօր. զսոք։
2 Յօր. այնոքիկ։
3 Շնորհիչք, հաճոյականք, շնորհալիք։
4 Յօր. զսոցա։
5 Այս է. ուրեք։

սիրելին ասես սուրբ գոլ, և այս ինչ այլ զի՞նչ՝ քան ե-
թէ աստուածասէր լինիցի. այսպէս՝ եթէ ո՞չ։

Եշթ. Ամենևին իսկ։

Սոկր. Ո՞չ ապաքէն կամ այժմիկ ո՛չ բարեւք խոս-
տովանիմք, և կամ եթէ յայնժամ բարեւք, այժմիկ
ոչ ուղղապէս առնեմք։

Եշթ. Թուի իսկ։

Սոկր. Իսկզբանէ [1] արդ մեզ դարձեալ խնդրելի է՝
թէ զի՞նչ է սուրբն. քանզի ես նախ քան զուսանելն
կամաւ գոլ ո՛չ զանգիտեցից, այլ մի՛ զիս անարգիցես,
այլ ամենայն եղանակաւ նայելով մտօք՝ իբրու յաւե-
տագոյն ասա զճշմարիտն. քանզի գիտես քան եթէ
այլ ոք 'ի մարդկանէ, և ոչ ևս թողացուցանելի, որ-
պէս Պռոտեւսն նախ քան եթէ ասիցես. քանզի եթէ
ոչ գիտիցես հաւաստի զսուրբն իսկ և զանսուրբն, ոչ
երբէք ձեռն արկեալ յաղագս առն ումեմն վատթարի
զայր ծերոշնի և զհայր հալածել 'ի սակս սպանման, այլ
և յաստուածոցն արդ տագնապելով՝ գուցէ ոչ ուղղա-
պէս զայս ինչ արասցես և 'ի մարդկանէ ամաչել. բայց
այժմիկ քաջ գիտեմ, զի հաւաստի [2] կարծիս գիտել
զսուրբն և զոչն. ասա՛ արդ, ո՛վ լաւագոյն Եշթիփռոն.
և մի՛ ծածկեսցես զոր ինչ վարկանիս զսա։

Եշթ. Այսրէն արդ յայսմ ժամու, քանզի այժմիկ
փութամ և ժամն յինէն հեռանայ։

Սոկր. Ո՞րպէս առնես, ո՛վ ընկեր, մեծի յուսոյ
արկեալ զիս գնաս. զոր ունէի իբրու առ 'ի քէն ոշ-
սեալ զսուրբն և զոչն. և գրոյն որ առ Մելիտոս՝ 'ի բաց
փոխեցայց, ցուցեալ նմա՝ զի իմաստունս առ աստուա-
ծային իրս աւասիկ յԵւթիփռոնէ եղէ. և զի ոչ ևս 'ի
ձեռն անգիտութեան ընքնագիր լինիցիմ, և ոչ նորա-
ձևեմ զայսոսիկ [3]. այլ և զմնացեալ կենցաղն իբրու
լաւագոյն կենցաղավարեցայց։

1 Յօր. Եւս բանէ։
2 Յօր. հաւատս։
3 Յօր. այսոքիկ։

ՊՂԱՏՈՆԻ

ՍՈԿՐԱՏԱՅ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Զոր ինչ դուք իսկ, ո՛վ արք Աթենացիք, ախտացայք ի՛ ձեռն իմոյ ջատագովիցն՝ ոչ գիտեմ[1]. բայց ես արդ ի՛ ձեռն սոցա փոքր ինչ և մոռացայ զանձն իմ: այսպէս հաւանապէս ասէին. և մանաւանդ Ճշմարիտ իսկ, իբրու տաղ ասելով[2], ոչ ինչ ասէին, այլ մանաւանդ ի՛ սոցունց բազմաց իրաց՝ յորոց ստեցին զմի[3] ինչ աքանչացայ, զայս ինչ յորում ասէին իբրու պարտ է ձեզ զգուշանալ՝ զի մի՛ չինիցէն պատրեսջիք, իբրու յասելն երագագոյն իմ գոլով: Քանզի ոչ ամաչէին՝ զի վաղվաղակի չինիցն յանդիմանեսցին գործով, յորժամ իբրու ոչ և միով իւիք երևեսցիմն երագ առ՛ի յասել, զայս ինչ ինձ թուեցաւ սոցունց անամօթագոյն գոլ. եթէ ոչ արդեւք երագ[4] կոչեսցեն սոքա ասել զայնմիկ՝ որ զՃշմարիտն ասէ: Իսկ զի եթէ զայս ինչ ասեն՝ խոստովանեցայց Թերևս և ես իսկ ոչ զսոսա հեռաւորս գոլ. քանզի սոքա, որպէս ես ասեմ, կամ զմի ինչ կամ ոչ ինչ Ճշմարիտ ասացին: Արդ դուք լուարուք իմոյ ամենայն Ճշմարտութեան: Ոչ իսկ, երդնլով Այրամազդ, ո՛վ արք Աթենացիք, գեղեցկապաճոյճ իսկ բանք՝ որպէս նոցայն՝ են, բայիւք[5] իսկ և անուամբք, և ոչ զարդարեալք. այլ լուիցէք անպաճոյճ ասացեալք զինչ և հանդիպեսցի անուամբք: Քանզի հաւատամ արդար գոլ՝ զոր ինչ ասեմ, և ոչ մի ոք ի՛ ձէնջ ակն կալցի այլ պէս. զի և ոչ երբէք վայել է, ո՛վ արք, այսմիկ հա-

1 Յօր. գիտէս. ջապաղով և ասա եդեալ է փոխանակ գատախազի:
2 Իբրու պաղ ասելով. ըստ յն. կամի ասել՝ դիւղ բանիս, դիանգամայն ասել:
3 Յօր. զի գ: 4 Յօր. արդեաւ էի երագ. խոչեսցեն զսոքա ասել:
5 Յօր. բայց իւէ:

սակի իբրու պատանւոյ ստեղծլով ինչ բանք՝ առ ձեզ մտանել. և սակայն ամենևին, ո՛վ արք Աթենացիք, զձեզ պաղատիմ և աղերսեմ եթէ 'ի ձեռն նոյն բանիցս լուիցէք ինձ որ առնեմս պատասխանի, 'ի ձեռն որոյ իսկ սովորեալ եմ ասել 'ի հրապարակի և 'ի սեղանսն, որպէս և 'ի ձէնջ բազումք լսեալ են և այլոքր, մի՛ զարմանալ և մի՛ զարհուրիլ 'ի սակս այսորիկ, քանզի այսպէս ոչնի: Արդ ես յառաջ հանդիսարանեալ հասի [1] ամաց աշելի քան զեօթանասուն, անարհեստաբար [2] արդ օտարապէս ունիմ այսմ բանիցս որ անդանօր է. որպէս զի թէ ամենևին օտար հանդիպէի գոլով՝ ճանաչէիք երբէք զիս, թէ այնոր ձայնիր և յեղանակաւն ասէի, որով և սնեալ լինէի: Եւ արդ այժմիկ վասն այսորիկ աղաչեմ զձեզ, — իրաւապէս իբրու ինձ իսկ թուի, — բառիցս եղանակիս թոյլ տալ. (զի թերևս վատթար իսկ և կամ լաւագոյն իցէ արդեւք). այլ զայս ինչ զնոյնս գիտել, և զմիտս առ այս ինչ ունել, եթէ իրաւ ասեմ և եթէ ոչ. քանզի դատաւորի իսկ առաքինութիւն՝ այս ինչ, հեռետորի՝ ասելն զճշմարիտն:

Բ. Նախ իսկ արդ իրաւ եմ 'ի պատասխանիսն, ո՛վ արք Աթենացիք, ըստ առաջին սուտ ջատագովութեանն և առաջին ջատագովս, և ապա առ վերջինսն: Քանզի իմ բազում ջատագովք եղեն առ ձեզ, և երբեմն և աւասիկ ևս բազումք [3], բայց ոչ ինչ ճշմարիտ ասելով. յորոց ես մանաւանդ երկնչիմ, քան եթէ յԱնիւտոսեանց, և մանաւանդ և սոցա գոլով չարաչար. բայց նոքա երագագոյնք էին 'ի չարն, ո՛վ Աթենացիք, որք 'ի ձէնջ զբազումս 'ի մանկութենէ ընկալեալք՝ հաւանեցուցանէին իսկ, և զիս ջատագովէին մանաւանդ ոչ ինչ ճշմարիտ: Իբրու և Սոկրատէս՝ այր ոմն իմաստուն, բարձրագունիցն իսկ քննող, և այնոցիկ որ ներքոյ երկրի ամենայնի խնդրող, և նուազ բանին՝ վեհագոյն արարող: Սոքա, ո՛վ արք Աթենացիք, զհամբաւս զայս զինէն արծարծեալ են իմ երագագոյնք

1 Յօր. հասու:
3 Անարհեստաբար. արդարև, յիրաւի:
2 Յն. երբեմն և ամս բազումս:

ստորոգողքն [1]. քանզի որք լսենն՝ վարկանին զայնոսիկ որք խնդրենն զայնոքիկ, ո՛չ աստուածք կարծել. և ապա են այսոքիկ ստորոգողք բազում ժամանակաւ իսկ ստորոգեալք. և տակաւին առ այսուիկ հասակաւս ասելով ցձեզ, յորում և մանաւանդ հաւատացիք մանկունք գոլով ոմանք 'ի ձէնջ և պատանիք՝ անարհեստաբար միայն ջատագովելով. պատասխանի տալով ոչ ուրուք: Եւ որ ամենեցուն [2] անբանագոյն է՝ զոր ոչ և զանուանքն իւրեանց թէ որպիսի՛ են՝ գիտեն ասել, սակայն եթէ ոչ՝ ոք [3] քերթող կատակերգութեան հանդիպելով: Բայց որչափ [4] մախանօք և դաւաճանութեամբ վարելով՝ վերստին հաւանեցուցանէին զձեզ, և ոմանք՝ ինքեանք հաւանեալք էին, և զայլս հաւանեցուցանէին, սոքա ամենեցուն դժնդակք են. քանզի՝ ոչ ելուցանել զոր'դ իցէ [5] 'ի սոցանէ աստանօր և ոչ յանդիմանել ոչ և մի ոք, այլ արդարև հարկ է որպէս ստուերամարտ լինել բնդ ջատագովելոյն և յանդիմանել, ոչ ոչրոչք պատասխանի տալով: Արժանացուցէք արդ և դուք, որպէս ես ասեմ, կրկին դատախազս ինձ լեալք. զմին՝ [6] այժմ ստորոգողս, այլք՝ որ երբեմն — ստորոգեցին՝ և զմիւսք զայնոսիկ զոր ես ասեմ. և կարծիցէք պարտ գոլ առ նոսա նախ առնել պատասխանի, քանզի և դուք նոցուն նախ լուարուք ստորոգելով, և յոյժ մանաւանդ՝ քան եթէ այսոցիկ վերջնոցս: Իցէ. պատասխանիդ արդ տալ պարտ է, ո՛վ արք Աթենացիք, և ձեռնարկելի է 'ի բաց խլել զդաւաճանութիւնդ ձեր, զոր դուք բազում ժամանակաւ ունիք, զայնպիսի և սակաւ ժամանակաւ [7]: Արդ կամիմ իսկ զի այս ինչ այսպէս լինիցի, եթէ լաւագոյն է ձեզ և ինձ, և առաւել ինչ առնել ինձ՝ տալով պատասխանի. բայց կարծեմ զայս ինչ

1 Այս է. հզօր դատախազքն իմ:
2 Յօր. տալով ոչ ուր և զինչ ամենեցուն:
3 Այս ինքն՝ բայց եթէ ոք քերթող...: Ակնարկէ յԱրիստոփանէս:
4 Այս է. բայց որք մախանօք...
5 Յն. քանզի յատեան ելանել ոչ է հնար աստանօր և ոչ միում 'ի սոցանէ, և ոչ...
6 Յօր. զի մ:
7 Յն. զայն՝ յայսպիսի սակաւ ժամանակի.

դժուարին գոլ, և ո՛չ ամենևին զանխլի յինէն՝ թէ որ-
պիսի է. սակայն այս իսկ ինչ գնասցէ՝ ուր և յաստու-
ծոյ սիրելի է, բայց յօրինացս հաւանել պարտ է և
տալ պատասխանի։

Գ. Վերստին արդ առցուք իսկզբանէ, թէ զի՞նչ
է ստորոգութիւն[1] յորմէ իմս եղև դաւաճանութիւն,
որոյ և հաւատալով Մելիտոս՝ գրեաց զինէն զգիրդ
զայդ։ Իցէ. արդ զի՞նչ ասելով դաւաճանեսցեն զիս՝
որք դաւաճանողք իմ էին։

Արդ՝ որպէս ստորոգողացն զգիր երդման սոցունց
վերծանել պարտ է. ՍՈԿՐԱՏԷՍ ԱՆԻՐԱՒԷ ԵՒ ՉԱ-
ՐԻՍ ԳՈՐԾԷ ԽՆԴՐԵԼՈՎ ՉԱՅՆ ԻՍԿ ՈՐ ԸՆԴ ԵՐ-
ԿՐԱՒ ԵՆ ԵՒ ՉԵՐԿՆԱՅԻՆՍ, ԵՒ ՉՆՈՒԱՉ ԲԱՆՆ
ՎԵՀԱԳՈՅՆ ԱՌՆԵԼՈՎ, ԵՒ ՉԱՅԼՍ՝ ՉՆՈՅՆՍ ՉԱՅ-
ՍՈՍԻԿ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՎ։ Այսպիսի ինչ է. քանզի
զայսոսիկ տեսեալ էք և դուք յԱրիստոփանոսի կա-
տակերգութեանն, զՍոկրատէս ոմն անդ շրջաբերե-
լով, և ասելով իսկ՝ զօդս կոխել, և զայլ ինչ շաղփաղ-
փութիւն լեզուագարելով, յաղագս որոց ես ոչ ինչ ոչ
մեծ և ոչ փոքր ասացեալ եմ։ Եւ ոչ իբրու անարգե-
լով զայսպիսի մակացութիւնս ասեմ զայս ինչ՝ եթէ ոք
յաղագս այնպիսեացն իմաստուն իցէ, զի ոչ ես տա-
կաւին 'ի ձեռն Մելիտէի այսչափ հանդիսօք փախ-
չիմ[2]. այլ զի ինձ 'ի սոցունց, ո՛վ արք Աթենացիք, ոչ
ինչ նիւթ գոյ. և վկայք առտուեմ 'ի ձէնջ զբազումս,
և աղաչեմ զձեզ՝ զմիմեանս ուսուցանել իսկ և ասել
և որչափ երբէք լուայք յինէն տրամաբանելով։ Եւ
բազում 'ի ձէնջ են այդպիսիքդ. ասացէք արդ մի-
մեանց՝ եթէ երբէք և փոքր ինչ և կամ մեծ լուաւ ոք
'ի ձէնջ՝ իմ յաղագս այսոցիկ տրամաբանելով, և յայս-
ցանէ ծանուսցուք՝ զի այսպիսիք են և յայլս յաղագս
իմ, զորս ասեմս բազումս[3]։

Այլ քանզի և ոչ յայսցանէ ոչինչ է, և ոչ իսկ
եթէ յումեքէ լուայք՝ իբրու ես խրատել զմարդիկ
ձեռնարկեմ, և ինչս պահանջեմ, և ոչ այս ինչ է ճըշ-

1 Ամբաստանութիւնն։
2 Այս է. 'ի ձեռն Մելիտեայ յայսչափ դատաստանս մատնէի։
3 Յն. զի այսպիսիք են և այլքն յաղագս իմ, զորս ասեն բազումք։

մարիտ. քանզի և այս իսկ ինձ թուի բարի գոլ՝ եթէ
ոք որպիսի և իցէ խրատէ զմարդիկ[1], որպէս Գորգիաս
իսկ լեւոնդինոս[2], և Պրոդիկոս կիացին, և Իպպիաս
ելիացին. քանզի 'ի սոցունց իւրաքանչիւր ոք, ո՛վ արք,
որպիսի իսկ և է՝ հասանելով առ իւրաքանչիւրսն 'ի
քաղաքացն, զհամբակսն՝ յորոց և պարտ իցէ յիւ-
րեանց քաղաքակցացն յանկին 'ի միասին գոլ՝ որոյ և
կամեսցին, սոքա հաւանեցուցանեն՝ զնոցունց զուգա-
ւորութիւնն 'ի բաց թողուլ և ինքեանց հետևիլ, և
ինչս տալով և շնորհս խոստանալով։ Քանզի այլ ոմն
այր պարիացի աստանօր իմաստուն, զոր ես իմացայ ե-
կեալ. քանզի հանդիպեցայ առ այր մատուցեալ՝ որ
տուեալ է ինչս ճարտասանաց յոլովագոյնս, քան եթէ
ամենեքեան 'ի միասին այլքն, Կալիայի Իպպաւնիկոսի
որդւոյն. զսա արդ հարցանէի, — զի էին սորա երկու
որդի —. և ասացի ես, ո՛վ Կալիա, եթէ որդւոց քոց
յաւանակ և երինջք հանդիպեալ էր՝[3] ունէաք թե-
րևս նոցա[4] մակացողս ընկալուլ և վարձել, զոր և
հանդերձեալ էր սոցունց աղնիւ իսկ և բարի առնել
առ պատշաճաւոր առաքինութիւնն. և էր[5] այնպիսին
կամ 'ի յերիվարականացն ոք կամ 'ի մշակացն. բայց
այժմիկ քանզի մարդիկ գոլով՝ զո՞ ոք սոցա[6] 'ի մտի
քո ունիս առնուլ մակացող, ո՞ ոք այդպիսի առաքինու-
թեանդ՝ մարդկայնոյդ իսկ և քաղաքականիդ՝ մակա-
ցող է. քանզի կարծեմ իբրու խնդիր է քո արարեալ
վասն ուստերացն ստացմանն. է՞ ոք, ասացի ես, եթէ
ոչ։ Ամենևին իսկ, նա այսպէս ասաց։ Ո՞ ոք, ես ա-
սացի, և որպիսի՞ ոք և առ ո՛րչափ ուսուցանէ[7]։ Եւի-
նոս, ասէ, ո՛վ Սոկրատէս, պարիացի՝ հնկից մնասից.
և ես զԵւինոս երանեցի՝ եթէ իբրու ճշմարտապէս
ունիցի զարհեստս զայս, և այս ներդաշնակապէս ու-
սուցանէ, և ես արդ ինքեամբ գեղեցկանայի իսկ և

1 Ըստ յն. եթէ ոք կարող իցէ խրատել զմարդիկ։
2 Յօր. որպէս Գորգիաս իսկ և Լեւոնդինոս։
3 Յօր. եթէ որդոց քո Պօղոսի և Մօսքոսի հանդիպեալ էի ունէաք. (զյոյն յաւանակ և երինջ բառսն իբրև անուն համարի որդւոց)։
4 Յօր. զնոսա։
5 Յօր. և ասէ այնպիսին։
6 Յօր. 'ի սոցանէ։
7 Յօր. որչափ առուսուցանէ... և Էնոս։

պանծանալի Թերևս՝ եթէ զայսոսիկ գիտէի. սակ զի ոչ գիտեմ, ուր աղբ Աթենացիք, զմտաւ արդ ՚ի ձէնջ Թերևս ածէ ոմն. Հարցանիցէ զիս արդ ՚ի ձէնջ ոք Թերևս ասելով. այլ ուր Սոկրատես [1], քոյդ զի՞նչ էր. ուստի՞ եղեն քեզ դաւաճանութիւնդ այդ. ոչինչ երբէք քան զայլս աւելի իրողութիւն գործելով, ընդ֊ի՞ր իսկ այսպիսի համբաւ և բան եղև, և եթէ ոչ ինչ գործիր այլ այսպիսի քան եթէ այլք: Այս արդ մեզ զի՞նչ է. զի մեք ոչ յաղագս քո լինդ֊ութեան ընքնագիրը: Ձայս՝ ինձ որ ասեն յիրաւի Թուեցոյի ասացեալն, և ես ձեզ փութացայց ՚ի բաց ցուցանել, Թէ զինչ երբէք է այս ինչ՝ որ արար ինձ զանունս և զդաւաճանութիւնս, լուարուք. և Թերևս Թուեցոյց ևս ոմանց [2] ՚ի ձէնջ խաղալ կասցնել [3]. սակայն քաջ գիտացիք, զի զամենայն ձշմարտութիւնն ասացից: Ես, ուր աղբ Աթենացիք, վասն այլոց ոչ իրիք՝ բայց վասն իմաստութեան ուրեք՝ [4] յանդիմանելով զդիւթարանն, և բացերևեցուցանելով տեսլեանն, զի այս ոմն ինչ քան զիս իմաստնագոյն: Եւ դու զիս գիտացիր. դիտելով արդ յաղագս այսորիկ, – քանզի անուամբ ոչ ինչ կարօտանամ ասել, բայց էր ոմն ՚ի քաղաքականացս, առ որոյ ես դիտելով՝ այսպիսի ինչ կրեցի, ուր աղբ Աթենացիք –, և տրամաբանելով ընդ սմա՝ Թուեցաւ ինձ այրս այսպիսի Թուեցեալ իսկ դու իմաստուն այլոց բազմից ՚ի մարդկանէ և մանաւանդ անձին իւրում, գոլով ոչ [5]. աստուստ արդ սմա Թշնամի եղէ և բազմից որ մերձ պատահէին: Այր անձն իմ արդ գնացեալ խորհեի Թէ առնս այսմիկ ես [6] իմաստնագոյն եմ. քանզի տագնապի ՚ի մէնջ [7] ոչ ոք ուր և մի ամենիւ կամ բարի գիտել, այլ սա իսկ կարծէ գիտել՝ ոչ գիտելով. բայց ես որպէս արդ ոչ գիտեմ և ոչ կարծեմ գիտել [8]: Այս-

1 Յօր. այլ ոմն Սոկրատէս... զինչ էիր:
2 Յօր. և սիրմանց:
3 Թուի՝ խաղ առնել:
4 Յօր. ասէ:
5 Յօր. արժանապատիւ:
6 Յօր. ոորտոփ:
7 Յօր. հանդերձեօք... Պերբեռն:
8 Յօր. յոյժգին առ ուր ինչ ընթանայր:

ցաւ զայս ինչ դիւթել: Եւ որպէս ասացի՝ մի զարհուրիք, ուր աղբ. քանզի Հարցանէր իսկ Թէ ուր է քան զիս իմաստնագոյն. նշանակեաց իսկ Պիւթիա՝ ոչ ևս զմի ոք իմաստնագոյն գոլ. և յաղագս այսոցիկ եղբայրն նորա՝ այս ոմն՝ վկայեսցէ ձեզ, քանզի նա վախճանեալ է:

Ե. Նայեցարուք արդ ՚ի սակս որոյ ասեմք զայսոքիկ, զի հանդերձեալ եմ ուսուցանել զձեզ՝ ուստի եղև ինձ դաւաճանութիւն. քանզի զայս ոք ես լուեալ զմտաւ ածէի այսպէս Թէ զինչ երբէք ասէ աստուած և զինչ երբէք նշանակէ. զի ես արդ ոչ մեծ և ոչ փոքր ինչ գիտեմ առ անձն իմ գոլ իմաստութիւն. զինչ արդ երբէք ասէ՝ ասելով զիմաստուն գոլն, քանզի սուտ երբէք ոչ իցէ, զի ոչ սմա վայել է. և բազում իսկ ժամանակ տարակուսեալ էի՝ Թէ զինչ երբէք ասէ. ապա հազիւ ամենևին ՚ի խնդիր այսորիկ դառնայի [1] այսպիսի ինչ. ջոփայ առ ոմն ՚ի Թուեցելոցն իմաստուն գոլ, իբրու աստանօր իսկ՝ քան եթէ այլ ուրեք՝ [2] յանդիմանելով զդիւթարանն, և բացերևեցուցանելով տեսլեանն, զի այս ոմն ինչ քան զիս իմաստնագոյն: Եւ գու զիս գիտացիր. դիտելով արդ յաղագս այսորիկ, – քանզի անուամբ ոչ ինչ կարօտանամ ասել, բայց էր ոմն ՚ի քաղաքականացս, առ որոյ ես դիտելով՝ այսպիսի ինչ կրեցի, ուր աղբ Աթենացիք –, և տրամաբանելով ընդ սմա՝ Թուեցաւ ինձ այրս այսպիսի Թուեցեալ իսկ դու իմաստուն այլոց բազմից ՚ի մարդկանէ և մանաւանդ անձին իւրում, գոլով ոչ [3]. աստուստ արդ սմա Թշնամի եղէ և բազմից որ մերձ պատահէին: Այր անձն իմ արդ գնացեալ խորհեի Թէ առնս այսմիկ ես [4] իմաստնագոյն եմ. քանզի տագնապի ՚ի մէնջ [5] ոչ ոք ուր և մի ամենիւ կամ բարի գիտել, այլ սա իսկ կարծէ գիտել՝ ոչ գիտելով. բայց ես որպէս արդ ոչ գիտեմ և ոչ կարծեմ գիտել [6]: Այս-

1 Յօր. դառնա ՚ի այսպիսի:
2 Յօր. ոորտոփ:
3 Յն. մանաւանդ անձին իւրում, ոչ գոլով իմաստուն. և ապա զանացայ ցուցանել նմա, եթէ կարծի գոլ իմաստուն, այլ ոչ է. աստուստ արդ...:
4 Այս է. քան զայրս զայս:
5 Այս է. կարծի ՚ի մէնջ և ոչ ոք. յօր. ՚ի մէջ:
6 Յղյնն յաւելու՝ կարծեմ արդ քան զնա գոլ իմաստնագոյն, զի զոր ոչն գիտեմ՝ և ոչ համարիմ գիտել: Աստուստ...

տուստ առ այլ ոմն գնացի յայնցանէ որ քան զնա թուեցեալ էին իմաստնագոյն գոլ. և ինձ նոյնս այսոքիկ թուեցաւ. և աստանօր և սմա և այլոց [1] բազմաց լինէի թշնամի։

Է. Արդ յետ այսոցիկ աւասիկ ըստ կարգի գնացի՝ զգալով իսկ և տրտմելով, և երկնչելով զի՛ի բաց երևէի խստագոյն։ Բայց սակայն հարկաւոր գոլ ինձ թուէր՝ աստուծոյ իրին յոյժ փոյթ առնել, հասանել արդ պարտ է՝ դիտելով [2] զտեսիլն թէ զի՞նչ ասէ՝ առ ամենեսեան թուեցեալսն գիտել։ Եւ երդնլով՛ի Շունն, ո՛վ արք Աթենացիք, – քանզի պարտ է առ ձեզ ասել զՃշմարիտն, – այսպիսի ինչ ախտացայ ես Ճշմարտապէս։

Իսկ այնոքիկ որ յաւետագոյն ընտրեալք էին՝ թուեցան ինձ սակաւ ինչ կարօտանալ յոլովին կարօտացեալք գոլ խնդրելով իմ ըստ աստուծոյն. [3] և այլք յոռիք [4] թուեցեալք հեզագոյնք գոլ արք ըստ խոհեմապէս ունելոյն։ Պարտ է ձեզ արդ զիմս մոլորութիւն [5] ցուցանել՝ որպէս զցաւս ոմանս ախտացելոյ, զի ոչ ինձ առ յանձն յանդիմանութիւն լինիցին դիւթութիւն. քանզի յետ քաղաքականացն գնացի առ քերթողսն՝ ողբերգութեանցն իսկ և երկդուռն մեծավերջացն, և առ այլսն իբրու աստանօր յայտնապէս հասու լինիցիմ անձին իմոյ՝ սոցունց գոլով անուսումնագոյն։ Վերստին արդ առեալ զսոցունց քերդուածսն զայնոսիկ՝ որ թուէրն ինձ յաւետագոյնն իրաւորութեամբ առ՛ի սոցունց գործեալ, հարցանէի զսոսա թէ զի՞նչ արդեւք ասիցեն, զի համանգամայն ինչ և ուսանիմ առ՛ի սոցանէ։ Ամաչեմ արդ ձեզ ասելով զՃշմարիտն, բայց սակայն ասել պարտ է. զի իբրու տաղ ասէ [6], սակաւ ինչ ամենեքեան որ մերձ էին լաւագոյն թերևս ասէին յաղագս այնոցիկ՝ որ սոքա քերթեալ էին։

Ծանեա արդ և յաղագս քերթողացն այսուիկ

1 Յօր. և սմա այլոց։ 2 Յօր. թուէիր... գիտելով։
3 Յն. Իսկ այնոքիկ որ ընտիրքն թուեցան ինձ՝ որ խնդրեմն զաստուծոյն՝ փոքր մի ևս և չքաւորէին. և այլ յոռիքն...
4 Յօր. յոռինք։ 5 Յօր. մոլութիւն։
6 Զի իբրու տաղ ասէ. զի այսպէս ասել։

սակաւ, զի ոչ իմաստութեամբ քերթէին՝ զոր ինչ քերթեցին, այլ բնութեամբ ոմամբ արտաքոյ զգայութեան [1] լինելով, որպէս դիւթքն և տեսողքն տեսլեանն, քանզի և սոքա իսկ ասեն զբազումս և զգեղեցիկս. բայց գիտեն ոչ ինչ յայնոցիկ՝ որ ասեն։ Այսպիսի ինչ երևեցան ախտ ինչ և քերթօղքն ախտացեալք, և համանգամայն իմանայի զսոսա վասն քերթուածոյն կարծեցեալք և այլ իրս իմաստնագոյն գոլ մարդկան՝ զոր լսեալ ոչ էին։ Գնացի արդ և աստուստ այսպէս, կարծեցեալ յաղթիլ յումեմնէ՛ի քաղաքականացն։ Կատարեալ արդ զայսոսիկ՝ առ այն որ ձեռօք են արհեստաւորք՝ գնացի, քանզի զանձն իմ գիտէի ոչ և միոյ ուրուք գոլ մակացող՝ իբրու տաղ ասել։ Բայց զսոսա իսկ գիտէին՝ թէ գտանիցեմ բազում և գեղեցիկ իրաց մակացողս. և առ այս ինչ իսկ՝ ոչ ստեցայ, քանզի գիտէի՝ զոր ինչ ես ոչ գիտէի, և այսուիկ քան զիս իմաստնագոյնք էին։ Արդ, ո՛վ արք Աթենացիք, զնոյն ինչ թուեցան ունել սխալանս, որպէս և քերթողքն և բարի շինողքն. վասն զարհեստն բարեւք գործելոյն՝ [2] իւրաքանչիւր ոք արժանանայր և առ այլ մեծագոյնսն իմաստնագոյն գոլ։ Եւ զսոցունց զիմաստութիւն այնմիկ՝ այսպէս յածիլն թագուցանէր. իբրու վերստին հարցանել ինձ զանձն իմ վասն տեսլեանն՝ թէ որպէս ընդունեցայց, այսպէս թերևս ունել որպէս և ունիմ, ոչ իմաստուն ինչ գոլով ըստ նոցունց իմաստութեանն, և ո՛չ անուսումն ըստ անուսումնութեանն, եթէ ունել զերկաքանչիւրսն՝ զոր ինչ նոքա ունէին։ Պատասխանի արդ տայի յանձին և տեսլեանն՝ թէ զի՞նչ լաւագոյն է ունել՝ որպէս և ունիմ։ Արդ՛ի քննութենէս այսմիկ, ո՛վ Աթենացիք, բազում ինչ թշնամութիւնք եղեն և իբրու դժուարինք իսկ և ծանրագոյնք. իբրու բազում դաւաճանութիւնք յայտ է լինել, և անուն զայս ինչ ասել՝ իմաստուն գոլ. քանզի կարծեն զիս համապազ պատահեալքն այսոքիւք իմաստուն՝ որով զայլ ոք յանդիմանեմ։ Բայց Ճշմարտութեամբ տագնապի աստուածն, ո՛վ արք, գոլ իմաստուն, և տեսլեամբս այսմիկ զայս ինչ ասել՝

1 Յօր. ագայութեամբ։ 2 Յօր. գործելոյն։

զի մարդկային իմաստութիւնս սուղ ինչ և ոչ զմի ինչ արժէ. և երևի ասելն զսա Սոկրատէս իմով անուամբս վարիլ պիտակապէս, զիս առնելով յարացոյց [1] իբրու եթէ ասիցէ, եթէ սա քան զձեզ, ո՛վ մարդիկ, իմաստնագոյն է, որ՝ իբրու Սոկրատէս՝ իմացեալ է, զի ոչ և միոյ ուրուք արժան է ճշմարտութեամբ ըստ իմաստութեան։ Այսոքիկ արդ ես իսկ տակաւին և այժմիկ շրջելով խնդրեմ և քննեմ ըստ աստուծոյն՝ 'ի քաղաքացեացն և յօտարացն եթէ զոմն կարծեմ իմաստուն գոլ. և յորժամ ինձ թուիցի՝ աստուծոյն օգնելով 'ի բաց ցուցանեմ, թէ իմաստուն ոչ է։ Եւ 'ի ձեռն այսմիկ անպարապութեանս, ոչ ինչ 'ի քաղաքիս իրաց գործել բանի արժանի եղև ինձ պարապումն, և ոչ ընտանեացն, այլ 'ի բիւր տնանկութեան [2] եմ վասն պաշտամանն աստուծոյ։

Եւ առ այսոցիկ՝ համբակքն հետևելով ինձ, 'ի փարթամագունիցն՝ ինքնակամս, որոց մանաւանդ պարապումն գոյ, խնդան լսելով զքննութիւնս մարդկան. և սոքա բազում անգամ յիս նմանեն, ապա ձեռնարկութիւն առնեն զայլս քննել. և ապա կարծեմ, գտանեն բազում առատութիւն մարդկան կարծեցելոց [3] գիտել ինչ, և գիտողացս սակաւուց կամ ոչ և միոյ իրի։ Աստուստ արդ այնոքիկ՝ որ 'ի ձեռն սոցա քննեալք լինին՝ ինձ բարկանան, և ոչ սոցա. և ասեն՝ իբրու Սոկրատէս պղծագոյն ոմն է և ապականէ զհամբակսն։ Եւ ապա յորժամ ոք զսոսա հարցանիցէ՝ թէ զի՞նչ առնելով և կամ զի՞նչ ուսուցանելով, ունին իսկ ոչ ինչ ասել, քանզի չգիտեն [4]։ Բայց զի մի՞ թուիցին իբրու տարակուսեալք, զոր ինչ առ ձեզ եւ ամենայն իմաստասիրողաց, զայնոսիկ ասեն՝ եթէ զոր ինչ 'ի բարձունս են և զոր ինչ ընդ երկրաւ [5] և աստուածս ոչ կարծել, և զնուազագոյն բանն՝ վեհագոյն առնել. քանզի զճշմարիտն, կարծեմ, ոչ կամեսցին ասել, զի

1 Յօր. յորոց։
2 Յօր. այլ բիգին տնանկութեամբ եմ։
3 Յօր. գործեցելոց։
4 Յօր. քանզի գիտեն։
5 Յն. Բայց զի մի՞ թուիցին իբրու տարակուսեալք, զայսոսիկ ասեն գոլ առ ձեռն ամենայն իմաստասիրողաց, եթէ զոր ինչ 'ի բարձունս և զոր ինչ ընդ երկրաւ են՝ քննէ, և աստուածս ինչ չհամարի...։

յայտնիք լինիցին փութալով գիտել ինչ՝ ոչ ինչ գիտելով։ Արդ, կարծեմ, իբրու պատուասէրք գոլով և յուժգնագոյն և բազումք և շարակարգելով զբանս հաւանականս 'ի սակս իմ ասելով՝ լցուցին զականջս ձեր. և երբեմն յոյժ դաւաճանելով [1]։ Ի սոցունց և Մելետոս յարեաւ 'ի վերայ իմ, և Անիւտոս և Լիւկոն։ Մելետոս իսկ վասն քերդողացն տրտմեալ. Անիւտոս իսկ վասն շինողաց և քաղաքականաց, և Լիւկոն՝ վասն հեռետորացն։ Իբրու սկսեալ ես ասէի, սքանչանամ թերևս թէ ո՛րպէս ես կարէի զձեր զայս իսկ զդաւաճանութիւնս 'ի բաց խլել առ այսպիսի սակաւ ժամանակաւ եղեալ այսպէս բազում։

Այսոքիկ են ձեզ, ո՛վ արք Աթենացիք, ճշմարիտ բանքս. և ոչ ինչ 'ի ձէնջ՝ ոչ մեծ և ոչ փոքր՝ թաքուցանելով ես ասեմ և ոչ ամփոփելով. և մանաւանդ գիտեմ զի գրէ եթէ սոքօք այսոքիւք 'ի բաց լինիմ թշնամի. որ և նշանակ է՝ զի ասեմ ճշմարիտ, և զի այս են բամբասանք. և պատճառքն այսոքիկ են։ Եւ եթէ այժմիկ իսկ և եթէ յապա խնդրիցէք զայսոքիկ՝ այսպէս գտանիցէք։ Արդ յաղագս այնոցիկ՝ որ առաջին ջատագովքն իմ ստորոգէին՝ այս իցէ բաւական առ ձեզ պատասխանի։

ԺԱ. Իսկ առ բարին Մելիտոս և քաղաքասէրն, իբրու ասէ, և առ վերջինսն՝ յետ այսոցիկ փութացայց տալ պատասխանի. քանզի դարձեալ որպէս այսց ելով [2] ստորոգողաց՝ ընկալցուք իսկ զսոցայն հակառակութիւն, իբրու է այդպէս. զՍոկրատէս ասէ անիրաւել՝ զհամբակսն ապականելով, և զաստուածսն՝ զորս քաղաքս կարծէ՝ ոչ կարծելով, այլ այլ ինչ դիք նորագոյնք. իսկ արդ ամբաստանումս այսպիսի ինչ։ Բայց զայսմիկ ամբաստանութեանս զմի իւրաքանչիւր ոք քննեսցուք։ Զի ասէ զհամբակսն անիրաւել ինչ [3] ապականելով։

Բայց ես, ո՛վ արք Աթենացիք, անիրաւել ասեմ զՄելիտոս, զի փութով խնդայ, դիւրաւ 'ի հանդէսս

1 Յօր. դաւանելով։
2 Յօր. այցելով. այս է՝ այսոցիկ գոլով դատախազիցս։
3 Յն. ինձ։

կացուցանելով զմարդիկ՝ յաղագս իրողութեանց ջանալով փութալ և մատակարարել, այնոցիկ՝ յորոց և մի ինչ սմա ևս երբէք փոյթ լեալ է[1]. և իբրու այս ինչ այսպէս ունի՝ փութացայց և ձեզ ցուցանել։

ԺԲ. Եկ արդ, ո՛վ Մելիտէ, ասա՛ ինձ. այլ ինչ եթէ փոյթ առնե՞ս, որպէս զի լաւագոյնք համբակքն լինիցին։ Եւ Մելիտոս ասէ. Ես իսկ։ Արդ այժմիկ ասա ցսոսա. ո՞վ ոք զսոսա լաւագոյնս առնէ. զի եթէ գիտես, քանզի քեզ փոյթ է այն։ Ապականողն իսկ գտեալ, իբրու ասեն, զիս՝ 'ի ներքս մուծանես առ սոսա և ստորոգես. արդ զլաւագոյն արարողն եկ ասա և ազդեա[2] սոցունց՝ թէ ո՛ ոք է։ Տեսանես, ո՛վ Մելիտէ, զի լռես և ոչ ինչ ունիս ասել. և մանաւանդ ո՞չ թուի քեզ գարշելի գոլ և բաւական նշան այնմիկ՝ զոր ես ասեմ թէ քեզ ոչ ինչ է լեալ փոյթ վասն սոցա. այլ ասա, ո՛վ այր բարի, թէ ո՞ ոք զսոսա լաւագոյնս առնէ։

Մելիտ. Օրէնքն։

Սոկր. Այլ ոչ ինչ զայս հարցանեմ, ո՛վ վեհագոյն, այլ ո՞ ոք մարդ որ և նախ իսկ և զսոյն[3] զայս գիտէ զօրէնսն։

Մելիտ. Սոքա, ո՛վ Սոկրատէս, դատաւորքս։

Սոկր։ Ո՞րպէս ասես, ո՛վ Մելիտէս, սոքա՞ զհամբակսն խրատեն և իբրու լաւագոյնք առնեն։

Մելիտ. Զայդ յաւետագոյն[4] իսկ։

Սոկր. Ո՞րպէս, ամենեքեա՞ն. եթէ ոմանք 'ի սոցանէ, և միւսք՝ ոչ։

Մելիտ. Ամենեքեան։

Սոկր. Երդումն 'ի Հերա[5], զի բարւոք ասես, և բազում առատութիւն օգտողացս[6]. և լսողքս այսոքիկ՝ զի լաւագո՞յնք առնեն եթէ ոչ։

Մելիտ. Եւ սոքա։

Սոկր. Եւ խորհրդածուքն զի՞նչ։

Մելիտ. Եւ խորհրդածուքն։

1 Յն. յորոց և ոչ մի ինչ փոյթ լեալ է սմա։
2 Յօր. յաղդեա՛։
3 Յօր. զնոյս։
4 Յօր. յաւետագոյ։
5 Թերևս՝ Երդնում 'ի Հերա։
6 Յօր. առ գտողացս։

Սոկր. Ապա ուրեմն, ո՛վ Մելիտէ, այնոքիկ որ յեկեղեցւոջն են եկեղեցացուցի՞չքն ապականեն զհամբակսն, եթէ և նոքա լաւագոյնս առնեն։

Մելիտ. Եւ նոքա։

Սոկր. Ապա ուրեմն ամենեքին, որպէս թուի, Աթենացիք՝ ազնիւքս և բարիքս առնեն, բաց յինէն. և ես միայն ապականեմ, որպէս ասես։

Մելիտ. Ամենևին յոյժ զայդոսիկ ասեմ։

Սոկր. Բազում իսկ ծանեար զինէն թշուառականութիւն՝ բայց տուր ինձ պատասխանի, եթէ և յաղագս ձիոց ա՞յսպէս թուի քեզ առնել. և լաւագոյն արարողքս սոցա զամենա՞յն մարդիկ գոլ, և զմի ոմն ապականող. եթէ ներհակ այսոցիկ, զամենայն զմի ոմն զոր և իցէ՝ լաւագոյնս առնել, թէ և ամենևին սակաւք իցեն ձիաւորքն. բազումքն եթէ հանճարաւորք իցեն և վարին ձիօք՝ ապականեն. ո՞չ այսպէս ունի, ո՛վ Մելիտէ, և յաղագս ձիոց և այլոց ամենայն կենդանեաց. ամենևին արդ իսկ և դու Անիւտոս ոչ ասացէք իսկ[1], և եթէ ասիցէք։ Քանզի բազում ինչ բարեբաստութիւն իցէ զհամբակօքն, եթէ մի ոմն իսկ միայն զսոսա ապականէ, և այլքն շահեցուցանեն։ Այլ, ո՛վ Մելիտէ, բաւականապէս 'ի բաց ցուցար՝ զի ոչ ևս երբէք համբակաց արարեալ ես փոյթ, և բացերեւեցուցանես հաւաստի զանձին քո ծուլութիւն, զի ոչ ինչ երբէք քեզ փոյթ է լեալ յաղագս որոց մուծանես դու զիս։

ԺԳ. Եւ տակաւին ասա ինձ, ո՛վ Մելիտէ, երդնըլով 'ի Զևս. ո՞ր է լաւագոյն՝ բնակիլ առ քաղցունս քաղաքացիս, եթէ առ չարս. ո՛վ դու, տուր այդր պատասխանի. քանզի ոչ ինչ դժուարինս հարցանեմ զձեզ. ո՞չ իսկ չարքն չար գործ ինչ գործեն այնոցիկ՝ որ հանապազ սոցունց հպագոյն իցեն, բարիքն՝ զբարի ինչ։

Մելիտ. Ամենևին իսկ։

Սոկր. Իցէ՞ ոք արդ որ կամիցի առ 'ի մերձաւորացն վնասել, քան եթէ շահիլ. տուր պատասխանի, ո՛վ այր բարի. քանզի օրէնքն հրամայէ տալ պատասխանի, իցէ՞ ոք երբէք՝ որ կամիցի վնասիլ։

1 Յն. եթէ և դու և Անիւտոս ոչ ինչ ասիցէք. — յօր. Անդիտոս։

Մելիտ. Ոչ և միով իւիք։

Սոկր. Բեր արդ, ո՛րպէս զիս մուծանես աստանօր, իբրու ապականելով զհամբակն չարագոյնք առնելով, կամաւ եթէ ակամայ։

Մելիտ. Կամաւ իսկ։

Սոկր. Եւ զինչ արդ, ա՛վ Մելիտէ, այսչափ դու քան զիս որ ՚ի հասակիս այսմիկ իմաստնագոյն եմք պղպիսի դու դոլով [1]. իբրու դու իսկ ծանեաւր, զի չարքն իսկ զչար ինչ գործեսցեն հանապազ մերձաւորաց իւրեանց մանաւանդ, և բարիքն՝ զբարի ինչ. և ես յայսչափ յանուսումնութիւն վարեցայ, իբրու և զայսմիկ ոչ գիտեմ, զի եթէ զոմն փութամ չար առնել ՚ի մերձաւորացն՝ տագնապիմ զչար ինչ ընկալուլ ՚ի սմանէ. իբրու զի զայս ինչ այսչափ՝ կամաւ առնեմ, իբրու զոր դուդ ասես. զայսոսիկ ես քեզ ոչ հաւանիմ, ա՛վ Մելիտէ, բայց կարծեմ՝ զի ոչ և մի այլ ոք ՚ի մարդկանէ. այլ կամ ոչ ապականեմ, և եթէ ապականեմ՝ ոչ կամաւ. վասն որոյ և դու իսկ իւրաքանչիւրս ստես։ Ապա եթէ ակամայ ապականեմ, վասն այսպիսի ակամայ մեղացս՝ ոչ է օրէն աստանօր մուծանել, այլ անձին [2] ընկալուլ, ուսուցանել և խրատել. քանզի յայտ է որ եթէ ուսանիմ՝ դադարեմ յոր ինչ գործեմ իսկ չարէն ակամայ։ Բայց դու պահել ինչ և ուսուցանել փախեար և ոչ կամեցար. և աստանօր մուծանես զիս, ուր օրէն է [3] մուծանել զտանջանաց կարօտեալսն, այլ ոչ ուսման։ Ա՛յլ արդ Ա՛թենացիք, այս ինչ արդ յայտ է՝ զոր եսս ասեմ, զի սմա Մելիտոսի ոչ մեծ և ոչ փոքր ևս երբեք փոյթ է լեալ։

Թղ. Բայց սակայն մեզ [4], ո՛րպես ասես զինէն ապականելով, Մելիտէ, զհամբակագոյնն. կամ յայտ իսկ է, զի ըստ գրոյն՝ զոր գրեցեր, աստուածք՝ ուսուցանելով՝ ոչ կարծել զոր քաղաքս [5] իսկ օրինադրէ, այլ զայլս դևք [6] նորագոյնք. ո՛չ զայսոսիկ ասես՝ զի ուսուցանելով ապականեմ։

1 Ճն. այսչափ դու քան զիս իմաստնագոյն էիցես. դու այր պղպիսի՝ քան զիս՝ որ էիցեմն այդպիսի ոք։
2 Ճն. Ա՛յլ առանձին։
3 Ճօր. որ օրէնն մատչանել։
4 Ճն. Բայց ասա մեզ։
5 Ճօր. պաղատս։
6 Ճօր. դառ. — ապականէն։

Մելիտ. Ա՛մենևին արդ յոյժ զայսոսիկ ասեմ։

Սոկր. Վասն նոցունց այժմիկ, ա՛վ Մելիտէ, այսոչիկ աստուածոցս, յաղագս որոց այժմիկ բանս է՝ ասել ևս հաւաստիւ և ինձ և արանցս այսոցիկ, զի ես ոչ կարեմ իմանալ ո՛րպէս ասես զինէն ուսուցանել կարծել գոլ զոմանս աստուածս. — և ես արդեւք կարծեմ գոլ աստուածս, և ոչ եմ ամենևին անաստուած, և ոչ այսուիկ անիրաւեմ —. սակայն ոչ զայնոսիկ՝ զորս քաղաքս կարծէ, այլ զայլս. և այս ինչ է՝ զոր ամբաստանես զինէն, վասն զի զայլս կարծեմ. եթէ ամենևին առանց միանձն զի ոչ կարծեմ աստուածս, և այլոց այսպէս ուսուցանեմ։

Մելիտ. Զայսոսիկ ասեմ, իբրու ամենևին աստուածս ոչ կարծես։

Սոկր. Ո՛վ աքանչելի Մելիտէ, ընդէ՞ր զայսոսիկ ասես. ո՞չ [1] զարեգակն և ո՛չ զլուսին կարծեմ ես արդեւք աստուած գոլ՝ որպէս այլ մարդիկս։

Մելիտ. Երդնում ՚ի Զևս, ա՛վ աքը դատաւորք՝ քանզի զարեգակն քար գոլ ասէ, և զլուսինն՝ հող։

Սոկր. Զնաքսագորոսէ Թուիս ստորոգել, ա՛վ սիրելի Մելիտէ. և այսպէս արհամարհես զսոսա, և կարծես զսոսա անհմուտս գրոց գոլ, իբրու ոչ գիտել Թէ մատեանքն Անաքսագորոսի Կլազոմենիացւոյն լի են բանիւքս այսոքիւք. և համբակքս [2] արդ՝ զայսոսիկ առ յինէն ուսանին՝ զորս պարտ է, և յորժամ Թէ առ մենևին բազում՝ դրամաւ [3] ՚ի կաքաւարանէն գնելով, զՍոկրատեսաւ ծիծաղել. եթէ փութայ զսոսա գոլ անձին իւրոյ, այլաբար իսկ և այսպէս գոլով անտեղի։

Ա՛յլ ա՛վ դու՝ վասն Աբրամազդայ, ասա՝ այսպէս քեզ Թուիմ իբրու ոչ և զմի ոք կարծեմ գոլ աստուած։

Մելիտ. Ոչ իսկ, երդնում յԱբրամազդ, իբր ոչ և մի ոք։

Սոկր. Անհաւատ իսկ ես, ա՛վ Մելիտէ, որպէս Թուիս ինձ, և անձին քո. քանզի Թուի ինձ սա, ա՛վ

1 Ճօր. ո՞վ։
2 Ճօր. համբաւս։
3 Ճն. Ա՛ւ յինէն ուսանին, զորս արժան է երբեմն, եթէ և բազում, միով դրամով...

արք Աթենացիք, ամենևին գոլ թշնամանող իսկ և զեխ, և համբակութեամբ գրել։ Քանզի թուի իբրու նշան ինչ դնել և փորձ առնել եթէ՝ «Ծանիցէ՞ արդեւք իմաստունն Սոկրատէս՝ անձին իմոյ շնորհիչք առնելով[1]. և ներհականս ինքեան ասելով, թէ 'ի բաց պատրեմ զսա և զայլս իսկ լսողս»։ Զի այսպէս ինձ երևի զներհականսն ասելով սա անձին իւրոյ՝ գրովս, իբրու եթէ ասիցէ. Անիրաւէ Սոկրատէս՝ աստուածս ոչ կարծելով, այլ աստուածս կարծելով. և մանաւանդ այս ինչ է խաղալիս ուրուք։

ԺԵ. Ի միասին արդ՝ խնդրեցէք, ո՛վ արք Աթենացիք, ըստ որում երևի ինձ զայսոսիկ ասելով. բայց դու մեզ տուր պատասխանի, ո՛վ Մելիտէ. և դուք՝ որպէս իսկզբանն առ 'ի ձէնջ հայցեցի՝ յիշէք ոչ զիս զարհուրեցուցանել, եթէ ըստ սովորեալ յեղանակին առնեմ զբանքս։ Է՞ ոք 'ի մարդկանէ, ո՛վ Մելիտէ, որ մարդկային իրողութիւնք կարծէ գոլ և մարդիկ ոչ կարծէ. պատասխանի տացէ, ո՛վ արք, և մի՛ առ այլ ինչ և առ այլ զբաղեսցի. է՞ ոք որ ձիք իսկ ոչ կարծէ, և ձիոց իրողութիւնս կարծէ. կամ փողահարս իսկ ոչ գոլ կարծիցէ, և փողահարական իրողութիւնս կարծէ. ո՞չ իցէ այս ինչ, ո՛վ արիագոյնդ արանց։ Եթէ դու ոչ կամիցիս տալ պատասխանի, ես ասեմ քեզ՝ և այլոցս այսոցիկ։ Բայց դու այսմիկ՝ որ յետ այսորիկ են՝ պատասխանի տուր, է՞ ոք որ դիւցական իրութիւնս գոլ կարծիցէ, և դիս ոչ։

Մելիտ. Ոչ գոյ։

Սոկր. Իբրու շահեցուցեր զիս[2]. զի հազիւ ետուր պատասխանի 'ի ձեռն այսոցիկ հարկելով. ապա ուրեմն զդիս ասես զինէն[3] և կարծել և ուսուցանել, եթէ զնո՞րս և եթէ զհի՞նս. սակայն դիս կարծեմ[4] ըստ քոյոյ բանիդ. և երդուար զայսոքիկ 'ի քում գրին։ Ապա եթէ դիս կարծեմ, և դևս իսկ երբէք կարծել բազում հարկ է ինձ. ո՞չ այսպէս ունի։ Ունի իսկ։

1 Թերևս՝ շնորհ ինչ առնելով. Յն. Ծանիցէ՞ արդեւք Սոկրատէս իմաստունն 'ի շողոմելն իմում, և ներհակս ասելով անձամբ անձին։
2 Յն. ո՛րպէս աշխատ արարեր զիս.
3 Յօր. զինէ։
4 Յօր. ոչ կարծեմ։

Քանզի դնեմ զքեզ խոստովանեալ, զի ոչ տաս պատասխանի. և զդևսն իսկ աստուա՞ծք վարկանիմք, կամ աստուածոցն մանկունք. ասե՞ս՝ եթէ ոչ։

Մելիտ. Ասեմ իսկ։

Սոկր. Ապա ուրեմն եթէ դիս վարկանիմ իբրու դու ասես, եթէ աստուածք ոմանք են դիքն. այս ինչ արդեւք իցէ՝ զոր ես ասեմ նշանակել քեզ, և բերկրել զանձն քո. զինէն ասելով աստուածք ոչ վարկանիլ, և աստուածք դարձեալ կարծել. քանզի եթէ դևս վարկանիմ, և դևքն աստուծոց մանկունք են՝ եթէ խորթք ոմանք և եթէ 'ի հարսանց[1] և եթէ յայլոց ոմանց՝ որոց և ասեն իսկ, ո՞ ոք 'ի մարդկանէ աստուածոց մանկունս վարկանի գոլ, և աստուածս ո՛չ։ Քանզի նմանապէս թերևս իցէ անտեղի, որպէս թէ ոմն ձիոց իսկ մանկունք վարկանիցի և կամ իշոց՝ զջորիս, և ձիս և էշս ոչ վարկանիցի գոլ։ Այլ, ո՛վ Մելիտէ, ոչ գոյ՝ իբրու դու ոչ զայսոքիկ առանց քննութեան զմէնջ գրեցեր զգիրս զայս, և կամ տարակուսելով թէ զի՞նչ ամբաստանեսցես զինէն ճշմարիտ անիրաւութիւն. բայց զի հաւանեցուցանես զոմն թերևս զայն՝ որ փոքր ինչ միտս ունիցիս 'ի մարդկանէ, իբրու ոչ նոյն ինչ է զդևս և զաստուածայինս վարկանիլ, և դարձեալ նոյն ինչ՝ ոչ զդևս և ոչ զաստուածս և ոչ զդիւցազինս, ոչ և մի իցէ հնար։ Այլ, ո՛վ արք Աթենացիք, իբրու ես ոչ իսկ անիրաւեմ ըստ գրելոյդ Մելիտոսի, ոչ բազում պատասխանւոյ թուի ինձ կարօտանալ, այլ և այսոքիկ բաւական է։

ԺԶ. Բայց զոր ինչ յառաջագոյնսն ասէի[2] թէ բազում թշնամութիւն եղև ինձ և առ բազումս, քաջ գիտէք՝ զի է ճշմարիտ. և այս ինչ որ և սպանանիցէ զիս. թէ սպանանիցէ իսկ, ոչ Մելիտոս և ոչ Անիւտոս, այլ բազմաց դաւաճանութիւնն իսկ և մախանքն. որք և զայլք բազումք և զբարի արք սպանեալք, թուի ինձ թէ և սպանանիցեն. ոչ և մի՛ չար ինչ յիս գտանիցի։ Բայց թերևս ասիցէ ոք, ապա ոչ ամաչես, ո՛վ Սոկրատէս, այսպիսի խոկումն խոկացեալ՝ յորմէ այժ-

1 Այս է. յաւերժհարսանց։ Յօր. հարանց։
2 Յօր. ասէ։

միկ տագնապիս մեռանել։ Բայց ես այսմիկ Թերևս իրաւացի բան փոխանակ ասացից Թէ՝ ոչ բարւոք ասես, ո՛վ մարդ, եթէ կարծես պարտ գոլ՝ վիշտ խորհել զկալն և կամ զմեռանելն առն՝ որոյ և փոքր ինչ օգուտ իցէ. այլ ոչ զայն միայն գիտել, յորժամ գործիցէ ինչ, Թէ զի՞նչ՝ իրաւացի կամ անիրաւ գործիցէ, և զգործս առն բարւոյ կամ չարի։ Զի վատԹարքն [1] արդեւք իցեն քոյով բանիւդ 'ի կիսաստուածոցն՝ որչափ 'ի Տրուադայ վախճանեցան, այլքն իսկ և որդին Թէտդայ. որ այսչափ զվիշտս արհամարհեալ, քան Թէ զգարշելի ինչ 'ի յանձն առնուլ, որչափ զի ասէր ցնա մայրն իւր աստուածուհի գոլով յօժարացեալ զնորա զԷքտառոս [2] սպանանել, այսպէս՝ իբրու ես կարծեմ. Ո՛վ որդի, եթէ վրիժախնդիր լինիցիս Պատրոկլոսի ընկերի քո սպանմանն, և սպանցես զԷքտոռոս, և դու մեռանիցես. — քանզի վաղվաղակի, ասէ, յետ Իւքտոռոսի՝ աղճատիլն քեզ հուպ է —։ Բայց նա զայս ինչ լսեալ՝ զմահն ինչ և զվիշտն արհամարհեաց, բա՝ զայս ինչ մանաւանդ երկուցեալ 'ի կելոյն [3] չար գոլով, և բարեկամացն վրէժխնդիր ոչ լինել. Վաղվաղակի, ասէ, մեռայց՝ պատուհաս 'ի վերայ հասուցեալ անիրաւողին, զի մի՛ աստանօր մնացից ծիծաղելի առ նաւսն սնոտի՝ իբրու կոշտ ինչ հողոյ։ Ասես արդ զսմանէ՝ Թէ երկնչէր 'ի վշտացն [4] կամ 'ի մահուանէ. քանզի այսպէս ունի, ո՛վ արք Աթենացիք, ճշմարտութիւն. ուր և դասիցէ ոմն զանձն իւր՝ վարկանելով լաւագոյն գոլ, և կամ առ 'ի յիշխանէ դասիցէ աստանօր՝ պարտ է, իբրու ինձ Թուի, մնալով վշտագնիլ՝ ոչ ինչ համարելով ոչ զմահ և ոչ այլ ինչ նախ քան զայն որ ամօթալին է։

ԺԷ. Ես արդ՝ Թերևս չար ինչ իցեմ գործեալ, ո՛վ արք Աթենացիք, Թէ յորժամ իշխանքն դասէին [5] զիս, յորս դուք հաճեցայք իշխել ինձ, և Պօդիդի [6] և յԱմփիպօլիս և առ Դեղ՛իա. յայնժամ ուր նոքա դա-

1 Յօր. Զիարդ առ ինքն։
2 Յն. յօժարեցուցեալ զնա՝ զՀեկտոր սպանանել.
3 Յօր. եկելոյն։
4 Յօր. 'ի վիշապացն։
5 Յօր. դաւէին։
6 Պոտիդէա... Դեղ՛ոս։

սէին՝ [1] անսայի մնալով որպէս և այլ ոք, և տագնապէի մեռանել։ Եւ աստուծոյն դասելով, իբր ես կարծեցայ և 'ի վերայ հասայ՝ իմաստասիրելով ինձ պարտ գոլ կեալ և քննելով զանձն իմ և զայլս, աստանօր իսկ երկուցեալ կամ 'ի մահուանէ կամ յայլոց յոր և իցէ իրէ, Թողից զդասութիւն։ Չար Թերևս իցէ, և իբրու ճշմարտապէս յայնժամ մուծցէ ոք զիս 'ի հանդիսարանն, զի ոչ կարծեմ աստուածք գոլ՝ անհաւանելով դիւթութեանն և երկուցեալ 'ի մահուանէ, և կարծեցեալ իմաստուն գոլ՝ ոչ գիտելով։ Քանզի 'ի մահուանէ երկնչելն, ո՛վ արք, ոչ այլ ինչ է՝ քան եթէ Թուելն իմաստուն քոլ՝ ոչ գոլով. քանզի Թուի գիտել՝ զոր ինչ ոչ գիտէ. զի ոչ ոք զմահն, [2] ոչ՝ եթէ հանդիպի մարդոյ, ամենեցուն մեծագոյն գոլ 'ի բարութեանց. բայց երկնչին իբրու բարեւք գիտելով զի մեծագոյնն իսկ է 'ի չարեաց. և այս ինչ որպէս ոչ է անուսումնութիւն նախատելի իսկ՝ կարծելն գիտել զոր ինչ ոչ գիտէ։ Բայց ես, ո՛վ արք, այսուիկ և աստանօր Թերևս զանազանիմ 'ի բազմաց մարդկանէ. և այսուիկ իմաստնագոյն ուրուք [3] ասացից գոլ. զի ոչ գիտելով բաւականապէս յաղագս այնոցիկ՝ որ 'ի դժոխս են, այսպէս և կարծեմ ոչ գիտել. բայց անիրաւելն և անհաւանիլն լաւագունի աստուծոյ իսկ և մարդոյ, զի չար է և գարշելի՝ գիտեմ։ Արդ նախ քան զչարիսն զորս ոչ գիտեմ՝ եթէ չարք են, յայնոցիկ՝ որ ոչ գիտեմ եթէ բարութիւն գոլով հանդիպին՝ [4] ոչ երբէք երկնչիմ և ոչ փախչիմ։ Վասն որոյ և եթէ զիս այժմիկ դուք Թողուցուք՝ Անիւտոսի ոչ հաւատալով, որ ասէ կամ իսկզբանէ ոչ գոլ զի ոչ մեռանիցիմ. ասելն [5] զձեզ իբրու Թողոյք զիս, աւասիկ Թերևս ուստերքն ձեր խոկալ զայն ինչ զոր ուսուցանէ Սոկրատէս՝ ամենեքեան ամենևին ապականեցին. եթէ զայս ինչ առ այսոքիկ ասիցէք ցիս, Թէ, ո՛վ Սոկրատէս, այժմիկ իսկ Անիւտոսի ոչ հաւանիմք, այլ Թողուցումք զքեզ.

1 Յօր. դաւէին։
2 Յն. զի ոչ ոք գիտէ զմահն, և ոչ յորժամ հանդիպի...։
3 Իմաստանագոյն քան զոք։
4 Յօր. հանդիպիմ։
5 Յն. ասելով ցձեզ... ուստերքն ձեր խոկալով։

առ այս ինչ սակայն՝[1] զի ոչ ևս այժմիկ խնդրուածովդ շրջեսցիս, և ոչ իմաստասիրեսցես, և եթէ կալցիս տակաւին զայս ինչ գործելով՝ մեռանիցիմ[2]։ Արդ եթէ զիս, որպէս ասացի, առ այս ինչ թողուցուք, ասացից ցձեզ թէ՝ Ես, ո՛վ արք Աթենացիք, համբուրելով սիրեմ զձեզ, բայց հաւանիմ աստուծոյ մանաւանդ՝ քան եթէ ձեզ. և մինչև կենդանի իցեմ, որպէս և իցեմ, ոչ դադարիմ իմաստասիրելով, և ձեզ հրամայելով իսկ և ցուցանելով, որոյ և հանապազ հանդիպիմ 'ի ձէնջ ասելով՝ որպէս սովորեալ եմ՝ թէ ո՛վ արիագոյնդ արանց, Աթենացի գոլով 'ի մեծագոյն քաղաքէն և 'ի քաջ ընտրեալ ըստ իմաստութեան իսկ և զօրութեան, ընչից իսկ ոչ ամաչես փոյթ առնելով՝ իբրու զի իցէ քեզ յոլովագոյն, և փառաց և պատուոյ իսկ, խոհեմութեան և ճշմարտութեան, և հոգւոյ՝ իբրու վեհագոյն իցէ՝ փոյթ ոչ առնես և ոչ խոկաս[3] յաղագս սորա. և եթէ ոք 'ի ձէնջ ընդերկուիցի և ասասցէ փոյթ առնել՝ ոչ վաղվաղակի թողից զնա և ոչ գնացից. այլ հարցանիցեմ զնա և քննեմ և յանդիմանեմ, և եթէ ոչ ինձ թուեսցի ստացեալ առաքինութիւն, այլ ասել ստանալ՝ նախատիցեմ, զի զյոլովից արժանիսն՝ սակաւագունիւք դարմանես, և զյոռիքն[4] յոլովագունիւքն. զայսոսիկ և համբակի և ծերոյ, որում[5] և հանդիպիմ, և օտարի և քաղաքացւոյ, բայց մանաւանդ ձեզ քաղաքացեացդ՝ որչափ սեռիւք ինչ հուպ էք. քանզի զայսոսիկ հրամայէ աստուած, քաջ գիտացէք։ Եւ ես կարծեմ, ոչ ևս մեծագոյն բարի լինել քաղաքիս՝ քան եթէ զիմոյ աստուծոյն պաշտօնս. քանզի ոչ զայլ ինչ գործելով ես շրջիմ՝ քան եթէ հաւանելով 'ի ձէնջ զհամբակագոյնքն իսկ և զերիցագոյնքն, ոչ մարմնոյ փոյթ առնել, և ոչ ընչից յառաջագոյն, և ոչ այսպէս յոյժ՝ որպէս հոգւոյ, զի իցէ այսպէս իբրու արիագոյն. ասելով զի ոչ յըն-

1 Այս է. այսու դաշամբ. յօր. առ այլ ինչ. սակայն զի...։
2 Յն. մեռանիցիս։ 3 Յօր. խոկա։
4 Յօր. զոռիքն, ըստ յն. և եթէ ոչ թուիցի ինձ ստացեալ զառաքինութիւն, այլ ասել եւեթ, նախատեմ, զի զարժանաւորս մեծաց իրաց՝ փոքր իմն գրէ, և զնուազագոյնս՝ մեծ ինչ։
5 Յօր. ծերոյ և հանդիպիմ. յն. որում և հանդիպիմ՝ առնեմ զայս։

չից առաքինութիւն լինիցի, այլ յառաքինութեան՝ ինչս և այլ բարութիւն մարդկան ամենայն առանձին իսկ և ատենաբար։ Իսկ արդ՝ եթէ զայսոսիկ ասելով ապականել զհամբակքն՝ այսոքիկ արդեւք իցեն վնասակար։ Ապա եթէ ոք ասիցէ զինէն այլ ինչ ասել քան եթէ զայսոքիկ՝ ոչ ինչ ասէ։ Ըստ այսոցիկ արդ՝ ասացից, ո՛վ արք Աթենացիք, եթէ հաւանիք Անիւտոսի՝ և եթէ ոչ, և եթէ թողուցուք զիս՝ և եթէ ոչ. իբրու ես ոչ թերևս այլ ինչ արարից, ոչ՝ եթէ և հանդերձեալ եմ բազում անգամ մեռանել։

ԺԸ. Մի՛ խռովիք, ո՛վ արք Աթենացիք, այլ անսացէք ինձ յաղագս այնոցիկ՝ որ աղաչեցի զձեզ. ոչ խռովիլ վասն որոյ և ասեմ, այլ լսել. քանզի, որպէս կարծեմ, շահեսցիք լսելով։ Զի հանդերձեալ եմ ասել և զայլ ինչ՝ առ որս թերևս աղաղակիցէք, այլ մի՛ ոչ և միով իւիք առնիցէք զայս ինչ։ Քանզի քաջ գիտացէք, զի եթէ զիս սպանանիցէք այսպիսի գոլով իբրու ես ասեմ, ոչ ինչ ինձ զմեծագոյնն վնաս գործիցէք՝ քան եթէ անձանց ձերոց։ Զի ինձ իսկ ոչ ինչ վնաս արասցէ՝ ոչ Մելետոս և ոչ Անիւտոս, զի և ոչ կարասցէ։ Քանզի ո՛չ կարծեմ[1] պատշաճ գոլ առն լաւագունի՝ վնասիլ 'ի ձեռն վատթարագունից։ Սպանանիցէ իսկ թերևս և կամ հալածիցէ և կամ անարգիցէ, բայց զայսոսիկ՝ ասա իսկ՝ թերևս կարծէ և այլ ոմն երբէք մեծագոյն չարս, բայց ես ոչ կարծեմ. այլ մանաւանդ զառնելն զայս ինչ զորս այժմիկ առնէ, ձեռս արկանել՝ զայր անիրաւապէս սպանանել։ Այժմիկ, ո՛վ արք Աթենացիք, յոյժ հեռի է յինէն վասն անձին իմոյ տալ ինձ պատասխանի, իբրու կարծիցէ ոք. այլ վասն ձեր, գուցէ ինչ 'ի բաց սխալիցիք առ տուեալդ ձեզ յաստուծոյ՝ զինէն անիրաւ դատակնիք հատեալ. քանզի եթէ զիս սպանանիցէք՝ ոչ դիւրաւ զայսոսիկ այսպիսի[2] գտանիցէք. անարհեստաբար, կամ ծիծաղելի ինչ ասել, առկատարեալ[3] քաղաքիս 'ի ձեռն աստուծոյ, որպէս ձիոյ մեծագունի իսկ և ազ-

1 Յօր. կարեմ։
2 Յն. ոչ դիւրաւ զայլ ոք այսպիսի գտանիցէք։
3 Յն. առկացեալ կամ առկայացեալ, առտուեալ, այս է շնորհեալ զիս։

նուի, և 'ի մեծութեան տարտամագունի և կարօտա-
ցեալ՝ զարթչիլ'ի ձեռն մարակի ուրուք, որպէս զի արդ,
Թուի ինձ, աստուածոյ զնա 'ի քաղաքիս յաւելուլ զայս-
պիսի ոմն՝ որ զձեզ զարթուցանելով և հաւանեցուցա-
նելով և նախատեսելով զմի ի իւրաքանչիւր ոք, և ոչ
դադարեմ զօրհանապազ առ ամենայն տեղիս նստելով:
Ա.յսպիսի արդ այլ ոք ոչ դիւրաւ [1] ձեզ գտանիցի, ա՛վ
արք. այլ եթէ ինձ ունկնդիր լինիցիք՝ խնայէք յիս.
բայց դուք թերևս արդեւք ծանրացեալք, իբրու նիր-
հեալքն առ յանկարծակի զարթչիլն, թերևս բախե-
լով զինև, Անիւտոսի հաւանելով, դիւրապէս սպանա-
նիցէք զնս. ապա զամենայն կենցաղն կատարիցէք շը-
նորհելով [2] արդեւք, թէ ոչ զայլ ոք աստուած մատա-
կարարող առաքիցէ ձեզ: Եւ զի ես այսպիսի հանդի-
պիմ գոլով՝ իբրու յաստուածոյ քաղաքիս պարգևեալ,
աստուստ արդ խորհեսցուք. զի մարդկայնոյ իրին նման
ոչ է՝ ինձ իմոցն ամենայնի փոյթ ոչ առնել, այլ ներել
ընտանեացն ծուլութիւն առնելով ամս [3] այսչափ [4],
և զձերն գործել հանապազ՝ առանձին առ իւրաքան-
չիւր ոք հասանելով իբրու առ հայր կամ եղբայր երի-
ցագոյն, հաւանեցուցանելով առաքինութեան փոյթ
առնել. բայց սակայն, եթէ յայսցանէ ծախիի ինչ,
և վարձս առնուլ զայսոսիկ հրամայէի, ունի Թերևս
բամբասանս ինչ. [5] բայց այժմիկ տեսանէք արդ և
դուք ինքեանք. զի ջատագովքն իմ զայլ ամենայն ա-
ռանց ամօթոյ այսպէս ստորոգելով, զայս ինչ ոչ կարեն
ասել անամօթութեամբ, առտուելով վկայս՝ իբրու ձըշ
մարիտ ասէ, զտնանկութիւն [6]:

ԺԹ. Թերևս արդեւք Թուիցի անտեղի գոլ.

1 Յօր. դիմաս:
2 Յն. նիրհելով արդեւք: 3 Յօր. ասէմ այսպէս:
4 Յն. զի ոչ է գործ մարդկային՝ զի ես զամենայն իմոց իրացս անփոյթ լեալ, և 'ի բաց կացեալ յընտանի իրաց այսչափ ամս, զձերն գործեցից...:
5 Յն. բայց սակայն եթէ վայելչի ինչ 'ի սոսա, և վասն վարձուց հրամայէի զայսոսիկ՝ Թերևս լինէր ինչ առիթ բամբասանաց: Յօր. ծախէ... հրամայէ:
6 Յն. զի գաւտախաղքն իմ զայլ ամենայն առանց ամօթոյ այսպէս ամբաստանեալ, ոչ ինչ պատկառիցին և վկայս 'ի մէջ ածել՝ եթէ ես երբեմն և վարձս պահանջեցի. այլ ես վկայ մեծ, որպէս կարծեմ, ածից 'ի մէջ զանանկութիւնս իմ:

զի ես առանձին իսկ զայսոքիկ խորհիմ շրջելով՝ և
քննեմ, և 'ի հանդիսի ոչ համարձակիմ 'ի վեր ելա-
նելով առ բազմութիւնս ձեր՝ խորհրդածու լինել
քաղաքիդ. բայց այսորիկ պատճառն է զոր ինչ
դուք բազում անգամ լուայք յինէն առ տեղիս [1] ա-
սելով իմ, զի աստուածային ինչ և դիւցային լինի
առ իս ձայն, զոր և դիրն կատակերգելով Մելիտոս՝
գրեաց զինէն. բայց այս ինչ է ինձ 'ի մանկութենէ
սկսեալ ձայն ինչ լինելով. որ և յորժամ լինիցի՝ 'ի
բաց կացուցանէ զիս յայնմանէ՝ զոր ինչ և գործել
հանդերձեալ եմ, և յորդորէ ոչ երբէք: Ա.յս ինչ է՝
որ ինձ հակակայի գործել զքաղաքականս, և ամե-
նևին գեղեցկապէս իսկ Թուի ինձ հակակայիլ. քանզի
քաջ գիտէք, ա՛վ արք Աթենացիք, եթէ ես կանխաս
ձեռնարկութիւն արարեալ էի գործել զքաղաքական
իրողութիւնն՝ կանխաս արդեւք կորուսեալ էի, և
ոչ զձեզ Թերևս շահեցուցեալ էի, և ոչ զանձն իմ: և
ինձ մի երևեսցիք ծանրագոյնք՝ զձշմարիտն ասելով.
քանզի ոչ ոք իցէ 'ի մարդկանէ՝ որ կեցցէ, ոչ ձեզ և
ոչ այլոց ուրուք, ոչ և միոյ բազմութեան հարազատա-
պէս հակակայելով [2], և արգելելով բազում անիրաւու-
թիւնս և անօրէնութիւնս լինել 'ի քաղաքի: Ա.յլ հարկ
է այնմիկ՝ որ ձշմարտապէս մարտուցեալ [3] իցէ վասն
արդարութեան, և հանդերձեալ իցէ սակաւ ժամա-
նակ կեալ՝ առանձնանալ յատկապէս և ոչ հրապա-
րակել:

Ի. Եւ մեծագոյնք իսկ ես նշանք [4] այսոցիկ առտուեմ
ձեզ, ոչ բանք. այլ զոր ինչ դուք պատուէք իսկ՝ գործք [5]:
Լուարուք արդ զպատահումնս իմ, զի գիտացիք եթէ
ոչ և միոյ ուրուք հնազանդիմ առանց իրաւանց՝ 'ի
մարդկանէ [6] երկուցեալ. և ոչ հնազանդելով համա-
գամայն արդեւք և կորնչեմ: Ա.սեմ արդ ձեզ զծան-
րագոյնս ինչ և զվանդխականս, սակայն զձշմարիտս:
Զի ես, ա՛վ Ա.թենացիք, զայլ ինչ իշխանութիւն ոչ և
զմի ես երբէք 'ի քաղաքիս իշխեցի, սակայն խոր-
հըրդածու եղէ: Եւ հանդիպեցաւ ցեղն մեր Անտիո-

1 Ա.յս է. 'ի բազում տեղիս. 2 Յօր. հակակայելով:
3 Յօր. մարտնչել: 4 Յօր. նշանօք:
5 Յօր. գործէք: 6 Յն. 'ի մահուանէ երկուցեալ:

քացի [1] պահապան գոլով [2], յորժամ դուք զտասն զօրավարքն զայնոսիկ՝ զոր ոչ սպանեալքն [3] 'ի նաւամարտութենէն՝ խորհէիք 'ի միասին դատել անօրինաբար, որպէս 'ի վերջին ամին [4] ամենեցուն ձեզ թուեցաւ. յայնժամ ես միայն 'ի պահանորդացն [5] հակակեցայ ընդ ձեզ՝ ոչ ինչ առնել առանց օրինաց, և զներհակսն հատի դատակնիք. և պատրաստ գոլով ցուցանել զիս հռետորացն, և 'ի բաց տանել, և ձեր հրամայելով և աղաղակելով, հանդերձ օրինօքն և իրաւամբքն թուէր ինձ մանաւանդ պարտ գոլ վշտագնել, քան եթէ հանդերձ ձեւք լինել՝ ոչ զիրաւունս խորհելով ձեր, երկընչելով իմ'ի կապանաց կամ'ի մահուանէ: Եւ այսոքիկ իսկ էր՝ մինչ դեռ տակաւին քաղաքս ընդ հրապարակակալութեամբ [6] էր: Իսկ յորժամ եղև սուղ իշխանութիւնն, Եռասունքն իսկ բերեալք զիս հինգերորդ 'ի Թողլոյն՝ հրամեցին [7] ածել 'ի Սաղամինոյ զԼևոն զսաղամինացին՝ զի մեռանիցի. որպէս և այլոց բազմաց նոքա բազում անգամ հրամայէին, կամելով՝ իբրու զյոլովագոյնս լցուցանել [8] պատճառօք. յայնժամ ես իսկ ոչ բանիւ, այլ գործով ցուցի. զի ինձ վասն մահու իսկ փոյթ է, — եթէ ոչ վայրաբնակագոյն իցէ ասել —, ոչ և միով իւիք. բայց ոչինչ անիրաւ և ոչ անսուրբ գործել՝ ամենևին փոյթ է. զի այն իշխանութիւն զիս [9] ոչ զարհուրեցոյց՝ այսպիսի հզօր գոլով, իբրու անիրաւ ինչ գործել: Այլ յորժամ 'ի Թողոնէ ելաք, չորսն իսկ գնացեալ լինէին 'ի Սաղամինա, և ածին զԼևոն. բայց իսկ գնացեալ լինէի 'ի տուն իմ. և

1 Անդիոքացի, էր մին յԱտտիկեան ցեղիցն:
2 Պահապան գոլ, πρυτανεύω, վարել զպաշտօնն Պռիւտանիոնի Աթենացւոց, սրբազան տուն համարեալ առ նոսա:
3 Յօր. սպան — կապեալքն:
4 Յն. 'ի վերջին ժամանակին. — հակակեցայ այս է հակակայեցայ, ընդդէմ կացի, հակառակեցայ:
5 Պահանորդ՝ πρυτανεύς, պաշտօնեայ 'ի Պռիւտանիոնի:
6 Հրապարակակալութիւն démocratie իշխանութիւն ժողովրդեան, ռամկապետութիւն, ընկերհաշտութիւն:
7 Յօր. հինգերորդ 'ի Թողլոյն հրամեցի ածել... յն. Երեսունքն (իշխանք) յետս կոչեալ զիս զհինգերորդ 'ի Թոլոս, հրամայեցին ածել...: Թոլոս, ապարանք բոլորշի, ուր ճաշէին Պռիւտանքն:
8 Յօր. լցուցանէն:
9 Յօր. զի զայնմիկ զիշխանութիւն ոչ զարհուրեցոյց:

թերևս վասն այսորիկ մեռանէի, եթէ ոչ իշխանութիւնն այն վաղվաղակի լուծանիւր. և այսոցիկ ձեզ բազում վկայք իցեն:

ԻԱ. Արդ ուրեմն կարծէք զիս այսչափ ամս գոլ 'ի կենդանութեան, եթէ պահանջէի զատենական իրս, և գործելով զարժանիսն առն բարւոյ, օգնէի իրաւանցն. և որպէս պարտ է՝ այսորիկ յոլովագոյն փոյթ առնէի, բազում ինչ կարօտանայր, ո՛վ արք Աթենացիք, լինել ինչ. քանզի այլ ոչ և մի ոք 'ի մարդկանէ: Այլ ես յամենայն կենցաղումս յատենի իսկ զոր ինչ գործեցի՝ այսպիսի երևեսցիմ. և յատկապէս նոյն այս՝ ոչ և միոյ ուրուք երբէք ևս ներելով ոչ ինչ առանց իրաւանց, ոչ այլոյ ուրուք, և ոչ 'ի սոցանէ ոչ և միոյ, զոր դաւաճանողքս իմ ասեն՝ իմք գոլ աշակերտք: Բայց ես վարդապետ ոչ և միոյ ուրուք եղեալ եմ ևս երբէք: Այլ եթէ ասելով իմ և զիմսն գործելով՝ ցանկայ լսել, եթէ համբակագոյն է և եթէ երիցագոյն՝ ոչ և միոյ ուրուք ևս արարեալ է մախանս. և ոչ ինչս իսկ առնլով տրամաբանեմ, և ոչ առնլով՝ ոչ տրամաբանել. այլ նմանապէս փարթամի և տնանկի առտուեմ զանձն իմ'ի հարցմունս, եթէ կամիցի ոք պատասխանելով լսել այնոցիկ՝ զոր ասեմ: Եւ սոցունց ես՝ եթէ քաղցրոմն լինիցի, և եթէ ոչ, ոչ իրաւապէս պատճառի պարտապան եմ [1] այնոցիկ որ ոչ իսկ առտուեալ եմ, ոչ և միոյ ուրուք ոչ և մի ինչ ուսումն երբէք եթէ ոչ ուսցի [2]: Եւ եթէ ոք ասէ առ 'ի յինէն երբէք ուսանել ինչ և կամ լսել առանձնապէս՝ ոչ այլոց բազմաց մերձ գոլով, քաջ գիտացէք զի ոչ ասէ ճշմարիտ:

ԻԲ. Այլ վասն զի ոմանք խնդան երբէք բազում ժամանակ հանդերձ իմով [3] դեգերեալք, լուայք, ո՛վ արք Աթենացիք. զամենայն ճշմարտութիւնն ես ասացի ձեզ, զի լսելով խնդան քննելով զայնոսիկ՝ որ կարծին իմաստուն գոլ, և են [4] ոչ. է արդ ոչինչ թախանձելի: Զի զայս ինչ՝ իբրու ասեմ, հրաման յաստուծոյ ընկալայ գործել՝ և 'ի դիւթութեանց և 'ի յերազոց, և ա-

1 Յօր. պարապանէմ:
2 Յն. ուսումն երբէք, և ոչ ուսուցի:
3 Այս է. հանդերձ ինև:
4 Յօր. և ես ոչ:

մենայն եղանակաւ՝ որով իսկ երբէք այլոյ ուրուք առն աստուածային մասամբ զոր ինչ և իցէ հրամայեալ է գործել։ Այսոքիկ, ո՛վ Աթենացիք, և ճշմարիտ է և դիւրին առ 'ի յանդիմանութիւն. զի եթէ ես իսկ 'ի համբակացն զոմանս ապականեմ, և զմիւսն ապականեցի, պարտ է արդ ուրեմն եթէ ոմանք 'ի սոցունց ծերք եղեալք՝ ծանեան եթէ համբակաց ելով սոցունց՝ ես չար ինչ երբէք եղէ սոցունց խորհրդակից. այժմիկ սոցա ելանելով և ստորոգելով զինէն՝ պատուհասեցայց։ Ապա եթէ սոքա ոչ կամեցան, յընտանեացն սոցունց զոմանս զհարս և զեղբարս և զայլս 'ի պատշաճաւորացն [1], եթէ յինէն չար ինչ կրեսցեն ընտանիքն սոցունց, այժմիկ հարցանելով՝ զի սոքա յիշելով պատուհասեսցեն զիս։ Քանզի և մերձ են 'ի սոցանէ աստանօր բազումք, զորս և ես տեսանեմ. նախ իսկ սա Կրիտոն ընկերս իմ և հրապարակակիցս՝ Կռիտոբոլոսի այսորիկ հայրս, և ապա Լիւսանիաս Փետսիացին՝ [2] սորա իսկ Եսքինոսի հայրն, և տակաւին սա Անտիփոն Կեփեսիացին՝ հայրն Եպիգէնէսի. և այլք այժմիկ այսոքիկ՝ [3] որոց եղբարքն ընդ իմ շրջեցեալ է, Նիկոստրատոս իսկ Զօտիդոսի որդին՝ եղբայրն Թէոդոտոսի. — և Թէոդոտոս իսկ վախճանեալ էր, իբրու զի ոչ արդեւք նա զսա աղաչեսցէ վասն իմ —, և սա Պարաղոս [4] Դէմոդոկոսի որդին, որոյ եղբայր Թէագիս. և սա Ադիմանտոս իսկ Արիստոնոսի, որոյ եղբայրն սա Պղատոն, և Լանտոդորոս, որոյ սա Ապողոդորոս եղբայր է, և զայլս բազումս ես ունիմ ասել, յորոց զոմն պարտ էր մանաւանդ իսկ յուրում բանսն առտուել վկայ՝ Մելիտոսի։ Եւ եթէ յայնժամ մոռացաւ, այժմիկ առտուիցէ. ես ներեմ և տեղի տամ. և ասիցէ՝ եթէ ունի ինչ այսպիսի։ Այլ զայսոցիկ [5] զամենայն ներհակն գտանիցէք, ո՛վ արք, զամենեսեան պատրաստեալք առ 'ի յօգնել՝ ինձ ապականողին, զչարս գործողիս զընտիրքն սոցա. այսպէս ասէ Մելիտոս

1 Այս է. 'ի կարևոր մերձաւորացն։
2 Յն. Սփիտացի։ 3 Յօր. այսոցիկ։
4 Յօր. Պատագոս... Թէագիս... Ասանդիմանտոս... Սապղոդորոս։
5 Յօր. զայսոսիկ։

իսկ և Անիւդոս [1]. քանզի սոքա իսկ ապականեալքս՝ Թերևս լինիցին ինձ օգնական լինել։ Իսկ անապականքս, ծերք աւասիկ արք, սոցունց պատշաճաւորքս, զի՞նչ բան ունիցին օգնել ինձ, այլ քան եթէ զուղեղն և զիրաւացին. քանզի իմացան զստութիւնն Մելիտոսի, և զիմ զճշմարտութիւնն։ Իցէ արդ, ո՛վ արք. զոր ինչ ես ունիցիմ Թերևս պատասխանել, գրեթէ են այսոքիկ, և այլք Թերևս այսպիսիք։

ԻԳ. Բայց ոմն 'ի ձէնջ Թերևս բարկասցի ինձ բամբասելով զիս. յիշելով զանձն իւր, զի Թէ և նուազագոյն քան զայս հանդէսս հանդիսանայր հանդէս, Թերևս աղաչէր և պաղատանս մատուցաներ առ դատաւորս՝ հանդերձ բազում արտասուօք զմանկունս իւր իսկ 'ի վեր ելուցանելով, զի մանաւանդ այսպէս գտցէ զողորմութիւն, և զայլ զընտանեացն և զսիրելեացն զբազումս. և ես ոչ ինչ ուրեմն յայսցանէ առնեմ, և մանաւանդ վշտագնելով՝ որպէս Թուի ինձ՝ զվերջինն վիշտ։ Եւ Թերևս զայսոսիկ ոմն զմտաւ ածել խստագոյն Թերևս առ իս նայեսցի. և բարկացեալ 'ի վերայ նոցունց այսոցիկ՝ դիցէ բարկութեամբ զդատն։ Արդ եթէ 'ի ձէնջ ոք այսպէս ունի՝ ոչ աղաչեմ զնա ես իսկ. սակայն նեղութիւն ինձ համարիմ առ սմա ասել զայս ինչ եթէ, ո՛վ արիագոյն, են իսկ ուրուք և ընտանիք [2]. քանզի, որպէս ասէ Հոմերոս, Ոչ ես 'ի կաղնոյ և ո՛չ 'ի վիմէ 'ի բաց բնաւորեալ եմ, այլ 'ի մարդկանէ. իբրու են ինձ ընտանիք, և ուստերք, ո՛վ արք Աթենացիք, երիս. մի իսկ աւասիկ պատանի, և երկու մանկունք. այլ սակայն ոչ և զմի 'ի սոցանէ ելուցեալ աղաչեմ զձեզ 'ի բաց դարձուցանել զդատդ։ Եւ զի՞նչ արդ ոչ ինչ յայսցանէ առնեմ. ոչ իսկ խըստանալով, ո՛վ Աթենացիք [3], և ոչ զձեզ անարգելով. այլ եթէ համարձակութիւն ունիմ [4] առ մահ, կամ եթէ ոչ՝ այլ ինչ բան է, սակայն առ կարծիս՝ և ինձ և ձեզ և բոլոր քաղաքիս ոչ ինձ Թուի բարի գոլ յայսցանէ ոչ ինչ առնել, և այսպիսի գոլով և զանունս զայս

1 Յօր. Անդոս։
2 Յն. սակայն նեղութիւն ինձ համարիմ ասել իսկ առ այս եթէ և ինձ, ո՛վ արիագոյն, են արդարև մտերիմք. քանզի...
3 Յօր. ոչ Աթենացիք։ 4 Յօր. ունիս։

ունելով՝ եթէ ձշմարիտ իսկ է, և եթէ սուտ. այլ սա-
կայն Թուեցեալ է՝ զի զանազանեալ է Սոկրատէս 'ի
բազմաց 'ի մարդկանէ: Այդ եթէ 'ի ձէնջ Թուեցեալքն
զանազանիլ, կամ իմաստութեամբ կամ արհուեստիւ
կամ այլով ումեք և իցէ առաքինութեամբ՝ այսպիսիք
իցեն, Թերևս ամենայն իցէ: որպէս իսկ բազում ան-
գամ տեսեալ եմ զոմանս, յորժամ դատիցին [1], Թուե-
ցեալք իսկ գոլ ինչ, բայց սքանչանս գործելով, իբրու
չար ինչ վարկանելով [2] կրել՝ եթէ մեռանիցին, իբրու
անմահ գոլով սոցունց՝ եթէ դուք զսրբա ոչ սպանա-
նիցէք: Ողբ լինի Թուին զամենի շարամերձել քաղա-
քիս. իբրու զիս կարծիցէ ոմն յօտարացն, զի զանա-
զանեալքն յԱԹենացոց առաքինութեամբ, զոր և սո-
քա քան զինքեանս առ իշխանութիւնն և առ այլ
պատիւն նախադատեն, սոքա 'ի կանանց ոչ ինչ զանա-
զանին: Զայսոսիկ [3] արդ, ով արք Աթենացիք, ոչ մեզ
առնել պարտ է այսոցիկ՝ որ Թուիցին զինչ և իցէ գոլ
երբէք. և ոչ եթէ մեք առնեմք՝ ձեզ նեբել. այլ զայս
ինչ զնոյնս ցուցանել, եթէ մանաւանդ յոգնագոյն հա-
տանէք զդատն առ այնմիկ՝ որ զայսպիսի ողորմելի իրս
առնեն 'ի նեբքս [4] մուծանելով, և ծիծաղելի զբաղաքս
առնէ, քան եթէ յայնմիկ՝ որ զհանդարտութիւն իսկ
բերէ:

ԻԴ. Առանց փառաց, ով արք, ոչ իրաւացի
ինձ Թուի գոլ՝ աղաչել զդատաւորն, և աղաչելովն
'ի բաց փախչել, այլ ուսուցանել և հաւանեցուցա-
նել. քանզի ոչ վասն այսորիկ նստի դատաւորն՝ զի
ընծրխս արասցէ զիրաւունս, այլ զի ընտրեսցէ զոսա.
այլ և երդուեալ է՝ ոչ ընծրհել որոց և Թուիցի սմա,
այլ ըստ օրինաց դատել: Այս ուրեմն պարտ է և մեզ
ոչ սովորեցուցանել զձեզ երդմնահար լինել, և ձեզ
իսկ ոչ սովորիլ. քանզի ոչ և միոյ ուրուք 'ի մէնջ իցէ
այս ինչ բարեպաշտութիւն: Մի արդ արժանացուցա-
նէք զիս, ով արք Աթենացիք, այսպիսի ինչ պարտ
գոլ գործել առ ձեզ, զոր ինչ ոչ վարկանիմ բարի գոլ
և ոչ իրաւացի, և ոչ սուրբ, և ոչ այլաբար իսկ. երդ-

1 Յօր. գոպէյմ:
2 Յօր. լար ու վարկանելով իբէ:
3 Յօր. պայսոյնի.., ռոսէյմ:
4 Յօր. 'ի նէրսոյ:

նում յԱբրամազդ, զի առհասին վասն ամբարշտու-
թեան փախչելով [1] 'ի Մելիտոսէ յայսմանէ: Զի եթէ
հաւանեցուցից զձեզ աղաչանօքս բռնադատելով եր-
դումեալք հաւաստի ուսուցանեմ արդեւք զձեզ՝ աս-
տուածս ոչ գոլ վարկանիլ. և անարհեստաբար պա-
տասխանելով ստորոգիցիմ Թերևս զանձնէ լսմին ի-
բրու աստուածք ոչ կարծեմ, այլ բազում ինչ հեռա-
գոյն է ունելն այսպէս. քանզի կարծեմ իսկ, ով արք
Աթենացիք, իբրու ոչ յիմոցս ստորոգողացս և զձեզ աս-
տուածով յորդորեմ [2] դատել յաղագս իմ, որպէս
հանդերձեալ է ինձ իսկ և ձեզ գոլ արիագոյն:

Ի Ե. Եւ ոչ ինչ տրտնջեալ, ով արք Աթենացիք,
առ այժմիկ եղեալս. զի դատապարտիցէք զիս. և առ
այլ ինչ բազում յարմարի ինձ, և ոչ անյոյս ինձ [3] եղև
այս իսկ՝ որ ինչ եղև. այլ յոյժ մանաւանդ աքանչա-
նամ զերկաքանչիւրոց համարացս զեղեալ զքիւ. քան-
զի ոչ կարծէի այսպէս սակաւուք պակասեալ գոլ՝ այլ
բազմաք. բայց այժմիկ, որպէս Թուի, եթէ երեք [4]
միայն փոխեալ էր համարոցս՝ Թերևս 'ի բաց էի
փախուցեալ: Բայց սակայն 'ի Մելիտոսէ արդ և այժ-
միկ 'ի բաց փախեայ. և ոչ միայն 'ի բաց փախեայ, այլ
ամենայնի յայտ է այս ինչ իսկ, զի եթէ ոչ 'ի վեր ե-
լեալ էր Լիւկոս [5] և Անիւտոս ստորոգելով զինէն, Թէ
և պարտապան էր հաղար դրամոց՝ ոչ հաղորդելով
հինգերորդ մասինն համարոց:

Ի Զ. Պատուհասէ արդ զիս այսր մանաւանդ. իցէ
իսկ. բայց ես արդ զո՞ ոք 'ի ձէնջ փոխանակ իմ պա-
տուհասիցեմ, ով արք Աթենացիք. յայտ է Թէ զար-
ժանս իմ: զիա՞րդ, զինչ եմ արժանի կրել կամ հա-
տուցանել. ուսեալ 'ի կենցաղումս հանդարտութիւն
ոչ բերել, այլ ծուլացեալ առ այնոսիկ առ որս և բա-
զումք՝ որ առ ինչս [6] իսկ և տնօրէնութիւնս, և զօրա-
վարութիւնս և տրապարակաբանութիւնս, և առ այլսն
յիշխանութեանց և 'ի միասին երդմանց, և հակառա-
կութեանց յայնցանէ՝ որ առ քաղաքաւս լինին, վար-

1 Յօր. ֆալչէլ ու:
2 Յօր. յորդոր դոպէլ:
3 Յօր. ինչ, — համար նշանակէ՝ քուէայ, վիճակ:
4 Յօր. երեսուն. այս է՝ եթէ երեք քուէայք միայն վիճակեալ էին:
5 Յօր. Լիւկոս:
6 Յօր. առ որս և բազմաս ու առ ինչս...:

կանելով զանձն իմ ճշմարտապէս գոլ հեզագոյն՝ քան եթէ կեալ առ այսոսիկ հասանելով։ Աստանօր իսկ ոչ եկի, ուր եկեալ՝ ոչ ձեզ և ոչ անձին իմոյ հանդերձեալ էի շահ ոչ մի ինչ գոլ. բայց առանձնապէս առ իւրաքանչիւր ոք հասանելով՝ բարերարելով զմեծագոյնն բարերարութիւն, իբրու ես ասեմ, աստանօր եկի. ձեռնարկելով զիւրաքանչիւր ոք 'ի ձէնջ հաւանեցուցանել [1], ոչ և միոյ ուրուք փոյթ առնել նախ քան եթէ անձին իւրոյ, իբրու զի լաւագոյն և խոհեմականագոյն իցէ. և ոչ յայնցանէ որ ինչ քաղաքին են՝ նախ քան եթէ նորին քաղաքին, և այլոցն այսպէս ըստ նոյն յեղանակիս՝ փոյթ առնել։ Զի՞նչ արդ արժանի եմ կրել՝ այսպիսի գոլով. բարի ինչ, ո՛վ արք Աթենացիք, եթէ ըստ արժանեաց իմոց ճշմարտութեամբ պատուհասել. և այս իսկ այսպէս բարի է՝ որպէս և ինձ վայել է։ Զի՞նչ արդ վայել է առն տընանկի, երախտաւորի, կարօտացելոյ պարապութիւն [2] բերել առ ձերոյ կազմութեանն պատրաստութիւն. ոչ ինչ է՝ որ ինչ մանաւանդ վայել է, ո՛վ արք Աթենացիք՝ այսպէս զայսպիսի այրն 'ի Պահարանի [3] պատուով կերակրել. յոյժ իսկ յաւէտ՝ քան եթէ 'ի ձէնջ ոք ձիով կամ երիվարօք կամ կառօք յաղթեալ էր յՈլոմպիադսն [4]. քանզի այնպիսին զձեզ առնէ բարեբաստք թուեցեալ գոլ, և ես՝ բարեբաստ գոլ. և նա իսկ կերակրոց ոչ ինչ կարօտանայ, բայց ես՝ կարօտացեալ եմ։ Արդ եթէ պարտ է ինձ ըստ իրաւանց անարժանութեանն պատուհասիլ, այսուիկ պատուհասեցայց, զի պատուոյ հաղորդեցայց և Պահարանի։

ԻԷ։ Թերևս արդ ընդ ձեզ և զայնոսիկ ասելով՝ հուպ թուիցիմ ասել որպէս յաղագս խանդաղատանացն և պաղատանացն, յանդգնելով. բայց ոչ է այսպիսի, ո՛վ արք Աթենացիք, այլ մանաւանդ այսպիսի ինչ։ Հաւանեալ եմ ես՝ ոչ և զմիոյ անիրաւելն 'ի մարդկանէ կամաւ գոլ, այլ զձեզ զայս ինչ ոչ հաւանեցուցանեմ՝ զի սակաւ ժամանակ տրամաբանեցաք ընդ միմեանս։ Քանզի, իբրու ինձ թուի, թէ օրէն էր

1 Յօր. հաւանեցանել։ 2 Յօր. պարապութեամբ։
3 Պահարան. πρυτανεῖον. Պռիւտանիոն ապարանք յԱթէնս։
4 Յօր. յՈլոմպիա գրէ։

ձեր՝ որպէս և այլոց մարդկան, յաղագս մահուան ոչ օր մի միայն դատել՝ այլ բազումս, հաւանէիք արդեւք. բայց այժմիկ ոչ է դիւրին սակաւ ժամանակաւ մեծագոյն դաւաճանութեանց լուծանել։ Հաւանելով արդ ես ոչ զոք [1] անիրաւել, բազում ինչ կարօտանամ անիրաւել զանձն իմ, և ասել զանձնէ իմմէ՝ ես իբրու արժանի եմ այսմիկ չարի, և պատուհասել զանձն իմ ումեմն այսպիսով [2]. զի՞նչ երկուցեալ, քան եթէ զի ոչ կրիցեմ զայս ինչ՝ որոյ Մելէտոս զիս համարի, — զոր ասեմ ոչ գիտել՝ ոչ եթէ բարի է և ոչ եթէ չար —. փոխանակ այսորիկ արդ ընտրեմ յայնցանէ՝ զորս քաջ գիտեմ զի չարք են՝ այնուիկ պատուհասելով. որո՞վ արդ կապանօք, և զի՞նչ պարտ է ինձ կեալ 'ի բանդի, և ծառայել հանապազ կարգեալ իշխանութեանն Մետասանցն։ Կամ ընչի՞ւք. և կապիլ մինչև հատուցից. այլ նոյն է ինձ՝ որպէս ես այժմիկ իսկ ասէի. քանզի ոչ գոյ ինձ ինչս՝ զորս հատուցից։ Այլ արդ փախստեա՞մբ պատուհասեցայց. զի թերևս այսուիկ պատուհասիցէք զիս։ Բայց բազում անձնասիրութիւն զիս ունիցի, եթէ այսպէս անբանագոյն եմ՝ իբրու ոչ կարեմ զայս ինչ խորհել, զի դուք իսկ քաղաքացիք իմ գոլով՝ ոչ հնար եղև ձեզ բերել զդեգերմունս իմ և զբանս, այլ ձեզ ծանրագոյնք եղեն և մախալիս՝ որպէս խնդրէք 'ի սոցունց այժմիկ 'ի բաց փոխիլ. և այլք ոմանք արդեւք զսոսա բերիցեն դիւրաւ՝ բազում ինչ կարօտանս [3], ո՛վ արք Աթենացիք։ Գեղեցիկ ինձ արդ իցէ թերևս կենցաղս՝ այսպիսի հասակաւ առն գոլով իմ, և ելանելով և փոփոխելով յայլմէ յայլ քաղաք՝ և հալածելով կեալ։ Քանզի բարեւք գիտեմ, զի ուր և չոգամ ասելով՝ լուիցեն ինձ համբակքն, որպէս և աստանօր. և զսոսա [4] իսկ եթէ հետևիմ, սոքա զիս 'ի բաց փրկեսցեն՝ հաւանեցուցանելով զծերագոյնսն. ապ՝ եթէ ոչ հետևիմ՝ սոցունց հարքն իսկ և ընտանիքն վասն նոցա իսկ սոցունց։

ԻԸ. Բայց արդ թերևս ասիցէ ոք. Լռելով իսկ և հանդարտութիւն բերելով, ո՛վ Սոկրատէս, ոչ այդ-

1 Յօր. ես զոք անիրաւել։ 2 Ումեմն այսպիսով. այսպիսի իրօք։
3 Յն. կարօտանայ։ 4 Յօր. զսոցա։

պիսի մեղ լցես՝ ելանելով և կելով. այս ինչ արդ ա-
մենեցունց դժուարագոյն է՝ հաւանեցուցանել զոմանս
ի ձէնջ. քանզի եթէ ասեմ վասն այն անհաւան լի-
նել է այս ինչ, և վասն այսորիկ անհնար է համոզա-
տութիւն բերել, ոչ հաւանեսցիք ինձ՝ իբրու հեգնո-
ղի: Եւ եթէ ասեմ իսկ մեծագոյն բարի գոլ մարդոյ
զայս ինչ, իբրաքանչիւրում աւուր յաղագս առաքինու-
թեան բանս առնել, և այլոցն՝ յաղագս որոց դուք
լսէք ինձ տրամաբանելով, և քննելով զանձն իմ և
զայլս, — բայց առանց քննութեան կենցաղն առն՝ ոչ
է կենցաղավարելի —, զայսոսիկ տակաւին ասելով
իմ՝ նուազ ինչ իմ հաւանիք: Ա.յլ այսոքիկ ունին իսկ
այսպէս, իբրու ես ասեմ; ոմն արդ. բայց հաւանեցու-
ցանելն ոչ է դիւրին: Եւ ես համանգամայն ոչ եմ սո-
վորեալ զանձն իմ արժանացուցանել ոչ և միոյ չարի:
Զի եթէ է ինձ սեացուածք՝ պատուհասէի Թերևս
ընչիւք որչափ հանդերձեալ էի հատուցանել, քանզի
ոչ ինչ ճնասէի. բայց այժմիկ դի ոչ գոյ, եթէ ոչ ար-
դեւք որչափ և ես կարող լցեմ հատուցանել՝ այսչափ
կամիցիք զիս հատուցանել. քանզի Թերևս կարող լ-
ցեմ հատուցանել մի ինաս արծաթոյ. այսչափ արդ
պատուհասիմ: Բայց սա Պղատոն, ոմն արք Ա.թենա-
ցիք, և Կռիտոն և Կռիտովուլոս և Ա.պօլօդորոս, հրա-
մայեն ինձ երեսուն ինասից պարտապան լինել՝ սոցա է-
րաշխաւորելով. պատուհասեցայց արդ այսչափ. և երաշ-
խաւորք ձեզ լցեն արծաթոյն արժանապարտք սոքա:

ԻԹ. Եւ ոչ առ բազում ժամանակ, ոմն արք Ա-
թենացիք, անուն ունիցիք և պատճառ յայնցանէ՝ որ
կամիցին պարսաւել զքաղաքդ, իբրու զՈկրատէս
սպանիք զայրն իմաստուն: Քանզի ասիցեն զիս իմաս-
տուն գոլ. Թէպէտ և ոչ եմ; կամելով զձեզ նախա-
տել: Ա.րդ եթէ ինացեալ էին սուղ ինչ ժամանակ՝
ինքեամբ նոյն այս ինձ լսեալ էր. քանզի տեսանիք
արդ զհասակս, զի աւանիկ ի կենցաղոյս հեռացեալ
և ի մահն հպեալ: Ա.յլ ասեմ զայս ինչ ոչ առ ամե-
նեսեան ի ձէնջ, այլ առ այսոսիկ՝ որ զմահն ինձ հա-
մարիցիք [1]: Ա.յլ ասեմ և զայս ինչ առ այսոսիկ նոյնս.

1 Ա.յս է. վճռիցէք:

Թերևս կարծէք զիս, ոմն արք, անկարողութեամբ
յայսպիսի բանից ըմբռնեալք որով Թերևս հաւանե-
ցուցանէ զձեզ եթէ Թուէր ինձ պարտ գոլ զամենայն
ինչ առնել և ասել, իբրու ի բաց փախչել ի պատու-
հասել բազում ինչ հեռի է յինէն կարօտանալն բա-
նից, այլ անկարողութեամբ իսկ ըմբռնեցայ, սակայն
ոչ բանից, այլ յանդգնութեան իսկ և համարձակու-
թեան և չասելոյ առ ձեզ զայսպիսիս՝ որպէս ձեզ [1]
Թերևս հեշտագոյն են առ ի լսել լալով իմ և ողբա-
լով, և զայլս ինչ բազում առնելով իսկ և ասելով զորս
ինձ արժան ոչ է առնել, իբրու ես ասեմ: որպէս և
սովորեալ եք դուք առ ի յայլոյն լսել: Ա.յլ ես ոչ
յայնժամ պարտ գոլ կարծեցի ի սակս հնարեալ [2]
ինձ վշտացն գործել ինչ անազատագոյն, և ոչ այժմիկ
զղջացեալ եմ ես վասն այնպիսի առնելոյն ինձ պա-
տասխանի. այլ յոյժ մանաւանդ յօժարիմ այսպէս
պատասխանելով մեռանել, քան եթէ այնպէս կեալ:
Զի ոչ ի հանդիսի և ոչ ի պատերազմի, ոչ ինձ և ոչ
այլ ուրուք, ոչ և միոյ՝ պարտ է զայս ինչ հնարել. ի-
բրու զի զամենայն ինչ առնելով ի բաց փախչի ի մա-
հուանէն: Քանզի առ մարտսն բազում անգամ յայտ
լինի, զի ի մահուանէն Թերևս դիւրաւ ոք ձողոպրի-
ցի, զղջինք ի բաց եղեալ, և ի ծառայութիւն հալա-
ծողացն դարձեալ. և այլ հնարք են բազում առ իւ-
րաքանչիւրսն վշտաց՝ իբրու զի ձողոպրեսցի իսկ ի մա-
հուանէ, եթէ յանդգնի ոք զամենայն ինչ առնել և
ասել: Ա.յլ ոչ այս ինչ իցէ դժուարս, ոմն արք, ձո-
ղոպրելն ի մահուանէ, այլ յոյժ դժուարագոյն է չա-
րութիւն. քանզի վաղվաղակի ընթացեալ ի մահու-
նէն ի բաց գնացէ [3]: Եւ այժմիկ ես իբրու հեղգ գո-
լով և ծերագոյն ի ձեռն հեղգագունի ուրուք ըմբռը-
նեալ էի. և ըստորոգողքն իմ՝ իբրու չարք և երա-
գունք գոլով ի ձեռն փութոյ, չարին [4]: Եւ այժմ ես
իսկ ի՞ ձէնջ ի բաց գնացեալ լինիմ՝ մահու պարտա-

1 Յօր. խառնել առ յեղ... որպէս պէիէ Ռերնս: 2 Յօր. հնացեալ:
3 Յն. քանզի երագագոյն քան զմահն ընթանայ (չարութիւն): Եւ այժմիկ:
4 Ա.յս է. և դատախազքն իմ իբրև հզօրք և երագունք գոլով յերագագունէն ըմբռնեցան, ի չարութենէ:

պան գոլով, և սոքա 'ի ձեռն ճշմարտութեանն պարտ ելով չարութիւն և անիրաւութիւն. և ես արդ անսամ պատուհասիս, և սոքա. այսոսիկ իսկ այսպէս ուրեմն պարտ էր ունել. կարծեմ զսոքա չափաւորապէս գոլ։

Լ. Բայց որ ինչ յետ այսորիկ, է ցանկութիւն իմ՝ զի նախասացութիւն արարից 'ի սակս ձեր, ո՛վ իմքդ դատապարտողք. քանզի եմ աւասիկ աստանօր, ուր և մանաւանդ հասանելով մարդիկ նախասել[1] յօժարին՝ յորժամ հանդերձեալ իցեն մեռանել։ Քանզի ասեմ, ո՛վ արք, որք և զիս իսկ սպանիք, զի պատուհաս ձեզ հասցէ վաղվաղակի յետ իմոյ մահուանն, յոյժ դժուարագոյն, երդումն յԱրամազդ[2], քան եթէ մահս՝ որ սպանէք դուք զիս։ Քանզի այսմիկ զայս ինչ գործեցէք կարծեցեալք 'ի բաց փոխիլ 'ի հատուցանելոյ կշտամբանք կենցաղոյն. բայց ձեզ յոյժ ներհակն պատահեսցի, իբրու ես ասեմ։ Յոլովագոյնք իցեն՝ որ յանդիմանեն զձեզ, զորս այժմիկ ես ունէի, և դուք ոչ խորհէիք. և դժուարագոյնք իցեն որչափ և համբակագոյնքն[3], և դուք յաւէտաբար տրտնջէք։ Քանզի եթէ թուի սպանանելով զմարդիկ արգելուլ 'ի նախատելոյ զոմն 'ի ձէնջ, զի ոչ ուղղապէս[4] կեցեալ էք, ոչ խորհիք ուղղապէս. զի ոչ իցէ, փոխել սոցա ոչ զօրաւոր իսկ է և ոչ գեղեցիկ. այն գեղեցիկ և դիւրին, ոչ զայլս արգելուլն, այլ զանձն իւր պատրաստելն՝ իբրու զի լիցի լաւագոյն. զայսոսիկ արդ իմոյ դատապարտողացդ դիւթելով ասացեալ՝ 'ի բաց փոխիմ։

ԼԱ. Իսկ յիրաւացուցիչքդ իմ հեզաբար թերևս տրամաբանեցայց՝ վասն եղելոյ այսմիկ իրողութեանս. 'ի ժամուս՝ յորում իշխանքն ոչ պարապեն, և ոչ ես չոգամ՝[5] ուր հասանելով պարտ է ինձ մեռանել։ Այլ ինձ, ո՛վ արք, այսչափ ժամանակ մնացէք. քանզի ոչինչ արգելու զրուցատրութիւն առնել ընդ միմեանս՝ որչափ պատշաճ է. քանզի ձեզ բարեկամաց ելով՝ ցուցանել կամիմ զոր ինչ այժմիկ ինձ պատահեցաւ թէ որպիսի ինձ միտք ունի։ Զի ինձ, ո՛վ արք դատաւորք,

1 Յօր. նախատել։
2 Այս է. Երդնում յԱրամազդ։
3 Որչափ և համբակագոյնք են։
4 Յօր. զի ուղղապէս։
5 Յօր. իշխանսն... և ոչ ես չոգամ։

— քանզի կոչելով զձեզ դատաւորս՝ ուղղապէս թերևս կոչեցից —, սքանչելի ինչ եղև. քանզի սովորեալն ինձ դիւթականն դիւին[1] առ ամենայն յառաջագոյն ժամանակաւն հանապազ ամենևին, և ամենևին առ փոքունսն իսկ հակակայեալ. և եթէ հանդերձեալ ինչ իցեմ գործել ոչ ուղղապէս. բայց այժմիկ պատահեցան ինձ զոր ինչ տեսանէքդ[2] և դուք աւասիկ, զոր թերևս կարծիցէ ոք գոլ զվերջինսն չարեաց. և ինձ՝ ոչ յելանելն ընդ առաւօտն 'ի տանէ՝ հակակայեցաւ նշանն աստուծոյ, և ոչ յորժամ ելանէի աստանօր 'ի հանդիսարանս, և ոչ 'ի բանիս՝ հանդերձելով իմ ասել ոչ և միով իւիք. և մանաւանդ առ այլս բանս համանգամայն ասելով իմ՝ արգելոյր զիս բազում անգամ. բայց այժմիկ ոչ իւիք առ այժմիկ գործոյս, ոչ և միոյ գործոյ և ոչ բանի եղև ինձ ներհակ։ Զի՞նչ արդ ճառ գոլ խորհիմ. ես ասացից ձեզ. քանզի տագնապի ինձ[3] պատահումնս այս բարի լինել, և ոչ իցէ իբրու մեք ուղղապէս զմտաւ ածեմք՝ որչափ կարծեմք չար գոլ զմեռանելն. մեծ ինձ նշան այսմիկ[4] եղև. քանզի ոչ իցէ՝ իբրու զի ոչ էր ինձ հակակայեալ սովորեալ նշանն, եթէ ոչ ես հանդերձեալ էի բարի ինչ գործել։

ԼԲ. Խորհեսցուք արդ ևս[5] այսպէս, իբրու զի յոյս բազում է բարի սմա գոլ. քանզի յերկոցունց յայսցանէ մի ինչ է՝ էմեռանելն. կամ իբրու որ ինչ գոլ, և ոչ և միոյ ուրուք ոչ և մի ինչ զգայութիւն ունել մեռելոյն, կամ ըստ ասացելոցն՝ փոփոխումն ինչ հանդիպի գոլով և տարաբնակութիւն[6] հոգւոյն 'ի տեղոյս յայսմանէ յայլ տեղի։ Եւ կամ ոչ և մի իցէ զգայութիւն, այլ որպէս քուն՝ յորում և ննջեսցէ ոք և ոչ և մի ինչ երազ տեսանի, սքանչելի շահ թերևս իցէ մահն։ Քանզի է կարծեմ. զի թէ իցէ ընտրել ուրուք զայնպիսի գիշերն՝ յորում այսպէս ննջեսցէ զի և ոչ անուրջս[7] տեսանել. և զայլ գիշերսն իսկ և ըզ-

1 Յօր. դիւթական դիւրին. այս է. սովորեալ ինձ դիւթականն դիւին, դիւթութիւնն դիւին, ըղձութիւնն դիւական։
2 Յօր. այժմիկ պատուհասեցան ինչ զոր ինչ տեսանիքս։
3 Տագնապի ինչ. թուի ինձ։
4 Յն. նշան՝ այս ինձ եղև։
5 Յօր. ես։
6 Յօր. գնա բնակութիւն...
7 Յօր. յանուջ։

տիւսն իւրոյ կենցաղոյն հակադրելով այնմիկ գիշերոյն, պարտ իցէ քննելով ասել՝ թէ ո՛րչափ լաւագոյն և հեշտագոյն տիւս և գիշերս քան զգիշերն զայն [1] որ կեցեալ է յիւրում կենցաղին՝ կարծեմ արդեօք, զի ոչ ռամկի ումեմն, այլ և մեծ թագաւորի դիւրահամարս թերևս գտանել զսոսա առ այլս տիւս և գիշերս։ Արդ եթէ այսպիսի է մահն՝ շահ զսա ես իսկ ասեմ. զի ոչ ինչ յոլովագոյն ամենայն ժամանակն երևեսցի այսպէս գոլ՝ քան եթէ մի գիշեր. ապ՛ եթէ իբրու 'ի բաց գնալ է մահն աստուստ 'ի յայլ տեղի, և ճշմարիտ են ասացեալքն՝ իբրու զի անդ են [2] արդեւք ամենեքեան մեռեալքն, զինչ մեծագոյն բարի իցէ այսուիկ, ո՛վ արք դատաւորք։ Քանզի եթէ հասանելով ոք 'ի դժոխս՝ 'ի բաց փոխեալ յայսցանէ՝ որ ասեն դատաւորք գոլ, գտանիցէ զճշմարտապէս դատաւորսն, որք ասեն դատել անդանօր, Մինոս իսկ և Ռադամանթիւս, և Էակոս և Տրիփտողեմոս, և այլք՝ որչափ 'ի կիսաստուածոցն արդարք [3] եղեն առ յիւրեանց կենցաղոյն. ուրեմն սիրելի իցէ թերևս աստուստ 'ի բաց գնալն. կամ Որփեւսայ հանդիպելն իսկ, և Մուսէոսի և Իսիոդոսի, և Հոմերոսի, որչափո՞ւ փոխան ընդունիցի արդեւք 'ի ձէնջ զայս ինչ [4]. զի ես իսկ բազում անգամ կամիմ մեռանել՝ եթէ այսոքիկ ճշմարիտ են։ Քանզի ինձ իսկ սքանչելի թերևս իցէ դեգերիլն աստանօր, յորժամ և հանդիպիցիմ Պալամեդէոյ և Էանտոսի՝ Տեղամոնոսի որդւոյն, և եթէ այլ ոք 'ի նախնեացն 'ի ձեռն անիրաւին դատաստանին մեռեալ է. հակադրելով զիմս դիրս առ նոցայն՝ կարծեմ իբրու ոչ իցէ թախանձելի։ Եւ զմեծագոյն իսկ, զայնոսիկ որ անդ են՝ քննելով իսկ և խնդրելով, որպէս և զայսոսիկ որ աստանօր են շրջել, թէ ո՛ ոք 'ի նոցունց իմաստուն իցէ, և ո՛ ոք կարծէ իսկ և է ոչ, և որչափո՛ւ արդեւք, ո՛վ արք դատաւորք, ընդունեսցի քննելն զայն որ էած զզօրսն 'ի վերայ քաղաքին Տրովադայ, կամ զՈդիւսևս, և կամ զՍիսիփոս [5], և կամ զայլս բիւրինս եթէ ասիցէ ոք՝ զարս և զկանայս ընդ որս անդանօր [6] տրամա-

1 Յօր. քան զգիշերն այնմիկ։ 2 Յօր. անդէն։
3 Յօր. արդ որք եղեն։ 4 Յն. ընդունիցի արդեւք 'ի ձէնջ ոք։
5 Յօր. զՏրէսիփոս։ 6 Յօր. ընդ ցանդանուր։

բանիլ և 'ի միասին գոլ և քննել, անմարթ թերևս [1] իցէ բարեբաստութիւն ճշմարտապէս. արդ սակս այսորիկ՝ այնոքիկ որ անդանօր են՝ ոչ սպանանեն. քանզի և այլօք իրօք բարեբաստագոյնք են՝ որ անդ, քան եթէ այսոքիկ՝ որ աստանօր, և զայլ ամենայն ժամանակն են անմահք. եթէ ասացեալքն իսկ ճշմարիտ են։

ԼԳ. Այլ, ո՛վ արք դատաւորք, առ մահն գոլ քաջայոյս, և զմի զայս խորհել ճշմարիտ զի ոչ իցէ առն բարւոյ չար և ոչ ինչ, ոչ կելով իսկ և ոչ վախճանելով, և ոչ ծուլացեալ լինին յաստուածոցն սորա իրողութիւնքն. և ոչ իմս այժմիկ ընքեամբ եղեն, այլ ինձ յայտ է այս ինչ՝ զի աւասիկ մեռանել և յիրողութեանց 'ի բաց փոխել՝ էր ինձ լաւագոյն։ Վասն այսորիկ և զիս [2] ոչ իւիք 'ի բաց արգելու նշան [3], և ես իսկ առ դատապարտողսն իմ և ստորոգողսն ոչ ամենևին դժուարանամ. և մանաւանդ ոչ այսուիկ մտածութեամբ դատապարտէին զիս և ստորոգէին, այլ կարծեցեալք վնաս ինչ գործել. վասն այսորիկ արժան է բամբասել զսոսա։ Եւ այսչափ իսկ զսոսա աղաչեմ, զորդիքս իմ՝ յորժամ հասանիցեն 'ի հասակ՝ պատուհասեցէք, ո՛վ արք, այսպէս տրտմեցուցանել զսոսա՝ որպէս և ես զձեզ տրտմեցուցանէի. եթէ ձեզ թուիցին՝ կամ ընչից կամ այլոյ ուրուք յառաջագոյն փոյթ առնել, քան եթէ առաքինութեան. և եթէ կարծիցեն՝ ինչ գոլ ոչ և մի ինչ գոլով՝ նախատիցէք զսոսա այսպէս, որպէս և ես զձեզ. զի ոչ փոյթ առնեն այնոցիկ՝ որոց պարտն է, և կարծեն ինչ գոլ՝ գոլով և ոչ միոյ ուրուք արժանիք։ Եւ եթէ զայսոսիկ առնիցէք՝ յիրաւի ախտացեալ իցեմ առ 'ի ձէնջ ես իսկ և որդիքս իմ։ Եւ արդ քանզի ժամ է գնալոյ՝ ինձ իսկ մեռանելով և ձեզ կելով. բայց եթէ ո՛ր 'ի մէնջ հասցեն առ լաւագոյն իրողութիւնս, ամենայնի անյայտ է, բայց միայն յաստուծոյ։

1 Յօր... արթեր ևս։ 2 Յօր. զի։
3 Այս է՝ ընտանի Ոգին Սոկրատայ, որ միշտ նմին թելադրէր զարդարն և զպատշաճ։

ՏԻՄԷՈՍ

ՊԱՏՃԱՌՔ ՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՆԱԽԱՍՈՒԹԻՒՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՄԷՈՍԻ ՊՂԱՏՈՎՆԻ

Քանզի երթեալ Սոկրատէս ՚ի Պեռէա ՚ի սակս Բենտիտեացն տօնի. և տրամաբանեաց անդը՝ յաղագս քաղաքավարութեան ընդ Պոլեմարքոսի՝ որդւոյն Կեփալոսի և ընդ Գլաւկոնի և ընդ Ադիմանտոսի և ընդ Թրասիմաքոսի Հռետորի. զկնի աւուր միոջ դարձեալ տրամաբաներ եկեալ ՚ի քաղաքն ընդ Տիմէոսի և ընդ Եւմակրատիսի, և ընդ Կրիտիաս, և աւ սոքօք՝ ընդ միոյ այլ ուժեմն Հարտասանի. և պատմեաց սոցա զնախաստացեալ տրամաբանութիւնն՝ զոր ՚ի Պեռէացոն տրամաբանեաց, որպէս և գրեալ է յիւրում քաղաքավարութեան խօսս. և աղաչէր զսոսա զի ՚ի վաղիւն փոխանակ տրամաբանութեանն դացէ ինչ ՚ի նոցունց փոխարէնս՝ լսել ինչ նորագոյն։ Եւ ժողովեալ սոցա ՚ի միասին յաւուր երրորդի ՚ի սկսանիլ վարդապետութեան նորա ՚ի Պիւռիա։ Վասն որոյ յայտ առնէ աստուստ՝ եթէ յերրորդում աւուրն էր. քանզի յասելն իւրում Սոկրատէս ՚ի Հաւին քաղաքական՝ այսպէս. Եթէ իմայ ես երէկ ՚ի Պիւռիա. և ասէ դարձեալ ցնոսա. եթէ Ոըք երէկ հիւրըդ եիք՝ այսօր պարտիք խրախճանութիւն մեզ առնել։ Իսկ սոքա ամենեքին ոչ պատահեցան աստ. քանզի ՚ի չորիցն մի ոմն ոչ գոյր անդը, ՚ի պատճառէ իմն տկարութեան պակասեալ։

ՊՂԱՏՈՆԻ

ԱՌ ՏԻՄԷՈՍ, ՍԱԿՍ ԲՆՈՒԹԵԱՆ [1]

Սոկր. Զորրորդ ելով ձեր արդեօք, որոց զտրամաբանութիւնդ, իբրու հիւրք եղելոյ երէկ, իսկ այսօր կոչնատէրք. ո՛վ սիրելի Տիմէոս, մինն պակասեալ՝ ո՞ւր արդեօք իցէ։

Տիմէոս. Տկարութիւն եհաս 'ի վերայ նորա, ո՛վ Սոկրատէս, որակութիւն իմն ախտի. եթէ ոչ՝ զիարդ կամաւ պակասէր յայսպիսի տրամաբանութենէ։

Սոկր. Ապա ուրեմն քեզ և դոցա է լնուլ զպակասելոյն մասն։

Տիմէոս. Այո, ըստ զօրութեան մերում ոչ ինչ պակասեսցուք. քանզի և ոչ է իրաւացի, երէկ վայելեալք 'ի քումն խրախճանութեան. և այսօր ոչ յօժարութեամբ առնել քեզ պատուասիրաբար զխրախճանութիւնս։

Սոկր. Յիշէ՞ք արդեօք. ո՛րչափ և յաղագս որո՛յ ասել ձեզ կամեցայ։

Տիմէոս. Յիշեմք զոմանս. և զոր ոչն՝ մերձ ելոյ քո վերստին դարձեալ ծանուսցես մեզ. մանաւանդ՝ եթէ ոչ դժուարեսցիս, 'ի սկզբանէ դարձեալ համառօտեսցես մեզ զնոյնս. զի յաւէտ առ մեզ հաստատեսցի։

Սոկր. Այսպէս և արարից. երէկ առ 'ի յինէն ասացեալ յաղագս քաղաքավարութեան բանիցն՝ այս ինչ էր սկիզբն, թէ ո՛րպէս կամ որպիսի՞ արանց առաքինեաց պարտ է շինել զքաղաքս։

[1] Անձինք Տրամախօսութեանս են Սոկրատէս, Կրիտիաս, Տիմէոս և Երմոկրատէս։

Տիմէոս. Եւ զայսոսիկ յոյժ, ո՛վ Սոկրատէս, զասացեալն 'ի քէն 'ի մտածութեան մերում պարփակեալ ունիմք։

Սոկր. Ապաքէն ո՞չ զմշակաց, և որչափ այլ արհեստք են, յառաջագոյն 'ի յայնմ՝ բաժանեցաք 'ի պատերազմողացն սեռէն։

Տիմէոս. Այո՛։

Սոկր. Եւ ըստ բնութեանն հատուցեալք իւրաքանչիւր զպատշաճն արհեսաին, մի միայն արհեստ զայսոսիկ ասասցուք՝ որոց առաջի ամենեցուն պարտ է կալ և պատերազմել. իբրու զի կարօտանայ քաղաքն սոցա պահպանութեանն. եթէ յարտաքնոց ոմն և կամ 'ի ներքնոց հասցէ առ 'ի գործել սմա չար և դատել իսկ հեզաբար զայնոսիկ՝ որ ընդ ձեռամբ սոցա են. իբրև զբարեկամք իւրեանց. և մանաւանդ դժուարիլ 'ի մարտս այսոցիկ՝ որ թշնամիք սոցա են։

Տիմէոս. Եւ հասարակաց լիցի այդոքիկ։

Սոկր. Զի և բնութիւն հոգոյն պահպանողացն թուի ինձ գոլ այսպէս, համանգամայն ցասմնատեսակ, և իմաստասէր զանազանապէս. զի առ երկաքանչիւրսն հնար իցէ սոցա՝ ուղղաբար լինել հեզք և դժուարինք։

Տիմէոս. Այո։

Սոկր. Եւ սնունդ որպիսի՞. ո՞չ ապաքէն կրթականաւ և երաժշտականաւ, և ամենայն ուսմամբք պատշաճ է սոցա մանիլ։

Տիմէոս. Եւ քաջ իսկ արդեօք։

Սոկր. Եւ այսպիսի սնուցելոցս՝ ասացաւ 'ի մէնջ, ոչ արծաթ և ոչ ոսկի և ոչ այլ ինչ ստացուածս յատուկ իւրեանց համարիլ գոլ պարտ, այլ իբրու օգնականս վարձ առնուլ պահպանութեանն՝ առ 'ի ձեռն սոցա կեցելոցն, և զայն՝ որչափ ողջախոհիցն չափաւոր է. և թոշակս լիցի սոցա հասարակաբար 'ի միասին բնակելոց, և առ միմեանս հաղորդելոց, և արութեան փոյթ առնել յամենայն ժամ՝ յայլոց յամենայն արհեստից պարապեալք։

Տիմէոս. Ասացաւ և այդ իսկ։

Սոկր. Եւ յաղագս կանանց յիշեցաք, իբրու թէ արանցն բնութեամբ մերձ իցեն՝ որոց շարայարին,

և արհեստք սոցա Հասարակաց՝ ըստ պատերազմի և ըստ այլոց վարուց։

Տիմէոս. Եւ այդ այդպէս ասացաւ։

Սոկր. Այսմանօր և յաղագս մանկարարութեան այսպէս ասացաք, զի Հասարակաց լիցեն ամուսնութիւնն և մանկունքն, և ամենեցուն լիցէ օրէնն և հնար՝ զի ոմ՛ որ երբէք զծնեալն՝ի նոցանէ իւր գոլ ճանիցէ. այլ Համարեսցեն ամենեքին զսոքա զամենայն հոմածինս, և քոյր և եղբայր զայնոսիկ՝ որ ներքոյ լիցեն չափաւոր Հասակին. և զվերագոյնքն և զյառաջագոյնքն՝ ծնօղք և նախածինք. և ստորինքն՝ թոռունք և մանուկ թոռանց։

Տիմէոս. Այո՛, և զայդ՝ լիշեցեր՝ ըստ որում ասացերդ։

Սոկր. Եւ այս ըստ զօրութեանն ուղիղ[1] լինիցին իբրու արիք բնութեամբ, որպէս լիշեցաք զլշխանքն և զլշխանուհիքն շարաւերձիլ առ միմեանս՝ ծածուկ և յայտնապէս. և՝ի միմեանց վիճակեալս. զի այսպէս չարքն զատեալք և բարիքն, ընդ նմանիս իւրեանց շաբաւերձեալք՝ ոչ լինչ թշնամութիւն լինիցի վասն այնորիկ, զբաժան Համարելով պատճառ զուգաւորութեանն։

Տիմէոս. Ցիշեմք զի այդպէս է։

Սոկր. Եւ զայս ասացաք, եթէ զծնունդք բարեացն սնուցանելի է՝ի նոյն քաղաքի, իսկ զչարեացն յայլում լռելեան փոխեալ քաղաքի. և յորժամ ածիցեն՝ դիտաւորութեամբ զարժանաւորսն միշտ դարձուցանել վերստին։ Եւ եթէ անարժան իցէ յերկաքանչիւրոցն՝ՙի վատթարագունիցն՝ՙվայրսն փոխարկել։

Տիմէոս. Այդպէս էր։

Սոկր. Արդ անցաք ընդ բանիսն, որպէս երկիկ՝ զլեաւորաբար. եթէ փափաքիք լինչ տակաւին յայնցանէ, ար սիրելի Տիմէոս, իբրու պակասեալ։

Տիմէոս. Ո՛չ, այլ նոյն իսկ են ասացեալքն, ար Սոկրատէս։

Սոկր. Լուիցէք արդեւք զոր յետ այսոցիկ՝ որ ասացաք յաղագս քաղաքավարութեան, թէ արդեօք ես առ սա ախտացեալ հանդիպիմ։ և նման է այսպիսոյ ումեմն կիրս՝ որով ես ախտանամ, որպէս եթէ ոք տեսեալ ուրուք զբարի կենդանիք կամ՝ի ձեռն կենդանագրութեան գործեալ, և կամ կեալ[1] ձիմարտապէս՝ զի լիցեն՝ի հանդարտութեան. և հասցէ՝ի ցանկութիւն՝ տեսանել զսոսա շարժութեամբ, և յայնցանէ՝ որ մարմնականացն պատշաճ է՝ աշխատել լինչ հատակութիւն. զնոյնս և ես ախտացայ առ քաղաքիս՝ զորմէ ասացաք. և զի վայելչապէս ասացից զբանս, լսեցկ արդ նահատակութիւն[2], զոր աշխատի քաղաք առ այլոց քաղաքաց հասեալ՝ի պատերազմունս, և՝ի մարտին զպատշաճաւորն հատուցեալ խրատուն և մնդեանն՝ ըստ ներգործութեանցն գործոյն և ըստ մեկնութեան բանիցն և պատասխանւոյն առ իւրաքանչիւր՝ի քաղաքացն։

Իսկ զայսոսիկ, ար Կռիտիաս և Եւմոկրատէս, յանձն իմ ես ոչ վստահանամ, գուցէ ոչ լինիմ հնար՝ զբերն և զքաղաքն՝ ըստ պատշաճին ներբողել։ Եւ իմն՝ ոչ լինչ սքանչելի. այլ և՝ի նոյն կարծիս հասեալ եմ յաղագս այնոցիկ՝ որ յառաջագոյն էին քերթողք, և որ այժմ իսկ են։ Եւ զայս ոչ եթէ զբերթողացն առարգեմ զսեռ, այլ յամենայնի յայտ է՝ եթէ նմանական ազգն որով մնեալ է՝ զայնոսիկ նմանեցուցանէ դիւրաւ և քաջապէս։ Իսկ զայնոսիկ որ արտաքոյ են մնդեանն իւրաքանչիւրոցն՝ գժուարին է գործով, և գժուարագոյն է բանիւք՝ բարեաւք նմանեցուցանել։ Զձարտասանացն իսկ սեռ՝ բազմաբանից[3] և գեղեցկագունից այլոց յաւէտ հմտագոյն վարկանիմ։ Այլ զանգիտեմ՝ գուցէ — ՙի քաղաքականն մոլորական գոլով և բնակութիւն իւր առանձին ոչ բնակեալ —, և ոչ է՝ի դէպ իմաստասէր արանց կամ քաղաքականաց, այն որ լինչ՝ի պատերազմունն և՝ի մարտսն գործին, զի բանիւք և գործով հանդիսեալք իւրաքան-

1 Յօր. ՚ՒԼԼ։

2 Յն. և զի հեշտեաւ ունկն մատուցիցէ՝ յորժամ ոք պատմեացէ զնահատակութիւնս, զոր նահատակի քաղաքն, զնոյն մարտուցեալ առ այլ քաղաքս, վայելչապէս հասեալ՝ի պատերազմ։

3 Այս է՝ բաղում բանից։

չիւրոցն ստուգապէս՝ գործիցեն զսոսա և կամ ասիցեն։ Մնաց արդեօք [1] ձերոյ ունակութեանդ սեռ, համանգամայն երկաքանչիւրոց՝ բնութեամբ և սնընդեամբ հաղորդեալ։ Քանզի սա իսկ Տիմէոս [2], 'ի քաջօրէն գոլովն քաղաքէ՝ որ է 'Լօկռիդոս՝ որ յԻտալիա, և գոյիւք և ազգաւ ոչ է վերջին այնոցիկ՝ որ անտանօր [3] են. քանզի զմեծագոյն զիշխանութիւնս և զպատիւսն քաղաքին այնմիկ ընձեռեալ է. և իմաստասիրութեամբ, ըստ որում ինձ թուի, ամենեցուն ծայրաբար վերագոյն է։ Եւ զԿռիտիաս ամենեքեան՝ որ աստանօր եմք՝ գիտեմք, որ ոչ է տգէտ ասացելոցս առ 'ի մէնջ։ Իսկ զԵռմօկրատէս 'ի յաղագս բնութեան և սննդեանն բան առ այսոսիկ ամենայն՝ գիտեմք գոլ հնարաւոր, քանզի այն ինչ զորմէ բազումք վկայեն՝ հաւատարիմ է [4]։ Վասն որոյ ես երեկ զմտաւ ածեալ, յորժամ աղաչէիք զիս՝ զբանն որ յաղագս քերականութեան [5] է, վերստին ասել, յօժարապէս շնորհէի ձեզ. գիտելով՝ զի որ յետ այնոցիկ 'ի կարգին է բանս, ոչ ոք քան զձեզ՝ եթէ կամիցիք՝ [6] գեղեցկագոյն հատուսցէ. քանզի 'ի պատերազմ վայելչապէս հասուցեալք զքաղաքն, զամենայն պատշաճաւորսն դուք միայն հատուցէք արդեօք՝ յայսցանէ՝ որ այժմ են. խոստացեալ արդ և առ միմեանս՝ հաղորդաբար որոնեալք առանձնապէս հատուցէք ինձ զիմոց բանից փոխարէնս [7]։ Պատրաստ եմ արդ ես զարդարեալ վասն այսոցիկ՝ զառ 'ի ձէնջ ասացեալսն ընդունել։

Եռմօկրատէս ասէ։ Արդ՝ որպէս ասաց սա Տիմէոս, ո՛վ Սոկրատէս, յօժարութենէ ոչինչ պակասես-

1 Յօր. Մնացորդօք։
2 Տիմէոս իմաստասէրն անուանի՝ էր 'ի Լոկրիս քաղաքէ Իտալիոյ։
3 Յօր. միշտ գրէ՝ ասպանուր, անդանուր...
4 Յն. Իսկ Երմոկրատեայ յաղագս բնութեան և սննդեան, զի առ ամենայն ինչ բաւական իցէ այս, հաւատալ պարտ է 'ի վկայել բազմաց։
5 Յն. (և որպէս վերագոյնն ասաց) Քաղաքավարութեան։
6 Յն. ոչ ոք՝ եթէ դուք կամիցիք՝ գեղեցկագոյն հատուսցէ։
7 Յն. յայսցանէ՝ որ այժմ են։ Արդ ասացեալ զկարգեալսն՝ հրամայեցի ձեզ զոր և արդ ասեմ։ Արդ խոստացարուք միաբան՝ քննեալ 'ի ձեզ յինքեանս՝ հատուցանել ինձ այժմէն զբանիցս փոխարէնս կամ զվարձս։

ցուք. և պատճառ ոչ ունիմք և ոչ մի՝ առ 'ի չկատարել [1] զասացեալսդ։ Վասն որոյ և երէկ վաղվաղակի աստուստ գնացեալք յիջեվանս մեր առ Կռիտիաս, քանզի առ նմա ագանիմք. մինչդեռ տակաւին 'ի ճանապարհին էաք՝ զայսոսիկ զնոյնս դիտէաք. և սա մեզ բան պատմեաց՝ զոր 'ի նախնեացն էր լուեալ. զոր և այժմ ասա ընդ իս, ո՛վ Կռիտիաս, զի հանդերձ մեօք ընտրեսցէ՝ եթէ ճահաւոր է 'ի կարգաւորութիւն բանիս, եթէ ոչ։

Կռիտ. Քանզի զայս պարտ է առնել թէ և երրորդ ընկերոյս մերոյ Տիմէոսի թուեսցի։

Տիմէոս. Թուի իսկ։

Կռիտ. Լուր արդեօք բանիս, ո՛վ Սոկրատէս, որ է յոյժ անտեղի, և ամենևին իսկ հաւատարիմ, որպէս եօթանցն իմաստնագոյնն Սողոն երբեմն ասաց. քանզի էր սա ընտանի և յոյժ սիրելի Դռոպիդոսի [2] հաւոյն իմոյ. որպէս և նա բազում անգամ ասէ յիւրում քերթուածսն. և ընդ Կռիտիաս [3] հաւն մեր ասացեալ, որպէս պատմէր մեզ ծերն, եթէ մեծ և սքանչելի գործք էին այսմ քաղաքիս, որք և 'ի ձեռն ժամանակի և ապականութեան մարդկան եղեալ էին անյայտք. բայց մին քան զամենայն մեծագոյն այս է, զոր յիշեալք վայելչապէս՝ քեզ իսկ շնորհս հատուսցուք. և զաստուածուհին համանգամայն 'ի տօնիս իրաւապէս և ճշմարտապէս ներբողեսցուք օրհնութեամբ։

Կռիտ. Բարւոք ասես, այլ ո՞ր է գործս այս, որ ոչ իբրու ասացեալ միայն՝ այլ իբրու ճշմարտապէս գործեալ 'ի քաղաքիս այսմիկ՝ իսկզբանէ պատմէիր 'ի լսելիսն Սողոնի։

Կռիտ. Եւ արդ ես ասացից. բանին լսեալ, ոչ 'ի յառնէ համբակէ։ Քանզի էր յայնժամ Կռիտիաս՝ որպէս ինքն ասեր՝ գրեթէ հուպ ամաց ինսնից, և ես էի տասնամեայ՝ յորում հասակի կուրեացի գոլ հան-

1 Յօր. կատարել։
2 Յօր. Դռոպիոսի. ('ի լուս. նշանակեալ էր դ 'ի վերայ պ տառի. զոր կամէր դնել թերևս ընդ մէջ ի և ս տառից)։
3 Յօր. ընդ Կռիտիաս։

դիպեի ՅԱպատուրեանցն [1]։ Արդ սովորութիւնն տո-
նին որ Հանապազ էր, և յայնժամ պատահեցաւ, զի
նահատակեցուցանէին Հարքն զմանկունս իւրեանց ՚ի
հանգներգուածս։ Բազմաց արդ քերթողաց բա-
զում քերթուածս ասացան, և մանաւանդ ըստ այնմ
ժամանակին՝ զՍողոնի քերթուածն, զի նոր [2] էին,
բազումք ՚ի մանկանցն երգեցաք։ Այն ոմն ՚ի փռատո-
ռացն [3], որք են վերագոյն պաշտօնեայք տաճարին —,
ոչ գիտեմ եթէ Ճշմարտապէս նմա այնպէս Թուիւր,
և ոչ գիտեմ եթէ Կռիտիայ ընդհէք մատուցանէր —,
յոյժ խմաստագոյն եղեալ զՍողոն խնդրուածս իւր [4],
և քան զամենայն քերթողսն աշխուագոյն։ Իսկ ծերն
յոյժ հեշտացեալ, որպէս յաւէտ յիշեմ, և ժխտեալ [5]
ասէ. Ո՛վ Սմիւնանդրիւ, եթէ ոչ վարկպարաղն, այլ
փուճապէս ձեռնարկուածիւն արարեալ էր ՚ի քեր-
դուածան, որպէս և այլք ոմանք. և զբանն զոր Յե-
գիպտոսէ աստանօր հասեալ՝ կատարեալ էր. և եթէ՝
ոչ ՚ի ձեռն բազում փորձուածեանց, որ յայլոց չարեաց
և յայսցանէ որ եգիտ՝ աստանուր հարկէր հասեալ
նմա պղերգութեան [6]. ըստ իմում կարծեացս՝ ոչ Ե-
սիոդէս և ոչ Հոմերոս և ոչ այլ ոք ՚ի քերթողացն Ե-
ղեալ էր ընտրելագոյն քան զսա։ Եւ զինչ էր բանն,
ով Կռիտիա։ Պատասխանի ետ. վասն մեծագունիս
այս և անուանաւորագունիս քան զայլս բազմաց և ի-
րաւացի գործոյս՝ զոր գործեաց քաղաքս այս. և ՚ի
ձեռն ժամանակի և ապականութեան գործողացն՝ ոչ
բաւեաց աստանուր բան,

1 Գանգի չկայ այս ՚ի յոյնն, եթէ պարապուն հանարեալ կամ մեկնութիւն բանից Պղատոնին՝ եղաք ՚ի ծանօթութիւնս. Եւ յԱպա-
պոբեանս գոն է յԱՌՆՆս (Յօր. յԱՌՆՆայ) յիշատակելով զԻոնէսս, և յայմ գոնին կարգէին զմանուանն պաշտօնէայս գաճարին, որք անուանէին Կուրեայիք։ Ապատուրեան կամ խաբերեից ասն յԱԹենս բաժաներ յերից հանդէս, յորում վերջինն կոչէր կուրեացն (Κουρεῶτις) զի ՚ի սմա և մանկտի աթենացւոց եռամեայք և չորեքամեայք գային ՚ի ժողով եղբայրութեանցն (φρατόρες)։ 2 Յօր. նորա։

3 Յօր. ֆռատորացն, — Փռատռոքն φρατορες կոչեցեալք էին եղբայրութիւնք յԱթենս ՚ի ինամս կրօնական պաշտաման կարգեալք։

4 Յն. ՚ի քերթուածս իւր։

5 Յն. ժխտեալ, ժխտեալ։

6 Յն. և յայսցանէ՝ զոր եգիտ անգանօր հասեալ, (ոչ) հարկեցաւ անփոյթ առնել. ըստ իմում կարծեաց...

Սոկր. Այս ինձ իսկզբանէ, թէ զինչ և որպէս, և
յոմանց [1] Ճշմարտապէս լսեալ ասեր Սողոն։

Կռիտ. Ի ոմն տեղի Յեգիպտոս՝ որ անուանի Դել-
տայ։ Եւ առ գագաթն սորա՝ Նիլոսի վտակն հերձեալ
բաժանի [2], որ և անուանի սաիսական բաշխուածն [3], և
լինի բաշխուածս այսմիկ քաղաքին որ անուանի Սաիս [4],
ուստի դիմեալ էր Ամասիս Թագաւորն. և բնակչացն
քաղաքիս այսմիկ աստուած ոմն առաջնորդէ՝ եգիպ-
տացի լեզուաւ անուանեալ Նէիթ, և ելլենացի լե-
զուաւ՝ որպէս նոցա բանն է՝ Ա[Թ]ենայ [5], և են սոքա
յոյժ աթենասէրք և յեղանակաւ ոմամբ ընտանիք իսկ
սոցա գոլ ասեն։ Ա՛ւ սոսա գնացեալ Սողոն՝ յոյժ եղև
պատուական։ Եւ արդ յաղագս նախնեացն Հարցա-
փորձելով սա երբեմն քններ սակս այսոցիկ զՀմտա-
գոյնսն ՚ի քահանայից, և գրեթէ ոչ զանձն իւր և ոչ
զայլ ոք ելլենացւոցն երևեցուցանէր գիտել ինչ յա-
ղագս նախնեացն։ Եւ արդ կամեցեալ ՚ի միասին ա-
ծել զսոսա և յաղագս այսոցիկ զոյց առնել այսինքն
է յաղագս Փօռոնէոսի և Նէոբեայ, որ էին քան զԱր-
հեղէն յառաջագոյն, և յետ Ջրհեղեղին դարձեալ
յաղագս Դեւկալիոնոսի և Պիւռայի կնոջ սորա, իբրու
ասէ առասպելն, և զառ ՚ի սոցանէ ծնեալն ազգա-
տոհմել [6]։ Եւ զամացն, եթէ որքան էին՝ յորում սոքա
էին, յիշելով և զամանակսն Թուել. և ահա ոմն ՚ի
քահանայիցն, որոյ անունն էր Պատէնէիտ [7], և ինքն
յոյժ ՚ի հնոցն, ասէ ցնա. ո՛վ Սողոն, ելլենացիքդ դուք
միշտ մանկունք էք, զի ծեր ելլենացի ոչ գոյ։ Լսեալ
արդ [8] սա զայս՝ ասէ, եթէ զիա՞րդ կամ որպէս դու

1 Յն. զորմէ։ 2 Յօր. Նիլոս. ՚ի վաչն լծեալ բաժանի։

3 Սաիսական բաշխուած. Սայիսական գաւառն (Σαϊτικὸς νομός)։

4 Յն. և գաւառիս այսմիկ մեծի՝ քաղաք Սայիս, ուստի էր Ամասիս Թագաւորն։

5 Արդարև նոյն են Նէյթ և Աթենա զիքն, որպէս և բաւիղն նոյնութիւն ցուցանէ, զԱ[Թ]ենայն յայմմէ ընթերցեալ առանց ձայնաւորաց։

6 Այս է. աղգաթուէլ։

7 Անուն քրմին Թէպէտ չկայ ՚ի յոյնն և ոչ յԵւսեբին ՚ի քրոնիկոնն, որ զայս յիշատակէ, այլ Թուի իբր Պաշտնեայ Նէիթայ կամ Աթենասայ։ Բայց Թէրևս Թարգմանն զմեկնութիւնն ևս ընդ սմա խառնեալ է, որ ասէ Պաթէնէիտ անուն։

8 Յօր. ու գոյ ընել։ Արդ ասա...

զայս ասես։ Եւ ասէ ցնա, զի համբակք էք հոգւով ամենեքին, և ոչ ունիք 'ի միտս ձեր 'ի հին լրոյ գիտութիւն, և ոչ ուսումն ամանակաւ ծերացեալ։ Եւ պատճառն սոցա այս է, բազում ապականութիւնք եղեն մարդկան և այլ լինելոց են, հրով և ջրով մեծագոյնս և բիւրինս այլք սակաւագոյնս։ Քանզի և առ 'ի ձէնջ այս ասի, իբրու երբեմն Փայթոն՝ որդի արեգական՝ լծեալ զկառս հօր իւրոյ [1] զերկրայինս հրով կիզեաց, և ինքն 'ի սաստկութենէ ջերմութեանն ապականեցաւ [2]. այս իսկ առասպելի ձև ասի, սակայն ինքս ճշմարիտ, և այնոցիկ՝ որ շուրջ զերկրաւս և երկնովքն բերին՝ փոխաբերութիւնք [3]. և 'ի ձեռն երկար ժամանակաց՝ այլ բազումք են լեալ ապականութիւնք հրով։ Յայնժամ որք 'ի լերինս և 'ի բարձրաւանդակ վայրս և 'ի ցամաքայինս ունին զբնակութիւնս՝ դիւրագոյն ապականին քան զայն որ դետս և ծովս բնակեալ են։ Բայց մեզ Նեղոս յայլ յամենայնէ է կեցուցիչ. և յայնժամ յայնմ վտանգէ եղև մեզ փրկիչ։ Եւ յորժամ աստուածքն զերկիր ջրով մաքրեն և ողողեն, այնոքիկ՝ որ 'ի լերունքն իցեն անդիորդք և հովիւք՝ կեցցեն 'ի ջրոյ անտի. և որք 'ի քաղաքն իցեն՝ որպէս ձերն են, 'ի ձեռն գետոց 'ի ծով արկցին։ Իսկ արդ՝ յայսմ գաւառի ոչ յայնժամ, ոչ այլ երբէք 'ի վերուստ ջուրք հոսեալ են, այլ մանաւանդ 'ի ներքոյ բնակութեան մերոյ անցանել ամենայն ջուրք են բնաւորեալ. աստուստ և վասն այսոցիկ պատճառաց՝ աստանուր վայրս կեցեալ [4]։ Եւ ճշմարտապէս յամենայն տեղիք, ուր ոչ յանկարծակի ձմեռն կամ սաստիկ տապ խափանիցէ յաւէտ կամ սակաւ, միշտ իցէ սեռ մարդկան։ Եւ որչափ առ ձեզ կամ աստանուր կամ այլուր տեղւոջ՝ զոր լրով իսկ ճանաչեմք, զինչ և լեալ է բարի, և կամ որ այլ ինչ ունի տարբերութիւն (հրաշա-

1 Յն. լծեալ զկառս հօր իւրոյ, և զի ոչ կարէ ընդ հօրն ճանապարհ վարդել՝ զերկրայինս հրով կիզեաց։
2 Յն. և ինքն շանթահար լեալ ապականեցաւ։
3 Յն. խոտորութիւնք, զարտուղելն 'ի շաւղաց։
4 Յն. վասն այսոցիկ պատճառաց յաստանօր վայրս կեցեալքն հնագոյնք ասին. և ճշմարտապէս...

փառ) [1], աստանօր ամենայն 'ի նմանէ գրեալ են և 'ի տաճարս մեր կան և ճնան։ Իսկ որ ինչ առ ձեզն են և յայլ տեղիք կան՝ այժմ կազմեալ յամենայն ժամ հանդիպեցան գրել, ամենայն ինչ որոց կարօտանան քաղաքք։ Սակայն ըստ սովորութեան՝ շրջաբերութիւնն ամացն իբրու ցաւոց [1] սաստկութեամբ երկնային հոսմամբն 'ի վերայ հասեալք զգրեալսն և զհիմուտս նոցա կործանեաց. և ճնացին այնոքիկ 'ի ձէնջ՝ որ աներաժիշտքն էին և առանց դպրութեան։ Վասն որոյ դարձեալ իսկզբանէ իբրու մանկունք եղէք՝ ոչ գիտելով ոչ յայնցանէ որ աստանօր, և ոչ յայնմանէ՝ որ առ ձեզ, որչափ և էին 'ի հին ժամանակն։ Եւ արդ այդ զոր դուդ ազգատոհմես, ո՛վ Սողոն, և զոր ասացեր յաղագս ձերոյ իրի՝ քան զառասպել մանկանց սակաւ ինչ ունի տարբերութիւն. քանզի զերկրի ողողումն յիշէք դուք մի, և այլ և յառաջագոյն բազումք են եղեալ. տակաւին և զգեղեցկագոյն և զառաքինի սեռն մարդկան՝ 'ի ձերում գաւառին, ոչ գիտէք, եթէ լեալ է. յորոց դուդ և ամենայն քաղաքն իսկ արդ էք, ճնացեալք ձեր իբրու սերմ ինչ սակաւ։ Բայց այս 'ի ձէնջ զանխլեալ է, վասն եղելոցն յազգս բազումս և գրեցելոցն վաղճանելոյն և անյայտ լինելոյն։

Էր իսկ, ո՛վ Սողոն, նախ քան զմեծագոյնն ջրով ապականութիւն, այդ քաղաքդ Աթենացւոց արի առ 'ի պատերազմունս, և ըստ ամենայնի քաջօրէն զանազանապէս. որոյ գեղեցիկ գործք և քաղաքավարութիւնք՝ գեղեցկագոյն քան զամենայն քաղաքաց գոլ ասեն, քան զայնոցիկ՝ որչափ մեք ներքոյ երկնի ընկալեալ եմք լուր։ Եւ լուեալ զայս Սողոն սքանչացաւ, և եդեալ զամենայն յօժարութիւն և զփոյթ աղաչէր զքահանայսն ստուգութեամբ զամենայն յաղագս նախնի քաղաքավարութեանցն պատմել սմա։ Եւ ասէ ցնա քահանայս. Մախանք ոչ գոյ, ո՛վ Սողոն, այլ 'ի սակս քո ասացից և քաղաքին ձերոյ. մանաւանդ 'ի սակս աստուածուհոյն, որ զձերն իսկ քաղաք և զայս

1 Փակագծեալ բառդ մեկնութիւն է Տարբերութիւն բառին ըստ յունին. այս է որ այլ ինչ հրաշափառ իցէ։
2 Յօր. ցաւուց։

վիճակ իւր առեալ սնոյց և խրատեաց յառաջագոյն քան զքաղաքս մեր [1]: Եւ այսմ աշխարհի զարդուս առ մեզ՝ սրբազան գիրս ութ հազար ամաց թիւ գրեալ է. իսկ յաղագս ինն հազարին եղելոցն քաղաքացեաց, ասացից արդ սակաւուք և յաղագս օրինացն և գործոց tingu զոր ինչ գեղեցկագոյն գործեցաւ: Եւ ըստուգապէս կարգաւ յաղագս ամենայնի յետոյ պարապմամբ գիրս առձեռն ընկալեալ՝ ասասցուք: Արդ զօրէնսն դիտեա դու զոր էին առ սմա. քանզի բազում յարացոյց յայնցանէ՝ որ առ ձեզ յայնժամ էին՝ աստանօր այժմ գտանես: Առաջին իսկ զքահանայիցն սեռ՝ յայլոցն 'ի բաց որոշեալ. և յետ այսորիկ զշինողացն, զի ըստ ինքենէ իւրաքանչիւր՝ ընդ այլում շինողի ոչ խառնի. և ապա անդէորդացն [2] և որսորդացն, յետ որոյ երկրագործացն: Եւ մարտական սեռն՝ որ է ամենեցուն յայլոցն որոշեալ. զի սոցա այլ ոչինչ էր փոյթ՝ բայց միայն յաղագս պատերազմին, որպէս կարգեալ էր 'ի ձեռն օրինացն: Տակաւին և սպառազիթեան նոցա դպրութիւնքն, նիզակաց և վահանաց՝ որովք մեք 'ի վերայ ասիացւոցն էաք նախ սպառազինեալք. քանզի աստուածուհին 'ի տեղին յայնմիկ՝ առ ձեզ եցոյց զիւր ներգործութիւնն: Վասն որոյ և յաղագս խոհեմութեան տեսցես զօրէնսն՝ թէ որպէս եդ փութով վաղվաղակի 'ի սկզբանն, և յաղագս ամենայն զարդու նորա, մինչև ցդիւթականսն և ցբժշկական առ 'ի յողջութիւն, սոքա [3] յաստուածուստ պարգևեալ 'ի մարդկայինս գտան, և որչափ այլ ուսմունք սոցա հետևին՝ ստացեալ զամենայն: Զայս իսկ յայնժամ զամենայն զարդարումնս և զշարակարգութիւնս աստուածուհին յառաջագոյն իբրու զառաջինս զձեզ զարդարեալ՝ 'ի սմա բնակեցոյց, ընտրեալ զտեղիդ՝ յորում էք դուք ծնեալք, և զբարեխառնութիւն զօդոյն տեսեալ 'ի սմա, զի արք խոհեմականք

1 Յն. Սնոյց և խրատեաց. զառաջինն՝ որ առ ձեզ հազար ամօք, յԵրկրէ և 'ի Հեփեստեայ, առեալ զսերմն 'ի ձէնջ. և զսա՝ զկնի ուրեմն: Այլ այսր յօրինուածոյս որ առ մեզս եղև, 'ի սրբազան գիրս ութհազար ամաց թիւ գրեալ կայ:

2 Յօր. օրիորդացն:

3 Յօր. սորա:

բերիցէ: Իբրու պատերազմասէր և իմաստասէր գոլով աստուածուհին՝ զտեղին զայնմիկ որ ընդունելի և յարմարական արք հանդերձեալ էր բերել զսա յառաջագոյն ընտրեալ [1] բնակեցոյց: Բնակեցաւ արդ օրինօք այսպիսեօք վարեալք. և տակաւին մանաւանդ քաջ օրինեալ իսկ քան զամենայն մարդիկ գերագոյնք եղեալ արութեամբ, իբրու ծնունդք աստուածոցն և առ 'ի սոցանէ խրատեալք, զի այնպիսեացն այնպիսիք գոլով վայելչագոյն է: Բազում արդ և մեծամեծ գործք ձերում քաղաքին աստանօր գրեալ զարմանալիք են. սակայն մի է ամենեցուն մեծագոյն և արութեամբ գերագոյն: Զի ասեն գրեալքն, թէ որչափ դադարեցոյց զօրութիւն քաղաքն ձեր՝ գոռոզութեամբ գնացեալ համանգամայն 'ի վերայ ամենայն Եւրոպեայ և Ասիոյ, արտաքուստ դիմեալ յԱդլանդիկոս ծովէ. քանզի յայնժամ գնալի էր ծովն՝ որ է անտանուր. զի ունէր կղզի առ բերան իւր՝ որ կոչի իբրու դուք ասէք Եռակլեայ արձանք. և կղզին էր լիբէացւոց հաւասար, և քան զԱսիա մեծագոյն [2], յորմէ գնալի էր առ այլ կղզիսն, այնոցիկ՝ որ յայնժամ կամէին գնալ. և 'ի կղզեացն առ 'ի հանդէպ ամենայն ցամաքն, որ է շուրջ կարմիր ծովուն [3]. և քանզի որչափ ներքոյ են ասացեալ բերանոյդ՝ նաւահանգիստ երևի, և նեղ ինչ [4] ունի մուտ նաւորդութեան, և այն իսկ է ճշմարտապէս ծով, և ցամաքն՝ որ շուրջ է զծովովն՝ յիրաւի ասի ցամաք, քանզի երկաքանչիւրք մեծք են: Եւ 'ի կղզոջս յայսմիկ, որ կոչի Անդլանդական, մեծ զօրութիւն թագաւորաց եկն 'ի միասին, կալեալ զամենայն կղզին և զայլք բազում կղզիք, և զմասունք ցամաքին. առ այսոցիկ իշխեցին տակաւին լիբէացւոց՝ մինչև ցԵգիպտոս, Եւրոպայ՝ մինչև ցՏիւռենացւոց: Այս իսկ ամենայն զօրութիւնս 'ի միասին հաւաքեալ՝ զվայրն իսկ որ առ ձեզ է և զայս իսկ որ առ մեօք է և զոր ներքոյ բերանոյն այնմիկ է տեղին՝ միով երբեմն դիմելով ձեռնարկեաց ծառայեցուցանել: Յայնժամ

1 Յօր... դրեալ:

2 Յօր. քանզի Ասիա մեծագոյն:

3 Յն. որ է շուրջ զբուն կամ զճշմարիտ ծովովն:

4 Յօր. նեղիլ:

իսկ ձերոյ քաղաքին զօրութիւնն, ո՛վ Սողոն, առ ամենայն մարդիկ՝ ուժգին արութեամբ եղև երևելի։ Զի ամենեցուն առաջնորդեալ քաջութեամբ և արհեստիւք որչափ են 'ի պատերազմունս, և Ելլենացւոցն ամենեցուն պաշտպանեալ, և 'ի հարկէ միացեալ՝ քանզի այլքն 'ի բաց կացին ապստամբեալք, 'ի վերջինսն վարեցաւ վշտագնութիւնս. և յաղթեալ եկելոց 'ի վերայ նորա, մեծ եցոյց զօրութիւն, և զայնոսիկ՝ որ ոչ էին տակաւին ընդ ծառայութեամբ ստորանկեալ՝ արգելոյր 'ի գերութեան [1] և զայլս որչափ բնակեալ եմք ներքոյ սահմանացն եռակլեանց՝ զամենեսին 'ի միասին ազատեաց։ Իսկ յետոյ ժամանակի՝ յանկարծակի ջրհեղեղի եղելոյ, և զտիւ մի և զգիշեր դժուարապէս ողողեալ ամենայն մարտականն յանկարծակի ընկղմեցաւ ընդ երկրաւ. և Ադլանդական կղզին նոյնպէս ընկղմեցաւ 'ի ծովն և անյայտ եղև. վասն որոյ և այժմ անհուն [2] և անքննելի եղև անդանօր ծովն, քանզի տիղմ անեզր առ խորս սորա գոլով՝ աննաւարկելի առնէ զսա։

Կռիտիաս ասէ, իսկ արդ զասացեալսն, ո՛վ Սոկրատէս, 'ի ձեռն հնոյն Կռիտիայ՝ 'ի լսելիսն Սողոնի, իբրու համառօտ ասելի է՝ լուար։ Եւ երէկ յորժամ ասէիր դու յաղագս քաղաքավարութեան և արանցն՝ զորոց ասէիր, սքանչանայի ես, յիշեալ զայսոսիկ՝ զոր արդ ասացի. և զմտաւ ածեալ իբրու 'ի դիցն ումեքէ և կամ 'ի բախտէ, և ոչ 'ի դիտողութենէ հաւասարի բազումս յայնցանէ՝ որ ասաց Սողոն. սակայն ոչ կամեցայ վաղվաղակի ասել, զի ոչ ճշգրտութեամբ յիշէի, վասն երկարութեան ժամանակին։ Արդ մտածօրէն յանձն իմ խոկացայ, զի պարտ էր ինձ առանձին հաստատել, և այնպէս պատմել հաւաստի. վասն որոյ 'ի վաղիւն խոստացայ քեզ՝ զհրամայեալսն ինձ երէկ. առաջնորդել գործոյս, որ է ամենեցուն մեծագոյն, և բան վայելչական կամաց քոց պարգևել. չափաւորա-

1 Յօր. 'ի գր"ա-է։
2 Անհուն, այս է որոյ չմնաց հուն, անցք, անգնալի, անճանապարհ (ծով)։

պէս ունելով զկարողութիւն [1]։ Այսպէս իսկ, որպէս սա երէկ ասաց, վաղվաղակի գնալով առ սոսա՝ մի ըստ միոջէ զմտաւ ածեալ յիշէի. և գնացեալ՝ գրեթէ զամենայն դիտեալ 'ի գիշերին, հասայ 'ի վերայ սոցա. քանզի մանկանցն ուսմունքն սքանչելի ունին յիշատակ. զի ես զոր երէկն լուայ՝ ոչ գիտեմ եթէ կարացից զամենայն վերստին յիշել։ Բայց զայս զոր ամենեին յառաջագոյն 'ի ժամանակի լուայ, սքանչացայց՝ եթէ յինէն ճողոպրիցի բան. քանզի յայնժամ խաղալեօք և բազում հեշտութեամբ էր իմ լսողութիւնն, և ծերն մեծ յօժարութիւն՝ առ 'ի ուսուցանել զիս, և բազում անգամ վերստին հարցանելովն, իբրու նըշանակք ինչ դրոկոնտիկոնով [2] անջինջ գրոյ յարատեւականք եղեն առ իս բանքն։ Եւ սոցա իսկ վաղվաղակի ընդ առաւօտն պատմէի զնոյն, զի և սոքա հանդերձ իմով [3] կարող լինիցին պատմութեան բանիս։ Եւ արդ 'ի սակս որոյ այս ամենայն ասացաւ, պատրաստ եմ ես առ 'ի լսել զայս, ո՛վ Սոկրատէս, ոչ միայն առ տեղիս տեղիս, այլ իբրու լուայ՝ զամենայն ըստ իւրաքանչիւր, և զքաղաքացիքն և զքաղաքն, զոր դու մեզ երէկ իբր առասպելաւ պատմեցեր, այժմ փոխարկեալք 'ի ճշմարտութիւն՝ եկայք դիցուք, եթէ այն քաղաքն՝ այս էր. և զքաղաքացիքն՝ զոր դու զմտաւ ածէիր, ասասցուք գոլ ճշմարտապէս զնախածինս մեր, յաղագս որոյ ասէր քահանայն, և յարմարիցին [4] արդեւք, և ոչ վրիպեսցուք՝ ասացեալք զսոսա՝ զայնոքիկ գոլ զոր յայնմ ժամանակին էին. և հաղորդաբար [5] յանձն առեալք մեք ամենեքին փորձ արասցուք՝ զվայելչականն ըստ կարի մերում յաղագս որոյ հրամայեցեր մեզ՝ հատուցանել. և դիտելի իսկ է, ո՛վ Սոկրատէս, եթէ ըստ հանճարի [6] է բանս այս՝ եթէ զայլ ոմն փոխանակ սորա խնդրելի է։

1 Յն. զհրամայեալսն ինձ երէկ. եդեալ 'ի մտի, որ մեծագոյնն է յամենայն յայսպիսի գործս, բան ինչ տալ խորհրդոց մտացն վայելչական, և այնու չափաւորապէս աջողեալ։
2 Յօր. դրոկոնտիկոնով. — այս է խարան, նշան խարելով։
3 Այս է. ընդ իս։
4 Յօր. յարմարեցին։
5 Այս է. 'ի միասին։
6 Ըստ հանճարի. ըստ մտաց, 'ի դէպ մտացն խորհրդոց։

Սոկր. Եւ զո՞ր արդեօք, ո՛վ Կռիտիա, փոխանակ սորա յաւէտագոյն ընկալցուք, որ և հասեալ զոհիս աստուածուհոյն՝ վասն ընտանի գոլոյն՝ մանաւանդ վայելչական է. ոչ առասպելս ստեղծանելով, այլ ճշմարիտ բան գոլով, որ է ամենևին մեծագոյն։ Զի ո՛րպէս կամ ուստ զայլք գտցուք բանք՝ թողեալ զսա, քանզի ոչ գոյ. և արդ երկաքանչիւրք բարեբախտեալք ձեզ ասել պարտ է, և ինձ փոխանակ իրիկեան բանիցն հանդարտութիւն բերելով լսել։

Կռիտ. Դիտեա արդ զհիւրընկալութեան քո տրամադրութիւն, ո՛վ Սոկրատէս, ըստ որոյ և մեք իսկ տրամակայեալ եմք. զի թուեցաւ մեզ՝ զի Տիմէոս իսկ աստեղաբաշխականագոյն գոլով քան զմեզ, և յաղագս ամենեցուն բնութեան գիտելոյ մանաւանդ արարեալ գործ, ասել յառաջագոյն, սկսեալ յայսմ աշխարհի լինելոյն, և կատարեալ զբանն 'ի բնութիւն մարդկան։ Եւ ես յետ սորա՝ իբրու առ 'ի սմանէ ընկալեալ զմարդիկ եղեալ բանիւ, և առ 'ի քէն խրատեալք զանազանապէս զոմանս 'ի սոցանէ, և ըստ Սողոնի բանին և օրինին՝ 'ի ներքոյ ածեալ զսոսա առ մեզ իբրու առ դատաւորս՝ առնել քաղաքացիք քաղաքիս [1] այսմիկ, իբրու զի սոքա էին Աթենացիքն, յաղագս որոյ ազդեաց՝ մինչդեռ անյայտք էին սոքա՝ սրբազան գրոցն համբաւն. արդ այսուհետև իբրու յաղագս քաղաքացեացն և Աթենացւոցն՝ առնելի իսկ են բանքս։

Սոկր. Կատարելապէս իսկ և պայծառաբար կարծեմ՝ եթէ ընկալայց զբանիցդ զփոխատրութիւն. քո իսկ գործ է ասել [2] ո՛վ Տիմէոս, կոչելով քեզ յօգնականութիւն զաստուածսն։

Տիմէոս. Այլ, ով Սոկրատէս, զայսոսիկ՝ ամենեքին որք և սուղ ինչ ողջախոհութեան հանդիպեալքն [3], յամենայն դէմս փոքու և մեծ իրողութեան [4], առ աստուած միշտ կարդան։ Իսկ մեք յաղագս ամենեցուն այսոցիկ բանս առնել հանդերձեալք՝ եթէ եղեալ են

1 Յօր. քաղաքս։ 2 Յօր. քո իսկ գործելդ։
3 Յօր. եմք։
4 Այս է՝ յամենայն իսկ 'ի դիմելս մերում 'ի փոքր կամ 'ի մեծ իրողութիւն։

և եթէ անեղ են, եթէ ոչ ամենևին վրիպեալք իցեմք՝ հարկ է մեզ զաստուածքն և զաստուածուհիքն ըղձմամբ կոչել յօգնականութիւն, զի ըստ կամաց նոցա, մանաւանդ և ըստ մերոյ տենչման ասասցուք ըղբանս։ Եւ աստուածքն իսկ ըստ ինքեանց մաղթեալք լիցին և հաշտեալք. և մերս լինիցի մաղթութիւն, ըստ որում ուսանիք դուք դիւրաւ։ Եւ ես ըստ որոյ զմտաւ ածեմ, մանաւանդ յաղագս առաջիկայիցս, 'ի ճահ հատուցեալ զբանս ցուցայց։

Է իսկ, ըստ որում ինձ թուի, նախ բաժանելի այս ինչ։ Զի՞նչ՝ որ է միշտ և լինելութիւն ոչ ունի. և զի՞նչ է որ լինի իսկ, և ոչ երբէք է։ Սակայն որ իմացութեամբ բանիւ պարունակելին է՝ միշտ ըստ ինքեան է. և այն որ թուիցի զգայական գոլ անբան կարծմամբ, և լինի և կորուսանի ճշմարտապէս, ոչ երբէք է. և ամենայն եղեալ՝ 'ի պատճառէ ումեմնէ 'ի հարկէ լինի. զի ամենայն իրի անհնար է առանց պատճառի 'ի լինելութիւն հասանել։ Եւ որոյ գոյացուցիչն առ նոյնպէս գոլն միշտ հայի, այնպիսով ումեմն վարեալ յարացուցիւ՝ զտեսակն և զզօրութիւն նորա գործիցէ, գեղեցիկ 'ի հարկէ այնպէս զամենայն կատարէ. և որոյ արարիչն ընդ լինելութեամբ է, նաև լինելի յարացուցիւ վարեալ ոչ է ազնիւ։ Եւ արդ ամենայն երկին կամ աշխարհ կամ եթէ այլ ինչ ընդունի անուանակոչութիւն, զայն ինչ և անուանեսցի։ Եւ արդ որոնելի է մեզ նախ, վասն որոյ առաջի իսկ մեր կայ իսկզբանէ և դիտելի է. զի որպէս՝ էր միշտ և լինելութեան ոչ և մի ունէր սկիզբն եթէ եղև՝ 'ի սկզբանէ սկսեալ ուրուք. եղև, զի երևելի է և շօշափելի և մարմին ունի. և ամենայն այսպիսիքս զգալիք են. և զգալիքն՝ կարծեօք պարունակեալ զգայութեամբ, եղեալք և լինելիք [1] երևին, և զեղեալսն ասասցուք 'ի պատճառի ուրուք [2] հարկ գոլ լինել։ Իսկ արդ զհայրն և զարարիչն ամենեցուն գտանել գործ է. և գտեալ՝ ամենեցուն պատմել անհնար է։ Զայս ինչ արդ դարձեալ պարտ է որոնել յաղագս նորին. թէ ըստ որո՞յ

1 Յօր. լինելիք։ 2 Այս է. 'ի պատճառէ իմեքէ։

'ի յարացուցիցն նիւթող սորա գործէր զսա, առ այն՝ որ նոյնպէս և ըստ ինքեան գոյր, եթէ ըստ եղելոյն։

Իսկ արդ եթէ բարի է աշխարհս, և գոյացուցիչ սորա բարի, յայտ է թէ առ իբրու մշտնջենաւորն հայի։ Ապա եթէ (զոր չէ ումեք պարտ ասել) առ լեալն, ամենայնի հաւաստի՝ եթէ առ մշտնջենաւորն [1]. քանզի գեղեցկագոյն 'ի յեղելոցս՝ վեհագոյնն ամենեցուն ունի պատճառ։ Եւ այսպիսի իսկ եղեալ՝ բանիւ և խոհեմութեամբ պարունակելի, և ըստ ինքեան ունող գոյացաւ։ Եւ այսոցիկ այսպէս լինելով, ամենայն հարկ է՝ այսմ աշխարհի պատկեր ուրուք գոլ, և մեծի արդեօք գոլ ումեմն սկսեալ ըստ բնութեան սկզբան։ Աստանօր արդ յաղագս պատկերիդ և յաղագս յարացուցի նորին սահմանելի է։ Իբրու զի ուրեմն բանքս որոց պատմողք են՝ սոցունց են իսկ և ազգակիցք։ Իսկ արդ տեւականին և ստուգագունին և անհանճարաւ երևելոյն՝ [2] տեւականք և անվթարք, որչափ և հնար է առանց կշտամբանաց և յաղթութեան՝ պատշաճ է գոլ՝ բանից [3]. քան զնա իսկ ոչ ինչ գոլ նուազագոյն, և բանիցն այնոցիկ, որ յաղագս այնորիկ է, որ զնման նորա ունի։ Սակայն պատկեր է, պատշաճագոյնս և ըստ նորին համեմատութեան. զի զոր ինչ ծնունդ առ գոյութիւն է՝ զնոյն ինչ է և ճշմարտութիւն առ հաւատ։

Արդ՝ ո՛վ Սոկրատէս, զուժգինս քան զբազումս [4] յաղագս աստուածոցն, և այսոցիկ ամենեցուն լինելութեան, եթէ ոչ կարացաք ամենևին զինքեանս նոցունց խոստացեալ և հաստատուն բանս հատուցանել՝ մի՛ սքանչասցիս. այլ եթէ ոչ քան զայլ ուրուք նուազագոյն բերիցուք բանք, սիրել [5] պարտ է. և յիշել՝ իբրու ես ասացողս և դուք դատաւորքդ՝ բնութիւն մարդկային ունիմք, և վասն այսորիկ զպատշաճաւոր

1 Յօր. եթէ ոչ առ մշտնջենաւորն։
2 Յն. ստուգագունին և մտօք երևելոյն։
3 Յն. որչափ 'ի դէպ իցէ անկշտամբելի բանից. և անշարժիցն՝ ոչ իւիք արժան է յետնեալ գտանիլ։
4 Յն. Արդ եթէ, ո՛վ Սոկրատէս, բազմաց բազում ինչ ասացեալ յաղագս աստուածոցն և...
5 Այս է ըստ յն. շատանալ, բաւական համարել։

ճառն ընդունել վայելչագոյն է՝ և ոչինչ քան զայն տակաւին խնդրել վեհագոյն։

Սոկր. Ո՛վ Տիմէոս, ըստ ամենայնի որպէս հրամայես՝ քաջ ընդունելի է մեզ։ Արդ զնախերգանդ քո ընդունեցաք սքանչելապէս, զբանդ [1] արդ մեզ ըստ կարի կատարեա։

Տիմէոս. Ասասցուք արդեօք, 'ի ձեռն որո՛յ պատճառի զլինելութիւնն և զայս ամենայն՝ բաղկացուցիչն բաղկացոյց։ Բարի էր, և բարւոյ՝ ոչ երբէք ոչ ինչ յաղագս ոչ ուրուք մախանք լինիցի. և սորա արտաքս գոլով, զամենայն մանաւանդ զոր ինչ կամեցաւ լինել՝ հուպ էին 'ի նա։ Զայս իսկ լինելութեան և զարդու [2] մանաւանդ, եթէ սկիզբն իսկապէս առ 'ի խոհեմական արանց ընկալցի՝ ուղղագոյն ընդունիցի արդեօք։ Քանզի կամեցեալ աստուած զամենայն բարի, և ոչ մի ինչ ըստ զօրութեան գոլ յոռին իսկ, այսպէս զամենայն որչափ երևելի էր՝ առեալ, որ հանդարտութիւն ոչ ունէր՝ այլ շարժեալ էր ստէպ և անկարգաբար, ածէ սա 'ի կարգաւորութիւն՝ յանկարգութենէ, զայս ինչ՝ քան զայն վեհագոյն համարեալ։ Եւ մարթելի ո՛չ էր և ոչ [3] իցէ վեհագունին՝ այլ ինչ գործել բայց 'ի գեղեցկագունէն։ Զայս ինչ խորհեալ գտանէր յայնոցիկ՝ որ երևելիքն էին ըստ բնութեան [4], ոչ ինչ անիմանալի, այնորիկ՝ որ միտս ողջ ունիցի՝ գեղեցկագոյն գործ գոլ երբէք. և մտաց առանց հոգւոյ գոլ անհնար էր։ Վասն այսորիկ՝ զմիտս 'ի հոգւոջ և զհոգի 'ի մարմնի բաղկացուցեալ 'ի միասին նիւթէր. զի այսպէս՝ զայն որ գեղեցկագոյնն էր, ըստ բնութեան, և գործ քաջագոյն գործիցէ։

Արդ այսպէս՝ ըստ վայելչագոյն բանին՝ ասելի է զաշխարհս զայս կենդանի [5], շնչաւոր, մտօք և ճշմարտութեամբ [6] 'ի ձեռն աստուծոյ լինել նախախնամու-

1 Յն. զօրէնսն այսուհետև կատարեա։ 2 Այս է՝ աշխարհի։
3 Յօր. և մարթելի ոչ էր. ոչ իցէ...։
4 Այս է. Զայս ինչ խորհեալ գտանէր յայնոցիկ՝ որ երևելիքն էին ըստ բնութեան, ոչ ինչ անիմանալի, քան զնա՝ որ միտս ողջ ունի՝ գեղեցկագոյն ինչ գործ մարթիցի լինել...
5 Յօր. զաշխարհս զայսմիկ կենդանի։
6 Յն. շնչաւոր, մտաւոր արդարև 'ի ձեռն աստուծոյ նախախնամութեանն լինել։

թեանն։ Եւ սորա ելոյ, զայն՝ որ այնոցիկ 'ի կարգի են՝ մեզ ասելի. որոյ 'ի կենդանեաց 'ի նմանութիւն զսա բաղկացուցիչն շաղկապեաց։ Իսկ արդ այնոցիկ որ մասին տեսակաւ բնաւորեալ են՝ ոչ և միոյ արժանացուսցուք։ Քանզի անկատար թուեցեալ՝ ոչ երբէք լինիցի բարի. այլ որոյ են այլ կենդանիք մի ըստ միոջէ և ըստ սեռից մասնկունք, սմա՝ քան զայլոց ամենեցուն՝ զսա նմանագոյն գոլ դիցուք։ Զի զամենայն իմանալի կենդանիքն նա յինքեան պար առեալ ունի, որպէս և այս աշխարհս՝ զմեզ, և որչափ այլ երևելի կենդանիք բաղկացեալ են։ Զի իմանալեացն գեղեցկագունին, և կատարելոյն ըստ ամենայնի մանաւանդ զսա աստուած նմանեցուցանել կամեցեալ, կենդանի մի երևելի՝ զամենայն որչափ սորա ըստ բնութեանն ազգակիցք են կենդանիք՝ ներքոյ իւրոյ ունելով, բաղկացոյց։ Ո՞րպէս արդ ուղղապէս, մի՞ երկին յառաջագոյն ասացաք, եթէ բազումք և անեզրք ասել ուղղագոյն էր. մին՝ եթէ ըստ յարացուցին իցէ գոյացեալ։ Զի այն որ պարունակէ զամենայն որչափ իմանալի կենդանիքն են, յետ այլոյ՝ երկրորդ երբէք ոչ իցէ։ Զի դարձեալ եթէ այլ գոլ շուրջ զնովաւ կարօտանայ կենդանի, ապա մասն այնոցիկ սա իցէ, և ոչ տակաւին երկաքանչիւրոցն [1] իցեն, այլ այնմ՝ որ պարունակեալն է և սա նմանեալ ասի [2] ուղղագոյն։ Եւ արդ զի սա ըստ միութեանն նման իցէ ամենակատար կենդանւոյն, վասն այսորիկ ոչ երկու և ոչ բազում [3] արար արարիչն աշխարհք, այլ մի այս միածին երկինս եղեալ, է և իցէ. մարմնատեսակ արդեօք և երևելի, և շօշափելի պարտ է եղելոյն գոլ։ Եւ առանց հրոյ ոչ երբէք լինիցի ինչ երևելի, և ոչ շօշափելի՝ առանց հաստատնոյ ուրուք, և հաստատուն՝ առանց երկրի ոչ։ Վասն որոյ 'ի հրոյ և յերկրէ զամենեցուն սկսեալ աստուած բաղկացուցանել զմարմինս՝ առնէր։ Եւ երկուօք միայն բաղկացուցանել առանց երրորդի ոչ է հնար [4]. քանզի շաղկապի

1 Յօր. երկաքանչիւրք։
2 Յօր. որ պարունակեալն է, սայ ենթակայի. իսկ արդ նմանեալ այլում ասի...
3 Յօր. ոչ երկու այլ բազում...
4 Յօր. երկուօք միայն բարեօք (թերևս՝ արդեօք) բաղկացուցանել առանց երկրի ոչ է հնար։

ումեմն 'ի միջին պարտ է երկոցունց 'ի միասին ժողով [1] լինել։ Եւ 'ի շաղկապիցն գեղեցկագոյն այն է, որ զինքն և զշաղկապեալքն՝ մին մանաւանդ արասցէ. և զայս բնաւորեալ է համեմատութիւն գեղեցկապէս կատարեալ։ Քանզի յորժամ թուոյ երից, և կամ տեսակաց [2] և կամ զօրութեանց՝ որոց և իցէ արդեօք միջինն, զայն ինչ՝ որ և առաջինն առ սմա է, զնոյն և սա առ վերջինն. և դարձեալ, զոր ինչ վերջինն առ միջինն, և միջինն՝ առ առաջինն. յայնժամ միջին իսկ՝ առաջին լեալ, և վերջին, և առաջինն դարձեալ միջին [3]։ Ամենեցուն այսպէս և 'ի հարկէ զնոյնն գոլ պատահէ. և զնոյն եղեալ միմեանց՝ ամենայն մի իցէ ճշմարտապէս։

Արդ եթէ տապարակ [4] իսկ որ խորութիւն ոչ ունի պարտ էր լինել ամենեցուն մարմնոյն, միով միջո։ ցաւ արդեօք շատանայր՝ զանձն իւր և զոր յետ իւրն՝ շաղկապել։ Բայց այժմ հաստատեսակ գոլ սմա՝ պատշաճեաց, որ է գնդատեսակ, և հաստատունքն՝ միով իսկ ոչ երբէք, այլ երկու միջոցովք՝ շարայարի մարմին։ Այսպէս արդեօք, հրոյ և երկրի՝ զօդ և զջուր աստուած 'ի մէջ եդեալ, առ միմեանս՝ ըստ որում հնար էր բնաւորապէս գործեալ, զոր ինչ հուր առ օդոյ է, զնոյն ինչ և օդ առ ջրոյ, զոր ինչ օդ առ ջրոյ՝ զնոյն ինչ և ջուր առ երկրի. և այնպէս շաղկապեաց և բաղկացոյց երկին՝ երևելի և շօղափելի. և 'ի ձեռն այսոցիկ, և 'ի սոցանէ, այսինքն 'ի չորից յայսցանէ թուով՝ [5] զաշխարհի մարմինս եղեալ խոստովանի ըստ համեմատութեան. [6] և զսիրելութիւն ընկալեալ յայսցանէ, իբրու 'ի նոյն 'ի միասին եկեալ, անլոյծ իցէ 'ի ձեռն այլոյ ուրուք՝ բայց միայն 'ի շաղկապօղէն իւրմէ։

Եւ արդ 'ի չորիցս յայսցանէ զիւրաքանչիւրն բոլոր ընկալաւ աշխարհի բաղկացութիւնս. քանզի 'ի

1 Այս ինքն՝ ժողովօղ, միաւորիչ։
2 Յն. և կամ մարմնոց և կամ զօրութեանց։
3 Յն. Յայնժամ միջինն առաջին լեալ և վերջին, և վերջինն և առաջինն՝ երկոքին դարձեալ միջինք։
4 Տապարակ (թերևս գրելի՝ տափարակ), է մակարդակն։
5 Յն. 'ի սոցանէ յայսպիսեաց և թուով՝ 'ի չորեցունց... Յօր. 'ի չորից յայսմէ թուոյ։
6 Յօր. զհամեմատութիւն։

հրոյ բոլորէ, նոյնպէս և ՚ի ջրոյ և յօդոյ և յերկրէ՝ բաղկացուցիչն, մասն ոչ ինչ և ոչ զմիոյն և կամ զօրութիւն՝ արտաքոյ Թողեալ. զայս ինչ խորհելով, նախ իսկ՝ զի բոլոր մանաւանդ և կատարեալ կենդանի իցէ սա ՚ի կատարելոց մասանց. և առ այսոցիկ, ոչ զմի ՚ի սոցանէ Թողեալ. զի այլ հնար իցէ յայնմանէ լինել այսպիսի, և տակաւին՝ զի անծերանալի իցէ և առանց տկարութեան. զմտաւ ածեալ բաղկացուցիչն ՚ի մարմինս յայսմիկ զջերմ և զցուրտ, և զայլ ամենայն որչափ ունին սաստիկ զօրութիւնք, արտաքոյ ոչ եԹող. զի մի մերձեցեալ ՚ի սա ոչ ՚ի դէպ ժամանակի՝ լուծմունք և տրտմութիւնք և ծերութիւնք ՚ի վերայ ածցէ. և առնէ ապականութիւն: Վասն այսորիկ արդեօք պատճառի և խորհրդոյ այսմիկ, մի բոլոր յամենեցուն՝ բոլորից կատարեալ, և առանց ծերութեանն և խօԹութեան՝ նիւԹեաց զսա. և ձև եդ սմա զվայելուչն և զփաղաղանն: Եւ այսմ կենդանւոյս՝ որպէս զամենայն կենդանիք պարունակել հանդերձեալ էր, վայելուչ արդեօք իցէ ձևն այն, որ բակ առեալ է յինքեան զամենայն զձևք: Վասն որոյ և գնդատեսակ ՚ի միջոյ ամենեւին առ վախճանն հարթ ունելով՝ բոլորատեսակ զսա ձախարակեաց, ամենեցուն կատարելագոյն և նմանագոյն սորա ձև յօրինեալ. քանզի բիւրիւ գեղեցկագոյն է նմանն քան զանմանն. և ուղորկ արդեօք շրջանակաւ ստուգիւր ամենայն արտաքնոյն սորա՝ ՚ի սակս բաղմաց [1]. քանզի աչից սա ոչ կարօտանայր, — զի ոչինչ տեսանելի՝ արտաքոյ սորա մնայր —, և ոչ լսելեաց, զի ոչ լսի. և շունչ ոչ գոյր շուրջ զսովաւ՝ զի կարօտանայր սա հոտոտելեաց [2], և ոչ այլոց ուրուք կարօտանայր գործարանի, որով ընդունիցի յինքն զկերակուր կամ զմնուն. կամ որով յառաջադոյնն ժամանեալ [3] դարձեալ արտաքոյ հանցէ. քանզի արտաքս ելանէր ՚ի սմանէ և ոչինչ, և ոչ մնայր ՚ի սա այլուստ, զի և ոչ գոյր. այլ ինքն ինքեան սնուցանդ՝ զառ

1 Ա.յս է. շուրջանակի ուղորկ լինէր նա ըստ արտաքնոյն՝ վասն բազում իրաց:

2 Ա.յս է, առուրևառութեան չնչոյ:

3 Ա.յս է ըստ յն. և կամ որով զյառաջագոյն չոգիացեալ (մնունդն) դարձեալ...

՚ի յինքենէ ապականեալսն առնէր. և զամենայն ինքեամբ և ՚ի ձեռն ինքեան առնելով և կրելով՝ արհեստիւ եղև. քանզի համարեցաւ որ բաղկացոյցն ըզսա, շատացեալ գոլոյն, մանաւանդ վերհագոյն գոլ զսա՝ քան եԹէ իցէ առ յայլոց ինչ կարօտացեալ: Եւ ձեռաց՝ [1] որովք ոչ առնուլ և ոչ սպառնալ ուրուք կարօտանայր, ոչ ինչ ունէր պէտս [2]. վասն որոյ և մնոտի համարէր այսպիսի ինչ սմա շարամերձել. նոյնպէս և ոչ ոտից էր պէտս, զի ամենևին բարձուց պաշտման ոչ կարօտանայր: Եւ շարժութիւն սմա բաշխեաց զոյն՝ որ ընտանի է մարմնոյ, այսինքն գնԹնեակն, զի սա յաղագս մտաց և խոհեմութեան յոյժ յաւէտ է: Վասն որոյ ըստ այսոցիկ նովիմբ և յինքեան պարածեալ զսա՝ գործեաց բոլորիւ շարժիլ դարձմամբ. և զարտաքոյ վերեքեան շարժութիւնքն զամենայն՝ ՚ի բաց եբարձ, և անմոլորելի արար զնա յայնցանէ: Եւ ՚ի շրջաբերութիւնն՝ ոտից ոչ ինչ սա կարօտացեալ. անսրունն և առանց ոտից զսա գործեաց: Զի այսպիսի է այս ամենայն հանճար, յաղագս այն որ երբեք լինելոց էր՝ այն ընդհակառակ [3]. ողորկ և առանց խոշորութեան, և յամենայն կոյս և ՚ի միջոյ հաւասար և բոլոր և կատարեալ մարմին [4] գործեաց ՚ի կատարելոց մարմնոց. և զհոգի ՚ի մէջ սորա եդեալ՝ յամենայնի տարածեաց, և տակաւին արտաքոյ զմարմինն սուաւ ծածկեաց. և շրջանակաւ բոլոր շրջեալ՝ մի միայն երկին հաստատեաց անխառն յայլոց [5]. բայց ՚ի ձեռն [6] առաքինութեան ընդ ինքեան շարամերձիլ հնարեալ, և ոչ այլոց ուրուք կարօտացեալ. և ծանօթ իւրեանց և սիրելի զսա բաւականապէս [7]. և վասն այսոցիկ ամենայնի ծնաւ զսա բարեբաստ աստուած. և զհոգին

1 Ա.յս ինքն. Եւ ձեռաց կարօտանալ...

2 Յօր. կարօտանայր. զինչ ոչնչէր պէտս:

3 Յն. Զի սոյն այս արդարև ամենայն խորհուրդք աստուածոյ, յաղագս աստուածոյ որ երբեմն լինելոցն էր՝ ածեալ զմտաւ, ողորկ և... 4 Յօր. ՚ի մարմն:

5 Ըստ յն. մի միայն երկին հաստատեաց Թափուր և ամայի, բայց... 6 Յօր. ի յն:

7 Յն. և ծանօթ և սիրելի զնա բաւականապէս արարեալ անձամբ անձին:

ոչ իբրու այժմ յետնագոյն ձեռնարկեամբ ասել, և
Համբակագոյն այնպէս հնարագործեաց աստուած.
զի ոչ իշխել երիցագունին՝ զհամբակագոյնն՝ի միասին
արկեալ՝ Թողացոյց, ըստ սոցունց ուրուք և ասեմք [1]:
Բայց նա և ծննդեամբ և առաքինութեամբ, նախկին
և երիցագոյն զհոգին քան զմարմինն՝ իբրու զտիրուհի
և զիշխանուհի՝ քան զիշխեցեալն բաղկացոյց մարմին,
յայցանէ և այսպիսի եղանակաւ. անանձատելի և
միշտ ըստ ինքեան ունօղ բնութեանն, և յաղագս
մարմնոյ եղելոյն բարժանելի [2], երրորդ՝ յերկոցունցն
միջին շարախառնեաց տեսակ գոյութեան, յաղագս
այնմ բնութեան՝ որ ըստ ինքեան է, և միւսոյն այլոյ:
Եւ ըստ այսոցիկ բաղկացոյց՝ի միջև այնմ՝ որ անջատ է
՝ի սոցանէ, և այնմ՝ որ ըստ մարմնոյ բարժանելի է: Եւ
առեալ զսոսա՝ որ էին երիս՝ շարախառնեաց՝ի մի
տեսակ, և զիոյն բնութիւնն՝ որ էր դժուարախառն,
՝ի նոյն իսկ շարայարմարեալ բնութեամբ: Եւ խառ-
նեալ ընդ գոյացութեանն, և յերիցն դարձեալ միոն
գործեալ, բոլոր սոփաւ մասունք որչափ պատշաճն
էր՝ բաշխեաց. և զիւրաքանչիւր յայնմանէ իսկ՝ որ
ըստ ինքեան էր, և՝ի միւսմէն գոյացութենէն խառ-
նեալ: Եւ սկսանիւր բաժանել այսպէս. առաջին մին
մասն՝ի բաց էառ յամենայնէս, և յետ այնմ՝ի բաց
առնոյր կրկնապատիկ սորին, և զերրորդն կիսաբոլոր
երկրորդին, և եռապատիկ առաջնոյն, և չորրորդ՝ եր-
կրորդոյն կրկին, և հինգերորդ՝ եռապատիկ երրոր-
դին, և զվեցերորդն՝ առաջնոյն ութապատիկ, և
եւթներորդ՝ քսանևեւթնապատիկ առաջնոյն: Եւ
յետ այսոցիկ ընոյր կրկնապատիկ և եռապատիկ աս-
պարէզն, մասունք տակաւին անդուստ հատեալ՝ և
եղեալ՝ի մէջ սոցունց, իբրու զի յիւրաքանչիւրում
աստպարիսկն երկու խցեն միջոցք. մին իսկ նովիմբ մա-
սամբ քան զծայրսն սոցա գերագոյն և գերունակեալ
առ՝ի սոցանէ, և միւսն ըստ Թուոյ հաւասար գերա-
գոյն և հաւասար գերունակեալ: Իսկ կիսաբոլորից

1 Յն. զի ոչ Թողացոյց զհամբակագոյնն իշխել երիցագունին. այլ մեք բազում ինչ հաղորդ գտեալ հարևանցի և տարապարտ ի-
բաց, նոյնպէս և խօսիմք: 2 Յօր. անբաժանելի:

բացատացն՝ և եռամասնիցն և ութամասնից եղելոց,
յայսոցիկ կապանաց՝ի բաժանմունքն՝ որ յառաջա-
գոյնք էին. ութամասնեայ բացատաւն եռամաս-
նեայք ընուին միով մասնկաւ քան զայնոքիկ պակա-
սեալ: Եւ բացատին այսմ պակասեալ մասնկանս,
Թուոյ առ Թիւ ունելով զսահմանս, վեցի և յիսնի.
և երկերիւրի առ քառասուն [1] և երկերիւր: Եւ արդ
զնառնեալ յայսմանէ [2]. ուստի զայսոսիկ հատանէր,
այսպէս արդեօք ծախէր զամենայն: Եւ զայս իսկ
զբաղկացութիւնս զամենայն՝ կրկին [3] ըստ երկարու-
Թեան ցելեալ՝ մէջ առ միջոյ զերկաքանչիւրս [4], իբրու
զքէ, միմեանց առարկեալ, իջոյց՝ի [5] մի բոլոր, շարա-
մերձեալ զսա միմեանց՝ հանդէպ առարկուածին [6]. և
շարժութեամբ այնմիկ որ ըստ սոցունց շուրջ զսոքօք
պալ առեալ, և զվինն արտաքոյ և զվինն ներքոյ առնէր
՝ի բոլորին: Իսկ արդ զարտաքոյ բերուին՝ այնմ բնու-
Թեան համբաւեաց գոլ՝ որ ըստ ինքեան է, և զներ-
քինն՝ միւսոյն: Եւ արդ զայն՝ որ ըստ ինքեանն էր,
ըստ կողմանին ընդ աջմ [7] ածեալ, և զմիւսոյն՝ հան-
դէպ այսորիկ՝ ընդ ահեկէ: Զօրութիւն ետ այնմ, որ
ըստ ինքեան է և որ նման է սորա շրջաբերութեան.
քանզի մի է զսա և առանց ցելման Թողացոյց, իսկ
զներքինն ցելեալ վեցեկի, եւԹն բոլորս անհատասարս
ըստ կրկնապատիկ և եռապատիկ բացատին, ելոց [8]
իւրաքանչիւր երիցս այսոցիկ, երկաքանչիւրից ըստ
հակառակութեան [9] իսկ միմեանց կարգեաց բերել
զբոլորան, և արագութեամբն իսկ էր նմանապէս, և
զջորան միմեանց և երից այսոցիկ նմանաբարս, սակայն

1 Յօր. և փառասուն: 2 Յօր. յայմէ:
3 Յօր. երկրի՛ն, Թերևս՝ երկին ընթեռնուլ էր, այս է կրկին:
4 Յօր. զի երկոփանչիւրս:
5 Յօր. զբոլոր ՝ի զ բոլոր: Իմաստն է՝ Եւ զայս ամենայն բաղկացու-
Թիւնս, ըստ երկայնութեան յերկուս հերձեալ, և զմէջն առ մէջն,
որպէս զձև χ գրոյն, մերձեցուցեալ կազմեաց մի բոլորակ:
6 Առաբխոած, այս է կէտ շրջափման, որպէս և՝ի վերոյ բայն՝ զբնանդ
առարկեալ: 7 Յօր, ընդառաջմէ:
8 Յօր. ըստ երկնապատիկ բանին և եռապատիկ բացատին ելս, զիւրաքանչիւր:
9 Յօր. հակառակութեան: Իմաստն է՝ երից գոլով սոցա, զիւրաքանչիւր
բոլորական ընդ հակառակս միմեանց կարգեաց, և սուտգութեամբ
նմանս. իսկ զջորան՝ միմեանց և երիցն այնոցիկ աննմանս...

բերեալք բանիւ։ Եւ քանզի ըստ կամաց բաղկացուցչին՝ հոգւոյս բաղկացութիւնս լինէր. և յետ այսորիկ ամենայն մարմնատեսակս նիւթիւր ներքոյ սորա, և մէջ միջաւ շարայարմարեալ պատշաճէր։ Եւ 'ի միջոյ աստի առ վերջին երկինս շարամանեալ, և շուրջանակի արտաքոյ ծածկեալ զսա, ինքն յինքեան դառնալով, աստուածային սկիզբն սկսաւ անդադար և խոհեմական կենցաղի՝ առ ամենայն ամանակս։ Եւ մարմինն իսկ երկնի երևելի եղև. և աներևելի սակայն՝ հանճարոյ և յարմարութեան հաղորդեալ՝ հոգի իմանալեաց [1], և այն զի միշտ են 'ի ձեռն արիագունին՝ քան զեղեալսն ամենայն եղև քաջագոյն։ Իբրու յայնմանէ որ ըստ ինքեան էր, և 'ի միւսոյ բնութենէ. և 'ի գոյացութենէ երիցս այսոցիկ խառնեալ մասանցս, և ըստ բանի բաժանեալ և կապակցեալ, և ինքն յինքեան շրջելով, յորժամ մերձենայ, յոմն՝ որ գոյացութիւն ունիցի ցրուական և յորժամ անանջատ իցէ, որոյ հանդիպին՝ առ ինքն ամենևին դարձուցանէ զշարժութիւնն իւր. որոյ իսկ զնոյն ինչ իցէ, և կամ որոյ այլ ինչ առ որ ինչ մանաւանդ, և ո՛ւր և ո՛րպէս և ե՛րբ հանդիպի, և եղեալսն առ իւրաքանչիւր ոք զիւրաքանչիւրսն գոլ և կրել, և առ այնոսիկ՝ որ միշտ ունիցի նոյնպէս [2]։ Եւ բան որ ըստ ինքեան ճշմարիտ եղեալ, վասն միւսոյն ելով, և վասն այն որ ըստ ինքեան է 'ի շարժեցելումն 'ի ձեռն սորա բերեալ առանց բարբառոյ և թնդման, և յորժամ առ զգալիսս լինիցի. և միւսոյն բոլորն, ուղիղ գոլով՝ յամենայն հոգի իւր ազդեցութիւն ընկալցի, և կարծիք և հաւատք՝ լինիցին հաստատունք և ճշմարիտք։

Իսկ յորժամ դարձեալ առ բանականին իցէ, և այնմ որ ըստ ինքեան է բոլորն քաջանիւ գոլով՝ զնոյնս ազդէ, և միտք և մակացութիւնք կատարին 'ի հարկէ։ Եւ զայս ինչ՝ որով էակացն ընդունակ լինիցի, զի՞նչ

1 Յօր. հոգի քան զիմանալիս։

2 Իմա. Յորժամ մերձենայ առ ոք՝ որոյ գոյացութիւն իցէ ցրուական և կամ անբաժանելի. շարժեալ ինքն յինքեան բովանդակ, որ եթէ նոյն մի ինչ իցէ և կամ այլ ինչ, առ ի՞նչ մանաւանդ և ո՛ւր և զիա՛րդ և ե՛րբ հանդիպեսցի ըստ եղելոցն առ իւրաքանչիւրն կրել ինչ և առ այնոսիկ՝ որ միշտ նոյնպէս կայցեն մնայցեն։

երբէք այլ՝ ոք ասիցէ՝ բաց 'ի հոգւոյ և որ շարժեալ զսա և կենդանի իմացաւ, և պատկեր եղեալ մշտնջենաւոր աստուծոյն ծնեալ հայրն՝ զուարճացաւ, և ուրախացեալ տակաւին մանաւանդ նման ինչ յարացուցի զմտաւ էած գործել։ Եւ որպէս նա է կենդանի մշտնջենաւոր, և զայս ամենայն այսպէս ըստ զօրութեան ձեռնարկեաց այսպիսի կատարել։ Իսկ արդ կենդանւոյն բնութիւն հանդիպեցաւ գոլ յաւիտենական. և զսա և ընդ արարածոյ ամենևին շարամերձիլ՝ ոչ էր հնար, այլ պատկեր խորհի առնել զսա յաւիտենից և զարդ համանգամայն երկնի, արար, հաւասար ըստ թուոյ գոլով զսա պատկեր [1] զայսոսիկ՝ զոր ամանակ մեք անուանեցաք։ Քանզի զտիւս և ըզգիշերս և զամիսս և զտարիսս, որ ոչ գոյին յառաջ քան զլինելն երկնին, յայնժամ համանգամայն սորա բաղկանալոյս հնարաւորեցան ընկալուլ զլինելութիւն։ Եւ այս ամենայն մասունք են ժամանակի, և էրն և իցէն՝ ամանակի եղեն տեսակ, զորս բերեալ զանխլանիմք [2] առ մշտնջենաւոր գոյացութիւնն, ոչ ուղղաբար։ Ասասցուք իսկ իբրու էրն, և իցէն՝ սմա ըստ ճշմարիտ բանին ոչ յարմարին, այլ միայն էնն. քանզի էրն և իցէն առ ըստ ժամանակի լինելութեանցն պատշաճին ասել։ Իսկ սա միշտն նոյնպէս ունելով անշարժապէս՝ ոչ երիցագոյն և ոչ կրսերագոյն յարմարի լինել ('ի ձեռն ժամանակի ոչ լինել [3]) երբէք և ոչ է լեալ այժմ և ոչ յետ այսորիկ դարձեալ լինիցի. և ամենևին ոչ ինչ յայնցանէ, որ լինելութիւն է այսոցիկ զգայութեամբ բերիմք՝ [4] շարամերձեաց, այլ ժամանակի՝ այսոքիկ այնմ որ յաւիտենից են՝ նմանեալ, և ըստ թուոյ վերստին շրջաբերի [5], տեսակք եղեն. և

1 Յն. և պատկեր իմն շարժական խորհի առնել յաւիտենից, և զարդարելով միանգամայն զերկինս, առնէ, զի մնալով յաւիտեանն ինքն յինքեան, թուով խաղասցէ յաւիտենական պատկերն, զայն զոր ժամանակ անուանեմք։

2 Ըստ յն. ոճոյ է՝ զորս (այսինքն զմասունս ժամանակի) բերեմք զանխլաբար առ մշտնջենաւոր...։

3 Չիք 'ի յն. բնագրի։

4 Յն. այնոցիկ որ 'ի զգայութեան բերին։

5 Այսոքիկ եղեն տեսակք ժամանակի՝ որ նմանեալ էր յաւիտենից և թուով շրջաբերէր։

առ սոքօք տակաւին այսպիսիք է, եղելոյն՝ գոլ եղեալ, և որ 'ի լինելութենէ՝ գոլն լեալ. ևս և այժմ որ լինելոցն է գոլ լինելոց, և որ ոչն՝ ոչ է գոլ. յորոց ոչ ինչ ասեմք հաստատուն։

Արդ յաղագս այսոցիկ թերևս ոչ վայելչագոյն ժամանակս, զի պատմեսցուք 'ի սա ստուգութեամբ։ Ժամանակ իսկ յետ[1] երկնի եղև, զի համանգամայն եղեալք՝ համանգամայն և լուծցին, եթէ լուծումն սոցա արդեօք երբէք լինիցի, և ըստ յարացուցի յաւիտենական բնութեանն. զի նմանագոյն սորա իցէ ըստ զօրութեան։ Եւ քանզի յարացոյց՝ յամենայն յաւիտեանս գոյ, բայց այն որ 'ի ձեռն կատարածի[2] յամենայն ժամանակի եղեալ և է և իցէ։ Արդ 'ի յայսպիսի բանէ և 'ի հանճարէ աստուծոյ ժամանակիս լինելութիւնս էր այսպէս, զի լինիցի ժամանակ, արեգակն և լուսին[3], և հինգ այլ աստղ՝ որ ունին մականունութիւն մոլորականք՝ 'ի սահման և 'ի պահպանութիւն թուոյ ժամանակի եղեն։ Եւ մարմինք սոցա իւրաքանչիւրոց արարեալ աստուած՝ եդ 'ի շրջաբերութիւնքն, զորս շրջաբերին եւթամբք՝ գոլով ինքեանք եւթն։ Եւ զլուսին եդ առ երկրայսս առաջին, և զարեգակն 'ի յերկրորդումն գերագոյն քան զերկիր, և զլուսաբերն և զմաքուրն անուանեալն երմեսի, յայնմ՝ որ արագութեամբն արեգական՝ զուգընթաց ունի բերումն բոլորի. սակայն ներհականի սորա պատահեալ զօրութեան[4]։ Վասն որոյ և հասանին և հասեալք լինին՝ ըստ այսոցիկ 'ի ձեռն միմեանց, արեգակն և Երմէս, և լուսաբերն։ Իսկ զայլսն թէ էր կամ վասն որոց պատճառաց հաստատեաց, եթէ ոք պատմիցէ մի ըստ միոջէ զամենայն բանս, վարկպարազի գոլով՝ յոլովագոյն գործառնութիւն գործէ, քան զայն յորոց 'ի սակս ասացեալ է։ Բայց այս[5] իսկ յետոյ թերևս իսկ ըստ պարապութեան արժանի պատմութեանն հանդիպի-

1 Այս է՝ ընդ երկնի գոյացաւ ժամանակ, զի 'ի միասին իցէ և լուծումն նորա։
2 'ի յետն կատարածի, այս ինքն միշտ, յաւիտեանս։
3 Յօր. արեգական և լուսնի։ 4 Յօր. զներհական 'ի սորա...։
5 Յօր. զայս իսկ...։ Այս է, բայց այս իսկ յետոյ՝ յորժամ պարապ լիցի, լիցի մեզ նիւթ խօսից։

ցի։ Արդ քանզի զիւրաքանչիւր 'ի սոցանէ յիւրում վայելչական բերմանն հաստատեաց, յայնոցիկ՝ որչափ պարտ էր գործակից լինել ժամանակի, և շնչաւոր կապանօք մարմինք կապեալք՝ եղեն կենդանիք, և զհրամայեալն իմացաւ. և ըստ միւսոյն բերման՝ այնմ որ ընկողմեալ է[1] 'ի ձեռն այնմ. որ ըստ ինքեան է բերմանն՝ և եկեալ և զօրացեալ. ոմն 'ի նոցանէ մեծագոյն և ոմն նուազագոյն ընթանայ բոլոր[2]։ Փութանակի փոքունց և մեծագունից գոլով հեղգագոյն. և այն՝ որ ըստ ինքեան բերմամբն՝ արագագոյն[3] բերեալք, 'ի ձեռն հեղգագունիցն հասու եղեալք երևին՝ ինքեանք հասեալք։ Քանզի զամենայն բոլորսն սոցա՝ շրջանակաւ դարձուցեալ, վասն երկակի ըստ նմին ժամու՝ առ ներհակացն համանգամայն եկեալք[4]. այնմ որ հեղգագոյն ընթանայ յինքենէ՝ գոլով արագագոյն, հուպ նորին երևէր։ Զի իցէ չափ ինչ հաստատուն առ միմեանս հեղգութեան և արագութեան. և զայն որ առ ութ բերմանց են՝ գնասցեն[5], վերստին վառեաց լոյս աստուած՝ յերկրորդումն առ երկնաւ բերմանն[6]. զոր այժմ կոչեցաք արեգակն. զի այնմ որ քան զամենայն յաւետագոյնն է երկնի ծագեսցէ, և հաղորդին թուոյ կենդանիքս՝ որչափ էր պատշաճ, սովորեալք առ 'ի յայնմ որ ըստ ինքեան է, և 'ի նմանւոյ սորա բերմանէն[7]։ Գիշեր արդ և տիւ եղև. և այսպէս և վասն այսոցիկ՝ միոյն այնմ և խոհեմական բոլորակին շրջաբերութիւնն. և ամիսս, յորժամ լուսին ընթացեալ զբոլորն իւր՝ հասանի առ արեգակն. և տարի՝ յորժամ արեգակն կատարեսցէ զշրջան իւր[8]։ Իսկ զայ-

1 Բերումն ընկողմեալ, նշանակէ խոտոր կամ կողմնական շարժումն։
2 Այս է. Մին մեծ և միւսն փոքր շրջան կատարէ։
3 Յօր. Որ ըստ ինքեան է բերմամբն՝ յարագունքն բերեալք։
4 Այս է. Վասն երկուստեք ներհակացն համանգամայն ընթանալոյ, այն որ հեղգագոյնս հեռանայր յիւրմէ՝ որ երագն էր, մերձաւորագոյն երևեցաւ գոլ։
5 Այս է. և զի ութեքին շրջանքն խաղասցեն, վառեաց լոյս...
6 Այս է. Յերկրորդ շրջանին որ առ երկրաւ...
7 Այս է. Զի յաւէտագոյն յամենայն երկինս ծագեսցին՝ ուսեալք 'ի նոյն և 'ի նման շրջանէս աստի։
8 Այս չգոյր յօրինակիս, զոր եդաք ըստ յունին, այլ գոյր ընդ այնր խառնակ ինչ բան՝ ընդ իւրումն շրջաբերի բոլորաւ, զոր բարձաք 'ի միջոյ։

լոցն շրջաբերութիւն [1] ոչ իմացեալք մարդիկ, բայց 'ի սակաւուց 'ի բազմացն [2], ոչ անուանեն, և ոչ առ միմեանս զուգաչափեալք՝ դիտեն թուօք։ Իբրու, այսպէս ասել, և թէ ոչ դիտեն ժամանակ՝ զսոցա յածմունքն [3]. քանզի բազմութեամբ անհնարին վարին, և պաճուճելով սքանչելաբար։ Սակայն է ինչ հնար ոչ ինչ նուազագոյն իմանալ՝ իբրու կատարեալ թիւն ժամանակի զկատարեալ տարին յայնժամ լնու, յորժամ ամենեցուն ութից շրջաբերութեանցն՝ առ միմեանս 'ի միասին կատարեալ վաղվաղակի, ընկալցի գլուխ այնմ՝ որ ըստ ինքեան և որ նմանապէս սորա բերի՝ վերստին չափեալք՝ բոլորաւ։ Ըստ այսոցիկ իսկ և վասն այսորիկ եղեն յեղանակք աստեղացն, որչափ են ընդ երկնօք գնացեալ [4], զի այսուիկ իբրու նմանագոյն իցէ կատարեալ և իմանալի կենդանւոյ՝ առ 'ի յաւիտենական բնութեանն նմանութիւն։ Եւ այլս իսկ մինչև ցժամանակս գործեցաւ, 'ի նմանութիւն այնմ որոյ նմանեցուցանէր զսա։ Բայց այսմ որ ոչ և ս զամենայն կենդանիք ներքոյ սորա լեալք՝ էր պարառեալ, այսմ տակաւին ունէր աննմանապէս [5]. և զայս զպակասութիւնս նորա դարձեալ գործէր՝ առ յարացուցին 'ի բաց յօրինեալ բնութիւն [6]։ Եւ ըստ որում միտք նկատէ բնութիւնս՝ [7] յորում կենդանիք են, և թէ որպիսիք են, և կամ որչափ տեսանի, այսպիսիք և այսչափ խորհեցաւ պարտ գոլ և սմա ունել։ Եւ են չորք. մի իսկ [8] երկնային՝ աստուածոց սեռ, և այլ՝ թռչնոց և օդագնացից. և երրորդ՝ ջրային տեսակ. և հետևակ և ցամաքային՝ այս չորրորդ։

Արդ՝ զաստուածայնւոյն իսկ զյոլովագոյն և տեսակ 'ի հրոյ արար [9]. իբրու զի զոր ինչ պայծառագոյն և

1 Շրջաբերութիւն աստանօր իմա՝ période.
2 Իմա՝ բայց եթէ սակաւք 'ի բազմաց։
3 Այս է. ոչ համարին ժամանակ զսոցա յածմունսն։
4 Այս ինքն. աստեղացն՝ որք ընդ երկինս գնան...։
5 Այս է. Բայց քանզի չև և ս զամենայն կենդանիս որ ներքոյ իւր էին՝ պարառեալ ունէր, վասն այնորիկ աննման էր տակաւին։
6 Այս է՝ նմանեալ յարացուցին բնութեան։
7 Յօր. բնութիւնք. իմա՝ գաղափարս։ 8 Յօր. միսք։
9 Յօր. 'ի հրոյ սակաւ. եդաք ըստ յունին։ Այս է՝ իբրու զի յոյժ առաւել պայծառագոյն իցէ 'ի տեսանել և գեղեցիկ։

տեսանելոյ գեղեցկագոյն իցէ. սմա ամենայնի նմանեցուցանել, քաջաբոլոր արասցէ զսա [1]։ Յաւելաւ և այս ինչ 'ի հզօրագունին խոհեմականութիւն, սմա զոյգ հետևեալք, տարածեալ առ ամենայն զերկինս բոլորովին [2], զարդ զսա ճշմարիտ պաճուճեալ գոլ ընդհանրական։ Եւ շարժութիւնք երկու իւրաքանչիւրոց յարմարեաց, զմինն՝ յայնմ որ ըստ ինքեան է, և ըստ նոցունց միշտ յաղագս նոցունց՝ զնոյնս ինքեան խորհելով. և զմիւսն՝ 'ի հանդերձեալսն, 'ի ձեռն այնմ որ ըստ ինքեան [3] և նմանւոյն շրջաբերութեանն զօրացեալ։ Եւ զհինգ շարժութիւնքն՝ անշարժ և կայուն, զի որ ինչ մանաւանդ 'ի սոցանէ արիագոյն լինիցի իւրաքանչիւրքն [4]։ Յորոց արդեօք պատճառէ եղեն որչափ անմոլորական աստեղացն կենդանիքն են՝ աստուածային ունելով և մշտնջենաւորք. և ըստ նորին՝ նովիմբ դարձեալք միշտ մնասցեն. և ոմանք փոփոխելիս, և մոլորութեամբ ծագեալս՝ [5] որպէս յառաջագոյնսն ասացաւ՝ եղեն ըստ այնմիկ։ Իսկ զերկիր, կերակրող և սնուցանող մեր, գալարեալ 'ի միջին, այն որ 'ի վերայ ամենայնի տարածեալ է երկնի [6], զոր պահապան և գոյացուցիչ գիշերոյ և տուընջեան հնարաւորեաց. սա իսկ նախկին և երիցագոյն քան զաստուածսն [7], որչափ ներքնոյ երկնի եղեն։ Որոց և են պարք և բանակք առ միմեանց, և առ բոլորիցն առ ինքեանս միաւորութիւնքն և բաժանմունքն, յորոց 'ի զուգաւորութենէն, որպէս և իցեն աստուածքն առ միմեանս հասեալ, և որչափ հանդէպ լինիցին, յորոց ոմանք ըստ ժամանակի թաքուցեալք իւրաքանչիւր 'ի նոցանէն ծածկին, և դարձեալ վերստին երևեալք՝ երկիւղիւ, և նշանք այնոցիկ՝ որ յետոյ լինելոցն իցեն՝

1 Իմա՝ Եւ ամենայնին նմանեցուցեալ՝ քաջաբոլոր արար զսա։
2 Այս է՝ բաշխեալ շուրջանակի ընդ ամենայն երկինս, զի զարդ լիցի նմա ճշմարիտ պաճուճեալ համայն (լոյսն)։
3 Յօր. Որ ըստ ինքեանն է
4 Այս է՝ Զի իւրաքանչիւրն 'ի սոցանէ լինիցի մանաւանդ գեղեցկագոյն։
5 Իմա՝ զայնպիսի մոլորութիւն (այս է՝ յածումն) ունելով (աստեղքդ)։
6 Երկին թարգմանէ զբեւեռս կամ զառանցս երկրի։
7 Զաստուածսն, յոյնն ասէ՝ զմարմինսն։

առաքին խորհել կարողացն. զասելն առանց տեսութեան սակայն նոցունց նմանութեանցն՝ ուրեմն ունայն է վաստակն [1]: Այլ և յայսոսիկ բովանդակապէս մեզ սմա, և յաղագս աստուածոցն երևելեացն և եղելոցն ասացեալ բնութեանս՝ ընկալցի կատարած: Իսկ յաղագս այլոց դից ասել և ճանաչել զլինելութիւնն [2], մեծագոյն է մերոյ իրի. բայց հաւանելի է ասացողացն յառաջագոյն՝ ծնունդք ելոյ աստուածոցն, որպէս ասէին. և հաւաստի իսկ՝ զիւրեանց նախածինս գիտողաց [3]: Արդ անհնար է աստուածոցն մանկանցն անհաւատել [4], և մանաւանդ այնոցիկ՝ որ առանց վայելչագոյն և հարկաւոր ապացուցից ասէին, սակայն իբրու զընտանիս իւրեանց ասողաց և պատմել, հետևողաց օրինին՝ հաւատալի է [5]: Այս՝ տես արդ՝ ըստ նոցա մեզ լինելութիւն այսոցիկ աստուածոց ունիցի և ասասցի, Երկրի և Երկնի մանկունք՝ Ովկիանոս և Տեթիւս եղեն. և սոցա Փոռկիւս և Կռոնոս և Ռէա [6], և որչափ յետ սոցունց: Իսկ 'ի Կռոնոսէ և 'ի Ռէայէ՝ Արամազդ և Հեռա, և ամենեքին զոր գիտեմք ասացեալ եղբարքն սոցունց, և տակաւին սոցա այլ ծնունդք: Եւ քանզի ամենեքին որչափ առ երկինսն են յանդիմանապէս, և որչափ երևին՝ այնչափ որչափ աստուածքն կամեսցին, զլինելութիւն ընկալան. ասէ ցսոսա հրատարակելով՝ որ զայս ամենայն ծնաւ՝ զայս ինչ. Աստուածք աստուծոց՝ որոց ես եմ գոյացուցիչ, և հայր գործոց. որք 'ի ձեռն իմ եղեալք՝ անլոյծք, իմ կամեցեալ: Իսկ արդ ամենայն կապեալն՝ լուծանելի է. սակայն զբարեօք յարմարեալն և զունողն բարեօք լուծանել կամիլն՝

1 Իմա՝ դարձեալ վերստին երևեալք (աստեղքն) արհաւիրս և նշանս առաքեն այնոցիկ՝ որ կարող են խորհել, և ասելն իսկ առանց տեսութեան այսոցիկ նմանութեանց՝ ունայն վաստակք են:

2 Յօր. լինելութեանն:

3 Բայց հաւանելի է ասացելոցն յառաջագոյն, թէ ծնունդք իցեն աստուածոց, և գիտիցեն զնախնիս իւրեանց:

4 Յօր. հաւատալ:

5 Այս է. Արդ անհնար է չհաւատալ որդիս գոլ աստուածոց, թէպէտ և առանց ինչ պատշաճաւոր և կարևոր հաւաստեաց ասիցեն. այլ արժան է հաւատալ՝ հետևելով օրինաց՝ իբրու զի զիւրեանց ընտանի իրս պատմեն:

6 Յօր. լռեայ:

չարի է: Վասն որոյ և քանզի եղէք՝ [1] անմահք իսկ ոչ էք, և ոչ առանց լուծման ամենևին. բայց ոչ լուծցիք, և ոչ մահուան մասին հանդիպիցիք, մեծագունի տակաւին և իսկագունի իմոյ կամացս հանդիպեալք շաղկապի [2] քան զայնոսիկ՝ որով շաղկապեցաք՝ յորժամ լինէիք:

Այժմ արդ զոր ասեմ ընդ ձեզ ցուցեալ՝ իմացիք. մահկանացու ևս այլ երիս սեռք անեղք են, և սոցա ոչ եղելոց՝ երկինքն անկատար իցէ [3]. զի զամենայն սեռս կենդանեաց, յինքեան ոչ ունիցի. և պարտ է՝ եթէ հանդերձեալ է կատարեալ գոլ բաւականաբար: Ի ձեռն իմ եղեալ զսոսա, և կենդանութեան հաղորդեալ՝ աստուածոց հաւասարիք դուք արդեօք: Յորժամ իցեն մահկանացուք, և այս ամենայն իցէ ճշմարտապէս, դարձարուք ըստ բնութեան 'ի կենդանեացն յարարչութիւն. նմանեալք զիմս զօրութիւն՝ զայն որ առ ձերն էր լինելութեան: Եւ որչափ իսկ 'ի սոցանէ անմահից հոմանուն գոլ պատշաճ է, զաստուածայինն ասացեալ՝ առաջնորդօղ նոցունց, այնոցիկ որ միշտ իրաւամբք և ձեզ կամիցին հետևել՝ սերմանեալ և սկսեալ ես 'ի ձեզ աւանդեցից: Եւ զայլն [4] դուք՝ ընդ անմահին զմահկանացուն նիւթեալք՝ գործիցէք և ծնջիք [5] կենդանիք, և սնունդ տուեալ սոցա՝ աճեցուցէք, և ապականեալ՝ դարձեալ ընկալարուք: Զայս ասաց. և դարձեալ 'ի նոյն անօթն՝ յորում խառնեացն զամենեցուն՝ նոյն իսկ ոմամբ յեղանակաւ [6]: Սակայն ոչ անմահք տակաւին և ըստ այնոցիկ և իբրու այնպէս, այլ երկրորդք և երրորդք: Եւ բաղկացուցեալ զսա՝ բաժանէ անձինս հաւասարու-

1 Այս է. և յորժամ եղէք...:

2 Շաղկապի, այս է կապանաց:

3 Զայս բան Պղատոնի յիշէ և մերս Դաւիթ Անյաղթ 'ի գիրս Սահմանաց, և ասէ եթէ յետ առնելոյն Աստուծոյ զերկինս և զերկիր հրատարակէր առ իմանալի զօրութիւնսն այսպէս « Եթէ այլ ևս երեք սեռք մահկանացուք պակաս գոն մեզ անեղանելիք, որոց ոչ եղելոց՝ երկին անկատար », և մեկնէ զայս եթէ պակասքն իցեն՝ Օդայինք, ջրայինք և երկրայինք՝ յորոց և մարդն: (Դաւ. Անյ. Սահմ. 122):

4 Յօր. և զայն...:

5 Յօր. ծնիք:

6 Այս է. նովին յեղանակաւ:

Թիւս աստեղաց [1], և բաժանեաց զիւրաքանչիւր անձինս՝ իւրաքանչիւր աստեղաց, և եդեալ իբրու ՚ի կայանի ուրուք՝ զամենայնի բնութիւն եցոյց սոցա. և օրէնս եդեալ զնահատ՝ ասէ ցնոսա. Թէ ծնունդ առա-ջին մի եղիցի ամենեցուն կարգեալ, զի մի ոք նուա-զեսցի ՚ի ձեռն սորա [2]: Բայց պարտ է յորժամ սերմա-նին սոքա ՚ի պատշաճեալսնգործարանս, ժամանակաւ բնաւորիլ ՚ի կենդանեացն՝ զոր աստուածապաշտն է [3]: Եւ քանզի կրկին է մարդկային բնութիւն, լաւագոյն սեռ այն իցէ որ յետոյ կոչելոց է այր. և յորժամ մար-մինք բնաւորեսցին [4] ՚ի հարկէ, ոմն ՚ի հոգւոյն մտանէ ՚ի մարմինն, և ոմն՝ ելանէ ՚ի մարմնոյն:

Նախ առաջին՝ զգայութիւն մի հարկ է ամենե-ցուն առ բռնաւոր կիրսն լինել՝ կցորդ բնութեան. և երկրորդ՝ հեշտութիւն և տրտմութիւն խառնեալ առիմամբ. առ սոքօք՝ երկիւղ և ցաստումն, և որչափ հետևողք են սոցունց և որչափ հակառակաբար բնա-ւորեալք են ՚ի սոցանէ բաժանեալ. զոր Թէ արդելի-ցեն՝ [5] արդարութեամբ կեցցեն, և եթէ ինքեանք կալցին ՚ի ձեռն սոցա՝ կեցցեն անիրաւութեամբ: Եւ բարեօք իսկ զպատշաճեալ ժամանակն կեցեալն, դար-ձեալ ՚ի վիճակակիցն իւր աստեղն բնակութիւնն գնացեալ՝ կենցաղ բարեբաստ և սովորական ընկալցի [6]: Իսկ և սխալեալն յայսոսիկ, յերկրորդում ծննդեանն՝ ՚ի կնոջ բնութիւն փոխարկիցի: Եւ ՚ի հազարերորդի ամի՝ երկոքեան հաւասար ՚ի ժառանգութիւն և յղե-ւորութիւն երկրորդ կենացն, ընտրեսցէ իւրաքանչիւր

1 Իմա՝ բաժանէ ոգիս հաւասարաթիւս աստեղաց. յօր. ՚ի յան-ձինս հաւասարութեանս ասպետաց:
2 Ի սմանէ պակասեցեալ:
3 Իմա. Արդ պարտ էր զի ՚ի սերմանել իւրաքանչիւր գործարա-րանաց յիւրաքանչիւրս՝ երևեսցի կենդանին աստուածապաշտագոյն (մարդն):
4 Ցն. Եւ յորժամ ՚ի մարմինս հաստեսցէ (սեռն այն մարդկու-թեան):
5 Ցօր. բաժանել: — Զոր ըն արգելիցեն. այս է՝ զկիրսն եթէ սանձա-հարեսցեն. իսկ եթէ ինքեանք տիրեսցին ՚ի նոցանէ (՚ի կրից):
6 Եւ այս կարծիք ոմանց յիմաստասիրացն Յունաց, որք համա-րէին եթէ հոգիք արանց բարեգործաց գնալ ոչնչի յաստեղս անդր. իսկ չարագործաց հոգիք կրեսցեն զայն փոփոխութիւնս, զոր կո-չեցին ապա նոքին իսկ խմաստասէրքն՝ հոգեփոխութիւն:

ոք կեանս՝ զոր և կամեսցի անդրանիկ, և ՚ի գազանաց կեանս իջցէ մարդկայինն հոգի [1]: Եւ ոչ գազարեալ այսպիսեացս այլ տակաւին չար յեղանակաւ վարեալ ըստ նմանութեան լինելութեանն յեղանակին, փո-խարկեցի յայլ ոմն [2] գազանային բնութիւն. և փո-խեալ ոչ գազարեսցէ ՚ի ցաւոց, յառաջ քան զայնմ որ ըստ կնքեան է և նմանութեան շրջաբերութեամբն զբազում Թախանձութիւնն և զչետոյ բնաւորեալն առ սմա՝ ՚ի հրոյ և ՚ի ջրոյ և յօդէ և յերկրէ [3], որ են խառնվեցուցիչք և անբանք՝ բանիւ արգելեալ ՚ի յա-ռաջին և ՚ի քաջագոյն ունակութեանն հասցէ տե-սակն: Եւ զայս ամենայն օրինադրեալ սոցա, զի այնմ՝ որ յետոյ եղելոց էր չարութեանն իւրաքանչիւր կցէ պատճառ՝ սերմանեաց զոմանս ՚ի յերկրի [4], և զոմանս ՚ի լուսին, և զոմանս յայլ որչափ գործարանք են ժա-մանակի: Եւ յետ սերմանելոյն՝ աւանդեաց աստուա-ծոց ստեղծանել [5] մարմինք մահկանացու. և զպակա-սեալն յայնցանէ՝ որչափ տակաւին առ մարդկային հո-գիս պարտ է լինել. զայսոսիկ և զամենայն սոցա հե-տեւալն գործել և իշխել, և մանաւանդ ըստ զօրու-թեանն զոր ինչ գեղեցկագոյն է և արիագոյն. առ ՚ի մատակարարել զմահկանացու կենդանին, զի մի ինքն ինքեան չսրեաց պատճառք լինիցի: Եւ սա իսկ զայս ամենայն հրամայեալ, կայր և ծնայր յիւրում ըստ սո-վորութեան յեղանակին: Եւ այնպէս ծնալով սորա, ուսեալ մանկունքն զՀօրն կարգաւորութիւն՝ հպատա-կէին սմա, և առեալք սկիզբն անմահ՝ մահկանացու կենդանւոյ, նմանեալք ՚ի գոյացուցիչն իւրեանց, հրոյ և հողոյ և ջրոյ և օդոյ մանկունս [6] յերկրէ փոխ ա-ռեալք՝ իբրու դարձեալ հատուցանելիս, ՚ի միմեանս զառեալն խառնէին [7], ոչ անլոյծ կապանօք՝ որովք իւրեանքն շարունակեալք [8] էին, այլ ՚ի ձեռն շաղկա-

1 Այս բան պակասէր ՚ի հայումս:
2 Ցօր. յայլոմն:
3 Իմա՝ զբազում մերս որ յետոյ կերպացաւ ՚ի հրոյ և ՚ի ջրոյ...:
4 Ցն. զոմանս յարեգակն և զոմանս ՚ի լուսին...:
5 Ցօր. աստուածոյն որ ասպատաճ սպեղծանել:
6 Ցօր. Մանկունք:
7 Ցօր. խառնելին:
8 Շարառնակեալ, այս է՝ կապեալք:

ոլից փոքունց աներևութ ելոյ վասն մանրութեանն, ՚ի միմեանս կապակցեալ՝ մի յամենեցուն զիւրաքանչիւր գործելին մարմին, զանմահ հոգւոյն շրջաբերութեանն, իմա յարմարեալ ելանելով և մտանելով [1] և շրջաբերութիւնքս՝ յանդուգն գոլով ՚ի նմանութիւն ուժգին գետոյ՝ ոչ արգելելին զոսա, և ոչ ինքեանք արգելեալք լինէին. այլ բռնութեամբ բերեալք լինէին: Իբրու շարժել զբոլոր կենդանին. սակայն անկարգաբար և անբանապէս ուր և հանդիպ իցէ հասանել, զամենայն վեց շարժութիւնն ունելով՝ զառաջն և զյետոյն, զաջ և զահեակ, ՚ի վայր և ՚ի վեր. և ամենևին ըստ վեցեքեան տեղեացն մոլորեալ հասանել: Քանզի բազում գոլով հոսումն շրջաբերութեան, ողողեր զգմարմինն [2]. և յառաջ քան զնունդն՝ մեծագոյն առնէր ՚ի սմա զանկարգութիւն ՚ի ձեռն այլոց իւրաքանչիւր կրից հասանելին առ սմա. յորժամ առ հուր ոմն բախէր [3] արտաքնի և օտար, և կամ ընդ երկրային հաստատուն ինչ նիւթ, և կամ ընդ գիլային բնութիւն ջրոց. և կամ ընդ մրրիկ հողմոյ առ օդով պատահեալ. և այսոքիւք ամենայնիւ շարժութիւնքն մարմնոյն առ հոգւոյն բերելով հասեալք, որք և յետ այնորիկ ՚ի ձեռն այնոցիկ կոչեցան, և այժմ տակաւին ՚ի միասին ամենեքին սոքա զգայութիւնք կոչին: Իսկ և յայնժամ տակաւին յոլովագոյն և մեծագոյն ունելով շարժութիւն, և սաստկապէս հոսեալ հոսմամբն ուժգնաբար շարժելով զշրջաբերութիւնքն հոգւոյն, զայն ման՝ որ ըստ ինքեան էր՝ ամենևին դադարեցուցին և խափանեցին, զայն որ սկսանէրն և բերէր, քանզի հակառակ սորա հոսէին. և զմիսոյն սասանեցուցին իբրու զկըրկնապատկին, և զեռապատկին, զի երկաքանչիւր բացատքն և զկիսաբոլորիցն և զեռամասանցն և զութամասանցն՝ զմիջոցքն և զշաղկապքն. քանզի ամենևին լուծանելի ոչ էին, բայց միայն ՚ի ձեռն շաղկապողին՝ զամենայն բեկմունս և զապականութիւնս [4] բոլորից

1 Ցն. զանմահ հոգւոյն շրջանս առնէին ՚ի նեբահոսան և յարտահոսան մարմինն:
2 Ցն. ողողեր ալևքն:
3 Ցօր. բախէր, իբր՝ բախէոր:
4 Ցն. զտարբերութիւն շրջանակացն գործել:

գործել, որչափ միանգամ և հնար էր. իբր միայն առ միմեանս շարունակեալ բերիլ. սակայն բերիլ առանց համեմատութեան [1], երբեմն յետս գնացեալ. իբրու յորժամ ոք զգլուխն յերկիր հաստատեալ, և զոտսն ՚ի վեր ունիցի դարձուցեալ և հանդիպիցի ուրուք, յայնժամ յայսմ կիրս՝ այնմ որ այսպէս ախտացեալ է և տեսանողացն աջակողմունքն՝ ահեակ, և ահեակքն՝ աջակողմունք երկաքանչիւրոց միմեանց երևին [2]: Եւ զնոյնս իսկ և այսպէս և զայլս սոցունց նմանիս՝ շրջաբերութիւնքն կրելով յոյժ, և յորժամ այնմ որ արտաքին են՝ ըստ արտաքին սեռին, և կամ միասոյն հանդիպեացին, զայն որ ինչ ըստ ինքեանն, և միասոյն ձշմարտիցն հակակային ոգելով՝ սուտք և անիմաք եղեն, և ոչ մի շրջաբերութիւն սոցա իշխէր կամ առաջնորդել: Եւ որոց արդեւք արտաքուստ զգայութիւնք ոմանք բերեալք և հանդիպեալք ՚ի միասին խըլեացեն ընդ իւրեանց զամենայն դադարքն հոգւոյն, յայնժամ սոքա կալեալք՝ կալուլ կարծեն [3]:

Արդ վասն այսոցիկ ամենայն ախտից այժմ ՚ի սկզբանէ հոգին առանց մտաց լինի նախ՝ յորժամ ընդ մահկանացու մարմնոյ կապակցի. և յորժամ աձմանն և մննդեանն դուշնաքեայ հոսումն ՚ի վերայ հասանիցէ, դարձեալ և շրջաբերութիւնքն հասեալք հանդարտութեան՝ զիւրեանցն գնան ձանապարհ. և հաստատին մանաւանդ ժամանակին ՚ի վերայ հասեալ. յայնժամ արդեւք և իւրաքանչիւր ՚ի բոլորից յիւր բնական ձևն եկեալ ուղղեսցի, և զմիսոն և զայն որ ըստ ինքեան է՝ որք են ուղղակի, խոհական զունօղն սոցա եղեալ կատարեն: Ապա եթէ և սնունդ ոմն ուղիղ և իրատ յետ այսոցիկ հանդիպեսցի՝ ողջ բնաւ և բոլորովին ՚ի մեծն Ճողպարեալ խօթութենէ լինիցի: Բայց ծուլացեալ սխալական և կաղ կեանս ՚ի կենցաղումն գնացեալ՝ անկատար իսկ լինիցի. և անիմաց իջ-

1 Ցն. առանց բանի բերիլ ասէ կամ անբանաբար շարժել նիւթական մարմնոց:
2 Ա.յս է՝ երկաքանչիւրոց իրերացն երևին, այսինքն իւրաքանչիւրքն տեսանին զմիմանց շարժմունս և ոչ զանձանց իւրեանց:
3 Ըմբռնելոք ինքեանք զգայութիւնքն՝ կարծեն սիրել այլոց:

ցէ դարձեալ՝ի դժոխս: Ա.յսոքիկ իսկ՝ արդ յետոյ եր-
քեք լինիցին: Ա.յլ յաղագս առաջի եդելոցն պարտ է
ասել ստուգագոյն. և զոր նախ քան զայսոսիկ՝ յա-
ղագս մարմնոց ըստ մասանց լինելութեանն, և յաղագս
հոգւոց, և վասն որոյ պատճառաց և աստուածոյն նա-
խախնամութեանն, մանաւանդ վայելչագոյն ժամա-
նակին ներողութիւն արարեալք, այսպէս և ըստ այ-
սոցիկ գնալով՝ պատմելի է: Իսկ արդ՝ զաստուածային
շրջաբերութիւնքն՝ երկու ելով՝ յամենայնի նմանե-
ցուցեալք զձևն [1], որ է շրջաբերաձև, և՝ի գնդատե-
սակ մարմնոջ զսա կապեցին՝ զոր այժմ գլուխ անուա-
նեմք. որ և աստուածային իսկ է, և այնոցիկ որ ինչ՝ի
մեզ ամենեցուն տիրեալ: Որոյ և աւանդեցին զամե-
նայն մարմին՝ պաշտօն սմա՝ի միասին հաւաքեալ աս-
տուածքն, խորհելով եթէ ամենեցուն շարժութեանց
որ գալոց իսկ են՝ հաղորդի:

Ա.րդ՝ զի մի զսա գլորեալ՝ի յերկրի յայնմ ու-
նիցի բարձրութիւնք պէսպէս և խորութիւնք, ոչ կա-
րասցէ յոմանց՝ի վեր ելանել, և զոմանս գերակոխել.
ձև սմա զայս և կարողութիւն ետուն, և ուղիղ ոս-
կերք, և թիւրք բուսուցին ջրոս, աստուածոյ՝ գնացիցին
արարեալ հնար, յորոց ընկալեալ զգնահանութիւն,
և հաստատեալ՝ի սոսա ընդ ամենայն տեղիս գնալոց
հնարաւոր եղև զաստուածայնոյն. և զվսամականսն
բնակութիւն բերելով՝ի վերայ մեր: Սրունք արդ և
ձեռք սմա բուսուցին. վասն այսոցիկ և քան զվերջինս
կոյսն, զառաջինն պատուականագոյն և արքունակա-
նագոյն կարծելով աստուածքն՝ զաւետագոյնն գնացից
սովաւ ետուն մեզ, և քանզի պարտ էր որոշել և անդր-
ման զառաջին կոյսն ունել մարդոյն:

Նախ առ դիւրատեսակ մասինն գլխոյն՝ զդէմն
տպաւորեցին. և գործարանս՝ի սմա արարին յարմա-
րեալք, ամենայն նախախնամութենէն հոգւոյն, և
հրամայեցին զսա գոլ հաղորդ՝ արքունականին, որ
ըստ բնութեան՝ առաջին կոյս է. և՝ի գործարանացն
առաջին իսկ և լուսաբերք՝ զաչքն շարանիւթեցին. և

1 Ա.ձևային ըստ Պղատոնի և ըստ ամենայն իմաստասիրաց նշանակէ՝ էութիւնն, բնութիւնն, ասի զերք, որ ասի՝ի մեզ և Հմայնն:

այսմ կապակցեցին պատճառաւ. զհրոյն որչափ կիզա-
կանն է՝ ոչ ընկալաւ, իսկ զայն՝ որով աւանդի ընտանի
լոյս տունջեանն իւրաքանչիւրոյ աւուր՝ հնարաւորեցին
մարմին լինել. քանզի զայն որ ներքոյ մեր է՝ եղբայր
գոլով հրոյս այսմիկ՝ մաքուր՝ի ձեռն աչացն գործեցին
հոսել հոյծ և անօսր, բոլոր զաչսն մանաւանդ զմեջն
սոցա կազմեցին: Իբրու զի այլն թանձրագոյն գոլով
չափաւոր՝ առ ամենայն տևական էցէ. իսկ սա միայն՝ի
լուսաւճն մաքրապէս սլացեալ:

Ա.րդ յորժամ տունջենայնին էցէ լոյս էցէ առ ե-
րեսս. յայնժամ արտաքս եկեալ, նմանացոյն և առ իւ-
րոյ շարամածեալ նմանացոյն, մի մարմին ընտանեցեալ
բաղկանայ ըստ աչացն ուղղատեսութեան. ուր և հան-
դիպեալ լենուցու՝ի ներքուստ սլացեալս, ընդ ար-
տաքնոյն՝ի միասին խառնեալ. և նմանակիր արդեւք
ըստ ամենայնի եղեալ՝ի ձեռն նմանութեան, որոյ իսկ
սա՝ի վերայ հասցէ լուսոյ, և որոյ այլ՝ի վերայ սորայ՝
սոցա շարժութիւնքն բաշխելով յամենայն մարմինն՝
մինչև ցհոգւոյն եա զգայութիւնն, ըստ որոյ իսկ ա-
սեմք տեսանել. և յորժամ գնայցէ՝ի գիշերի ազգա-
կից հուրն, և հատցի առ նմանն արտաքս եկեալ, այլ
այլն նոյնս, և շիջանի՝ զկցորդն բնութեան սորա հուր
մերձաւոր օդոյն, ոչ ունելով. գադարէ՝ի տեսանելոյ,
և տակաւին մակածական քնոյ լինիցի. քանզի աս-
տուածքն փրկութիւն աչացն հնարեցան՝ զարտաքնացն
բնութիւն: Զի յորժամ սոքա խնուցուն՝ հրոյն բնու-
թիւնն, ներքոյ սոցա խաւիանի. և հանդարտեալ գիւ-
րացուցանէ զներքինն շարժութիւն: Որոյ գիւրացեալ
հանդարտութիւն լինիցի, և բաղում հանդարտու-
թեան եղեալ սուղանուրջ նմանք եկեսցէ: Ա.յ՝ եթէ
միասցեն շարժութիւնք՝ ոմանք մեծագոյնք, որպիսիք և
իցեն յորպիսի տեղիք միասցեն, այնպէս երևեցուցա-
նեն, և զնմանեալսն ներքոյ, և զարթուցելոյ իցեն
յիշմամբ կարծիս, և յաղագս՝ այն որ՝ի հայելոյնն է
պատկերագործութիւն. զամենայն որչափ փայլուն և
երևելի տեսանել ոչ ինչ է դժուարին: Քանզի այնմիկ
որ ներքոյ է և արտաքոյ երկաքանչիւր հրոյն հաղոր-
դութիւն լինի առ միմեանս, և միոյն դարձեալ առ
փայլուն ինչ նիւթ, և յարմարել որպէս բաղում ան-

գամ, ամենայն այսպիսին ՚ի հարկէ երևին. զի այն որ առ դէմն է հուր, ընդ այնմ որ առ աչսն է հրոյն ՚ի ձեռն ղօրկութեանն և պայծառութեանն՝ զուգակից լինիցի. և աջակողմն երևեսցի ՚ի յահեակ կոյս, քանզի ներհական մասանցն երեսաց առ ներհական մասունս լինիցի վերահասութիւն՝ ըստ առարկուածին հաստատուն սովորութեանն, և աջակողմ՝ աջակողմն, և կամ ահեակ ձախակողմ՝ փոխանակ այնմիկ, յորժամ փոխաբերիցի շարամածեալն լոյս յայնմանէ՝ առ որոյ էր իսկ զուգաշարժեալ: Եւ այս, յորժամ հայելեացն փայլումն՝ յայսկոյս և յայնկոյս բարձրութիւն ընկալեալ, զաջակողմն մանն աջացն ՚ի ձախակողմն մերժիցէ, և կամ զմիւսն առ միւսոյն: Եւ ըստ երկայնութեանն դարձեալ դիմին՝ զնոյն ինքս յետս գնացեալ ամենևին ցուցանէ զստորինն՝ առ ՚ի վերինն փայլման, և զվերջինն առ ՚ի ստորինն դարձեալ մերժեալ: Ա.յսոսիկ արդ զամենայն պատճառակցութեանն են [1] որոց առտուած պաշտմամբն վարելով՝ զքաջագունին, ըստ օրումն հնար էր, կատարելով զտեսականն: Եւ կարծին առ ՚ի բաղմաց՝ ոչ պատճառակիցք այլ պատճառք գոլ՝ ամենեցուն, որ ցրտացուցանեն և ջերմացուցանեն, որ սառուցանեն և լուծանեն, և որչափ այսպիսի գործեն: Բայց բան և ոչ մի, և միաք՝ ՚ի յոչինչ հնար է ունել սոցա. քանզի հակացս՝ որոյ միաք ստանալ պատշաճ է՝ ասելի է զհոգի. և սա անտես է:

Իսկ հուր և ջուր, երկիր և օդ, մարմինք ամենայն երևելիք եղեն. բայց մնաց և մակացութեան տուիցն հարկ է խոհեմական բնութեանն պատճառաց նախկին հետևել: Եւ այնոցիկ որ ՚ի ձեռն միաեանց շարժեալ, և ՚ի հարկէ շարժութեանն, այլք լինիցին սոցունց, երկրորդ անգամ առնելի է արդեւք: Ըստ այսոցիկ և մեզ ասելի է իսկ է զերկաքանչիւրոյ պատճառացն սեռքն, սակայն որիշ որչափ մտաք բարեաց և գեղեցկագունից են գոյացուցիչք, և որչափ թափուր մնացեալք ՚ի խոհեմութենէ զհանդիպեալն, յամենայն ժամ առանց կարգաւորութեան գործիցեն: Իսկ

1 Յոյնն ասէ. Արդ այս ամենայն պատճառակցացն են. այլ և՝ պատրաստեն է ՚ի յոյն պաշտօնեիւքն:

արդ՝ աչացն յամենայն պատճառսն՝ որ են առ ՚ի յուսել սմա զղօրութիւնն, զոր այժմ ընկալաւ՝ ասացան. և մեծագոյնն սոցա՝ առ ՚ի յօգուտս գործ, վասն որոյ մեզ աստուած զսոսա պարգեւեաց, ասելի է յետ այնորիկ:

Այլք արդեւք ըստ իմոյ բանիցս՝ պատճառք մեզ մեծին եղեն օգտութեան. քանզի յայժմ ասացեալ բանիցս յաղագս ամենայնի, ոչ ուրեմն երբեք ասացեալ էր, եթէ ոչ սոքա զաստեղք և զարեգակն և զերկինս էին տեսեալ: Բայց այժմ տիւ և գիշեր եւ լեալք, և ամիսք, և տարեաց շրջաբերութիւնք, հնարեցան զթիւս, և զժամանակաց՝ գիտութիւն, և յաղագս ամենայնի բնութեան [1] խնդրութիւն առտուեցին: Ուստի և մեք բարեբախտեցաք զսեռ իմաստասիրութեան, որոյ մեծագոյն բարի ոչ եկն երբեք, և ոչ եկեսցէ [2] մնհկանացու աղգիս պարգեւեալ յաստուածոյն: Այսոցիկ արդեւք զայս զաչէ մեծագոյն բարի, և զայլսն որչափ փոքրագոյնքն են. զի՛ արդեւք գովիցէ, յորոց ոչ իմաստասէրն կուրացեալ ուրեմն ունայն ողբայ: Ա.յլ այս ասացի առ ՚ի մէնջ. սա առ այսոսիկ եղև մեզ պատճառ զաստուած գտանել, և տալ տեսութիւն, զի զայնոսիկ որ յերկինս են՝ տեսեալք՝ շրջագայութիւնք մտաց: Վարեսցուք առ շրջաբերութիւնս այսոքիկ՝ որ առ մեզ են մտածութիւնք, քանզի են սոքա այնոց բաղադրանք խառնեալք ընդ անխառնելիքն, և ուսեալք և մտածութիւն ուղղութեան հաղորդեալք, ըստ բնութեան նմանեալք զաստուածոյն՝ որ են ամենևին առանց մոլորութեան. զմեր մոլորականքս հաստատեսցուք: Իսկ արդ յաղագս ձայնի և լսելեացն դարձեալ նոյնդ է մեզ բան ՚ի վերայ այսոցիկ. ՚ի սակս նոցունց՝ առ ՚ի յաստուածոյն պարգեւել. քանզի բան ՚ի վերայ այսոցիկ, նոցունց իսկ կարգեալ է զմեծն ՚ի սոցա շարախառնեալ մանն, և դարձեալ որչափ զերաժշտականն ձայն պիտանացու է առ մեզ լսելիսս, և ՚ի սակս յարմարանաց է տուեալ, և յարմարականն բաղաղանս ունելով բերմունք այսոցիկ որ ՚ի մեզ են հոգոյ շրջագայութիւնքս՝ այնմ որ մտաք

1 Յօր. բնախօսութեան: 2 Յօր. էիցէ:

վալի երաժշտիւքն, ոչ է առ՝ի հեշտութիւն անբան, որպէս այժմ՝ Թուի գոլ մեզ պիտանացու. այլ առ ե-ղեալն՝ի մեզ անյարմար շրջագայութիւնն հոգւոյ՝ի զարդ, և՝ի միաբանութիւն սմա մարտակից յերաժըշտիցն պարգևեցաւ: Եւ երդ դարձեալ վասն անչափ եղելոյն՝ի մեզ առ յոլովս առանց խնդութեան ունա-կութեանն օգնական՝ի վերայ այսոցիկ, և՝ի ձեռն նո-ցունց պարգևեցաւ: Իսկ արդ՝ անցեալքն յասացելոցս ցուցան բաց՝ի սղից, սակայն այն՝ որ՝ի ձեռն մտաց էին գոյացեալ: Բայց պարտ է և զառ՝ի հարկէ ե-ղեալն յաւելուլ՝ի բանս. քանզի խառնեալ իսկ այսմ աշխարհի լինելութիւնս՝ի հարկէ եղև, և՝ի մտաց բաղկացութենէ. և մտաց՝ հարկի իշխելով հաւանե-ցուցանել զսա զեղելոցն յոլովագոյնսն՝ի լաւագոյնսն ածել: Ա.յսուիկ և ըստ այսոցիկ հարկն՝ի ձեռն խո-հեմական հաւանութեանն պատրեր, և այսպէս՝ի սկզբանէ այս ամենայն բաղկանայր: Ա.րդ՝ որ ըստ ո-րում լեալ է, ըստ այնոցիկ ձշմարտապէս ասիցէ, խառ-նելն է և սմա զկարևոր պատճառն տեսանին. ըստ ո-րում բնաւորեալ է բերել առ սուաւ: Ա.րդ դարձեալ ընթանալ. և առեալ սոցա նոցունց՝ միւս սկիզբն պատ-շաձաւոր. դարձեալ իսկ յաղագս այնոցիկ՝ որ յայն-ժամ էին, այսպէս և այժմ յաղագս նոցունց սկսանել՝ի սկզբանէ:

Իսկ արդ զայն՝որ նախ քան զլինելութիւնն էր երկնի, հրոյ, և ջրոյ, օդոյ և երկրի, բնութիւն տեսա-նելի է, և զկիրքն՝ որ յառաջագոյն քան զսոսա: Զի այժմ ոչ ոք երբէք լինելութիւն սոցա ազդեաց. այլ իբրու գիտողաց՝ Թէ զինչ է հուր երբէք, և զիւրա-քանչիւր՝ի սոցանէ՝ ասեմք սկզբունք զսոքա եդեալք, և տարերքք ամենի պատշաձեալք սոցունց. ոչ փաղա-ռութեան տեսակաւք. միայն վայելչապէս՝ի ձեռն այ-նորիկ կարծիլ, որ դուշնաքեայ ինչ խորհի: Եւ այժմ արդ այս առ՝ի մէնջ ունիցի. այսպէս զայն որ յաղագս ամենայնի իսկ էր, եթէ սկիզբն էր, եթէ սկզբունք, Թէ որպէս յաղագս այսոցիկ Թուի՝ ոչ է այժմ ասելի. վասն այլոց և ոչինչ, այլ վասն դժուարին գոլոց ըստ հասեալ յեզանակիս պատմութեանս՝ զթուեցեալն՝ յայտնել: Ոչ արդ դուք կարծիցէք պարտ գոլ ինձ ա-

ձել, և ոչ դարձեալ ես հաւանեցուցանեմ զանձն իմ կարող գոլ իբրու Թէ ուղղաբար առնեմ արդեւք զձեռնարկութիւնս, այսչափ գործ յանձն առեալ: Ա.յլ զառ՝ի յսկզբանէ ասացեալն պահելով՝ զպատշա-ձաւոր բանիցն զօրութիւն փորձ արասո՝ըից՝ ոչ ուրուք նուաղագոյն, այլ մանաւանդ իրաւագոյն, և՝ի նա-խատս՝ որպէս՝ի սկզբանն՝ յաղագս իւրաքանչիւրոց և զոյգ ամենեցուն ասացից: Զաստուած արդեօք, և այժմ սկզբանս այնոցիկ, որ ասելոց եմք փրկիչ կար-գացեալք՝ յանտեղի և յանսովորական պատմութե-նէս, առ վայելչական բանից աւանդութիւն հասուցա-նել զմեզ: Եւ արդ դարձեալ սկիզբն յաղագս ամե-նայնի, լոյն մեծապէս քան զյառաջագոյնն բաժա-նեալ. քանզի յայնժամ՝ յերկուս տեսակս բաժանե-ցաք, և այժմ յայտնելի է մեզ այլ երրորդ սեռ. զի երկուսն իսկ բաւական էին առ նախ ասացեալսն. մի իսկ՝ իբրու յարացուցի տեսակ, ենթադրեալ իմանա-լի, և միշտ ըստ նոցունց գոլով, և նմանող յարացու-ցին. երկրորդ՝ լինելութիւն ունելով, և երևելի[1]: Իսկ երրորդ՝ յայնժամ ոչ բաժանեցաք, կարծեցեալք բա-ւական գոլ զերկուսն: Բայց այժմ նմանեցաւ բանս՝ի հարկել ըղմեզ դժուարին և աղօտ ինչ տեսակ ձեռ-նարկեալ բանիւք՝ երևեցուցանել. զիարդ ունելով զօ-րութիւն ըստ բնութեան զսա կարծելի է: Բայց մա-նաւանդ՝ այսպէս, ամենայն լինելութեան ընդունօղ և դայեակ զսա գոլ: Ա.սացաւ արդեօք ձշմարտապէս, այլ պարտ է յաղագս սորա ասել հաւաստի. և այլպէս դժուարին է վասն տարակուսելոյ յաղագս հրոյ, և որ առ հուրն են՝ի սակս այսորիկ. քանզի՝ի սոցանէ զիւ-րաքանչիւրսն ասել Թէ որպէս ձշմարտապէս, ջուր պարտ է ասել մանաւանդ կամ հուր, և զամենայն ըստ իւրաքանչիւրում այսպէս: Իբրու զի հաւատարիմ և հաստատուն բանիւ, յաղագս այսոցիկ վարիլ դժուա-րին է. որպէս արդեօք զայս ինչ, և կամ զինչ յաղագս սոցա իրաւապէս տարակուսեալ ասացուք:

Իսկ արդ՝ զոր այժմ ջուր անուանեցաք մածեալ

1 Յօր. և նմանող երրորդ յարացուցին լինելութիւն ունելով...:

իբրու թուի մեզ զքարինս, և հող տեսանեմք, լեալ
և հալեալ դարձեալ. և ընտրեալ, նոյն զսայ հողմ
և օդ լեալ, և զօդ կիզեալ, հուր լեալ, և անդրա-
դարձեալ, և բաղդատեալ, և շիջեալ, և 'ի տեսակ
օդոյ հասեալ հուր՝ և դարձեալ զօդ շարամածեալ և
թանձրացեալ, ամպ և մէգ, և 'ի սոցանէ տակաւին
թաղեալն զհուր հոսէ։ Եւ 'ի ջրոյ լինի դարձեալ հող
և քարինս, և բոլորապէս առ միմեանս այսպէս հա-
սեալք երևեցուցանեն զլինելութիւն։ Եւ այսպէս
սոցունց ոչ երբէք իւրաքանչիւրոց զիւրաքանչիւրն
թուեցեալ, զորպիսին 'ի սոցանէ զմի ինչ գոլ, և ոչ
այլ ինչ հաւասարապէս՝ հակառակելով, ո՛չ ամօթալի
առնէ զանձն իւր։ Ո՛չ է այլ զգուշութեամբ երկար
բանիւք՝ յաղագս սոցունց եդեալք ասեմք՝ այսպէս
միշտ, զոր տեսանեմք այլ ուրուք, այլ լեալ իբրու
հուր. ոչ զայս՝ այլ զայնպիսին՝ յայնժամ առասել
հուր. և ոչ զայս ջուր, այլ միշտ զայնպիսին. և ոչ
զայլ ինչ երբէք՝ և ո՛չ ինչ իբրու ունելով ինչ հաս-
տատութիւն, որչափ ցուցանեմքս բանիւ, որ ասէ թէ
այս ինչ է, և սովաւ վարեալք վարկանիմ յայտնել
ինչ, քանզի ճողոպրի ո՛չ հանդուրժելով զայս ինչ էին,
և կամ այսուիկ, և զամենայն որչափ ասացութիւն
տեւական իբրու էակք զսոսա ցուցանէ. այլ զայնոսիկ
իւրաքանչիւր ասել, և զայսպիսիս միշտ շրջաբերելով
նմանապէս յաղագս իւրաքանչիւրոյ և ամենեցուն
միանգամ այսպէս կոչել. քանզի հուր այն է, որ յա-
մենայն ժամ այնպիսի է, և այլ ամենայն որչափ ունի
զլինելութիւն, որով իսկ եղեալ իւրաքանչիւր միշտ
թուեսցի, և դարձեալ անդուստ կարիցէ միայն զայն
առասել, այս ինչիւն, և այսպիսի իրիւն վարեալք ա-
նուանակոչութեամբք, և որպիսի ինչ ջերմն, կամ սպի-
տակն, և կամ այլ ինչ զինչ ինչ և իցէ 'ի հակակա-
յիցն, և ամենայն որչափ 'ի սոցանէ իցեն, ոչինչ յայն-
ցանէ կոչէ զսա, և տակաւին հաւաստի յաղագս սորա
դարձեալ պարտ է ասել յօժարութեամբ, զի եթէ
զամենայն ձևս ստեղծեալ ոք յոսկւոյ, և ոչ ինչ 'ի սո-
ցանէ յեղափոխեալ դադարեսցէ 'ի միասին խառնեալ
զամենայն։ Ցուցեալ արդ ոմն մի 'ի սոցունց, և հար-

ցեալ թէ զինչ երբէք իցէ, յոյժ առ ճշմարտութիւն
զգուշական է ասել թէ ոսկի է։ Եւ զեռանկիւնն, և
որչափ այլ ձևք լինին, ո՛չ բաղկացութիւն զսոսա ա-
սել. քանզի 'ի միջի եդեալ այնպիսիքն փոխաբերիցին.
այլ եթէ կամիցի զգուշութեամբ ընկալուլ զոմն յայս-
պիսեաց թուեսցի սիրել[1]։ Նոյնս արդեօք բանս իցէ
և յաղագս այնմ որ զամենայն մարմինք ընդունի բնու-
թեանն, նոյնպէս գոլ սմա՝ միշտ առասելի է. քանզի
իւրոյ զօրութենէ ամենևին արտաքս ոչ ելանէ. քան-
զի ընդունի միշտ զամենայն և կերպարան, և ոչ մի եր-
բէք, զոչ և միոյն առ սա 'ի ներքս մտելոցն նմանեալ
ընկալաւ ոչ ուրուք ամենևին. քանզի կերպարանող
ամենայն բնութեան առաջի կայ, շարժեալ և ձևա-
ցեալ առ 'ի յայնոցիկ որ 'ի ներքս հասցեն, և երևես-
ցի վասն այնոցիկ այլ երբէք այլպէս։

Իսկ 'ի ներքս մտեալքն՝ այլոց էակացն[2] միշտ են
նմանողք։ Տպաւորեալք 'ի սոցանէն յեղանակաւ ինչ
դժուարասաց և սքանչելեօք, ընդ որովք յետոյ անց-
ցուք պատմութեամբ։ Եւ արդ 'ի յայսմ վայրի պարտ
է երիս սեռս զմտաւ ածել. զմին իսկ լեալ և զմիւսն
յորում լինի, և ոմն այլուստ նմանութիւն ընկալեալ
բնաւորի լեալն։ Եւ արդ՝ նմանեցուցանել զսոսա վայել-
չագոյն է, ընդունողն՝ մօր, և զայն ուստի լինի՝ հօր,
և զոր 'ի մէջ սոցա է բնութիւնն՝ ծննդեանն. և իմա-
նալ իբրու ո՛չ արդեւք, այլպէս օրինակի փոխման հան-
դերձելոյ զանազանութիւն կերպին, ո՛չ բարեւք՝ այլ-
պէս փոխիցէ, եթէ ոչ մաքուր իցէ, և պատրաստ՝ յո-
րում փոխել կամիցի զտիպն, քանզի առանց կերպի
գոլով յամենայն տեսակաց՝ յորոց հանդերձեալ է ընդ-
ունել ուստեք։ Քանզի եթէ նման իցէ ուրուք յայն-
ցանէ՝ որ 'ի ներքս մտանեն, զներհական բնութեանն
իրն ամենևին ընկալեալ, յորժամ եկեսցէ չարաչար
նմանեցուցանէ արդեօք, զիւրն առաջի ցուցանելով
զդէմս։ Վասն որոյ և ամենայն տեսակացն արտաքոյ
գոլ պարտ էր, այն որ զամենայն սեռք ընդունելոց էր

1 Յօր. սիրելի։
2 Յն. Իսկ 'ի ներքս մտեալքն և ելեալքն՝ էակացն միշտ են նմա-
նողք։

յինքեան, որպէս և այնոքիկ, որ զդեղքն կազմեն, որչափ անուշահոտք են՝ արուեստիւ հնարին։ Նախ զայն գործել որ հանապազ նոյնպէս է, զի մանաւանդ անուշահոտք են 'ի խոնաւիցն այնոքիկ, որ ընկալուն զհոտքն. և որք 'ի կակղագոյն նիւթիցն՝ յոմանս ընձեռեն ձև ինչ տպաւորել։ Ամենևին 'ի սմա յառաջագոյն ձև երևիլ ոչ թողուն, այլ դիւրացուցանելով ողորկագոյն գործեն։

Այսպէս և այն՝ որ զամենեցուն միշտ էակացն՝ ամենևին յինքեան բազում անգամ նմանութիւնս բարեօք՝ ընկալուլ հանդերձեալ էր յամենայն տեսակացն պատշաճ էր արտաքոյ գոլով բնաւորիլ. վասն որոյ արդեւք զերևելի եղելոյս և ամենայն զգալոյս մայրն և ընդունողն, ոչ երկիր, ոչ օդ, ոչ հուր և ոչ ջուր ասեմք. և ո՛չ որչափ 'ի սոցանէ են, և ոչ յորոց սոքա եղեն. այլ անտես ինչ տեսակ, և անկերպարան, ամենայնի ընդունակ, և զմտաւ ածեալք տարակուսանօք ուրուք, քան զիմանալին դժուարահաս զսա ասելով ոչ ստեսցուք, և որչափ 'ի նախասացելոցն հնար է հասանել նորայն բնութիւն, այնուիկ արդեւք ուղղագոյն ասիցէ ոք։ Իսկ հուր յամենայն ժամ զհրացեալ մասն սորա երևել, և զխոնաւացեալն ջուր և երկիր և օդ. զայն որչափ նմանութիւնն սոցայն ընդունիցի. և բանիւ մանաւանդ զայսպիսիս սահմանելով՝ խնդրել 'ի մեզ յաղագս սոցա։

Արդ՝ է ինչ հուր ինքն յինքենէ, և ամենայն յաղագս որոց միշտ ասեմք, այսպէս ինքեանք ըստ ինքեան իւրաքանչիւր. կամ այսոքիկ՝ զորս տեսանեմք, և որչափ այլք 'ի ձեռն մարմնոյս զգալիք են մեզ, միայն են այսպիսի ունելով ճշմարտութիւն, և այլ ոչ են քան զայս ոչ ուրուք, ոչ երբէք. այլ 'ի սնոտի՝ յամենայն ժամ ասեմք գոլ՝ տեսակ իմանալի իւրաքանչիւրոյ, սակայն սա ոչ ինչ է արդեւք, բայց միայն 'ի բանէ [1]։ Արդ ոչ է պարտ՝ առանց ընտրութեան և դատողութեան, զայս ինչ թողուլ հակառակելով, և ասել արժան գոլ այսպէս ունել. և ո՛չ 'ի վերայ բանի երկարութեան այլ վարկպարազի երկարութիւն արկանել։

1 Ցն. և այն ոչ այլ ինչ էր՝ բայց բան միայն։

Ապա եթէ ասացեալ մեծ սահմանդ 'ի ձեռն սղից երևեսցի այս, մանաւանդ ժամանելի [1] մեզ եղիցի արդեւք։

Աստանօր արդ ես զիմս եդից դատակնիք [2]. եթէ միտք և կարծիս ճշմարտեն երկու սեռք, ամենևին գոլ ըստ ինքեանց զսոսա, առանց զգայութեան միայն առ 'ի մէնջ իմացեալ։ Ապա եթէ իբրու ոմանց երևի, կարծիս ճշմարիտ 'ի մտաց զանազանի ոչ իւիք, զամենայն՝ որչափ 'ի ձեռն մարմնոյ զգալիս են, մեզ դիցուք հաստատագոյն։ Երկու արդեւք ասելի են, այնիւ վասն զի որիշ են, և աննմանապէս ունին։ Զի ոմն 'ի ձեռն ուսմանն, և ոմն 'ի ձեռն հաւանականութեան առ մեզ պատի. և ոմն միշտ ճշմարիտ բանիւ, և ոմն առանց բանի. և ոմն անշարժ հաւանմամբ, և ոմն փոփոխելի հաւանմամբ. և միւս՝ զամենայն այր հաղորդել ասելի է, և մտաց՝ զաստուածք, և մարդկան սեռ՝ սուղ ինչ։ Եւ սոցա այսպէս ունելով, խոստովանելի է՝ մի գոլ զտեսակս, որ ունի ըստ այսոցիկ, զանեղն և զանբաց բառնալին. ոչ 'ի յինքն ընդունելով այլ ուստեք, և ոչ ինքն 'ի յայլ երբեք փոխելով, և անտես, և այլ պէտս [3] առանց զգայութեան, զայս ինչ՝ զոր արդ իմացութիւնս ընկալաւ դիտելի է [4]։ Իսկ զհոմանունսն նման այնմիկ, երկրորդ զգալի, եղանելի, բերեալ միշտ, լինելով 'ի տեղւոջ ուրուք, և դարձեալ անդուստ կորուսեալ. կարծեւք՝ հանդերձ զգայութեամբ պարառելի։ Եւ դարձեալ երրորդ սեռ ելով զվայրն միշտ ապականութիւն ոչ ընկալեալ [5]. ամենեցուն հաստատութիւն պարգևելով՝ որչափ ունի զլինելութիւն, և սա է առանց զգայութեան շօշափելի, խորթ, մտածութեամբ հազիւ հաւանելի՝ առ որոյ իսկ նայելով երազի իսկ թուիմք, և ասեմք հարկաւոր գոլ որ ինչ են ամենայն 'ի տեղւոջ ուրուք զվայր ոմն ունելով։ Իսկ զայն, որ ոչ 'ի յերկրէ և ընդ երկնաւորօք՝ ոչինչ գոլ։ Զայսոսիկ արդեւք ամենայն, և այլ

1 Ժամանելի. այս ինքն կարևորագոյն։
2 Այս է. եդից զիմ կարծիս։
3 Թերևս՝ այլպէս, այսինքն այլազգ։
4 Յոյնն՝ ընկալաւ դիտել։
5 Ըստ յունին՝ զվայրացն միշտ ապականութիւն ոչ ընկալեալ։

եղբարք սոցունց. և առ այնմիկ, որ առանց շնորհելոյ [1], և ճշմարտապէս բնութիւն գոլով՝ 'ի ձեռն սորին երազատեսութեանն, ոչ կարողք լինիցիմք, զարթուցեալք՝ սահմանելով ասել զճշմարիտն, իբրու գաղափարաւ առասելի է. քանզի ոչ զայն իսկ առ որով եղև՝ է ինքեան լեալ, բայց այլ զայլոյ ուրուք միշտ բերէ զկարծիս: Վասն այնորիկ յայլում իրի պատշաճ է լինել ուրուք՝ գոյացութեան կերպ բերելով, կամ ոչ ինչ ամենևին զսա գոլ: Իսկ այն որ հաստատապես էակ է, օգնէ 'ի ձեռն ստուգութեան ճշմարիտ բան. իբրու մինչ արդեւք ոմն այլ ինչ իցէ, և ոմն այլ. չէզոք 'ի չէզոքումն երբեմն եղեալ, մի համանգամայն զսա և երկու լինել: Այս իսկ արդ առ 'ի յիմոյ դատուղութենէս՝ իբրու համառօտապէս յաղագս այսոցիկ ասասցի բանս՝ իբրու վայր և լինելութիւն գոլ զսա երիս եռակի, և նախ քան զերկրի լինելութեան. դայեակս է [2] գիջացեալ և հրացեալ, և զերկրի և զօդոյ զկերպարանս ընդունել, և զայլս որչափ սոցունց հետևին կրեալ ախտք, պէսպէս երևելով տեսութիւն: Բայց վասն զի ոչ նմանապէս զօրութեամբք, և ոչ հաւասարագունիւք էր լցեալ, ոչ և ըստ մի իրի գոյր հաւասար, առանց [3] հանդարտութեան ամենևին սասանելով շարժէր:

Իսկ ինքն 'ի ձեռն այնոցիկ և դարձեալ շարժեալ և զայնոսիկ սասանեցուցանէր: Եւ սոքա շարժեալ այլ ինչ այլ ուրուք դատեալ [4] միշտ բերէր. իբրու այնոքիկ որ 'ի ձեռն շարամանեալ գործարանացն [5] յաղագս ցորենոյն մաքրութեան, շարժելով զսոսա՝ առ ցնդման օդոյ՝ զայն որ թանձրագոյնքն են և ծանր՝ այլուրուք. և զանգայտքն և զթեթևագոյնքն յայլում բերեալ

1 Յօրինակին գրեալ էր՝ շնորհ՛լ՛յ՛, զոր մարթ էր ըստ յունին ընթեռնուլ՝ առանց նիրհելոյ:

2 Յոյնն. և նախ քան զերկրի լինելութիւն: Իսկ զդայեակն լինելութեան, խոնաւացեալ և հրացեալ...:

3 Պիտի՝ այլ առանց...:

4 Անհեդեդ հելլենաբանութիւն է որ իմանի այսպէս՝ իսկ նոքա որ շարժինն, այլքն այլուր (այս ինքն ոմն յայս կոյս և ոմն յայն) ընտրեալ և զատեալ միշտ բերին...:

4 Շարամանեալ գործարանք են հիւսեալ գործիք 'ի մաքրել զցորեան:

հաստատէ վայրի: Եւ յայնժամ այսպէս չորք սեռքս սասանեալ 'ի ձեռն ընդունողին, և սորա շարժելով իբրու գործարանի՝ սասանումն ունելով, զաննմանագոյնսն՝ յոլովապէս սահմանելով 'ի միմեանց, զնմանագոյնսն մանաւանդ առ միմեանս զուգաւորել: Վասն որոյ իսկ այլ ինչ զայլ ընկալաւ վայր, նախ քան զամենայնի 'ի սոցունց զզարդարիլն և լինելն [1]. և յառաջ քան զայս իսկ էին ամենայն անչափաբար առանց համեմատութեան. և յորժամ ձեռնարկութիւն լինէր [2] ամենայնի զարդարման, հուր նախ և երկիր, և ջուր և օդ, և զհետս նոցունց ինքեանց ունելով, սակայն այնպէս ամենևին տրամակայեալ, որպէս վայել է գոլ այնմ, յորմէ աստուած հեռացեալ իցէ: Այսպէս արդ յայնժամ բնաւորեալ զսոսա, նախ ձևացոյց տեսակաւ և թուովք: Ըստ որում հնարէր քաջ գեղեցկագունիւք, ոչ այսպէս ունելով, աստուածն բաղկացուցեալ զսոսա, որ և միշտ յամենայնի լիցի մեզ ասացեալ: Եւ այժմ զկարգաւորութիւն զսոցա իւրաքանչիւրոց ճշմարիտ բանիւ ձեռնարկելի է առ ձեզ յայտնելով: Այլ քանզի հաղորդեալ էք ճանապարհացն ըստ խրատու, 'ի ձեռն որոց ցուցանին ասացեալքս, 'ի միասին կարեաց հետևիլ [3]: Նախ իսկ հուր և երկիր և ջուր և օդ, զի մարմինք են՝ այս ամենայն ուրուք յայտ է. և ամենայն՝ մարմնոյ տեսակ և խորութիւն ունի, և դարձեալ խորութեանն ամենևին հարկ է զտափարակ ձևոյն բնութիւնն ընկալաւ: Եւ ուղիղն տափարակ հաստատութեանն՝ յեռանգիւնեացն է բաղկացեալ. եռանկիւնքն ամենայն 'ի յերկոցունց սկսանի եռանկիւնեաց, մի իսկ ուղիղ ունելով զերկաքանչիւրոցն անկիւնն, և զերկուսն՝ սուրս. յորոց մինն երկաքանչիւր կոյս՝ ունի մասն ուղիղ անկեան, հաւասար կողմամբ բաժանեալ. և միւսն անհաւասարօք անհաւասար մասունս բաշխելով: Զայս իսկ հրոյ սկիզբն, և այլոց ենթադրեսցուք մարմնոց, բանիւն՝ որ ըստ հարկի է՝ վա-

1 Այս է. մինչչև ամենայնն զարդարեալ և գոյացեալ:

2 Յօր. լինիր:

3 Այսպէս յօր. իսկ յոյնն՝ 'ի ձեռն որոց ցուցանել արժան է զասացեալքս, հետևեսջիք 'ի միասին:

յեկեղեցս գնացեալ. և տակաւին վերագոյն սոցունց զսկզբունքն աստուածոյ է գիտել, և արանց այնոցիկ՝ որ զայնպիսիսն իմաստասիրէ [1]: Եւ պարտ է ասել եթէ ժրքը լինիցին գեղեցկագոյն ջրոս մարմին՝ անմահս են՝ քեանց, սակայն հնարաւորեալ առ՝ ի միմեանց՝ ի նոցունց լուծմանէն փուքանակի լինել: Զի այսորիկ հանդիպեալք՝ ունիմք զձշմարտութիւնն՝ յաղագս լինելութեան երկրի և հրոյ, և այնոցիկ՝ որ՝ ի մէջ սոցա են, համեմատաբար. զի յայս ինչ ոչ գտցուք նեղութիւն, գեղեցկագոյն սոցունց ասել՝ երևելի գոլ մարմինք, որ են իւրաքանչիւր՝ ի ըստ միոջէ ըստ սեռից: Յայս ինչ արդ յօժարանալ մեզ պարտ է, զզանազան գեղեցկութիւնք մարմնոյ՝ առ ջրոս սեռս յարմարեալ, և ասել զմեզ բաւականապէս զսոցունց ընկալեալ զբնութիւնս: Եւ արդ երկոցունց եռանգիւնիցն հաւասարասրունն՝ զի ընկալեալ է բնութիւն, և յառաջագիտն՝ անեղը բնութիւնս յօժարանալ: Արդ պարտ է յայնմիկ որ գեղեցկագոյն է, յայնցանէ՝ որ անեղքը են, եթէ հանդերձեալ եմք ըստ յեղանակի սկսանել:

Արդ եթէ ունիցի ոք գեղեցկագոյն ինչ ընտրեալ, և ասել առ սոցունց բաղկացութիւնն, նա և յաղթիցէ՝ ոչ գոլով թշնամի մեր՝ այլ սիրելի: Դիցուք բազում եռ արդեւք՝ ի անկեանցն [2] ի զգեղեցկագոյնն, այլոցն վերագոյն անցեալ, յորմէ հաւասարակողմն էառանկիւնն, յերրորդ բաղկացեալ է, վասն որոյ և քանք յոլովագոյնք են: Բայց այսորիկ ընտրողին և գըտողին, այսպէս իսկ ունելով, առաջի կան նահատակութիւնքն սիրելիք: Արդ ասացաւ յառաջագոյն երկու եռանգիւն յորոց՝ հրոյն և այլոցն մարմինքն հնարաւորեցան. ոմն հաւասարասրունն և միսն եռակերկին՝ ըստ զօրութեան ունելով քան զփոքրագոյնն միշտ զմեծագոյն կողմն: Եւ զառաջագոյն հաւաստի ասացեալն՝ այժմ մանաւանդ սահմանելի է: Քանզի ջրոք սեռքն՝ ի ձեռն միմեանց առ միմեանս երևիւր

1 Յոյնն. և արանց այնոցիկ՝ որ նմա (Աստուծոյ) : Իմն՝ Իմն՝ Իմն՝

յերկոտասան հաստատուն անկեանցն, 'ի ձեռն հընկից տափարակ անկեանց հաւասարակողմանց, պարունակելով իւրաքանչիւրոյ բարձք ունելով քսան հաւասարակողմ եռանկիւնս եղև։ Եւ միւսն իսկ 'ի տարրիցն 'ի սոցունց 'ի բաց փոխիւր [1], զայսոքիկ ծնեալ։ Եւ հաւասարասրուն եռանկիւնն, ծնանէր [2] զչորրորդին բնութիւն, բաղկացեալ ըստ չորից, զուղիղ անկիւնսն ժողովելով 'ի կէտն, և մի հաւասարակողմ քառանկիւն գործեալ։ Եւ վեց այսպիսիք 'ի միասին հաստատեալ, ութ անկիւն հաստատունք կատարեցին. և զերիս տափարակս ուղիղս՝ [3] իւրաքանչիւրոյ յարմարեալ։ Իսկ ձևն բաղկացեալ մարմնոյս, եղև կորովագոյն, վեց տափարակ քառանկիւն հաւասարակողմն ունելով բարձք։ Եւ տակաւին այլոյ միոյ ելոյ հինգերորդ բաղկացութեանն՝ առ ամենայն աստուած սորա պիտօքն վարիւր [4], զայն ինչ կենդանագրելով. զոր եթէ զմտաւ ածէ ոք, փութութեամբ տարակուսեսցի՝ թէ որպէս, անեզր աշխարհս գոլ պարտ է ասել, եթէ այնքան որ ընկալեալ են եզր։

Իսկ արդ եթէ անեզր ասել վարկանիցի ճշմարտապէս, անհմտի ուրուք գոլ աւանդութիւն, այնոցիկ՝ որոց հմուտ գոլ պարտ է, և քանի. մին եթէ հինգ զսոսա ճշմարտապէս բնաւորիլ ասել երբէք պատշաճ է, մանաւանդ աստանօր կացեալ իրաւապէս տարակուսեսցի։ Իսկ արդ որ առ 'ի մէնջ է բանիւս, մի զսա ըստ վայելչական բանին բնաւորեալ ազդեցուցանէ աստուած։ Բայց այլ ոք՝ [5] յայլս ինչ նայեցեալ, այլպէս կարծիցէ. բայց մերոյ բանիս զհետ երթալ պարտ է։ Իսկ արդ զեդեալ այժմ զբանիւ զսեռքս բաշխեսցուք 'ի հուր և 'ի ջուր և յերկիր և օդ։ Երկրի արդ զկորովական տեսակն տացուք. քանզի անշարժագոյն է երկիր քան զչորս սեռս, և մարմնոց ստեղծականագոյն. և մանաւանդ հարկ է լինել այսպիսի այնմ որ ունի զբարձքն հաստատագոյն։ Եւ բարձք այն է, որ 'ի սկզբանն՝ եռանկեանցն ներքոյ եդաւ, զգուշութիւն

1 Յօր. փոխիր։
2 Յօր. ծնանիր։
3 Յօր. իւղիւղքն։
4 Յօր. վարիր։
5 Յօր. այլք։

ըստ բնութեան 'ի հանգիտէն և անհանգիտէն. և երկաքանչիւրոց 'ի միասին եդեալ տափարակն հաւասարակողմ՝ հաւասարակողմի, քառանկիւն՝ եռանկեան, ըստ մասանց և ըստ բոլորի հաստապէս 'ի հարկէ հաստատեալ։

Վասն որոյ երկրի իսկ զայսպիսիս ձև տալով զվայելչականն պահեմք [1] բան. և ջրոյ դարձեալ քան զայլսն՝ զդժուարագոյն [2] տեսակն, և զդիւրաշարժագոյնն՝ հրոյ, և զմիջինն՝ օդոյ. իսկ զփոքրագոյն մարմինն՝ հրոյ, և զմեծագոյնն դարձեալ՝ ջրոյ, և զմիջինն՝ օդոյ, և զարագագոյնն դարձեալ հրոյ, և զերկրորդն՝ օդոյ, և զերրորդն՝ ջրոյ։ Այսոքիկ արդեւք ամենայն, ոմն սակաւս ունելով զհաստատութիւնս, դիւրաշարժագոյն հարկ է բնաւորիլ, և հատու [3] ամենևին, և արագագոյն, և տակաւին ամենեցուն թեթևագոյն 'ի սակաւուց իւրոց մասանց բաղկացեալ. և երկրորդն՝ երկրորդաբար զայսոսիկ զնոյն ունելով. և երրորդաբար իսկ երրորդն։ Եղիցի արդ ըստ ուղիւղ և վայելչական բանին՝ փայլականին հաստատուն եղեալ տեսակն հրոյ տարրն և սերմ. և զերկրորդն ըստ լինելութեան ասասցուք զօդոյ. և զերրորդն՝ ջրոյ։ Եւ զայսոսիկ արդեւք զամենայն զփոքունս խորհել այսպէս, իբրու զի մի ըստ միոջէ իւրաքանչիւր իսկ սեռին 'ի ձեռն մանրութեան ոչ երևելով առ 'ի մէնջ, սակայն 'ի միասին հաւաքելոյ բազմաց ժողովոցն սոցա երևիլ։ Իսկ զհամեմատութեանցն առ բազմութիւնսն և շարժութիւնս, և այլ զօրութիւնքն, ուր և բնութիւն կարեացն կամեցեալ և կամ հաւանեալ տարեալ հպատակ իրս սմա ամենևին 'ի ձեռն ստուգութեան կատարեալ յաստուծոյ՝ առ 'ի սմանէ շարայարմարիլ զսոսա ընդ համեմատութեան։ Եւ արդ՝ յամենեցուն՝ որք սեռքն՝ նախ ասացաք, որով արդեւք զատ իւրում վայելչականն է՝ ունիցի իսկ յաւետ։ Եւ երկիր շարահանդիպեալ հրոյ, և լուծեալ 'ի ձեռն սորա արագութեամբն բերեալ արդեօք լինիցի, եթէ յինքեան նովիմբ լուծեալ հրով, և եթէ 'ի յօդոց, և կամ 'ի ջրոյ ժողովս պատա-

1 Յօր. պատահեմք։
2 Յոյնն, զդժուարաշարժագոյն։
3 Յօր. հասու։

հիցի. մինչև սորա մասունքն հանդիպեալ ուրուք, դարձեալ շարայարմարելով ինքեանց՝ երկիր լինիցի. զի ոչ յայլ ինչ տեսակ եկեսցէ երբեք: Եւ ջուր[1] ի ձեռն հրոյ բաժանել, և կամ ի ձեռն օդոյ՝ հնարի լինել շարակայութեամբ, մի ըստ մարմնհրոյ, և երկու՝ օդոյ:

Իսկ և օդոյ հատուածքն, ի միոյ մասնէ լուծանելով երկու արդեւք լինիցի մարմինք հրոյ: Եւ դարձեալ յորժամ հուր օդով և ջրով, և կամ երկրաւ ումմիք շրջափակեալ սակաւ ի ձեռն բազմաց շարժել սոքօք՝ բերելով, և մարտուցեալ և յաղթեալ փշրեսցէ, երկու մարմինք հրոյ ի միասին բաղկանան ի մի տեսակ օդոյ. և օդ յաղթեալ և բաժանեալ յերկուս, կէս բոլորից ջրոյ, մի տեսակ բոլորից լոյս շարամսծեալ: Եւ այսպէս դարձեալ խորհեսցուք զսոսա իբրու յորժամ վառեալ ինչ յայլոյն ի ձեռն սորա ինչ սեռ, անկեանցն՝ այն որ ըստ կողմանցն է սրութեամբն հատցէ, բաղկացեալ իսկ ի նորին բնութիւն՝ դադարէ ի հատանելոյ: Քանզի այն որ նման է, և նոյնպէս ինքեամբ իւրաքանչիւր սեռն, ոչ փոփոխման ուրուք ի սմա լինել հնար է, և ոչ կրել ինչ ի ձեռն այնմիկ որ ըստ նոցունց և նմանապէս ունիցի: Մինչև արդեւք այլ ինչ լինելով նուազ ընդ լաւագունին մարթիցէ՝ ի լուծանելոյ ոչ դադարէ: Եւ դարձեալ փոքունքն յորժամ մեծագունիւքն բազմօք պարառին սակաւք՝ փշրելեալ չիջանիցեն, բաղկանալ իսկ կամելով ի յաղթողին տեսակն՝ չիջեալք դադարեցեն. և լինի ի հրոյ՝ օդ, և յօդոյ՝ ջուր. և եթէ յայսոսիկ հասեալ, և ընդ այլոյն սեռիցն ի միասին գոլով մարտիցէ՝ ի լուծանելոյ ոչ դադարէ՝ նախ քան զամենևին մերժելոյն և լուծանելոյն առ իւր ազգակիցն Հողոպրիցի. և կամ յաղթելով՝ մի ի բազմացն յաղթողին նման լինիցի, նորին զուգաբնակ ինալով. և ըստ այսոցիկ կրիցս ամենայն արդեօք փոփոխիցեն զվայրս: Քանզի բաժանեալ է իւրաքանչիւրոյ սեռի բազմութիւնն ըստ իւրոյ տեղւոյն, վասն ընդունողին զսոսա շարժութեան. և անդնմանեալքն ինքեանց յամենայնի, և այլոց նմանեալքն

1 Յօր. ե- ար ի յեռ:

բերին ի ձեռն սասանմանն, առ այն տեղի՝ որոց նմանին արդեօք: Որչափ արդեւք անապակ և առաջինն մարմինք են ի ձեռն այսպիսեաց եղին պատճառաց: Իսկ այնոքիկ սեռք որ ի տեսակ նոցա են այլ բնաւորիւ՝ զերկաքանչիւրոյ տարրիցն պատճառելով զբաղկացութիւն, ոչ միայն երկաքանչիւրով մեծութիւն ունել իսկզբանէ հաստատեալ զեռանկիւնն, այլ մեծաւ, փոքուամբ. զթիւն ունելով այնչափ որչափ և իցեն արդեօք այնոքիկ՝ որ ի տեսակքն են սեռք: Վասն որոյ արդեւք շարախառնեալ ինքեան առ նոյնս և առ միմեանս, զանազանութեամբն անեզը են. որոյ պարտ է տեսողք լինել հանդերձելոցն յաղագս բնութեան վրիւ քանիւ վայելչականաւ: Իսկ յաղագս շարժութեան և հաստատութեան, որով յեղանակաւ, և կամ յետ որոց ոմանց լինելով, եթէ ոչ խոստովանեսցի[1], բազում ինչ արդելք գոլ հետևեալք խորհրդոյն:

Իսկ արդ ոմանք յաղագս նոցունց ասացան. և առ այնոքիկ տակաւին՝ և այս ինչ. ի հանդարտութեան արդեւք ոչ երբեք կամել շարժութիւն գոլ: Քանզի շարժեցեալն առանց շարժեցողին, և կամ շարժեցողն առանց շարժեցելոյն, գժուարին և մանաւանդ անհնար է գոլ. շարժութիւն ոչ իցէ՝ սոցա ոչ ելոյ. և սոցա երբեք հանդարտ գոլ անհնար է:

Այսպէս արդ զհաստատութիւն ի հանդարտութիւն, և զշարժութիւն յանհանդարտութիւն իսկ դիցուք: Եւ պատճառ դարձեալ՝ անհաւասարութիւնն է անհանդարտ բնութեանն. և ընդ անհանդարտութեանն լինելութեամբ անցաք բանիւս, բայց թէ որպէս ոչ ըստ սեռից բաժանելով իւրաքանչիւր դադարեցին ի ձեռն միմեանց շարժութենէն և բերմանէն՝ ոչ ասացաք. աստանօր դարձեալ ասացուք: Այնոյնի շրջաբերութիւնս, քանզի պար առեալ է զսեռք՝ բոլորատեսակ գոլով, և առ ինքն բնաւորեալ կամիլ զուգաբերիլ, ընդ զամենայն, և թափուր տեղի ոչ և մի թողուլ պակասելովք: Վասն որոյ հուր իսկ յամենայն մանաւանդ եհաս, և օդ՝ երկրորդ, իբրու անօսրագոյն բնաւորեցաւ երկրորդ. և այլքն այսպէս: Քանզի այ-

1 Յօր. խոսպոյի:

նոքիկ՝ որ մեծայ մասանց լեալ են՝ մեծագոյն դա-
տարկութիւն ՚ի բաղկանալն Թողուցուն, և փոքրա-
գոյնսն՝ դուրնաքեայ. և Թաղկելոյն շարագայումն
զփոքրունսն ՚ի մեծացն գատարկքն մերժէ։ Փոքրունց այդ
առ մեծագունիցն դնելով, և փոքրագունիցն զմեծա-
գոյնսն ընտրելով, և մեծագունիցն զպնոսիկ բաղդա-
տելով, ամենայն ՚ի վեր և ՚ի խնարհ փոխաբերի առ
իւրեանց տեղիս [1]։ Քանզի փոխարկելով զմեծու-
թիւնն իւրաքանչիւր և զտեղւոյն կայումին փոխարկէ։
Ասպէս արդեօք և վասն այսոցիկ՝ անհանդարտու-
թեանն ծնանելով, միշտ լինելութիւն սոցունց ելով. և
ելոյց գոլով ստիպաբար առատուիցէ։ Իսկ առ յետ այ-
սոցիկ եթէ հրոյ սեռք բազումք են եղեալք, իբրու
բոցք. և այն որ ՚ի բոցն է շարակայեալ որ այրէ իսկ,
ոչ սակայն լոյս տայ աչացն. և այն որ ՚ի շնջանելն բո-
ցոյն՝ ՚ի հրացեալսն ծնացեալ լինի ՚ի սմանէ։ Ըստ այ-
սոցիկ և օդոյ պանծագոյնն իսկ մակակոչութեամբն
եթերն կոչեցեալ, և պղտորագոյնն՝ մէգ և խաւար։
Եւ այլ անանուն տեսակք եղեալք վասն եռանկեանցն
անհաւասարութեանց։ Եւ ջրոյն՝ երկակի իսկ, նախ
ոմն գէջ, և ոմն հոսանուտ սեռք սորա։ Իսկ արդ գէջն՝
վասն հաղորդ գոլոյ ջրոյս սեռիցն, որ մանրագոյնքն են
և հաւասարք, և շարժական նոյնդ, և ըստ լինքեան և
՚ի ձեռն այլ ուրուք, վասն անհանդարտութեանն, և
վասն ձևոյն տեսակին եղև։ Իսկ այն որ ՚ի մեծաց և
հանդարտեցելոց կայուն իսկ քան զայն և ծանրագոյն՝
և ՚ի ձեռն հանդարտութեանն։ Եւ ՚ի ձեռն հրոյ մտա-
նելով և լուծանելով զսա՝ զհանդարտութիւնն ՚ի բաց
Թօթափէ. և զայս իսկ կորուսեալ՝ հաղորդի մանա-
ւանդ շարժութեան. և դիւրաշարժ լինելով, ՚ի ձեռն
մերձաւոր օդոյն մերժելով և տարածելով առ երկրաւ
մաշել զհաւաքմանցն բաժանմունքն, և հոսուցմն, զկա-
ցուցմն առ երկրաւ [2], մականունութիւն երկաքանչիւր
կրից ընկալաւ։ Եւ դարձեալ արտաքոյ անկեալ աս-
տուստ հրոյն, և իբրու ոչ ՚ի գատարկ հասեալ, մեր-
ժելով օդոյն՝ որ մերձ է, դիւրաշարժ գոլով տակաւին

1 Յօր. ամենայնիւ երևի խնարհ փոխաբերին առ իւրեանց տեղիս։
2 Յօր. զկացուցն առ մականունին։

զդէջ հաւաքմունքն, և ՚ի հրոյն հաստատութիւնքն
մերժելով, սա ընդ նմա խառնիցէ։ Եւ մերժեալն ա-
ռեալ դարձեալ զհանդարտութիւնն՝ իբրու յանհան-
դարտութեանն գոյացուցիչ հրոյն հեռացեալ, ՚ի նոյնն
նուաճ հաստատի. և զհրոյն ՚ի բաց հեռացումն, ցըր-
տութիւն, և շարագայումն նորին մածեալ գոլ սեռ
ասացաւ՝ ՚ի սոցունց արդեօք ամենեցուն որչափ հոսա-
նուտք են ջուրք. նախ ասացաք զոմն իսկ ՚ի յանօսրից
և ՚ի հանդարտագունից հօծագոյն եղեալ միատեսակ
սեռ, փայլուն և շիկատեսակ հաղորդեալ, պատուա-
կանագոյն ստացուած ոսկի, քամեալ ածէ ՚ի ձեռն
քարի։ Եւ ոսկւոյ ոստ, վասն հօծութեանն կարծրա-
գոյն ելով սևացեալ, ադամանդ։ Եւ հուպն իսկ ոսկոյն
մասանցն տեսակ յոլովս քան զմի ունելով, և հօծու-
թեամբ քան զոսկի հօծագոյն գոլով, և յերկրէ մանր
մասին և անօսրագունի հաղորդեալ, իբրու թէ գոլ
կարծրագոյն. և մեծագոյն ներքոյ իւրոյ պակասումն
ընկալեալ, թեթևագոյն քան զպայծառագոյնն, և
մածեալ սեռ ջրոյ բաղկացեալ պղինձ եղև, և ՚ի յեր-
կրէ ընդ սմա խառնեալ յորժամ հնասցի, և դարձեալ
մերկի ՚ի միմեանց, յանդիման ըստ լինքեանց ժանկ ա-
սի [1]։ Եւ զայլքն այսպիսեաց ոչինչ պաճուճեալ է խոր-
հիլ, վայելչական բանիցն, զհետ երթալով տեսակի։
Ջոյն, որ ՚ի սակս հանգստեան, յորժամ յաղագս էա-
կացն դիպէ միշտ զբանք, ընդ այնքիւք ընթանալով որ
յաղագս լինելութեան են վայելչագոյնք անզղջալի
հեշտութիւն ստանայ, չափաւոր արդեօք ՚ի կենցա-
ղումն զհաղալիսն խոհեմութիւն արարեալ։

Ասպէս և արդ այժմ զոր յետ այսորիկ են՝ թո-
ղացուցանելով յաղագս նոցունց, զոյն զոր ինչ ՚ի կար-
գին են վայելչապէս՝ ասասցուք. այսպէս ընդ հրոյ
խառնեալ ջուր, որչափ անօսր և խնաւ է ՚ի ձեռն
շարժութեանն ձանապարհին՝ սահեալ ՚ի յերկրի ջուր
կոչի ՚ի կակղագոյն ելոյ հաստատութեան սորա, և ՚ի
կարծրութենէն նուազեալ, և կամ երկրի ասացեալ։
Սա յորժամ ՚ի հրոյ անջատի և յօդոյ միայնանայ՝ հան-
դարտագոյն լինիցի, մերժեալ ՚ի ձեռն այնոցիկ՝ որ

1 Յօր. ձանկասցի։

արտաքս ելցէ 'ի սմա։ Եւ սառուցեալ այսպէս այն որ գեր 'ի վերոյ է քան զերկիր մանաւանդ զայս կրելով՝ կարկուտ, և որ առ երկրաւ է՝ սառն, և այն որ նուազ ինչ կիսամած իցէ տակաւին՝ որ գերագոյն քան զերկիր, դարձեալ ձիւն. և որ առ երկրաւ շարամածեալն իցէ, 'ի ցօղոյ լինելով՝ եղեամն կոչի։ Իսկ և յոլովագոյն ջրոց տեսակքն խառնեալք ընդ միմեանս, 'ի միասին զսեռն, այնոցիկ՝ որ 'ի յերկրէ են տունկք քամեալ՝ խառնուածք ասացեալս։ Եւ վասն խառնուածոցս՝ աննմանութիւն իւրաքանչիւր ընկալեալ, զայլ բազում առանց նմանութեան սեռս առտուեցին։ Բայց չորս՝ որչափ հրախառն և յստակագոյն մանաւանդ տեսակք լինելով ընկալան անուանք իւրեանց։ Այն իսկ՝ որ հոգոյն է հանդերձ մարմնովն ջերմացուցիչ, գինի. և կակուղն և ընտրողականն աչաց՝ վասն որոյ տեսանեն զպայծառն՝ և զփայլեալն պարարտ թուեցեալն և իւղաբուղխ տեսակ, ձէթ և իւղ, և որչափ այլ են 'ի նոցունց զօրութենէ, և որչափ ծաւալական է մինչև ցբնութիւնն այնոցիկ՝ որ առ բերանովն են ճանապարհացն, այսմ զօրութեամբ քաղցրութիւն առտուելով, մեղր՝ որ ընդդէմ ամենեցուն է մանաւանդ ընկալաւ առասութիւն, և որ լուծականն է մարմնոյ այրելով, զփրփրատեսակ սեռն, յամենեցունց խառնուածոյ որոշեալ՝ կաթն մականուանեցաւ։ Եւ երկրի տեսակք քամեալն իսկ 'ի ձեռն ջրոյ այսպիսի յեղանակաւ լինի մարմին քարեղէն. զշարախառնեալ ջուրն՝ յորժամ յետ զուգախառն մասին հատանի՝ փոխարկելով 'ի յօդոյ բնութիւն. և եղեալ օդ՝ 'ի յիւրն տեղի վերստին ընթանայ։ Եւ զսա թափուր ոչ ինչ էր պար առեալ։ Արդ զմերձաւոր օդն մերժեաց, և սա իբրու ծանր ելով, մերժեալ և ծաւալեալ առ երկրաւ՝ յոյժ անծկացոյց զսա և մերժեաց առ հիմունս ուստի ելեալ էր, մինչդեռ նոր էր օդն։ Եւ 'ի միասին շարամածեալ անլուծաբար 'ի ձեռն օդոյ երկրի ընդ ջրոյ, վէմ բաղկանայ. գեղեցկագոյն իսկ հարթ և հանդարտ և յստակագոյն մասամբքն, և յոռին որ ներհակն է նոցունց։ Եւ այն որ 'ի ձեռն հրոյ արագութեան ամենևին յափշտակէ զգիջայինն։ Եւ կարծրա-

գոյն քան զվէմն [1] լինիցի, որոյ սեռի անօթ կոչեմք, այս ինչ եղև։ Եւ է յորժամ խոնաւութիւն մնասցէ 'ի կաւացեալ երկրին, 'ի ձեռն հրոյ յորժամ ցամաքիցի՝ լինի քար, այն որ զսեաւն [2] ունի գոյն։

Եւ այնուիկ՝ որ ըստ նոցունց այսոցիկ 'ի զուգախառնութենէ ջրոյ, 'ի բաց միանալով [3] յոյժ անօսրագունիւքն 'ի յերկրէ մասամբքն, աղտաղտուկ ելով, կիսամած լինիցի. և սա դարձեալ 'ի ձեռն ջրոյ, է ոմն իւղոյ և տղմի մաքրական սեռն, կոչելն՝ լուանալի. և միւսն քաջայարմար գոլով հաղորդութեան այնմիկ որ առ բերանոյն [4] զգայութիւն աղոց ըստ համեմատութեան օրինի, աստուածասէր մարմին եղև։ Եւ այն որ հաղորդք են յերկոցունց, ջրոյ ոչ գոլով լուծանելի, և հրով վասն այսպիսի յեղանակաւ՝ այսպէս մածանի [5]։ Յերկրէ՝ հուր և օդ ոչ մաշէ, քանզի բաղկացութեանն նորին դատարկացն մանրագոյնս բնաւորելով 'ի ձեռն բազում անդորրութեան հասեալ ոչ բռնադատելով, անլոյծ զսա թողացուցեալ, առանց մաշման պարգևեաց։ Եւ ջրոյ իսկ, քանզի մեծագոյն բնաւորեալ են մասունք՝ բուռն առնելով զելսն, լուծանելով զսա մաշեն։ Քանզի զայն որ ոչ լինի բաղկացեալ՝ 'ի ձեռն բռնութեան այսպէս ջուր միայն լուծանէ. իսկ զբաղկացեալն՝ բաց 'ի հրոյ այլ ոչ ինչ. զի մուտ այլ ոչ ուրուք իցէ մնացեալ բաց 'ի հրոյ։ Եւ զջրոյ դարձեալ շարագայումն, զբռնագոյն իսկ, հուր միայն. իսկ զտկարագոյնն, երկաքանչիւր՝ հուր և ջուր՝ ծաւալեցուցանեն, ոմն զդատարկացն, և միւսն՝ ըստ եռանկեանցն։ Եւ բռնութեամբ զօդ բաղկացեալ ոչ ինչ լուծանէ, սակայն ըստ տարրին, և հուր մաշեալ անբռնադատելի է։ Իսկ արդ շարախառնեալ յերկրէ և 'ի ջրոյ մարմնոցն, մինչև ջուր արդեօք և բռնութեամբ զերկրի դատարկքն, 'ի միասին թաղկացեալ ունիցի. ջրոյն իսկ մասունքն յարտաքուստ 'ի վերայ հասանելով, և առ սոքօք հոսելով, զամենայն հաւաքումն ան-

1 Յոյնն. կարծրագոյն քան զայն լինիցի։
2 Յօր. զսեան ունի գոյն։
3 Ըստ յունին թուի՝ 'ի բաց միայնանալով, բաժանելով։
4 Յոյնն. որ առ մարմնոյն զգայութեան։
5 Յօր. մածիլն։

մաշ Թողացոյց. իսկ հրոյն մասունքն, ՚ի ջրոյն դատարկք մտանելով, զոր ինչ ջուր զերկիր, զայս ինչ հուր զօդ գործելով, մաշելով հասարակացն մարմնոյն՝ հոսելոց միայն այս պատճառք պատահեցան: Եւ հանդիպին սոքա գոլով զոմն ինչ նուազագոյն ունելով քան զջուր և զերկիր. իսկ այն որ ապակոյն է սեռն ամենայն, և որչափ ՚ի քարանցն հալական տեսակք կոչին: Եւ այն իսկ դարձեալ որ զոլովագոյն մասն ջրոյ ունիցի, մոմատեսակ և խնկային մարմինք բազկանան. և ձևոյ հաղորդութեամբ՝ և փուխրմամբ առ միմեանս պաճուճիլ գրեթէ ցուցաս արդեօք. և զկիրան նոցունց, վասն որոյ եղեն պատճառաց, փորձելի է մեզ երևեցուցանել: Նախ և առաջին պարտ է զգայութիւն գոլ միշտ ասացելոցս: Բայց մարմնոյ, և որ առ մարմնոյ և որ առ մարմնաւս են զլինելութիւն, և հոգւոյ թէ որչափ մասն է մահկանացու, ընդ սոքօք ոչ եմք անցեալ: Բայց հանդիպին, ոչ այս առանց այնոցիկ, որ առ կիրքն՝ որչափ զգայական են, և այնոքիկ առանց այսոցիկ հնարաւորին բաւականապէս ասել. և հանգամայն ասելն՝ գրեթէ անհնար է: Արդ ենթադրելի է նախ զմին և զմիւսն. և առ ՚ի յետոյ ենթադրելովքն դարձեալ անցցուք: Եւ արդ զի կարգաւ կիրքն սեռն ինքն, ասեն, եղիցի մեզ առաջինք այն որ ինչ առ մարմինն և հոգւին էակք են:

Եւ նախ իսկ ըստ որում զհուրն ջերմն ասեմք, տեսցուք աստանօր դիտելով, զընտրութիւնն և զհատուած նորին խորհելով լինել առ մարմինս մեր: Եւ քանզի արագ ինչ է կիրս, գրեթէ ամենեցուն մեզ զգալի է. բայց զանօսրութիւնն կողմանց և զանկեանցն սրութիւնն [1], և զմանրկութիւնն մասանցն, և զբերմանն արագութիւնն. (որով ամենիւք ուժգնին գոլով և հատու, արագապէս զհանդիպեալն առ ինքն՝ միշտ հատանէ) և խորհիլ պարտ է, յիշելով զձևոյ սորա լինելութիւն, քանզի մանաւանդ՝ սա է [2], և այլ ոչ ինչ բնութիւն ընտրող ըստ մանրկութեան բաշխմանն՝ մասանց մարմնոյ մերոց, այս զոր ջերմք կոչեմք, վայելչապէս ախտն և զանունն առատութեաց: Իսկ ներհակն սոցունց, ապաքէն յայտ է. սակայն ոչ ինչ կարօտասցի բանի: Քանզի այն որ առ մարմինքն են գիշայինք մեծամասնագոյն ՚ի ներքս մտեալ, և զփոքրագոյնսն արտաքս մերժելով ՚ի նոցունց հաստատութիւնք, ոչ կարացեալ մտանել ՚ի միասին մերժելով զնոսաւականսն մեր. և ՚ի հանդարտէ [1], և ՚ի շարժելոյ անշարժ՝ ՚ի ձեռն հանդարտութեան՝ զառ ՚ի միասին գործն գործելով մածուցանէ: Եւ այն իսկ որ օտար է ՚ի բնութենէն ժողովեալ՝ մարտնչի ըստ բնութեան զնոյն ինքն՝ ՚ի ներհակսն մերժելով. և մարտիս այսմիկ և սասանմանս եղաւ դողութիւն և սարսափ: Եւ այս առնային կիրս, և այն որք գործեն զսա՝ անուն զգուշոյն ընկալաւ. և կարծր է որոյ մարմինք մեր հնազանդիլն. և կակուղ որչափ մարմնոյ. և առ միմեանս այսպէս: Հպատակին իբրու առ փոքր ինչ տալով զհաստատութիւն: Եւ այն որ ՚ի քառանկեանցն իցէ հաստատութեանց, և յոյժ իցէ հաստատուն՝ ընդդիմարտական տեսակն: Եւ հոծութեամբ ՚ի միասին եկեալն յոլովիւք՝ ընդդիմատարած իցէ մանաւանդ: Իսկ ծանր և թեթեւ, ՚ի վեր և ՚ի ստորին ասացեալ բնութեամբն քննելով արդեօք հաւասար յայտնեսցի: Քանզի բնութեամբ արդ երկուս ոմանս տեղիս գոլ ներհականս ամենայն ընկալեալ երկակի, զոմն ստորին՝ առ որոյ բերի, որչափ ունիցի թանձրութիւն ինչ մարմնոյ. և զմիւսն ՚ի վեր առ որոյ անկամաքաղ գոլ, ամենայն ոչ ուղիղ, ոչ ուրուք կարծեալն: Քանզի ամենայն երկնի՝ գնդատեսակ գոլով, որչափ ՚ի խոնարհ հեռացեալ են, հաւասար միջոյն՝ վերջինք կոչին, և նմանապէս պարտ է բնաւորիլ վերջինս. և մէջն իսկ զնոյն չափն ՚ի վերջնոյն հեռացեալ, պարտ է թուել հանդէպ գոլ ամենեցուն:

Արդ աշխարհի այսպէս բնաւորելով ինչ յասացելոցն ՚ի վեր որ կամ՚ի ստորին եղեալ, ոչ իրաւամբք թուեսցի զայն որ ոչ է պատշաճ ասել անուն. քանզի միջինն ՚ի սմա տեղին յիրաւի է բնաւորեալ, ոչ ՚ի վեր ասել՝ ոչ ՚ի ստորին. այլ նոյն իսկ ՚ի մէջ:

1 Ձն. զանօսրութիւնն անկեանց, և զկողմանցն սրութիւնն:
2 Ձօր. ասէ:

1 Ձոյնն. և յանհանդարտէ (և իմա՝ յանհարթէ):

Իսկ որ շուրջ է զսովաւ, ոչ է 'ի մէջ իսկ, և ո՛չ ունի տարբերութիւն մասն սորա՝ մանաւանդ առ մէջն. և կամ յայնցանէ որ հանդէպ իցէ։ Եւ այնմ որ նմանապէս ամենևին բնաւորեալ է, զո՛ր անուանք 'ի վերայ բերելով սորա հակակայեալք, և կամ ո՛ւր գեղեցկապէս ասել վարկանիցի. քանզի եթէ հաստատուն ինչ իցէ 'ի մէջ ամենայնի հաւասարաչափ, առ ոչ և միոյ արդեւք առ ծայրսն բերիցի, վասն ըստ ամենայնի նմանութեան սոցունց։

Այլ և եթէ շուրջ զսոքօք գնասցէ ոք՝ բոլորակի, և զոտսն 'ի վեր դարձցի կացեալ, զնոյն արդեւք 'ի վեր և 'ի խոնարհ թուեցեալ կոչեսցէ։ Քանզի բոլորն, որպէս ասացաք, այժմ գնդատեսակ գոլով, զտեղի ոմն խոնարհ, և զոմն վերագոյն ասել, ոչ է առն խոհեմականի։ Եւ ուստ անուանեցան այսոցիկ. և որովք էակք ասել սովորեալ եմք վասն այսոցիկ բոլոր երկինս այսպէս բաժանելով, զայսոսիկ մեզ խոստովանելի է, ենթադրելով մեզ զայս ինչ։ Եթէ ոք ամենայն 'ի տեղւոջ, և մանաւանդ ըստ այնմ որ հրոյն է հասեալ բնութիւն, յորոյ և յոլովագոյն իցէ արդեւք ժողովեալ յառաջ բերիցի 'ի վերայ այնմիկ ելեալ, և զօրութիւն յայս ինչ ունելով, առեալ զմասունս հրոյ 'ի կշիռ դիցէ, և վերացուցեալ զլուծ սորա, ձգելով զհուրն՝ յաննման դիւրաւ լիցի բռնագոյն։ Քանզի զօրութեամբ միով երկոցունց համանգամայն զբաղելով փոքր իսկ յաւէտ, և յոլովն նուազ հարկաւորովք թօթափելով 'ի միասին հետևիլ բռնութեան, և զյոլովն իսկ՝ ծանր և 'ի ստորին բերեալ՝ կոչել, և զփոքրն՝ թեթև և վերին։

Այսպէս արդեւք պարտ է կարծեալ զմեզ գործել, յաղագս յայսմիկ տեղւոջս. քանզի 'ի վերայ երկրի կալով, և զհողատեսակ սեռք բաժանելով, և զերկիր իցէ յորժամ ձգեմք զսա առ աննման օդոյն, և օտարաբնակ իւրաքանչիւրոյ՝ առ բաղազանսն իւր ունելով զգորովականն։ Իսկ փոքրագոյնն դիւրաւ առ 'ի մեծին բռնադատեալ, 'ի յաննմանն նախ հետևի։ Զսա արդ թեթև առասացաք. և զտեղին՝ առ որ բերեմք բռնութեամբ՝ վերին, և ներհականն սոցունց կիր՝ ծանր և 'ի խոնարհ։ Այսոցիկ արդեւք զանազա-

նապէս ունել սոցա առ ինքեանս հարկ է, վասն զի բազմութիւնքն սեռիցն ներհականսն այլոց այլ[1] տեղիքն ունին։ Քանզի որ 'ի միւսում տեղւոջ է փոքրագոյն ելով՝ այնմ որ 'ի ներհական տեղւոջն է՝ թեթևին. և ծանրերն՝ ծանր. և այնմ որ 'ի խոնարհ է՝ խոնարհն. և այնմ որ 'ի վեր է՝ վերն։ Ամենայն ներհակք և կողմանիք և ամենևին տարբերեալք առ միմեանս արդեւք գտցին լեալք։ Եւ գոլով զայս ինչ տակաւին զմտաւ ածել պարտ է յաղագս նոցունց ամենայնի, իբրու առ ազգակիցն իւրաքանչիւրոյ ճանապարհն գոլով, ծանր իսկ զբերեալն[2] առնէ, և զտեղին՝ յորում այնպիսին բերի խոնարհ։ Իսկ այնոքիկ որ հուպ են սոցա՝ երկաքանչիւրք այլպէս։ Արդ յաղագս այնոցիկ նոցունց կրիցն այսոքիկ ասասցին[3] պատճառք։ Եւ զողորկ դարձեալ և զխոշոր կրի պատճառն ամենայն ոք տեսեալ, և այլոյ ուրուք ասել իցէ արդեւք հնարաւոր։ Քանզի կարծրութիւն ընդ կակղութեան խառնեալ, և կակղութիւն ընդ հոծութեան[4] զայս ինչ գործէ։ Մեծագոյն իսկ այսուհետև հասարակաց առ բոլոր մարմինն ախտիցն, որովք անցաք. և որչափ 'ի ձեռն մարմնոյս մասնկանցն զգայութիւնք ստանալով, տրտմութիւնք նոքօք և հեշտութիւնք համանգամայն հետևեալք ունին։ Այսպէս առ ամենայն զգալի և անզգալի ախտից՝ զպատճառսն առցուք, յիշելով զդիւրաշարժ և զդժուարաշարժ բնութեանն, զոր ինչ բարժանեցաք յառաջագոյն։ Քանզի սորա զհետ գնալով պարտ է մեզ զամենայն՝ որչափ խորհիմք՝ բաժանել։ Քանզի ըստ բնութեան դիւրաշարժն՝ յորժամ սուղ ինչ կիր 'ի սմանէ անկցի, բաշխեն մասնկունքն շրջանակիւ յայլ ևս հեռագոյն մասնըկունքն, զնոյն գործելով, մինչ առ խոհեմականն հասանելով պատմիցէ զարարողին զօրութիւն։ Իսկ ներհականն հաստատուն գոլով, և ոչ ըստ միոյ բոլորի հասանելով, միայն կրէ, և այլ ոչ շարժէ 'ի մերձաւորացն։ Իբրու թէ մասնկացն այլոց ոչ բաշխելով այլոց

1 Իմա՝ ներհականս տեղիս ունի մին միւսոյն։
2 Յօր. զբերանէալն։ 3 Յօր. ասացին։
4 Յոյնն ասէ. Քանզի կարծրութիւն ընդ անհարթութեան խառնեալ, և հարթութիւն ընդ հոծութեան ընծայեցուցանէ։

մասնկացն, առաջին կիրն 'ի նոցունց անշարժ եղեալ 'ի բոլոր կենդանին, առանց զգայութեան զկրեալն եցոյց։ Այսոքիկ իսկ յաղագս առ ոսկերօքն և հերօքն, և որչափ այլք երկրային զյոլովն ունիմք 'ի մեզ մասնկունքն։ Լինիցին և այն իսկ որ յառաջին կոյս առ աչսն և լսելիսն մանաւանդ, 'ի ձեռն հրոյ և օդոյ սոքօք զօրութիւն մեծագոյն գոլ։ Իսկ արդ զհեշտութեանն և զտրտմութեանն այսպէս պարտ է խորհիլ։ Հեռագոյնն իսկ 'ի բնութեան լինելով և բռնադատականն յանկարծակի այն է հեշտութիւն, և այն իսկ որ դիւրաւ և ըստ մանրկութեան լինիցի՝ անզգալի է [1]. և ներհականն նոցունց՝ լինի ներհակապէս. և ամենայն՝ դիւրութեամբ եղեալ՝ զգալի իսկ է մանաւանդ, սակայն տրտմութեան և հեշտութեան ոչ հաղորդին. իբրու այսոքիկ որ առ տեսութեանն են կիրք. որ և մարմին յառաջագոյն ասացաւ զօր հանապազ բնակակից մեր լինելով։ Քանզի 'ի սմա հատմունք և խարանք [2], և որչափ այլ կիրք են՝ տրտմութիւն ոչ առնիցեն և ոչ դարձեալ հեշտութիւն, 'ի նոյնն հասանելով տեսակ։ Սակայն մեծ և հաւաստի զգայութիւնք են, ըստ որոց արդեւք և որչափ սա ուրուք՝ առարկուածաւ 'ի վերայ հասցէ։ Քանզի բռնութիւն ամենևին ոչ գոյ առ ընտրութիւնն սորա և բաղդատութիւն։ Իսկ այնոքիկ որ մեծօք մասամբք մարմինքն են, և հազիւ հասանին առ գործօղն, բաշխելով զշարժութիւնքն ի բոլորն՝ հեշտութիւնք ունիցին և տրտմութիւնք, օտարացեալ իսկ՝ զտրտմութիւնն, և 'ի նոյնն դարձեալ հաստատելով՝ զհեշտութիւնք։ Եւ որչափ ըստ մանրութեան զհպելն և զհեռութիւնն [3] իւրեանց ընկալեալ են, և զլրմունս [4] յանկարծակի, և մեծամեծս այնոքիկ դատարկելովն անզգալիք են, և լրութեամբն՝ լինելով զգայականք, տրտմութիւն ոչ իսկ

1 Յոյնն. Զի որ արտաքոյ է բնութեանն և բռնադատ 'ի մեզ կիրք՝ ցաւաբերք են. և որ ըստ բնութեանն յանկարծակի և գնասցէ 'ի բաց՝ հեշտագոյն է և ներհականն...։

2 Յօր. խորանք։

3 Յոյնն. Եւ որչափ մանունս զանջատումն և զդատարկութիւնն առնուցուն, և լրութիւնս մեծամեծս...։

4 Յօր. զլրմունէ։

հասուցանելով մահկանացու մասինն հոգւոյ, սակայն հեշտութիւնս մեծագոյնս. և յայտ է, զի առ անուշահոտութիւնքն այս ինչ լինիցի։ Եւ որչափ յանկարծակի օտարանան, և ըստ մանրութեանն հազիւ դարձեալ 'ի նոյնն եկեալ հաստատին, զներհական առաջնոցն հատուցանեն զամենայն։ Եւ այս իսկ առ խարմունքն, և հատուածքն մարմնոյն լինելով յայտ են։ Իսկ արդ հասարակաց բոլոր մարմնոյն կիրքն և 'ի մականունութեանցն այնոքիկ որ գործողացն իւրոց լինիցին, գրեթէ ասացաւ։ Եւ այն իսկ որ լինին 'ի յատուկ մասամբք մեր, զկիրքն և զպատճառսն գործողացն ասել մեզ փորձ է առնելով պարտ է արդեւք [1], եթէ հնարաւորեսցուք։

Նախ արդ որչափ յաղագս խառնուածոցն յառաջագոյնսն ասելով 'ի բաց թողաք, յատուկ գոլով զսոքա կիրք առ լեզուաւն, երևեցուցանել արդ պարտ է ըստ որում հնար իցէ. և երևին այսոքիկ իբրու բազում անգամ 'ի ձեռն բաղդատութեանց ոմանց և ընտրութեանց լինելով. և առ սոքօք վարիլ մանաւանդ քան զայլս՝ խոշորութեամբ և ողորկութեամբ։ Քանզի որչափ մտեալ առ երակքն, իբրու լեզուոյն փորձութեամբ [2], ծաւալելով առ սիրտն, 'ի խոնաւագոյն մասունքն մարմնոյն, և 'ի կակղագոյնքն ընկենլով, և 'ի հողայինքն խոշորեցուցանելով՝ 'ի միասին ժողովէ զփողս երակացն, և գօսացուցանէ [3]. այնոքիկ խոշորագոյն գոլով՝ տտիպ անուանին. և նուազ խոշորագոյն գոլով՝ այն է որ ներհակն է նորին։ Իսկ և այն որ սոցունց մաքրողք են առ լեզուաւն՝ լուանալով, զամենայն առաւել քան զչափն զայս գործելով, և հասանելով առ 'ի ջերմացուցանել զբնութիւնն, որպէս է զօրութիւն մաքրական տեսակացն, դառինք ամենայն այսպէս անուանեցան. և որք նուազագոյնքն են քան զսորայն ունակութիւն, և չափաւոր ինչ առ մաքրութիւնսն պիտանացու, աղի առանց դառն խոշորութեան, և յաւէտ մեզ երևին սիրելի։ Իսկ այնոքիկ որ

1 Իմա. ասել մեզ ջանալի է՝ եթէ մարթասցուք։

2 Յոյնն. լեզուոյն փորձականք (երակքն)։

3 Յօր. զգօսացուցանէ։

քերանոյն են ջերմուԹեամբն հաղորդելով. և ծաս-
քեալ ՚ի ձեռն սորա՝ ՚ի միասին ջերմասցին, և դար-
ձեալ ընդ ինքեան ներհակապէս զջերմացուցիչն այ-
բելով, և ՚ի ձեռն ԹեԹևուԹեան՚ի վեր բերեալք առ
զգայուԹիւնքն գլխոյն, հատանելով [1] զամենայն առ
որոց արդեւք հասանիցէ, վասն այսոցիկ զօրուԹեանց
ամենայն այսպիսիքս կծու անուանեցան: Եւ այնոքիկ
որ ՚ի սոցանէ մանրանալով [2] ՚ի ձեռն փտուԹեան, և
՚ի նեղագոյն երակսն իջանելով, և այնոցիկ որ աստա-
նօր են հողային մասանց, և որչափ օդային իցեն չա-
փաւորուԹիւն ունելով, իբրու շարժմամբ առ միմեանս
գալարելով զօդսա, և գալարեալ շուրջ միմեամբք, և
՚ի չիրար մտանելով փողատևական գործել, տարածե-
լով զօդսա շուրջ այնոցիկ՝ որ ՚ի ներքս մտանեն. իբրու
խոնաւուԹիւն, զօդով [3] շուրջ տարածելով, զոմանս
հողատեսակս [4], և զոմանս մաքուրս՝ խոնաւական ա-
նօթիք [5] օդոյ՝ ջուրք [6] փողատեսակք և շրջաբերք լինե-
լով: Եւ այն իսկ որ մաքրագոյնն են՝ յստակագոյն գո-
լով հաստատիլ, և անուանակոչուԹիւն ընկալուլ
զայնմ իրի, որ ընդվիջաբար գոլով օդոյ՝ հաստատի
՚ի ջրոյ անօսրագոյն ձևով [7]: Եւ այնոքիկ՝ որ հողատե-
սակքն են ՚ի միասին շարժելով և վերանալով եռա-
ցումն և շաղախումն մակակոչուԹիւն ընկալուլ. և սո-
ցունց ախտիցն պատճառն ասիլ քացախ: Եւ առ այ-
սոքիկ ամենայն ասացեալքս, կիր ինչ ներհական ՚ի
ներհակայէ լինիցի պատճառէ, յորժամ՚ի ներքս մտե-
լոցն բաղկացուԹիւն գինւոլուԹեամբ իւիք այնոքիւք՝ որ
լեզուոյն ունակուԹեանն ընտանի է բնաւորեալ գիւ-
րացուցանէ, ողորկելով զխոշորացեալս, և զօտարա-
գոյնսն ՚ի բնուԹեանն բաղկացեալս, և կամ ծաւա-
լեալս, զոմանս հաւաքէ և զոմանս ցրուէ. և զամենայն
՚ի յայցանէ ախտից քացախուտ առաստուԹիւն ընկա-
լեալ, մինաւանդ յայն որ ըստ բնուԹեանն՝ հաստա-

1 Յօր. գԳայոլինան հապառնելով գԼիոյն:
2 Յօր. մարմանալով:
3 Յօր. զդաս:
4 Յօր. հոմապէսակս:
5 Յօր. աղիք:
6 Յօր. ջուրք:
7 Յոյնն. և անուանակոչուԹիւն ընդունի՝ պղպէկ. (զայնմ էրէ ց՚յԽով բացատրուԹիւն է պղպէկ բառին, զոր յոյնն ունի):

տէ, հեշտ և սիրելի ամենայնի. որպէս այնպիսին
բժշկուԹիւն՝ բուռն կրիցն լինելով՝ անուանեցաւ
քաղցր. և այսոքիկ արդեւք այսպէս: Իսկ յաղագս այ-
նոցիկ, որ հոտոտելեացն են զօրուԹիւնք, տեսակ նո-
ցա ոչ գոյ: Քանզի հոտոցն ամենայն կիսասեռ է. և
տեսակի ոչ և միոյ ՚ի սոցանէ պատահեալ է զուգա-
չափուԹիւն, առ ՚ի յունել զոմն հոտ: Ա.յլ մերն որ
շուրջ զնոքօք են երակք առ երկրի, և ջրոյ սեռքն նե-
ղագոյն են բաղկացեալք: Իսկ այնոքիկ որ առ հրոյ և
օդոյ՝ անդորրագոյնք են: Վասն այսորիկ ՚ի սոցանէ ոչ
ոք ոչ երբեք զոչ և մի իմացեալ է հոտ, այլ կամ Թա-
նալով, կամ հալելով, կամ բուրելով, լինին ոմանց
հոտք: Քանզի փոխաբերելով ջրոյ ՚ի յօդ, կամ օդոյ
՚ի ջուր, ՚ի մէջ սոցունց լինիցին. և են ՚ի միասին ամե-
նայն հոտք՝ ծուխ և կամ մրրիկ. և ՚ի սոցանէ այն՝ որ
յօդոյ ՚ի ջուր հասանի՝ մրրիկ է, և այն որ ՚ի ջրոյ յօդ՝
ծուխ:

Աստուստ անօսրագոյնք են քան զջուր, և Թանձ-
րագոյն ամենայն հոտք են ՚ի միասին քան զօդ: Եւ
յայտնին յորժամ ընդդէմ խցեալ առ չնչոյն արտա-
բերուԹիւնն ածցէ. զոմն բռնուԹեամբ շունչն առ
ինքն, քանզի յայնժամ իսկ և ոչ մի՝ զոյզ սոցա քա-
մեսցի [1]:

Ա.յլ շունչն ՚ի հոտոց միացեալ, ինքն միայն հե-
տևի: Երկու արդ այսոքիկ [2] անանուանք եղեն սոցունց
զանազանուԹիւնք, ոչ ՚ի բազմից, և ոչ պարզագունից
ելով տեսակաց: Ա.յլ երկակի իսկ այն՝ որ հեշտն է և
տրտմականն՝ որք աստանօր ասացցին յայտնապէս. ոմն
է գԺուարին և բռնադատական՝ ամենայն վայրին այն-
միկ, որչափ ՚ի մէջ գագաԹան մերոյ և պորտոյ ձևա-
գեալ կայ. և միւսն՝ զայս իսկ զնոյնս հեզացուցանե-
լով, և դարձեալ ըստ որում բնաւորեալ է սիրաբար
բացատրելով:

Իսկ յերրորդ մասն ՚ի մեզ զգայական դիտեն
զայն որ ինչ առ լսելիսն է. և ՚ի ձեռն որոց պատճա-
ռաց, այն որ շուրջ զսուաւ պատահին կիրք՝ ասել

1 Յօր. ֆոեթ:
2 Յոյնն. Արդ վասն այսոցիկ, անանուանք...:

պարտ է։ Ամենևին արդեւք ձայն՝ դիցուք զայն որ 'ի ձեռն օդոյ, և ուղղի՝ որ 'ի գլուխն է և արեան՝ մինչև ցհոգւոյ գանիւ բացատրեսցի. և շարժութիւն որ առ 'ի սմանէ է, զայն որ 'ի գլխոյն սկսանելով՝ վախճանի առ հաստատութիւնն լերդին, որ անուանի լուր։ Եւ որչափ երագն է սորա զայն սուր, և որչափ սղագոյնն է՝ ծանրագոյն. և զնմանապէսն՝ հանդարտ և դիւրագոյն. իսկ զներհական նորին՝ խոշորագոյն։ Եւ մեծ՝ զբազումն. և որչափ նորին է ներհականս՝ փոքունս։

Իսկ այնոցիկ որչափ յաղագս ձայնակցութեան են սոցունց՝ առ այնոցիկ որ յետոյ ասելոցն են, հարկ է ասել այսուհետև տակաւին։ Չորրորդ սեռ մեզ զգայական այն է, զոր պարտ է բաժանել, հոծք 'ի յինքեան զանազանութիւնք ստացեալ. զորս ամենայն 'ի միասին գոյնս կոչեցաք, զբոց իւրաքանչիւրոց մարմնոց 'ի բաց հոսելով՝ աչօքն չափաւոր մասնկունք ունելով առ զգայութիւնն։ Եւ յաղագս աչից՝ յառաջագոյնսն վասն պատճառացն լինելութեանն սակաւ ինչ ասացաւ աստանօր։

Արդ որ յաղագս գունիցն է մանաւանդ իրաւացի է վայելչապէս հեզատեսակ բանիւ պատմել։ Զայն որ բերին առ 'ի յայլոցն մասնկանցն, և անկանին 'ի յաչս, ոմանք՝ փոքունք, և ոմանք՝ մեծագոյնք, և միւսք հաւասարք նոցունց աչաց մասնկաց գոլով։ Իսկ արդ հաւասարքն առանց զգայութեան են. զորս արդեւք և յստակք կոչեմք. և մեծագոյնքն և փոքունքն, ոմանք բաղդատելով և ոմանք դատելով. զսա այնոքիւք՝ որ առ մարմնովն են ջերմօքն և ցրտօքն, և այնոքիւք՝ որ առ լեզուովն են տտիպ տեսակաւն, և որչափ ջերմացուցիչքն են, կծուք կոչեցաք՝ եղբարք գոլով։ Եւ զըսպիտակն և զսեաւսն՝ նոցունց կիրք եղեալ՝ յայլում սեռի զնոյնս, և այլ կարծելով վասն այսոցիկ պատճառաց. այսպէս պարտ է արդեւք առասել զսոսա։ Իսկ զայն որ բաղդատական է աչաց՝ սպիտակ, և զներհակ նորին՝ սեաւ. և զսրագոյն բերումն և 'ի սեռէ հրոյ առ այլ ուրուք անկեալն՝ ընտրող գոլով տեսութեանն մինչև ցաչքն. և զնոքունք՝ զելսն աչացն բռնութեամբ մերժողն և հալողն, հուր յանկարծակի և ջուր՝ զոր արտօսր կոչեմք՝ հեղլով անդուստ, և զնոյնդ գոլով

հուր՝ ներհակապէս հանդիպելով։ Եւ արտաքս իսկ վազելով հրոյն՝ իբրու փայլատակմանէ, և միւսոյն 'ի ներքս մտանելով, և առ խոնաւականն շիջանելով, պէսպէս գոյնք գալարմամբս այսմիկ լինելով՝ ճաճանչ իսկ զկիրս զայս առասասցուք. և զգործողն սորա անուանեցաք պայծառ և փայլուն. և զայն որ 'ի մէջ սոցունց է դարձեալ սեռն հրոյ, առ աչացն իսկ գիճութիւնն հասանելով և խառնեալ ընդ սմա, ոչ փայլելով, և 'ի ձեռն խոնաւութեանն փայլման խառնելով ընդ հրոյն, գոյն ինչ արիւնատեսակ առտուեալ, անուամբ կարմիր ասեմք. և պայծառն ընդ կարմրի և ընդ սպիտակի խառնեալ՝ խարտեաշ եղև։ Սակայն թէ որչափ ընդ որ չափուց թէ և գիտիցէ ոք ասելն՝ միտք ոչ ունի. քանզի կարիս ոչ ինչ է, և ոչ ասի բանն իրաւապէս, թէպէտ և չափաւորապէս ոք գոյ ասել։ Իսկ կարմիրն ընդ սևի և ընդ սպիտակի խառնեալ՝ ծիրանի։ Եւ ձանձախարիթ՝ ընդ սոքօք խառնելով մանաւանդ բորբոքմամբ՝ շարախառնի սեաւ։ Իսկ շէկ 'ի խարտեշի և 'ի գոշի խառնմանէ լինի. և գոշի՝ սպիտակի և 'ի սեաւի. և դեղինն սպիտակի ընդ խարտեշի խառնելով. իսկ ընդ պայծառի՝ սպիտակ շարախառնելով, և 'ի խորին սեաւ անկեալ՝ զկապուտակ գոյնն կատարէ. և կապուտք ընդ սպիտակի խառնեալ՝ զլուրջն. և շէկ ընդ սևի՝ զկանաչն. և այլքն իսկ սոցանէ գրեթէ յայտնին, որովք արդեւք նմանելով խառնութեամբ զվայելչական բանն առ ինքեանս պահել։ Ապա եթէ ոք սոցա գործով դիտաւորութիւն առնելով ըմբռնիցէ զքննութիւն, զմարդկային և զաստուածային բնութեանն ոչ գիտացեալ արդեւք իցէ զտարբերութիւնն. զի աստուած զբազումսն 'ի մի խառնեալ, և դարձեալ միոյն 'ի բազումս լուծանել բաւականապէս մակացող գոլով համանգամայն և կարող։ Ի մարդկանէ ոչ ոք յոչ և մի 'ի սոցանէ բաւական ոչ այժմ, և ոչ յետ այսորիկ երբէք լինիցի։ Զայսոսիկ արդեւք ամենայն այսպէս յայնժամ բնաւորեալ, 'ի հարկէ գեղեցկագունին և քաջագունին գոյացուցիչն առ 'ի յեղեալսն ըմբռնէր, յորժամ զբաւականն և զկատարելագոյն աստուածն ծնանէր. վարելով սոքօք առ 'ի պատճառսն այսոցիկ տալով սոցա պաշտօն, և բարւոյն

նիւթող առ ամենայն եղեալսն ինքն էր։ Վասն որոյ արդեւք պարտ է երկու պատճառաց տեսակք սահմանել, զոմն՝ 'ի կարեաց, և զմիւսն՝ աստուածային և զաստուածայինն իսկ խնդրել յամենայնի սակս բարեբաստ կենցաղոյս ստացման, որչափ ընդունելի մերոյ բնութեանս։ Իսկ այն որ 'ի կարեաց է 'ի սակս այնոցիկ, խորհեալ իբրու առանց սոցունց ոչ է հնար՝ զնոյնս այնոքիկ իմանամք վասն որոյ փութամք, և ոչ առնուլ և ոչ այլպէս հաղորդել։ Եւ արդ այժմ յորժամ իբրու ճարտարաց նիւթս՝ առաջի մեզ եդաւ զսեռք պատճառացն նարկելով, յորոց պարտ է այլ բանիս մնացորդացն շարանիւթիլ. դարձեալ արդ առ սկիզբն վերստին ելցուք և 'ի ձեռն սակաւուց վաղվաղակի 'ի նոյնս եկեսցուք, ուր այժմ հասեալ եմք, և վախճան արդեօք և գլուխ ճառիս զպատշաճաւորն փորձ արասցուք մակադրել առաջնօքն։ Զի որպէս իսկըզբանն ասացաւ, զայսոսիկ ամենայն անկարգաբար ունելով յիւրաքանչիւրում աստուած չափաւորութիւն արար՝ առ նոյն ինքն և առ այլս. և որչափ և ուր հնար էր չափաւոր և համեմատ գոլ սոցա. քանզի յայնժամ 'ի սոցանէ և ոչ մի էր հաղորդեալ այնմ որ ոչ էր հանդէպ, և ոչ ամենևին անուանել յայսցանէ՝ որ այժմ անուանին՝ արժանի էր բանիցն ոչ և մի, իբրու հուր և ջուր և որ ինչ այլոցն։ Այլ զայսոսիկ ամենայն յառաջագոյն զարդարեաց, և ապա յայսցանէ բաղկացոյց բոլոր կենդանի մի զայս, զամենայն կենդանիս ունելով ինքեան զանմահք և զմահկանացու, և աստուածայնոցն իսկ ինքն լինէր գոյացուցիչ. և զլինելութիւն մահկանացուացն իւրոց ծննդոցն գոյացուցանել հրամայեաց։ Եւ սոքա նմանեալք, առեալ զանմահ սկիզբն հոգւոյ. յետ այսորիկ, զմահկանացու զմարմինն սոքա [1] շուրջ ճախարակեցին, և կառք [2] ետուն ամենայն մարմնոյն։ Եւ այլ տեսակք սմա՝ շինէին մահկանացու հոգւոյ, դժուարինս և կարևորս յինքեան կիրս ունելով. նախ՝ զհեշտութիւն մեծ խաբեբայ չարին, և ապա զտրտմութիւն՝ զճողոպրիչն բա-

1 Յօր. սովաւ։
2 Յօր. կալ. յն. և կառս ետուն զամենայն մարմինն։

րեաց. և ստակաւին զվստահութիւն և զերկիւղ՝ զակնոհեմական խորհրդակիցն. և զցասումն՝ զդժուարինն առ մխիթարութիւնս. և զյոյս զդիւրութեան ածանցուցիչն և ընդ զգայութեամբ անբանի և ձեռնարկելոյ ամենայն տռփութեամբ։ Զայսոսիկ առնելով [1], հարկաւորապէս զմահկանացու սեռն շարադրեցին։ Վասն այսոցիկ արդեւք պատուելով զաստուածայինն՝ զի մի արհամարհեսցի. քանզի ամենայն հարկ էր առանց սորա ոչ գոլ զսա մեկնելով 'ի սմանէ զմահկանացուն բնակեցուցանեն 'ի մարմին այլում ուրուք բնակութեան, միջոց և սահման լինելով գլխոյն, և լանջացն, և 'ի մէջ սոցա երկաքանչիւրից եդեալք զպարանոցն, զի իցեն բաժանեալ։ Եւ արդ առ զանջոքն և առ սովաւ վայրին՝ զմահկանացու սեռն հոգւոյն առտուեաց։ Եւ քանզի ոմն սորա վեհագոյն, և ոմն վատթարագոյն բնաւորիլ էր՝ [2] շինէ 'ի սմա զասացեալ վայրս, և մեկնէին 'ի միմեանց իբրու զարանց և զկանանց բնութիւն, զխոհեմութիւն միջնապարիսպ աստանօր 'ի մէջ սոցունց եդեալք։ Եւ զայն իսկ մասն հոգւոյն՝ որ հաղորդեալ էր արութեան և ցասման մարտական գոլով բնակեցուցին հպագոյն 'ի գլուխն 'ի մէջ խոհեմութեանն և պարանոցին. զի բանականին լսող գոլով, և հաղորդելով ընդ սմա, բռնութեամբ՝ ցանկութեանցն յաղթիցէ սեռի, յորժամ 'ի ծայրաքաղաքին գոլով՝ բանականին հրամանին կամաւորապէս անսալով ոչ կամեսցին. և զսիրտն իսկ համանգամայն երակօքն, օր աղբիւր, շրջաբերեալ՝ ուժգնաբար յամենայն անդամունքն արեանն, յընծայաբերական բնակութիւն բնակեցուցին. զի յորժամ եռասցի յանդգնութիւնն ցասմանն, պատուիրելով բանականին իբրու անիրաւ ոմն՝ առ սոքօք լինիցի գործ արտաքուստ, և կամ 'ի ներքոյ ոմանց ցանկութեանց, արագապէս 'ի ձեռն ամենայն հեզագոյն փողիցն, ամենայն որչափ զգայականն է 'ի մարմինն, զհրամանացն և զսպառնալեացն առեալ զգայութիւն հպատակ լինիցի, և ամենևին հետևեսցի. և այսպէս ամենայնի զլաւագոյնն արքունական թողուցու։ Եւ 'ի վազելն իսկ սրտին՝ չա-

1 Յոյնն. խառնելով։ 2 Յօր. բնաւորիր։

բազունիցն կարծեօք, և ցասմնականին [1] յարուցեալ՝ նախ գիտելով եթէ 'ի ձեռն հրոյ սրտմտականին այսպիսի բնակութիւնս [2] հանդերձեալ էր լինել, օգնականութիւն սմա հնարեալք զթոքին տեսակն բնաւորեցին. նախ իսկ՝ կակուղ և առանց արեան, և ապա զբջիջքն 'ի ներքոյ ունելով ծախտեալ իբրև զմշտիկ. զի զշունչն և զըմբելին ընդունելով՝ հովացուցանէ, և շնչաբերութիւն և դիւրութիւն 'ի տապումն առտուիցէ։ Վասն որոյ և զառուսն շնչափողիցն՝ առ թոքովն եդին, և առ սրտին զսա հաստատեցին, իբրու համանգամայն կակղագոյն. զի յորժամ ցասումն 'ի սմա աճիցէ, վազելով հպատակութեամբ և հովութիւն գտեալ՝ նուազ վաստակեսցի, և բանականին մանաւանդ հնարաւորի ցասմամբ տալ պաշտօն. և այն իսկ որ կերակրոց և ըմպելեաց ցանկականն է հոգւոյն, և որչափ կարօտութիւն ունիցին վասն մարմնոյն բնութեանն, զայն իսկ 'ի մէջ խոհեմութեանն և առ պորտոյն սահմանին բանակեցուցին, իբրու մսուր ամենեցուն՝ յայսմ տեղւոջս մարմնոյն սննդեանն զսա հաստատեալք. և կապեցին զսա աստանօր, իբրու վայրենի ինչ սննդական, հարկաւոր կերակրելով և 'ի միասին գոլով եթէ հանդերձեալ ինչ իցէ մահկանացուն գոլ սեռ։ Զի միշտ [3] ճարակելով առ մսրին և հեռագոյն 'ի խորհրդականէն բնակելով, զխռովութիւնն և զխնդութիւնն դուզնաքեայ առնելով, զայն որ հզօրն է 'ի հանդարտութեան յաղագս ամենեցուն հասարակաց պատշաճին. թողուցու խորհիլ, վասն այսոցիկ աստանօր ետուն սմա զդասութիւն։ Եւ գիտելով զսա իբրու 'ի բանականսն ոչ էր հանդերձեալ խորհիլ, թէ և հասու լինիցի ուրուք երբէք սոցունց զգայութեանն, ոչ բնականագոյն սմա՝ զի փոյթ առնիցէ բանից ոմանց. և 'ի ձեռն կերպարանաց և կարծեաց գիշերայնոց և տունջենականաց մանաւանդ սփոփեսցի. զայսոսիկ արդեօք առ սմա աստուած խորհելով զլերդոյն տեսակն բաղկացոյց, և եդ

1 Յօր. ցասմականիցն։
2 Յոյնն. այսպիսի ուռուցումն հանդերձեալ էր...։ (Վրիպակ ընթերցումն թարգմանչին, որպէս և վերոյ յընծայաբերական բնակութիւն, զի ասէ յոյնն δορυφορική οἴκησις.
3 Յօր. Զմիշտ։

'ի նորայն բնութիւն, հոծ և ողորկատեսակ, և պայծառ և քաղցր, և դառնութիւն հպելով [1] հնարաւորեաց։ Զի 'ի սմա տրամախոհութեանցն առ 'ի մտացն բերելով զօրութիւն, և ընդունելով զտիպս, իբրու 'ի հայելւոջ, և տեսանելով զպատկերս, յորժամ բաղազան դառնութեան մասամբն վարելով դժուարապէս հասցէ առ 'ի սպառնալիս. և յամենայն լեարդն արագապէս խառնելով՝ մաղձատեսակ գոյնս երևեցուցանէ, և 'ի միասին ժողովեալ զամենայն առնէ լոյծ և խոշոր. և խափանէ զընդունական դրունքն, զոմանս՝ առ ուղիւղսն թիւրելով և 'ի միասին հաւաքելով, և զոմանս խնլով և փակելով՝ տրտմութիւն առտուիցէ և արտաշնչութիւնք [2]։ Եւ յորժամ դարձեալ զներհական սոցունց երևմունս կենդանագրիցէ, հեզութեան ուրուք կաթիլ շնչոյ 'ի տրամախոհութենէ դառնութեան իսկ հանդարտութիւն շնորհելով, ոչ շարժելով և ոչ մերձենալովն առ ներհականն իւրոյ բնութեանն կամեցեալ. և քաղցրութեան՝ որ առ նորին է սորա բնակից առ ինքեան վարելով, և զամենայն ողորկատեսակ ուղիւղ և աղատ ուղղելով. զուարթ և հանդարտ առնիցէ զայն՝ որ առ լերդովն բնակեալ է մասն հոգւոյ, և 'ի գիշերին հանգիստ ունելով չափաւոր՝ դիւթութեամբ վարիլ առ քունն. քանզի բանիւ և խոհեմութեան հաղորդեալ ոչ է։ Քանզի յիշելով զթուղթ հօրն՝ բաղկացուցիչն մեր, յորժամ գրէր զմահկանացու սեռս իբրու արիագոյն առնել ըստ զօրութեան, այսպէս արդեւք ուղղելով, և յոռինս՝ զի 'ի ճշմարտութիւն ուրուք մերձ իցէ, հաստատեցին [3] 'ի սմա զդիւթութիւնն։ Եւ նշան բաւականագոյն՝ իբրու զդիւթականն՝ մարդկային անզգամութեանն աստուած պարգևեաց։ Զի ոչ ոք առ միտս գոլով մերձեսցի յաստուածային և 'ի ճշմարիտ դիւթականն, եթէ ոչ առ քունն՝ խոհեմութեանն խափանեսցի զօրութիւնն, և կամ 'ի ձեռն ցաւոյ և կամ այլոց ոմանց հանդիպմանց յեղափոխեսցի։ Այլ 'ի զոյգ զա-

1 Յոյնն. և դառնութիւն ունելով։
2 Յոյնն. Տրտմութիւն ընծայեցուցանէ և անհամութիւնս։
3 Յօր. հաստատեցի։

մենայն իմանալն այնմ է՝ որ առ խոհեմութիւն
իցէ և զասացեալսն վերստին յիշելով երազ կամ ա-
նուրջ 'ի ձեռն դիւրական և ներգոյացական բնու-
թեանն, և որչափ արդեւք երևմունք երևեսցին, զա-
մենայն մտածութեամբ բաժանէ, թէ զի և կամ ո՛ւր
ինչ նշանակէ, և որո՛յ հանդերձեալ կամ անցեալ ներ-
կայի բարւոյ կամ չարի. և տակաւին իսկ այնմ որ մո-
լեալն իցէ, և 'ի նոյն իսկ կայ և մնայ, ոչ է գործ զե-
րևեալսն և զասացեալսն դատել յինքենէ։ Այլ բա-
րեւք է կանխաւ ասացեալն՝ թէ գործելն զիրսն և
ճանաչելն զանձն իւր՝ ողջախոհին միայն պատշաճի։
Աստուստ և զմարգարէիցն սեռ յաստուածային դիւ-
թութիւնսն օրէն էր դատաւորս նստուցանել. զորս
դիւթք իսկ ոմանք անուանեցին, տգէտք գոլով զի այն
որ 'ի ձեռն նշանակաց է համբաւին և կարծեացն նմա-
նողք են՝ սոքա անուանեսցին արդեւք [1]։

Իսկ արդ բնութիւնն լերդոյն այսպէս է վասն այ-
սոցիկ, և 'ի տեղւոջ բնաւորեցաւ՝ յորում ասացաք՝ 'ի
սակս դիւթականի։ Եւ տակաւին իսկ 'ի կենդանու-
թեան իւրաքանչիւրում հաստատունք նշանք ունիցի
զայսպիսիս։ Բայց յորժամ 'ի կենդանութենէն պակա-
սի՝ կոյր լինիցի, և զդիւթութիւնքն՝ աղօտագոյնք ու-
նիցի առ նշանակել ինչ հաւաստի։ Եւ այնորիկ դար-
ձեալ որ մերձաւորն է սորա փորոտին՝ բաղկացութիւն
և հաստատութիւնն եղև ընդ ահեկէ, 'ի սակս սորա,
առ 'ի շնորհել սմա զպայծառութիւնն միշտ և զմաք-
րութիւնն, որպէս հայելւոյ կազմեալ և պատրաստ
միշտ յարակայեալ մաքրիչ։ Վասն որոյ իսկ և յորժամ
ոմանք անմաքրութիւնն լինիցին վասն հիւանդութեան
մարմնոյ առ լերդաւն զամենայն փայծաղանն անգայ-
տութիւնն ընդունիցի մաքրելով, իբրու դատարկ սո-
րա նիւթելով և առանց արեան։ Աստուստ լցեալ առ
'ի յայնցանէ որ մաքրեն աճեալ մեծ և անգէզ լինիցի.
և դարձեալ յորժամ մաքրեսցի մարմինն՝ խոնարհեալ
յիւր չափ եկեսցէ։

1 Յոյնն. Տգէտք գոլով ամենևին զի սոքա են մեկնիչք համբաւոյ
և երևութից՝ որ լինին նշանակօք։ Եւ չեն դիւթք, այլ մարգարէք
մանաւանդ գուշակելոցն կոչեսցին յիրաւի արդեօք։

Արդ յաղագս հոգւոյ ո՛րչափ մահկանացու ունի և
ո՛րչափ աստուածային, և ո՛ւր և յետ որո՛ց և վասն որո՛ց
որիշ բնակեցաւ, ճշմարիտ իսկ՝ որպէս ասացաւ՝ աս-
տուծոյ հանդերձ մերով ասելով, յայնժամ արդեւք
միայն այսպէս գոլով՝ յայնժամ հակառակեսցուք. սա-
կայն զոր վայելչականն էր մեր ասել՝ ասացաւ, և տա-
կաւին այժմ մանաւանդ դիտեսցուք, և վշտագնել
մեզ պարտ է առ 'ի յասել այդոցիկ՝ որ ասացան։ Իսկ
զայն որ այսոցիկ 'ի կարգին է՝ զհետ երթալ պարտ է
ըստ այսոցիկ. և էր այս այլ ինչ 'ի մարմնոյ՝ ըստ որում՝
եղև. քանզի այսպիսի խորհրդաւ բաղկանալ մանա-
ւանդ վայել էր արդեւք ամենայնի։ Զոր լինելոցն էր
առ մեզ՝ ըմպելեաց և կերակրոց զեխութիւն՝ գիտելով
բաղկացուցիչքն սեռիս մերոյ, և զի քան զչափաւորն,
'ի ձեռն անյագութեան յոյժ վարիմք յաճախագունիւ։
Արդ զի ոչ ապականութիւն արագագոյն 'ի ձեռն հի-
ւանդութեանց լինիցի, և անկատար վաղվաղակի մահ-
կանացու սեռս վախճանիցի՝ զայսոսիկ նախ տեսանե-
լով, այնմ որ լինելոցն էր ըմպելոյն և կերակրոյն ունա-
կութեանն՝ զանուանեալն ներքին որովայն՝ եդին ընդ-
դունակ, գալարեալք առ սովաւ զաղեացն լինելու-
թիւն. զի ոչ արագապէս յարուցեալ կերակուրն, վաղ-
վաղակի դարձեալ այլոյ կերակրոյ հարկեսցի մարմինն
կարօտանալ. և առտուելով զանյագութիւնն 'ի ձեռն
որկորամոլութեանն, անիմաստասէր և աներաժիշտ
արասցէ զսեռն ամենայն և անհպատակ աստուածայ-
նոյն որ առ մեզն է։ Իսկ յաղագս ոսկերացն և մար-
մնոյն և այսպիսի ամենայն բնութեանն՝ եղև այսպէս։
Հանդերձ այսոքիւք ամենայնի սկիզբն իսկ՝ ուղղին է
լինելութիւն, քանզի կենացս կապակցութիւնս, հո-
գոյն շաղկապելով ընդ մարմնոյն, 'ի սմա բաշխին. և
հաստատեն զմահկանացու սեռս. և սա իսկ ուղիղս՝
յայլոց եղև։ Քանզի յեռանկեանցն որչափ առաջինք
և առանց թիւրութեան և ողորկատեսակ գոլով, ըզ-
հուր և զջուր և զօդ և զերկիր մանաւանդ շնորհել
հնար էր, զայսոսիկ աստուած յիւրեանց սեռիցն 'ի
բաց ընտրեալ, և խառնեալ ընդ միմեանս չափաւորս,
զամենայն սերմ ամենայն մահկանացու սեռիս հնա-
րելով՝ զուղիւղն 'ի սոցանէ գործեաց։ Եւ յետ այսոցիկ

տնկելով 'ի սմա՝ կապակցէր զսեռս հոգւոցն և 'ի ձևոց՝ որչափ հանդերձեալ էր ընկալուլ դարձեալ և տեսակք ըստ իւրաքանչիւրում զնոյն ուղիւղս, յայսչափ և յայսպիսի ձևս վաղվաղակի բաժանել՝ 'ի բաշխումն որ 'ի սկզբանէ էր։ Եւ զայն իսկ որ հանդերձեալ էր զաստուածային սերմն ունել յինքեան, իբրու արօրայեղ բակառաբար պարունակեաց, ըստ ամենայնի ստեղծեալ անուանեաց ուղիւղին զսա մասն՝ սկաւառակ։ Իբրու կատարելով իւրաքանչիւրում կենդանւոյ՝ առ սովաւ անօթն գլուխ լինելով. զոր դարձեալ և այլ մահկանացուն հոգւոյն հանդերձեալ էր ունել, միանգամայն բոլոր և յառաջաձիգ ձևք բաժանէին։ Սակայն զամենայն ուղիւղ համբաւեաց։ Եւ որպէս 'ի խարսխից՝ 'ի սոցանէ ամենայն հոգւոյն զուգակապանս արկանելով գործէր արդեւք միանգամայն մարմինս մեր. ձեղուն իսկ ոսկր է, նախ շուրջ իսկ զբոլորումն սմա շարամածելով. և զոսկրն բաղկացոյց այսպէս. հող մաքուր և յստակ առեալ շարժմամբ ընտրելով զանգէր, և ուղղով խառնէր. և յետ այսորիկ 'ի հուր դներ զսա. և յետ այնորիկ մխէր 'ի ջուր [1]։ Եւ այսպէս փոխաբերելով բաղում անգամ յերկաքանչիւրս՝ անհալական զսա առ 'ի յերկոցունցն գործէր։ Եւ վարելով շուրջ զսկաւառակաւն նորա ոսկր և գունդ ճախարակէր, և սմա ուղի ինչ անձուկ պատրաստեալ առ պարանոցին համանգամայն և ողնաշարական ուղղաւն 'ի սմանէ լսռունք ստեղծեալ [2], տարածանէր իբրու շրջանակք, սկսանելով 'ի գլխոյն առ ամենայն մարմնովն։ Եւ զամենայն զսերմն իսկ պահելով. այսպէս քարատեսակ խնոյր վերակաւ՝ յօդս գործելով 'ի սմա, միոյն առ միւսոյն յարամանեալ սոքօք առ միջոց սոցա հաստատելով, 'ի սակս շարժութեան, և 'ի խոնարհ թիւրելոյ զօրութեան։ Եւ զսորին իսկ ոսկերս բնութեանն ունակութիւն կարծրագոյն գոլ քան զոր պատշաճն էր վարկանելով, և անծալագոյն, և 'ի հրանալն և 'ի ցրտանալն դարձեալ ցաւագին լինելով՝ ապականիլ վաղվաղտկի զսերմն ներքոյ իւրոյ։ Եւ այս այսոցիկ

1 Յոյնն. Մխէր 'ի ջուր, և դարձեալ 'ի հուր, և միւսանգամ 'ի ջուր։
2 Յօր. լսռունք։

այսպէս զջլացն և զմարմնոցն սեռ հնարաւորէր. քանզի միովն զամենայն անդամունքն շաղկապեալ, տարածիլ առտուիցէ մարմնոյն։ Եւ զմարմինն իսկ յառաջարկու առ տապսն, և վերարկու առ ձմեռնային յեղանակսն, տակաւին և առ գլորմունսն՝ իբրու թանձրատեսակ ինչ ստացուած, կակղապէս և հեզաբար մարմնոցն հպատակիլ։ Ջերմ ինչ խոնաւութիւն ունելով յինքեան, որ և յամարայնի քրտնելով և խոնաւանալով արտաքոյ՝ հովութիւն շնորհէ ընտանի մարմնոյն։ Եւ 'ի ձեռն ձմերայնի դարձեալ նոյնս հրով վանէ չափաւորապէս զսառնն՝ զոր արտաքուստ 'ի ներքս մտանելով բաղկանայ։ Զայսոսիկ յաղագս մեր խորհելով՝ օրինակաստեղծն, 'ի ջրոյ և հրոյ և յերկրէ խառնեալ և շարայարմարեալ, զթթուագոյն տեսակ և զաղտաղտին 'ի միասին դնելով զանգումն, ներքոյ սորա խառնելով՝ մարմին արիւնուտ և կակղագոյն բաղկացոյց։ Իսկ զջղացն բնութիւն, յոսկեր և 'ի մարմնոյ առանց զանգուածի խառնմանէ միջակաւ զօրութեամբ յերկոցունցն զուգախառնեաց՝ շիկատեսակ գունիւ յարմարեալ զսա։ Աստուստ ձգական իսկ և ուժգնագոյն քան զմարմին. և գիջագոյն իսկ և կակղագոյն քան զոսկերք ստացաւ զօրութիւն ջիլքն. որովք շուրջ ըմբռնեալ ած զոսկերք և զուղիւղ, կապելով առ միմեանս ջղիւք. և յետ այսորիկ մարմնով զամենայն զսոսա ծածկեաց 'ի վերուստ։ Որչափ էին արդ յոսկերաց հոգեղուտք, սակաւով մարմնով զուգախնոյր, և որչափ անհոգեղուտք էին, ներքոյ յոլովիւք և հոծագոյն մարմնով։ Եւ առ յօդքն ոսկերացն՝ ուր ոչ կարիս ինչ գոլ համեմատութիւնն երևցուցանէր, անգ սուղ մարմին բնաւորեաց. զի ոչ խափանեցուցիչ առ ծալմունսն գոլով՝ դժուարաբերք գործիցին մարմինքն, և դժուարաշարժ լինելով. ոչ դարձեալ հոծք յոյժ և ուժգնապէս առ միմեանս թանձրացեալ, և հաստատագոյն գոլով՝ զանզգայութիւնն գործիցեն, ծանրագոյն առ 'ի յիշատակք, և թեթևագոյն առ խորհուրդսն գոլով։ Վասն այսորիկ արդեւք զանդամոցն և զկարթիցն և զոլոքացն բնութիւնն, և զայնոսիկ որ առ բաղկօքն են ոսկերք, և առ կանգունքն [1] և զօդքն, և որչափ ոս-

1 Յօր. գանգունքն։

կերք են՝ որ վասն սակաւ հոգի ունելոյ ներքոյ ուղղովն՝ թափուր են 'ի խոհեմութենէ. այսոքիկ ամենայն մարմնովն են լցեալ. և որչափ ներխոհեմականքն են նուազ մարմնով: Եթէ ոչ ուրուք զոմն զնոյն ինքն ըստ ինքեան 'ի սակս զգայութեան մարմին այսպէս է բաղկացուցեալ, իբրու զլեզուոյն տեսակ. սակայն զյոլովագոյնքն՝ այսպէս: Քանզի 'ի հարկէ լեալն, և 'ի միասին սնեալ բնութիւնն, ոչ ուրուք ընդունեսցի, առ հոծ ոսկերն և մարմին բազում, և համանգամայն սոցունց արագալուր զգայութիւն: Զի եթէ համանգամայն 'ի միասին զսոսա անկանիլ կամեցեալ էր՝ յաւէտագոյն քան զամենայն ընկալեալ էր արդեւք առ գլխաւն բաղկացութիւն: Եւ մարդկային սեռս զմարմնոյ տեսակն ունելով 'ի վերայ իւր և զջղատեսակն և զկարծր գլուխն՝ կենցաղ կրկնապատիկ և բազմապատիկ և ամբողջագոյն քան զայս որ այժմ է ստացեալ էր ապաքէն: Բայց այժմ այնոքիկ, որ առ մեր լինելութիւնս գոյացուցիչք էին, համեմատելով թէ որպէս յոգնամանակագոյն և յոռին, եթէ սղամանակագոյն, և վեհ գործեցին [1] զսեռս, թուեցաւ նոցա քան զյոլովագոյն կենցաղն և զյոռինն՝ դուզնաքեայն լաւագոյն գոլով ամենայնի ամենևին գոլ հաճոյ: Աստուստ արդեւք անգայտ ոսկերօք, և մարմնովք և ջղիւ իբրու ծալմունս ոչ ունելով, զգլուխն պարածածկեաց: Ըստ այսոցիկ արդ ամենայնի քաջազգայագոյն իսկ և խոհեմագոյն, սակայն յոյժ տկարագոյն ամենայն առն գլուխ եդաւ մարմնովն: Իսկ զջիլքն վասն այսոցիկ և այսպէս աստուած հաստատեալ՝ առ վերջին կոյս գլխոյն շրջանակաւ առ պարանոցաւն կցեաց նմանութեամբ. և զկզակսն՝ ծայրաբար սոցունց կապակցեաց ըստ բնութեամբն դիմաց. և զայլսն յամենայն անդամունսն սերմանեաց՝ շարամերձելով յօդ առ յօդի: Իսկ արդ զբերանոյս մերոյ զօրութիւն ատամամբք և լեզուաւ և շրթամբք 'ի սակս հարկաւորացն և վեհագունիցն զարդարեցին զարդարողքն, ըստ որում է այժմ դասեալ. զմուտն իսկ հնարելով 'ի սակս հարկաւորացն, և զելսն 'ի սակս վեհագունիցն: Քանզի

1 Յօր. գործեցի:

հարկաւոր է ամենայն որչափ 'ի ներքս մտանելով՝ մարմնոյն սնունդ տացէ: Իսկ բանիցն բաժակն արտաքս հոսելով, և պաշտօն տալով խոհեմութեանն, գեղեցկագոյն և վեհագոյն քան զամենայն տեսակ բաժակաց: Եւ դարձեալ իսկ և զգլուխն ոչ միայն սոսկ ոսկր հնարէր թողուլ, վասն այն որ առ գեղեցկութիւնքն երկաքանչիւր գերազանցութեանն: Սակայն և ոչ ամենևին ծածկեալ, խուլ և անզգայ, վասն առ մարմնոյն թախանձութեան, տեսանել լինելով: Արդ մարմնատեսակ բնութեան ոչ ցամաքելով բնաւ, տեսակ ինչ շուրջ զսովաւ անդուստ բնաւորեալ լինէր, զոր այժմ մորթ անուանեմք: Եւ սա 'ի ձեռն այնմիկ խոնաւութեանն՝ որ առ գլխովն է 'ի միասին բուսանելով՝ զգեցուցանէր շուրջ զգլուխն: Իսկ խոնաւութեան գոլորշոյն մակտառական ծառացեալ ընդ կարանս 'ի վեր ելանելով առոգէր զսա և շարափակէր. առ գագաթամբն, իբրու ժողովելով համանգամայն [1], և կարանացն իսկ պէսպէս տեսակքն եղեն վասն զօրութեան կերակրոյն և շրջագայութեանն. մարտնչելով սոցա ընդ միմեանս՝ յաւէտ յոլովիւք և նուազ՝ սակաւօք: Զայս արդ զամենայն զմորթս հրով շրջանակի կարկատէր աստուածայինն. և խոցոտելով սորա, և խոնաւութեանն արտաքս 'ի ձեռն սորա բերելով՝ գիջայինն իսկ և ջերմն որչափ յստակն էր՝ 'ի բաց երթայր: Իսկ խառնեալն յանցանէ՝ յորոց և մարմինն է՝ վերացեալ իսկ 'ի ձեռն բերմանն արտաքոյ, երկար տարածէր անօսրութիւն ունելով հաւասար կարկատմանն. և 'ի ձեռն հեղգութեան 'ի բաց մերժելով շրջափակեալ արտաքոյ շնչոցն, դարձեալ նոյնս ընդ մորթովն գալարեալ արմատանայր: Եւ վասն այսոցիկ արդեւք կրիցս սեռ հերիցն առ մորթն բնաւորեցաւ բաղազան իսկ խեցատեսակին գոլով, սակայն կարծրագոյն իսկ և հոծագոյն թաղկեալ, և մեկնեալ 'ի մորթոյն իւրաքանչիւր հեր՝ առ միմեանս շարամանեալ խռուանայր ցրտացեալ: Այսպէս արդեօք թաւ գործեաց զգլուխս մեր արարիչն՝ վարելով ասացեալ պատճառօքդ, և խորհելով փոխանակ մարմնոյ ծածկոյթ պարտ գոլ

1 Յոյնն. Իբրու զհանգոյցս ժողովելով:

զսա վարկանէր, 'ի սակս այնմիկ՝ որ ինչ առ ուղղովն են և գլխովն, դատարկ տեղացն զգուշութեան, և յամարայնի և ձմերայնի բաւականապէս ստուեր ինչ և զովացումն տալոյ. քաջազգայութեան ոչինչ խափանիչ լինելով, և այն որ առ մատամքն են հիւսուած ջղին և մորթոյն և ոսկերն, 'ի միասին խառնեալ յերիցն, և 'ի բաց չորացեալ, մի հաղորդ. յամենեցունց կարծր եղև մորթ. պատճառակցօքս իսկ այսոքիկ գոյացեալ, սակայն պատճառականագոյն տրամախոհութեամբն՝ գործեալ 'ի սակս այնոցիկ որ լինելոցն էր յապա: Իբրու զի երբէք յարանց կանայք և այլ գաշանք լինելոց էին, գիտէին զայս բաղկացուցիչքն մեր: Եւ զի պիտոյիցն արդեւք մագլացն բազումք յանասնոցն և յոյժ կարօտանալոց: Աստուստ առ մարդիկ վաղվաղակի լինելով սոցա յօրինեցին զՃիրանացն լինելութեանն: Այսուիկ արդեւք բանիւ և պատճառօքս այսոքիւք, զմորթ և զհեր և զմագիլք առ ծայրս ոսկերացն բուսուցին: Եւ քանզի էին մահկանայս մասունքն և անդամքն 'ի միացին բնաւորեալ, իսկ զկենդանութիւնն հրով և հոգւով 'ի հարկէ պարտ էր սմա ունել. և վասն այսոցիկ 'ի ձեռն սոցունց հալեալ ունայնանալով ապականէր [1], օգնութիւն սմա աստուածքն հնարին. Քանզի մարդկային բնութեանս բաղազան բնութիւն, այլօք տեսակօք և զգայութեամբ խառնեալ իբրու այլ ոմն կենդանի գոլ: Զայսոսիկ արդեւք ընտանի ծառք և տունկք խրատելով առ պտղաբերութիւն [2] 'ի ձեռն երկրագործութեանն՝ մերձաւորութիւն առ մեզ ընկալաւ: Եւ յառաջագոյն էր միայն վայրենեացն սեռ, երիցագոյն գոլով քան զընտանիքս: Քանզի ամենայն որ կենդանութեան հաղորդի ուղղապէս իսկ արդեւք, և իրաւապէս ասին կենդանիք: Սակայն հաղորդեալ է այն իսկ՝ զոր այժմ ասեմք երրորդ տեսակին հոգւոյն, զորմէ բան է, 'ի մէջ խոհեմութեանցն և պարտոյն սերտիլ. որոյ կարծեաց և խորհրդոյ և մտաց և զգայութեան հեշտագունի և ցաւաբերականի հանդերձ

1 Յօր. ապականիր:
2 Յոյնն. Ընտանի ծառք և տունկք և սերմանիք անկեալք երկրագործութեամբ:

ցանկութեամբն՝ ոչ և մի գոյ հաղորդութիւն: Քանզի կրելով զամենայն ինչ բերէ, և դառնալով ինքն ինքեամբ առ ինքեան զառ 'ի յարտաքուստն իսկ մերժելով շարժութիւն, և ընտանեաւն իւրով վարելով, յիւրոցն իսկ խորհել կամ տեսանել բնութեամբ, ոչ աւանդեաց լինելութիւն [1]...: Զայսոսիկ զամենայն սեռքս տնկելով վեհքն առ մեզ նուազագունիցս, սննդական առուս հատին 'ի մարմնի մերում. հատանելով իբրու 'ի պարտէզք՝ առուք, զի որպէս 'ի ջրոյ 'ի վերայ հոսմանէ ոռոգի. և նախ իսկ առուք գաղտնապէս ընդ շարաբնակութեամբն մորթոյն և մարմնոյն՝ երկու երակք հատան առ թիկունս կոյս, երկաւորիս, իբրու հանդիպեալ էր մարմինն՝ աջիւք և ահեկիւք գոլով: Եւ զայսոսիկ իջուցին առ ողամբն, և զծննդականն 'ի միջի [2] ըմբռնեալք ուղիղ, քանզի սա այսպէս մանաւանդ յաճախեաց, և այլ այլսն դիւրահոս, աստուստ առ ստորին հանդիպմունս, հեղումն լինելով՝ զոռոգումն հանդարտ ունելով պարգևիցէ: Եւ յետ այսոցիկ ցելեալք զերակքն առ գլխովն, և 'ի ձեռն միմեանց ներհակաւ մանեալ անցուցին՝ զոմանս յաջակողմանցն առ յահեակսն մարմնոյն, և զմիւսն 'ի ձախակողմանցն յաջակողմն խոնարհեցուցեալք. քանզի կապակցութիւն համանգամայն գլխովն իցէ մորթոյն առ մարմնոյն, քանզի ջղիւք ոչ էր շրջանակաւ առ գագաթամբն պատատեալ. և զգայութեանցն արդեւք կիրն՝ զի երկաքանչիւրոց մասանցն իցէ ամենայն մարմինն բաշխեալ: Եւ զայն որ աստուստ է արդեւք շրջաբերութիւն [3] կազմեցին յեղանակաւ ոմամբ այսպիսեաւ. զոր տեսանիցեմք դիւրաւ, նախ խոստանալով այսպիսի իրս: զի ամենայն որչափ 'ի փոքրագունիցն բաղկանայ՝ մեծագունիցն տևէ. իսկ այն որ 'ի մեծագունիցն՝ փոքրագունիցն տևել ոչ կարէ: Եւ հուր քան զամենայն սեռքն՝ մանրամասնագոյնն: Որչափ 'ի ձեռն ջրոյ և երկրի և օդոյ բաղկացեալ են. և յայնոցիկ որ 'ի սոցա-

1 Յաւելու յոյնն. « Վասն որոյ որ կեայն՝ ոչ է այլ ինչ 'ի կենդանւոյ. այլ մնայուն և արմատարեալ կառուցաւ, վասն անբաժ լինելոյ յիւրմէ շարժմանէ »:
2 Յօր. զծննդականն 'ի մի մի ըմբռնեալք:
3 Ըստ յունին ընթեռնլի իցէ թերևս՝ ջրաբերութիւն (ὑδραγωγίος).

նէն են, զամենայն անջատէ, և ոչ ինչ կարէ սմա տևել: Զնոյն ինչ արդեւք խորհել պարտ է և յաղագս մերոյ որովայնի, զի կերակրոյ և ըմպելեաց՝ յորժամ ՚ի սմա մտանիցեն՝ տևէ: Այլ ընդ հրոյ մանրամասնագոյն սոցա եղով այնոցիկ բաղկացուԹեանն՝ տևել ոչ կարէ: Այսոքիւք արդ աստուած վարեալ՝ յայնմ որ յորովայնէն առ երակն ուռուցմունքն են, հիւսակ ինչ յօդոյ և ՚ի հրոյ՝ իբրու զտեսակ ինչ մաղի [1] շարամանելով կրկնակ հիւսակ՝ առ մուտն ունելով, յորոց դարձեալ զմինն մանեաց [2] երկձղի, և ՚ի մաղատեսակացն արդեւք տարածեաց իբրու լարս շրջանակաւ ամենայնի առ ստորինան հիւսմանն: Եւ զներքինան արդ զմաղնն ՚ի հրոյ բաղկացոյց, և շուրջն սորա և գհովիտն յօդոյ տեսակէ. և առեալ զսա հաստատեաց շուրջ ստեղծեալ կենդանոյն՝ այսպիսի յեղանակաւ: Զմինն ՚ի հիւսատեսակացն՝ առ բերանաւն հասոյց. և կրկին դադոլով սորա, զմինն ըստ ընչափողկին ՚ի Թոքն հասոյց՝ և զմիւսն առ ընչափողոքն յորովայնն. և զմին ցելեալ ղերկաքանչիւր մասունս առ առուքն ընդհանն հաղորդաբար Թողացոյց: Իբրու զի յորժամ միւսն ընդ բերանն ոչ եղեգ, ՚ի սմանէ ամենայն հոսմունքն նորա ընդուին. և գմիւսն հովիտն մաղի՝ առ ամենայն մարմինս, որչափ փոր է՝ բնաւորեցոյց: Եւ զայս իսկ ամենայն երբեմն ՚ի մաղատեսակէ ՚ի միասին հոսիլ գործեաց կակղապէս, իբրու օդ դոլով զսա. և երբեմն հոսմանն ՚ի վեր դառնալ ընդ մաղատեսակ, և հիւսումն իբրու անգայտ դոլով մարմնոյն ՚ի ներքս ընկղմիր [3] ՚ի ձեռն սորա, և դարձեալ արտաքս ելանել. և զհրոյն ներքինն նշոյլքն կապակցելով հետևիլ յերկաքանչիւրսն՝ հասանելով օդոյն. և այս մինչև արդեւք մահկանացու կենդանին բաղկացեալ իցէ՝ լինելով ոչ դադարիլ: Եւ այսմ իսկ սեռի այլ՚ի յայնմանէ, որ զմականալԹիւնքն է եղեալ, վերաշնչուԹիւն և արտաշնչուԹիւն ասեմք զի եղաւ անուն: Եւ այս ամենայն գործս և կիրս այս մարմնոյ մերոյ եղև ուռոգելով և զովացմամբ կեալ և մնանիլ: Զի յորժամ ՚ի ներքս և արտաքս՝ վերաշնչու-

1 Յօր. մաղէ:
2 Յօր. մագնէաց:
3 Յօր. ընկղիր... ելանիր:

Թեանն գոլով՝ հուրն ներքոյ ՚ի միասին գոլով հետևի, և բաժանեալ միշտ, ՚ի ձեռն որովայնին մտանելով՝ զկերակուրսն և զըմպելիսն ըմբռնէ, հալէ արդեւք. և ըստ մանրուԹեան բաժանէ ՚ի ձեռն ելիցն՝ ըստ որում գնան՝ բերելով իբրև յաղբերէ յառուս բաշխելով զայսոսիկ հոսէ, և կամ իբրու խողովակօք ՚ի ձեռն մարմնոյն առնէ զկերակրոցն հոսմունքն:

Դարձեալ իսկ զվերաշնչուԹեանն տեսցուք կիրս, որովք պատճառօք վարեալ այսպիսի եղեն՝ իբրու այժմիկ. որոյ արդ, քանզի Թափուր ինչ ոչ է, յորոց ինչ հնար է մտանել բերելով. և շունչն առ ՚ի մինչ արտաքս բերի. որ յետ այսորիկ է՝ արդ ամենայնի յայտ է որ ոչ ՚ի Թափուր, այլ ՚ի մերձաւորն յատակին մերժի. և մերժեալն վարէ միշտ զմերձաւորն. և ըստ այսմիկ հարկի՝ ամենայն առ նոյնն վարեալ, ուստի ելաւ շունչն՝ մտանելով անդանօր, վերստին ընդոս՝ ՚ի միասին հետևի շնչոյն: Եւ այս ամենայն իբրու անիւ ՚ի շուրջ աճեալ լինիցի, վասն Թափուր ոչ միոյ գոլով: Վասն այսորիկ արդեւք ՚ի լանջացն և ՚ի Թոքոյն՝ արտաքս եղեալ շունչ, դարձեալ ՚ի ձեռն այնմ որ շուրջ զմարմնաւն է օդոյն, և անգայտ մարմնոյն ՚ի ներքս մերժեալ, և շրջապէս վարեալ՝ լցեալ լինիցի. և դարձեալ ՚ի բաց շրջեալ օդն, և ՚ի ձեռն մարմնոյն արտաքս գոլով զվերաշնչուԹիւն առ այսոքիւք մերժէ ընդ բերանոյն և ընդ հոտոտելեացն ձանապարհին. և զպատճառ սկզբանն [1] նոցունց նելն է այսպէս: Ամենայն կենդանի առ իւրում արեանն և երակացն ձևմարտակ ունի ջերմուԹիւն, իբրու լինքեան աղբիւր հրոյ գոլով. զոր և արդ նմանեցուցանեմք հիւսակի մաղի ՚ի միջին տարածեալ՝ իբրու ամենևին մանեալ ՚ի հրոյ. և այլն իսկ որչափ արտաքս՝ օդոյն է. ջերմուԹիւն ըստ բնուԹեան ՚ի կիւրում վայրն արտաքոյ առ բաղազանն հասանել խոստովանելի է: Եւ երկու ելիցն գոլով, այնմ իսկ որ ըստ մարմնոյն է արտաքս, և այն դարձեալ որ ըստ բերանոյն է և ըմպոցն, յորժամ առ միւնն դեմ զմիւսն մերժէ. և մերժեալն իսկ ՚ի հուրն անկեալ՝ ջերմանայ, և այն որ արտաքս ելանէն՝ ցրտա-

1 Յօր. և զպատճառ նոցունն:

նայ։ Եւ փոխարկելով իսկ ջերմութեանն, և այնոցիկ՝ որ ըստ միոյ ճանապարհի են ջերմագոյն լինելով, դարձեալ այն շեղելով իսկ, և ջերմագունին մանաւանդ առ իւրն բերելով բնութիւն, զայն որ յիւրաքանչիւր կողմունսն են՝ մերժէ շրջանակի. և այնմիկ՝ որ զայսոսիկ կրեն, և միշտ զայսոսիկ հատուցանեն, բոլոր այսպէս շարժեալ՝ յայսկոյս և յայնկոյս գործելով 'ի ձեռն երկաքանչիւրոցն՝ զվերաշնչութիւնն՝ և զարտաշնչութիւնն լինել առտուէ։ Եւ արդ այնոցիկ որ առ բժշկական գործարանօք ոմամբ արեան, կամ այլոց նիւթոց ձգմուռնքն են ախտիցն պատճառքն, և հանդերձ սոքօք կլանելեացն և վտարմանց որչափ 'ի բարձունս թողեալ լինին, և որչափ առ երկրաւ բերին, այսպէս են հետևելի. և որչափ բարբառք արագք, և հեղք, և սուրք և ծանրագոյնք երևին. երբեմն անյարմար բերելով 'ի ձեռն աննմանութեանն, այնոցիկ՝ որ 'ի մեզ են առ 'ի նոցանէ շարժութեանս. և երբեմն զուգաձայնք 'ի ձեռն նմանութեան։ Քանզի յառաջագունիցն և զոլորելոցն՝ հեղգագոյնք դադարելով զշարժմունքն, և 'ի նմանութիւն եկեալ արդեւք այնոցիկ որ սոքա յետոյ մատուցեալք շարժեն ըմբռնեն զայնոսիկ. և ըմբռնելով՝ ոչ զայլ ոմն 'ի վերայ արկանելով խառնեցին շարժութիւն, այլ սկիզբն հեղգագոյն բերման առ այն որ ոլորուտ է բերմանն։ Յանկին նմանութիւն շարամերձելով մի իսկ 'ի սրէ և 'ի ծանրագունէ կիր զուգախառնեցին։ Վասն որոյ և հեշտութիւն իսկ անխոհեմիցն, և ուրախութիւն խոհեմականացն վասն աստուածային յարմարանացն նմանութեանն, մահկանացու բերմամբ լինելով՝ շնորհեցին։ Եւ արդ ջրոցն ամենայն հոսմունքն տակաւին և որոտմանց ճայթմունք, և այն որ սքանչելի են յաղագս ելէքտռոնացն ձգմանցն և Հերակլեան քարանցն, սոցունց ամենեցուն քաշումն իսկ ոչ և միոյ գոյ երբէք։ Բայց թափուր ինչ ոչ գոլովն, ամփոփիլ զսոսա զինքեանս առ միմեանս, և յայնժամ ընտրելով և բաղդատելով յիւրաքանչիւր փոխելով՝ 'ի հաստատութիւնս իւրեանց հասանիլ, և ամենայն այսոցիկ կրիւքս առ միմեանս շարամանելով՝ սքանչելի գործ այնմ որ ըստ յեղանակին խնդրէ, երևեսցին։ Արդ և վերաշնչութեանս, ուստի և բանս

դիմեաց. ըստ այսոցիկ և 'ի ձեռն սոցունց եղև, որպէս յառաջագոյնս ասացաւ, հատանելով իսկ զկերակուրս հրոյն, և բարձրանալով ներքոյ 'ի միասին շնչոյն հետևելով, և զերակքն յորովայնէն 'ի միասին վերացմամբն լնլով. զհատեալսն [1] աստուստ 'ի վեր բերելով. և վասն այսոցիկ արդեւք առ բոլոր մարմինն՝ որպէս կենդանեաց ջուրքն սննդեան՝ այսպէս 'ի վերայ հասեալք եղեն, նորահատք գոլով, և ազգակից՝ զոմանս պտղոց, և զոմանս՝ դալարաց. զոր աստուած առ այս իսկ տնկեաց գոլ կերակուր, զպէսպէս ունելով գոյնս՝ վասն 'ի միասին խառնմանն. և կարմիրն յոլովագոյն առ սմա գոյնն յաճախեսցի [2], 'ի հրոյն հատուածոյն և 'ի նմանութենէն գիջային գոյացեալ բնութեամբ։ Վասն որոյ զայն իսկ որ ըստ մարմնոյն հոսի, ընկալաւ զգոյն որպիսի տեսութեամբ պատմեցաք, զոր և արիւն անուանեմք՝ բաշխումն մսաց և ամենայն մարմնոց։ Ուստի և ոռոգեալ իւրաքանչիւր՝ լնու զդատարկելոյն հաստատութիւն։ Եւ յեղանակն լրութեանն՝ և բաժանմանն լինի, որպէ յամենայնի ամենեցուն բերումն եղև, զոր ամենայն ազգակիցն բերէ առ ինքեան։ Զի զայն որ արտաքոյ շուրջ է զմեւք միշտ հալէ և բաշխէ առ իւրաքանչիւր տեսակ զհոմացեղն իւր առաքելով. և զայն որ արիւնատեսակն [3] է մաքրապէս դարձեալ բաշխելով ներքոյ առ մեզ իսկ և գալարելով, իբրու ընդ երկնաւ ընդ բաղկացութեամբն իւրաքանչիւր կենդանոյ՝ հարկի նմանել զամենայն բերումն։ Եւ առ բաղազանն արդեւք բերելով իւրաքանչիւր յայսցանէ որ ներքոյ են բաշխեալ, լցոյց դարձեալ զդատարկեալն։ Եւ յորժամ յոլովագոյն քան զի վերայ հասեալն 'ի բաց գնասցէ՝ և ապականի բոլորն. և յորժամ նուազ՝ աճէ։ Նոր արդ բաղկացութիւն ամենայն կենդանոյն, թափուր զեռանգիւնսն՝ իբրու առ ողնափայտիւք առ սեռքն տակաւին ունելով, ամրագոյն շարակայումն ստանայ առ միմեանս. և շարամածի որպէս թանձրութիւնն նորա կակղապէս, իբրու յուղղէ նորագոյն լինելով, և սնանելով կաթամբ։ Եւ արդ յար-

1 Յօր. զհատեալսն։ 2 Յօր. յաճախեցի։
3 Յօր. օրինաքեսակ։

տաքուստն ըմբռնեալքն ՚ի սմա եռանկիւնքն՝ յարտաքուստ ՚ի ներքս մտանելով՝ յորոց և իցէն արդեւք՝ զկերակուրն իսկ և զըմբելլման նորին եռանկեանցն հնագոյն գոլով և տկարագոյն նորօքն հատանելով յաղթէ. և զկենդանին մեծ գործէ մնուցանելով ՚ի բազում նմանեաց։

Իսկ յորժամ արմատն եռանկեանցն սասանի, վասն բազում նահատակութեանս բազում ամանակաւ առ բազումն նահատակելով։ Իսկ զկերակրոյ լրն ՚ի ներքս մտանելով տակաւին ոչ կարէ հատանել ՚ի նմանագոյնս ինքեանց. և սոքա առ ՚ի յայնցանէ որ արտաքուստ ՚ի ներքս մտանեն դիւրաւ բաժանին։ Եւ նուազն ամենայն կենդանին այսուիկ յաղթեալ, և կիրս ծերութիւն [1] անուանի։ Եւ կատարած, յորժամ այնոցիկ որ առ ուղղիւն են եռանկեանցն շարայարմանքեալ շաղկապքն՝ ոչ հանդուրժելով տակաւին բաժանին ցաւօք, փոխաբերեն զշաղկապքն [2] հոգւոյն։ Եւ սա արձակեալ ըստ բնութեանն՝ հեշտութեան ՚ի բաց սլանայ։ Քանզի ամենայն օտարոտին ՚ի բնութենէն՝ ցաւաբեր է. և այն որ ըստ որում բնաւորեալ է՝ լինին հեշտ։ Եւ մահ իսկ ըստ այսոցիկ, այն որ ըստ ցաւոց և ՚ի ձեռն խոցոյ և վիրաց լինին՝ բուռն է և ցաւաբեր, իսկ այն որ ծերութեամբ ըստ բնութեան ՚ի վախճան հասանի, քան զամենայն մահս անցաւագոյն է, մանաւանդ հեշտութեամբ լինելով՝ քան եթէ տրտմութեամբ, և հիւանդութիւնն՝ եթէ ուստ բաղկանան, յայտ է ուրուք և ամենայնի։ Քանզի ջրոք գոլով սեռքն՝ յորոց ՚ի միասին մարմինն մածաւ, հողոյ, հրոյ, ջրոյ և օդոյ. սոցա օտար ՚ի բնութենէն յաձախումն և նուազումն, և վայրկին փոխումն յընտանւոյն առ օտարն լինելով՝ հրոյ իսկ և այլոցն. քանզի սեռք յորովք միոյ էակս պատահեցան [3], զայն որ ոչն է պատշաճ իւրաքանչիւրոյ լինքեան՝ ըմբռնելով. և զամենայն որչափ այսպիսիք են՝ զնօթութիւն և զհիւանդութիւն արտունն։ Քանզի զիւրաքանչիւրոյ առանց բնութեան [4]

1 Յօր. ՚ի կիրս ծերութիւն...։
2 Յօր. փոխաբերէն. իսկ շաղկապն։
3 Իմա. Քանզի սեռք յորովք քան զմին լեալ պատահեցան։
4 Յօր. առանց բնախոհեան։

լինելով և փոխելով, որչափ յառաջագոյն ցուրտ էր՝ այն ջերմանայ, և այն որ ցամաքայինքն են՝ լինին յեղտոյ խոնաւութեան. և թեթևքն արդեւք՝ ծանունք. և ամենևին ամենայն փոխմունք ընդունին։ Զի միապէս ասացաք զայն որ նոյնն է ինքեամբ, և ըստ նորին, և իբրու նոյնպէս և համեմատութեամբ լինելով, և ոչ լինելով, թողուցու զնոյնն ըստ ինքեան գոլով ողջ և ամբողջ կալ և մնալ։ Այն ինչ արդեւք որ թախանձեսցի ՚ի սոցունց արտաքս ելանելով կամ ՚ի ներքս մտանելով, այլայլութիւնք պէսպէս և ցաւս, և անեզր ապականութիւնս առտուիցէ։ Եւ երկրորդից արդեւք բաղկացութեանց՝ բաղկանալով ըստ բնութեան՝ երկրորդ իմացութիւն ցաւոց լինիցի՝ այնմ որ ախորժիցէ իմանալ։ Քանզի ուղիւղ յայնցանէ, և ոսկեր [1] և մսոյ և ջլի շարամածելով, տակաւին և արեան՝ այլ իսկ յեղանակաւ, սակայն ՚ի նոցունց [2] լինելով, այլոցն իսկ յոլովագոյնս ըստ որում առաջինքն են, և մածագոյնքն հիւանդութեանց այսպէս անկան ՚ի միասին։ Յորժամ ներհակապէս դարձեալ զնասցէ լինելութիւն սոցա, յայնժամ սոքա ապականիցին։ Քանզի ըստ բնութեան միսք և ջիլք յարենէ լինին. ջիլն իսկ ՚ի նեարդիցն՝ վասն բաղադանութեանն. և միսքն՝ ՚ի մածեալ յարենէնէն յայնմանէ՝ որ մածի անջատելով ՚ի ներսիցն։ Եւ ՚ի բաց մնացեալն ՚ի մսոցն և ՚ի ջղացն, դարձեալ տոհմքն և պարարտն համանգամայն զմարմինն կցէ առ ոսկերացն բնութիւն, և նոյնս զայն որ առ ուղղիւն է ոսկր՝ մնուցանելով աձեցուցանէ. և այն իսկ որ վասն հոծութեանն ոսկերացն քամի՝ մաքրագոյն սեռն եռանկեանցն՝ ողորկագոյն գոլով և պարարտագոյն, վիժելով [3] և քամելով յոսկերացն՝ ուռոգէ զուղիւղն։ Եւ ըստ այսոցիկ իւրաքանչիւրոյ լինելով, բազում ողջութիւն պատահի. և հիւանդութիւնք՝ յորժամ ներհակապէս։ Զի յորժամ մաշեսցի միսքն՝ վերստին դարձեալ զմաշուածն յերակքն հանէ, և հանդերձ հողմով պէսպէս արիւնն և ուժգին մտանելով յերակն գոնիւք և դառնութեամբք [4] պաձուձեալ, և քացա-

1 Յօր. ոսկերք։ 2 Յօր. սոքանց նոցանց։
3 Յօր. վիճելով։
4 Յօր. դոգնութեամբ։ Բայց յայնն ասէ. հոծութեամբք։

խուտ և աղօտագոյն [1] զօրութեամբ, մաղձք և վէրք
և մաղասք՝ զպէսպէս արասցէ։ Զի կամադարձ ամե-
նեցուն լինելով և ապականելով, զնոյն իսկ զարիւնն
նախ շփոթեն, և ինքեանք ոչ և մի սնունդ մարմնոյն
առտուելով, բերին ամենևին 'ի ձեռն երակացն, դա-
սութիւն այնոցիկ որ ըստ բնութեանն են՝ ոչ ևս ու-
նելով շրջաբերութեանցն. և թշնամիք ինքեանց նո-
ցունց՝ վասն ոչ և մի շահեկանութիւն ունելով յին-
քեանց. և 'ի բաղկացեալ մարմնումն, և 'ի վայրի
մնացելումն, պատերազմելով՝ շփոթեն և մաշեն։ Եւ
որչափ արդեւք հնագոյն գոյ 'ի մարմնոյն մաշի՝ դժուա-
րահալ լինելով, և սևանայ իսկ 'ի ձեռն հնացեալ 'ի
միասին այրման։ Եւ վասն ամենևին վատնեալ լինելոյ՝
դառն գոլով, ամենայն դժուարին առ մարմնովն ան-
կանի, որչափ ոչ արդեւք տակաւին ապականեալն իցէ։
Եւ յայնժամ իսկ փոխանակ դառնութեանն զքացա-
խուտն ընկալաւ սեաւ գոյնն, անօսրանալով 'ի բաց
մանաւանգ դառինն։ Եւ յայնժամ դառնութիւնն իսկ
արեամբ մկրտեալ, գոյն կարմիր ընկալաւ. և սևոյն ընդ
սմա խառնելով՝ մաղձագոյն։ Եւ տակաւին 'ի միասին
խառնին խարտեաշ գոյնն հանդերձ դառնութեամբն,
յորժամ նորագոյնն մաշեսցի միս 'ի ձեռն այնմ որ առ
բոցովն [2] է հրոյն։ Եւ հասարակաց իսկ անունն ամե-
նեցուն այսոցիկ է այնմիկ, զոր ոմանք 'ի բժշկաց մաղձ
անուանեցին, թէպէտ և զօրաւոր գոլով 'ի բազումս
իսկ և յաննմանս նայիլ, և տեսանելով առ սոքօք մի
մեռ ներգոլով, արժանի ամենեցուն մականունու-
թեան։ Եւ այլքն որչափ մաղձոյ տեսակք ասին, ըստ
գունոյն ընկալաւ բան յատուկ իւրաքանչիւր 'ի սոցա-
նէ։ Իսկ վեր, որ արեան քամուած է՝ հանդարտ, և
որ սեաւ մաղձի և քացախագունի՝ վայրենի է. իսկ
յորժամ 'ի միասին խառնեսցի վասն ջերմութեան,
աղօտ զօրութեամբ կոչի քացախուտ մաղաս այնպի-
սին. և մաշեալն իսկ հանդերձ օդով 'ի նոր և 'ի մա-
տաղագոյն մարմնոյ, սորա հողմ լինելով և 'ի միասին
ըմբռնելով 'ի ձեռն խոնաւութեան, և օդն և խոնա-

5 Աղօտագոյն. իմա՝ աղոտ, աղտագոյն, աղային որպէս յն. ունի։
1 Յօր. բովովն։

ւութիւնն տեսակք ինչ հաստատութեամբ բաղկա-
նալով յայսպիսի ախտէ. մի ըստ միոջէ իսկ անտեսք
վասն մանրութեան, և 'ի միասին ամենայնիւ թանձ-
րութիւն ինչ երևելի առտուելով, գոյն ունելով,
զփրփրոյն լինելութիւն՝ տեսանել սպիտակ։ Զայս ամե-
նայն մաշուածս մատաղագոյն մարմնոյն հանդերձ
շնչով շարամանելով ասասցուք սպիտակ գոլ մաղաս,
և նոր իսկ. մաղասի բաղկանալով քամունքս՝ քիրտն և
արտօսր, և որչափ այլք այսպիսի մարմինք զօր հա-
նապազ հեղին մաքրելով։ Եւ այսոքիկ արդեւք ամե-
նայն գործիք ցաւոց եղեն. յորժամ արիւն ոչ 'ի կե-
րակրոց և յըմպելեաց յոլովասցի ըստ բնութեան, այլ
'ի ներհական թանձրութեանցն զօտարոտիսն ըմբռ-
նելով բնութիւնն յօրինի. և խառնելով արդեւք 'ի
ձեռն ցաւոցն մարմնոյն իւրաքանչիւրոյ, և մնալով յիւ-
րումն հաստատութեան՝ կէսքն լինիցին շարաբերու-
թեանն [1] զօրութիւնքն. զի տակաւին վերացումն ու-
նիցի դիւրին սլացմամբ։ Իսկ արդեւք յորժամ հիւան-
դասցի այն որ զմարմինն ընդ ոսկերացն շաղկապեն, և
ոչ ևս դարձեալ 'ի ներդիցն արիւն, և 'ի ջղացն մեկ-
նելով՝ ոսկեր իսկ սնունդ, և մսի առ ոսկեր լինիցի
շաղկապ, այլ 'ի պարարտէ և յողորկագունէ և տապէ,
խոշոր և աղտաղտին և խռովացեալ 'ի ձեռն չար վա-
րուց լինիցի, յայնժամ զայսոսիկ կրելով այն ամենայն
այնպիսին ցամաքեսցի իսկ նոյնդ դարձեալ ընդ մսօքն
և ընդ ջղօքն, 'ի բաց կացեալ յոսկերացն. և միսքն
յարմատոց իւրոց առ միմեանս հաւաքելով՝ զջիղքն
մերկ թողուցուն, և լցեալ աղտաղտիւք։ Եւ ինքեան
դարձեալ անկանելով յարեանն բերումն, զառաջա-
գոյն ասացեալ ցաւս՝ յոլովագոյնս գործեն։ Եւ դը-
ժուարին ախտք առ մարմինքն սոցունց լինելով, մեծա-
գոյն ևս լինիցին այն որ նախ քան զայսոսիկ են։ Յոր-
ժամ ոսկր վասն հոծութեան մարմնոյն՝ ոչ ընկալեալ
վերաշնչութեան բաւականապէս, 'ի ձեռն փտեալ
խոնաւութեանն ջերմանալով տկարասցի, ոչ զսնունդն
ընդունելով։ Դարձեալ իսկ սա ներհակապէս 'ի միս
եկեսցէ ցամաքեալ. և միւսն յարիւն անկանելով, խո-

1 Յն. Կէս լիցի զօրութիւն ցաւոյն (συνφορᾶς)։

շորագոյնք զամենայն յառաջագունիցն զհիւանդու-
թիւնքն գործիցէ։ Եւ ամենեցուն վերջնագոյն, յոր-
ժամ ուղղին բնութիւնն 'ի նուազութեան ուրուք
կամ 'ի գերազանցութենէ հիւանդասցի՝ զմեծա-
գոյնքն առ 'ի մահ կատարիցէ ցաւք, ամենայն բնու-
թեանն մարմնոյն ներհակապէս 'ի հարկէ դարձեալ
հոսելով։ Եւ երրորդ դարձեալ հիւանդութեանց տե-
սակ, եռակի լինելով զմտաւ ածել պարտ է, զոմն 'ի
ձեռն շնչոյ, և զոմն 'ի ձեռն մաղասոյ, և զոմն 'ի ձեռն
մաղձի։ Քանզի յորժամ թոքն՝ մարմնոյն շնչիցն շտե-
մարանապետն՝ մաքուր զելսն ոչ ունիցի, խցեալ 'ի
ձեռն հոսմանցն, յայս կոյս ոչ գոլով, և յայնկոյս յոլո-
վագոյն շունչ քան զպատշաճն 'ի ներքս մուծանելով,
ոմանք սփոփման ոչ հանդիպելով փտիցին, և ոմանք
յերակացն անցանելով և 'ի միասին դառնալով՝ մաշեն
զմարմինս, 'ի մէջ սորա, իբրու խցումն ինչ առնելով.
և բիւրինս հիւանդութիւնք ցաւաբերք յայսցանէ
հանդերձ բազմութեամբ քրտանց բազում անգամ
գործիցեն։ Եւ բազում անգամ 'ի մարմնումն առ ըն-
տրութիւնսն մսին՝ շունչ մտանելով, և արտաքս ելա-
նելով հնար ոչ ունելով, զնոյնսն այնոցիկ՝ որ ար-
տաքուստ 'ի ներքս մտանեն՝ առտուիցեն երկունս. և
մեծագոյնս իսկ յորժամ առ ջիղսն և երակքն որ առ
սոքօք են դադարեալ 'ի շարաւ դարձցի, և զմակտա-
րածան ջիղքն, և զշարունակ՝ սոքօք յետս ձկտեցու-
ցանէ՝ որք արդեւք հիւանդութիւնք նովիմբ իսկ շար-
ոլորմամբ ախտին առասացան տարածմունք և լորցք.
յորոց և բուժելն դժուարագոյն է։ Քանզի հուր ջեր-
մութեանն արդեւք ներլինելով մանաւանդ լուծանեն
զայսպիսիքս։ Իսկ սպիտակ մաղձեայքն՝ վասն մնացելոյ
շնչոյ առ ոլորտս արեանն որձանս իմն փոխանակ վճիտ
և մաքրագոյն արեան վտարէ զմաղձն. և արտաքոյ
մարմնոյն վերաշնչութիւն ունելով հանդարտագոյն
իսկ խայտացուցանէ զմարմինն բորոտութիւնք և այլ
պէսպէս տեսակք, և սոցունց ազգակից ցաւքն ծնանե-
լով. և ընդ ձեաւ մաղձի խառնելով. և առ շրջագա-
յութիւնն այնմիկ որ 'ի գլխումն են աստուածայինք
գոլով զգայութեանց ցրուեալ, և խառնելով զսոսա՝
առ քուն իսկ հասանելով նիրհէ։ Իսկ արթուն գո-

գլխոյն ըստ պարանոցին և ողնաշարին ուղիւղն է մա-
ծեալ, զոր և սերմն յառաջագոյնս ասացաք բանս։
Եւ սա իբրու շնչաւոր գոլով և առեալ զվերաշնչու-
թիւն զայն ըստ որում վերաշնչեաց, 'ի հոսմանէն կեն-
դանական ցանկութիւն ներգործեալ 'ի սմա՝ տռփումն
ծնանելոյ կատարեաց։ Վասն որոյ արանցն առ պատ-
կառանացն բնութիւն՝ անհաւանական ինչ եղև և
ինքնազօր իբրու կենդանի անհպատակ բանին, ամե-
նեցուն 'ի ձեռն մոլեկան ցանկութեանցն ձեռնարկե-
լով յաղթել։ Եւ 'ի կանայք իսկ այն որ մայրական որո-
վայնք կոչին, վասն այսորիկ նոցունց կենդանի ցանկա-
կան գոլով մանկարարութեան, յորժամ անպտուղ
առն իւրոյ ժամանակ բազում լինիցի՝ դժուարապէս
հեծելով հանդուրժէ և մոլորելով ամենևին ըստ մար-
մնոյն, զելքն շնչոյն խնու, վերաշնչել ոչ թողլով՝ առ
վերջինսն տարակուսանս հասուցանէ, և զայլ զցաւ-
պէսպէտս առտուէ, մինչև արդեւք երկաքանչիւրոցն
ցանկութիւնն և տռփումն 'ի միասին հասեալ, և իբրու
'ի ծառոց քաղելով պտուղ, և յերկիր ոմն արօրավար
յարգանդին, անտեսս մանրկութեամբ, և անստեղծ
կենդանիս սերմանելով։ Եւ դարձեալ ընտրելով, զմե-
ծամեծս ներքոյ հնձիցեն. և յետ այսորիկ 'ի լոյս ա-
ծելով՝ կենդանեաց լինելութիւն կատարիցեն։ Կա-
նայք իսկ արդեւք էգք ամենայն այսպէս եղեն։

Իսկ հաւուցն ցեղ փոխայարմար. փոխանակ հե-
րիցն թևք բուսուցանելով, ամբիծ արանց, և թե-
թևագունից. և բարձրաբանականաց իսկ, բերելով
տեսութեամբն զառ 'ի յաղագս սոցա ապացոյց վասն
դիւրին բարուցն գոլ հաստատունք։ Եւ հետևակն և
գազանատեսակն եղև յայնցանէ, որ ոչ և միով վարին
իմաստասիրութեամբ, և ոչ տեսանին և ոչ մի յայն-
մանէ որ առ յերկինսն են բնակութիւնքն. յաղագս
ոչ միոյ իրի վասն ոչ ևս այնմ որ 'ի գլուխն է՝ վարե-
լոյն շրջաբերութեամբն. այլ այն ոք իւք որ առ լան-
ջօքն են մասունքն հոգւոյն՝ իբրու առաջնորդաց՝ հե-
տևին։ Վասն այսոցիկ արդեւք խորհրդոցս զառաջին
ոսկերքն և զգլուխն յերկիր հաստատեցին ձգեալք՝
բաղազանութեամբ, և առաջաձիգք և պէսպէսք ըն-
կալան զգլուխս, ուր և խոտորեցան խափանմամբ իւ-

բաքանչիւրոցն շրջաբերութիւնքն։ Եւ չորքոտանի սեռն սոցա յայսմանէ բուսանէր [1] պատճառէ, յոլովս հաստատութիւնս ենթագրելով աստուծոյ՝ այնոցիկ որ մանաւանդ անխոհեմքն են, զի յաւէտագոյն առ երկրաւ ձգինն։ Եւ այնոցիկ որ անզգամագոյնքն են 'ի սոցանէ, և ամենևին ամենայն առ երկրան բոլոր մարմնաւն տարածելոցն, իբրու ոչ ինչ տակաւին ոտից գոլով պիտոյից, անոտս նոքա և գետնաշարժս առ երկրաւ ծնան։ Եւ չորրորդ սեռն ջրային եղև, յայնցանէ որ մանաւանդ անզգայագոյնքն են և անուսումնականք. զայս ոչ մաքուր վերաշնչութեանն արժանացուցին փոխաստեղծիչքն, իբրու զհոգին ամենայն բաղբաղանօք անմաքուր ունելով. այլ փոխանակ անօսր և մաքուր վերաշնչութեանն օդոյ, 'ի ջրոյ պղտորագոյն և խորին թողացուցին վերաշնչութիւն. ուստի ազն ձկանցն և ոստրիցն, 'ի միասին ամենեցուն որչափ 'ի ջուրսն են, եղեն 'ի նմանութիւն վերջին անուսումնութեան, վերջին բնակութիւնս ընկալեալ։ Եւ այսոքիկ արդեւք՝ ամենայն յայնժամ և այժմ փոխաբերեն կենդանիքս 'ի միմեանց, մտաց և անհանճարութեան փոխաբերութեամբ և ստացմամբ այլայլեալք։ Եւ արդ կատարած յաղագս ամենայնի այժմ իսկ զբանս ունել ասացաք։ Քանզի զմահկանացուս և զանմահ կենդանիքս ըմբռնեալ աշխարհիս այսմիկ, այսպէս կենդանի երևելի՝ զերևելիսն պարունակեալ, պատկեր արարչին աստուած զգալի, մեծ և արիագոյն և գեղեցկագոյն, և կատարելագոյն եղև, մի երկին սա՝ գոլով միածին։

1 Յօր. բուսանէր։ Յոյնն. բուսանէր և բազմոտանի (յայսմանէ) պատճառէ։

ՎԵՐՋ

ՑՈՒՑԱԿ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ԵՒ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՆԵԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ

1826—1877

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼՔ Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՐՑ Ի ՎԵՆԵՏԻԿ

		Ֆր. Ս.
1.	Յովհաննու Ոսկեբերանի Աստուածաբանական Մատենագրութիւնք Ա. (1826)	
2.	» » » » Բ. (1826)	10:—
3.	» » » Հաւուաճք (1826)	5:—
4.	Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Նարեկացւոյ - Մատենագրութիւնք (1827)	10:—
5.	Սեբերիանոսի Եպեսացւոյ, Գաբաղացւոց Եպիսկոպոսի Ճառք (1830)	4:—
6.	Սրբոցն Բարսղի Եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեան (1830)	4:—
7.	Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Զերմանց Մխիթարութիւն (1832)	4:—
8.	Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց (1832)	5:—
9.	Ճենոբ Գլակ Պատմութիւն Տարօնոյ: Յովհան Մամիկոնենի Եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ (1832)	3:—
10.	Կորիւն վարդապետ, Մամբրէ վերծանող և Դանիէլ Աղցաղք - Մատենագրութիւնք (1833)	10:—
11.	Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ Մատենագրութիւնք (1833)	4:—
12.	Սրբոցն Եփրեմի Խորին Ասորւոյ Մատենագրութիւնք, Հատ. Ա. Մեկն. Աբրահամոյ - Մնացորդաց (1836)	
13.	» Հատ. Բ. Մեկն. Համաբարբառ Աստուածանէ (1836)	
14.	» Հատ. Գ. Մեկն. Թղթոցն Պօղոսի (1836)	
15.	» Հատ. Դ. Ճառք և Աղօթք (1836)	24:—
16.	Տեառն Յովհաննու Մանդակունեաց Ճառք. (1836)	4:—
17.	Սրբոյ Հօրն Մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք (1836)	6:—
18.	Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Մատենագրութիւն (1836)	4:—
19.	Մեկնութիւն Գործոց Առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ և յԵփրեմէ (1839)	7:—
20.	Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ (1842)	30:—
21.	Սրբոյ Հօրն Մերոյ Մովսեսի Խորենացւոյ Մատենագրութիւնք (1843)	12:—
22.	Պատմութիւն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտցւոյ (1844)	2;50

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ

Ֆր. Ս.

23. Սրբոյն Ներսեսի Լամբրոնացիոց Խորհրդածութիւնք 'ի կարգս Եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին (1847) 7:25
24. Վարք սրբոց Հարանց և քաղաքավարութիւն նոցին, ըստ կրկին թարգմանութեան նախնեաց. Հատ. Ա. (1855)
25. » Նեղոսի Ս. Հօրն Խրատք. Հատ. Բ. (1855) . 22:—
26. Յովհաննու Ոսկեբերանի Կ. Պօլսի եպիսկոպոսապետի Ճառք. (1861) . . . . . 10:—
27. Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի. Հատ. Ա. (1862)
28. » և Հատածք, Ճառք երկբայականք և անբնագիրք Հատ. Բ. (1862) . . . . . 20:—
29. Խոսրովոյ Անձեւացեաց Եպիսկոպոսի Մեկնութիւն Աղօթից Պատարագին (1869) . . . . . 3:—
30. Վարք եւ Վկայաբանութիւնք Սրբոց, Հատ. Ա. (1874)
31. » » » Հատ. Բ. (1874) 22:—
32. Պղատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք. Եւթիփռոն, Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմէոս (1877) . . 4:—
33. Գիրք վաստակոց (Γεωπονικα) թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ (1877) . . . . 7:—

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ա. Հաւաքումն պատմութեան Վարդանաց վարդապետի, լուսաբանեալ (1862) . . . . . 4:—
Բ. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ Պատմութիւն 'ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր, լուսաբանեալ (1865) . . . . . 4:—

ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

1. Եզնկաց Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց (1826) . . . . . 3:—
2. Մովսեսի Խորենացիոց Պատմութիւն Հայոց (1827) . 6:—
3. Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին (1828) . . . . . 3:—
4. Տեառն Ներսեսի Շնորհալիոց Բանք Զափաւ (1830) . 6:—
5. Սրբոյն Գրիգորի Նարեկաց վանից վանականի Ողբերգութիւն (1833) 2:75
6. Ագաթանգեղոս - Պատմութիւն Հայոց (1835) . . 6:—
7. Տեառն Ներսեսի Շնորհալիոց Նամականի (1838) . 3:—
8. Գրիգորի Կաթողիկոսի Տղաց կոչեցելոյ Նամականի (1838) Տեառն Ներսեսի Լամբրոնացիոց Ատենաբանութիւն, Թուղթ և Ճառք, (1838) . . . . . 3:—

ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Ֆր. Ս.

9. Առակք Մխիթարաց Գոշի (1842) . . . . . 2:—
10. Ղազարաց Փարպեցիոց Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան (1873) . . . . 3:—

ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

(Գին իւրաքանչիւր հատորոյն Ֆր. 1.)

Ա. Բանք խրատուց նախնի իմաստասիրաց (1853):
Բ. Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին - Տեսիլ սրբոյն Սահակայ - Կանոնք սրբոյն Սահակայ - Թուղթք սրբոյն Սահակայ:
Գ. Յովհաննու Սարկաւագ վարդապետի Յաղագս քահանայութեան և քահանայից և գլխոց նոցին - Բանք խրատու ուսումնասիրաց:
Դ. Յովհաննու Ոսկեբերանի Ներբողեանք 'ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ - Գրիգոր սարկաւագապետի և Ճգնաւորի Խօսք 'ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ասացեալ 'ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ:
Ե. Յովհաննու Սարկաւագայ, Վարդանայ բարձրբերդցւոյ, Յովհաննու երզնկացւոյ Ներբողեանք 'ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ:
Զ. Պատմութիւն սրբոյն Ներսեսի Պարթևի Հայոց հայրապետի. Ա:
Է. » » » » » Բ:
— Պատմութիւն յայտնութեան նշխարաց սրբոյն Ներսեսի:
Ը. Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն քարոզութեանն և դալստեան 'ի Հայս և կատարմանն որ 'ի Քրիստոս - Պատմութիւն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին - Վկայաբանութիւն սրբոյն Սանդխտոյ դստերն Սանատրկոյ արքայի - Գիւտ նշխարաց Թադէոսի առաքելոյ և Սամուելի և Իսրայելի և այլոց:
Թ. Վկայաբանութիւնք սրբոյն Շուշանկանն որ կատարեցաւ 'ի Վիրս յառնէ իւրմէ յԱնթիպատրէ Վրաց առաջնորդէ:
Ժ. Ներբողեան յորդիս և 'ի Թոռունս Սրբոյ Լուսաւորչին - Պատմութիւն վարուց և նահատակութեանց երջանիկ հայրապետացն որդւոց և Թոռանց Սրբոյն Գրիգորի - Պատմութիւն Զենոբայ եպիսկոպոսի զոր արարեալ է վասն Անտոնի և Կրօնիդեայ և այլոց Ճգնաւորացն (1854):
ԺԱ. Կորիւն վարդապետի Պատմութիւն սրբոյն Մեսրոպայ - Պատմութիւն սրբոյն Եղիշէի վարդապետի - Յիշատակ սուրբ Հօրն Թաթլոյ, Վարոսի և Թովմասու - Խրատ սրբոյ Հօրն Թաթլոյ:

ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԺԲ. Սիսիանոսի Հայոց վարդապետի Ներբողեան 'ի սուրբ Քառասունսն - Վկայաբանութիւն սրբոց իշխանացն Համազասպայ և Սահակայ նախարարացն Հայոց 'ի տանէ Արծրունեաց:

ԺԳ. Ողբք վասն չարեացն որ անցին 'ի վերայ աշխարհիս Հայոց, ընդ որում և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ, որ էր որդի Ս. Խոսրովու Գողթան Տեառն - Պատմութիւն անցից 'ի հարաւային ազգէ 'ի վերայ Հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ որդւոյ Խոսրովի Գողթան Տեառն - Տաղ 'ի սուրբ Վահան Գողթնացի - Այլ տաղ - Շարական Վահանայ Գողթնացւոյն:

ԺԴ. Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց, սկսեալ 'ի նախնեաց անտի նորին:

ԺԵ. Գրիգորի Սկևռացւոյ Ներբողեան 'ի սուրբն Ներսէս Լամբրոնացի:

ԺԶ. Պատմութիւն վարուց սրբոյն Սարգսի զօրավարի Թարգմանեալ 'ի Ներսեսէ Շնորհալւոյ - Պատմութիւն Ամասիա քաղաքի և յաղագս սննդեան և վարուց սրբոյն Թէոդորոսի զօրավարին:

ԺԷ. Աղօթամատոյց Յովհաննու Սարկաւագայ վարդապետի:

ԺԸ. Եղիշէի քահանայի Ճառ յԱյլակերպութիւն Տեառն - 'ի Մեծի աւուր տապանակին երանելւոյն Մովսեսի Խորենացւոյ սուրբ և ընտրեալ վարդապետի արարեալ որ 'ի Կարիաթարիմ որ բերէ զտօն Վարդավառի:

ԺԹ. Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի - Վկայաբանութիւն սրբոց Սուքիասանց - Բան և ասութիւն Ճշմարիտ սրբոցն Ոսկեանց քահանայից - Վկայաբանութիւն սրբոյն Ատովմայ և որդւոյ իւրում, և Վարսայ, և Ներսեհի և վարձաւորին - Վկայաբանութիւն սրբոյն Դաւթի որ 'ի Դուին կատարեցաւ:

Ի. Վկայութիւն սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի որ վկայեաց անթիւ բիւրուք յերկիրն արևելից 'ի Շապհոյ Պարսից արքայից արքայէ - Ճառ 'ի վկայսն արևելից:

ԻԱ. Աղօթք Յովհաննու վանանդեցւոյ Բենիկ կոչեցեալ վարդապետի (1861):

ԻԲ. Պատմութիւն սրբոյն Յակովբայ Մծբնայ հարապետին - Վարք սրբոյն Իլարիոնի - Վարք սրբոյն Իգնատիոսի Անտիոքայ հայրապետին:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ ՅԵՂԵԱԼՔ Ի ՀԻՆ ԵՒ Ի ՆՈՐ ԼԵԶՈՒՍ

Ֆր. Ս.

ԵՒՍԵԲԻՈՍԻ ՊԱՄՓԻԼԵԱՅ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ, 'ի Հայերէն Թարգմանութենէ եղելոյ 'ի յոյն բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգմանչաց մերոց, Թարգմանեալ 'ի լատին բարբառ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց, հաւաքմամբ հանդերձ յունական հատուածոց գտելոց առ մատենագիրս, և յաւելուածով կարևոր ծանօթութեանց. երկու հատոր, քառածալ մեծ (1818) . . . . . 30:—

—— Նոյնն, միածալ, մի հատոր . . . . . 32:—

ՓԻԼՈՆԻ Եբրայեցւոյ բանք երեք չև 'ի լոյս ընծայեալք, Ա. Բ. Յաղագս Նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց, 'ի հին Թարգմանութենէ եղելոյ 'ի յոյն բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգմանչաց. մի հատոր, քառածալ մեծ (1822) . . . . . 7:—

—— Նորին մնացորդք 'ի հայս, որ են մեկնութիւն Ծնընդոց և Ելից, Ճառք 'ի Սամփսոն, 'ի Յովնան և յերիս մանկունս կամ 'ի հրեշտակս. 'ի հին Թարգմանութենէ եղելոյ 'ի յոյն բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգմանչաց մերոց, յեղեալ 'ի լատին բարբառ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց. մի հատոր, քառածալ մեծ (1826) . . . . . 20:—

ՍԵԲԵՐԻԱՆՈՍԻ կամ Սևերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոց եպիսկոպոսի Ճառք, 'ի հին Թարգմանութենէ եղելոյ 'ի յոյն բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգմանչաց մերոց, յեղեալ 'ի լատին բարբառ 'ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Աւգերեանց. մի հատոր, ութածալ մեծ (1827) 4:—

Տեառն ՅՈՎՀԱՆՆՈՒ իմաստասիրի ԱԻՁՆԵՑԻՈՅ Մատենագրութիւնք, Թարգմանեալ 'ի լատին բարբառ երկասիրութեամբ Տեառն Հ. Մկրտչի վարդապետի Աւգերեան. մի հատոր, ութածալ մեծ (1834) . . . . . 4:—

—— Նորին Ճառ ընդդէմ Երևութականաց, լատին Թարգմանութեամբ . . . . . 1:—

Սրբոյն ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ Մատենագրութիւնք, Թարգմանեալ 'ի լատին բարբառ 'ի ձեռն Տէր Յովսեփայ Գաբէլլէդդի. երկու հատոր, ութածալ մեծ (1833) . . 10:—

ԱԳԱԹԱՆԳԵՂԵԱՅ Պատմութիւն, Թարգմանեալ յիտալական բարբառ հանդերձ ծանօթութեամբք. մի հատոր, ութածալ մեծ (1843) 5:50

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ ՅԵՂԵԱԼՔ Ի ՀԻՆ ԵՒ Ի ՆՈՐ ԼԵԶՈՒՍ

Ֆր. Ս.

ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Պատմութիւն Հայոց, Թարգմանեալ յիտալական բարբառ հանդերձ ծանօթութեամբք. մի հատոր, ութածալ մեծ, երկրորդ տպագր. (1850) . 8:50

—— Նոյնն հայ-գաղղ. Թարգմանութիւն Լըվայլեան տը Ֆլորիվալի (1841) . . . . . 18:—

ԼԱԲՈՒԲՆԻԱ դիւանագիր դպրի Եդեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեալ յասորւոյն 'ի ձեռն Ս. Թարգմանչաց. և այժմ Թարգմանեալ 'ի գաղղիական բարբառ և լուսաբանեալ 'ի ձեռն Հ. Ղևոնդ Վ. Ալիշան. մի հատոր, ութածալ մեծ (1868) . . . . . 2:—

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ. Թարգմանեալ յիտալական բարբառ 'ի ձեռն Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան. մի հատոր, ութածալ մեծ. չորրորդ տպագրութիւն (1873) . . . . . 2:—

—— Նոյնն Թարգմանեալ յանգղիական բարբառ. մի հատոր, ութածալ փոքր. երկրորդ տպագրութիւն (1874) 2:—

—— Նոյնն Թարգմանեալ 'ի գաղղիական բարբառ 'ի ձեռն Տեառն Աբոսդոլէի. մի հատոր, ութածալ մեծ. երկրորդ տպագրութիւն (1869) . . . . . 2:—

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ Մեկնութիւն Աւետարանի Համաբարբառ, 'ի հին Թարգմանութենէ եղելոյ յասորի բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգմանչաց մերոց, յեղեալ 'ի լատին բարբառ 'ի ձեռն Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան. մի հատոր, ութածալ մեծ (1876) 8:50

ԱՆՍԻԶՔ ԱՆՏԻՈՔԱՑ, 'ի հին Թարգմանութենէ եղելոյ 'ի ձեռն Սմբատայ Գունտստապլի 'ի գաղղիական բնագրէ անգիւտ եղելոյ այժմիկ, յեղեալ վերստին 'ի գաղղիական բարբառ և հրատարակեալ հանդերձ ծանօթութեամբք 'ի Հ. Ղևոնդ Վ. Ալիշանեան. մի հատոր, քառածալ մեծ (1876) . 10:—

ՇԱՐԱԿԱՆՔ և ԵՐԳՔ ժամակարգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ առ Ս. Կոյսն, յեղեալք 'ի լատին 'ի Մխիթարեան Հարց. մի հատոր, քառածալ մեծ (1877) . . 7:—

ՀՀ Ազգային գրադարան
NL0123967